ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

բաց բաժնետիրական ընկերության կողմից թողարկվող

պարտատոմսերի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2022

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳԻՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

Թողարկողի անվանումը

բաց բաժնետիրական ընկերություն
Կազմակերպաիրավական ձևը

Արամի 82-84, Երևան 0002, ՀՀ
Հեռ՝ +(374)10 31 88 88 Ֆաքս՝ +(374)10 54 34 85
Էլ.-փոստ՝ acba@acba.am
Կայք՝ www.acba.am

Արժեթղթերի տեսակը՝ անվանական, արժեկտրոնային պարտատոմս,

Արժեթղթերի ձևը՝ ոչ փաստաթղթային,

Արժեթղթերի քանակը՝ Առավելագույնը՝ 300 000 (երեք հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 300 000 (երեք հարյուր հազար) հատ ՀՀ դրամով,

Արժեթղթերի անվանական արժեքը՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

Արժեթղթերի թողարկման ծավալը՝ Առավելագույնը՝ 30 000 000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար, 30 000 000 000 (երեսուն միլիարդ) ՀՀ դրամ,

Արժեկտրոնը՝ Ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առաջ, սակայն ոչ ավել տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված 2 տարի ժամկետով դասական ժամկետային ավանդի տոկոսադրույք գումարած 1%՝ ԱՄՆ դոլարի դեպքում, և ոչ ավել տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված 2 տարի ժամկետով դասական ժամկետային ավանդի տոկոսադրույք գումարած 2%՝ ՀՀ դրամի դեպքում,

Շրջանառության ժամկետը՝ Ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումից առաջ, սակայն ոչ պակաս քան 2 տարի և ոչ ավել քան 4 տարի մարման ժամկետով :

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»
Տեղաբաշխողի անվանումը

բաց բաժնետիրական ընկերություն
Կազմակերպաիրավական ձևը

Արամի 82-84, Երևան 0002, ՀՀ
Հեռ՝ +(374)10 31 88 88 Ֆաքս՝ +(374)10 54 34 85
Էլ. փոստ՝acba@acba.am
Կայք՝ www.acba.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 4

ԲԱԺԻՆ 2. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 6

2.1. Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ 6
2.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր 12
2.3. Բանկի զարգացման միտումները 14
2.4. Աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ 16
2.5. Ղեկավարությունը և բաժնետերերը 16
2.6. Պարտատոմսերի հիմնական տվյալները 18
2.7. Պարտատոմսերի առաջարկի նկարագիրը 19
2.8. Ամփոփ ֆինանսական տվյալներ 20

ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 22

3.1. Ռիսկային գործոններ 22
3.2. Հիմնական տեղեկատվություն 23
3.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն 24
3.4. Առաջարկի ժամկետները և պայմանները 35
3.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը 43
3.6. Լրացուցիչ տեղեկատվություն 45

ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 46

4.1. Անկախ աուդիտորներ 46
4.2. Ռիսկային գործոններ 46
4.3. Տեղեկատվություն թողարկողի մասին 53
4.4. Բիզնեսի նկարագիրը 68
4.5. Թողարկողի կառուցվածքը 73
4.6. Զարգացման վերջին միտումները 74
4.7. Բանկի կառավարման մարմինները և դրանց անդամները 78
4.8. Հսկող անձինք 95
4.9. Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ 95
4.10. Էական պայմանագրեր 97
4.11. Մասնագիտական կարծիքներ 97
4.12. Այլ տեղեկատվություն 97

ԲԱԺԻՆ 5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 98

5.1. ՀԱՎԵԼՎԱԾ 1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտ իրավաբանական անձանց համար 98
5.2. ՀԱՎԵԼՎԱԾ 2. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտ ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար 99
5.3. ՀԱՎԵԼՎԱԾ 3. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը 100
5.4. ՀԱՎԵԼՎԱԾ 4. Բանկի կազմակերպական կառուցվածքը 101
5.5. ՀԱՎԵԼՎԱԾ 5. Թողարկման վերջնական պայմաններ 102
5.6. ՀԱՎԵԼՎԱԾ 6. Ֆինանսական հաշվետվություններ 109

acba

ԲԱԺԻՆ 1. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Ռաֆայել Սարգսյան (անուն, ազգանուն)	Խորհրդի նախագահ (պաշտոն)		06.10.2022թ. (ամսաթիվ)
Հենրիկ Քոչինյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Վարդան Ուռուտյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Արամ Բաբայան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Հարություն Փախչանյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Արմեն Մկրտչյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Հրաչ Սարգսյան (անուն, ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		06.10.2022թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստյոպա Զաքինյան	Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ		06.10.2022թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Հակոբյան	Գլխավոր հաշվապահ		06.10.2022թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		06.10.2022թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ԲԱԺԻՆ 2. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն: Առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ծրագրային ազդագրի վրա:

Ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձը կրում է քաղաքացիական պատասխանատվություն:

Ներդրողը Ծրագրային Ազդագիրը և Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը թղթային եղանակով կարող է ձեռք բերել Բանկի կենտրոնական գրասենյակում կամ մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ **www.acba.am:**

Հարկ է նշել նաև, որ Ազդագրում ներկայացված բոլոր ֆինանսական ցուցանիշները հաշվարկված են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի և նրա դուստր ընկերության՝ «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

2.1. Տեղեկատվություն Բանկի և նրա գործունեության վերաբերյալ

2.1.1. Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Բանկի լրիվ անվանումն է՝

հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն
անգլերեն՝ “ACBA BANK” Open Joint Stock Company

Բանկի կրճատ անվանումն է՝

հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ»
անգլերեն՝ “ACBA BANK”

Բանկի պետական գրանցման վայրն է՝ Արամի 82-84 շենք, 89, 99, 100 տարածքներ Երևան 0002, ՀՀ

Բանկի պետական գրանցման համարն է՝ 70

Բանկի գտնվելու վայրն է՝ Արամի 82-84 շենք, Երևան 0002, ՀՀ

Կապի միջոցները՝ Հեռ՝ +(374)10 31 88 88
Ֆաքս՝ +(374)10 54 34 85
Էլ. փոստ՝ **acba@acba.am**
Ինտերնետային կայք՝ **www.acba.am**

Ներդրողները պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում կարող են դիմել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում (այսուհետ նաև՝ Թողարկող կամ Բանկ) իրենց սպասարկող մասնաճյուղեր, ինչպես նաև Բանկի Դիլինգի բաժնի աշխատակիցներին՝ հետ հետևյալ հեռախոսահամարներով՝ +(374)10 31 88 88 (0067), +(374)10 31 88 83:

2.1.2. Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

ԱԿԲԱ ԲԱՆԿԸ (հիմնադրման սկզբում՝ «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկ, նաև՝ Հայգյուղփոխբանկ) ստեղծվել է 1995թ. օգոստոսի 28-ին, իսկ 2006թ. սեպտեմբերի 9-ին Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության: «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն 29.04.2020թ.-ի Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և վերջինիս գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ կողմից: Բանկի պետական գրանցման համարն է 0170: Բանկն իր գործունեությունը իրականացնում է թիվ 70 լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների երաշխավորման հիմնադրամի անդամ:

Ստորև ներկայացված են համառոտ պատմական փաստեր Բանկի զարգացման ժամանակագրական կարևոր նշումներով՝

2002թ. – Հայգյուղփոխբանկը (ներկայիս ԱԿԲԱ ԲԱՆԿԸ) դարձել է «VISA International» միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ:

2003թ. - Բանկի կողմից հիմնադրվել է «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ, որն առաջին գրանցված մասնագիտացված լիզինգային ընկերությունն է Հայաստանում:

2006թ. - Ֆրանսիական հեղինակավոր «CREDIT AGRICOLE» բանկային խումբը դարձավ Բանկի 28%-ի բաժնետերը, որի արդյունքում Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկը վերակազմավորվեց «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ մինչև 29.04.2020թ.:

2010թ.-ից - Բանկը Հայաստանում միակն է, որն իրականացնում է միջազգային 3՝ VISA, American Express, MasterCard և միակ ազգային՝ ArCa վճարային քարտերի սպասարկումը և թողարկումը, ընդ որում՝ American Express վճարային համակարգի հետ համագործակցում է Հայաստանում բացառիկ իրավունքով:

2013թ. - Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ «Ամունդի Ասեթ Մենեջմենթ» ընկերության հետ համատեղ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ (ներկայիս «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ) հիմնել է «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ:

2014թ. - Հանդիսանալով Հայաստանի ֆինանսական խոշոր կազմակերպություններից մեկը Բանկը ներդրել է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգ, որի գերակա ուղղություններն են սահմանամերձ հեռավոր բնակավայրերի աջակցությունը, շրջակա միջավայրի պահպանությունը և այլընտրանքային էներգիայի աղբյուրների կիրառումը, պատմամշակութային արժեքների պահպանությունը և երիտասարդությանն ուղղված ծրագրերի իրականացումը:

2015թ. - Բանկն իրականացրել է կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում ձևավորվել են բանկային գործունեության հիմնական 3 բիզնես ուղղությունները՝ գյուղատնտեսական, մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ:

2017թ - ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը (ներկայիս ԱԿԲԱ ԲԱՆԿ) և կորպորատիվ բիզնես լուծումների շուկայում, աշխարհում առաջատար SAP ընկերությունը ստորագրել են ծրագրային ապահովման ձեռքբերման պայմանագիր, որի համաձայն Բանկը SAP-ի կողմից ստեղծված ժամանակակից լուծումների

կիրառման միջոցով փուլային եղանակով իրականացնում է Բանկի ամբողջական թվային տրանսֆորմացիա:

Միջազգային ճանաչում ունեցող և ոլորտում առաջատար SAP-ի լուծումների կիրառմամբ Բանկի թվային տրանսֆորմացիայի արդյունքում Բանկն ինտերակտիվ կերպով կարձագանքի հաճախորդների բոլոր պահանջմունքներին և կտրամադրի այն ծառայությունների փաթեթը և լուծումները, որոնք լավագույնս կհամապատասխանեն նրանց պահանջներին և մաքսիմալ արդյունավետ կլինեն նրանց համար:

2017թ.-ին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը թողարկել է նաև ռուսական МИР վճարային համակարգի նոր «ԱՐՔԱ-ՄԻՐ» չիպային քարտերը:

2018թ. - Բանկի և Ճապոնական JCB Co. International-ի համագործակցության արդյունքում Հայաստանում առաջին անգամ սկսվել է JCB քարտերի սպասարկումը:

2019թ.-ին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը թվով երկու միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավել է 9 մլն եվրոյի ստորադաս փոխառություն, ինչը Բանկի նկատմամբ միջազգային ներդրողների վստահության ևս մեկ ապացույց է:

Նույն տարում ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկի և չինական UnionPay International-ի համագործակցության արդյունքում Հայաստանում մեկնարկեց UnionPay քարտերի սպասարկումը:

2020թ.-ի ապրիլի 29-ին Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության:

2020թ.-ին Ֆիթչ վարկանիշային գործակալության (Fitch Ratings) կողմից ԱԿԲԱ ԲԱՆԿԻՆ շնորհվել է «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» B+ վարկանիշ՝ կայուն հեռանկարով (long-term Issuer Default Rating IDR):

2021թ.-ին Բանկն իրականացրեց վերաբրենդավորում և հասարակությանը ներկայացավ նորովի՝ պահպանելով, Բանկի լավագույն արժեքներն ու ավանդույթները: Նույն տարում իրականացվեց աշխատակիցների՝ Ակբա բանկի բաժնետեր դառնալու գործընթացը, որի շրջանակում Ակբա ֆինանսական խմբի աշխատակիցների շուրջ 75%-ը դարձավ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետեր, իսկ հետո բանկն իրականացրեց բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում՝ թողարկելով 500 000 հատ բաժնետոմս՝ ընդհանուր 7,5 միլիարդ ՀՀ դրամ տեղաբաշխման ծավալով: Սահմանված ժամկետներում այս բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվեցին, Ակբան դարձավ Հայաստանում ամենաշատ բաժնետեր ունեցող ընկերություններից մեկը: Բանկի բաժնետոմսերը ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայի ամենալիկվիդային՝ A հարթակում:

Ներկայումս «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ հանդիսանում է ունիվերսալ բանկ, որը հաճախորդներին առաջարկում է բանկային ծառայությունների լայն տեսականի:

Բանկի տեսլականն է լինել.

- առաջին ընտրության բանկը՝ մշտապես առաջարկելով ճկուն և ստեղծարար լուծումներ,
- լինել գյուղատնտեսական արժեշղթայի զարգացման երաշխավոր,

- լինել ամենաարժեքավոր և ճանաչելի ապրանքանիշը ֆինանսական շուկայում,
- լինել բացարձակ առաջատարը ֆինանսական շուկայում արդյունավետության և շահութաբերության ցուցանիշներով,
- Լինել առաջին ընտրության գործատուն ՀՀ ֆինանսական շուկայում:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ **<u>առաքելությունն</u>** է՝

Ինքնատիպ և նորարար լուծումներով նպաստել հասարակության կայուն զարգացմանը:

2.1.3. Բանկի կանոնադրական կապիտալը

Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 55,000,000,000 (հիսունհինգ միլիարդ) ՀՀ դրամ, որը բաժանված է 5,500,000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի լրացուցիչ տեղաբաշխման ենթակա հայտարարված սովորական բաժնետոմսերի քանակը կազմում է 3,000,000 (երեք միլիոն) հատ՝ յուրաքանչյուրը 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկի կանոնադրական հիմնադրամում մեկ բաժնետիրոջը պատկանող Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի առավելագույն քանակ չի սահմանվում:

Բանկի խոշոր բաժնետերն են հանդիսանում՝

- «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը – 83.80%*
- «ՍԱԿԱՄ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ» պարզ բաժնետիրական ընկերությունը – 4.54%*

2021թ. ապրիլին «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲ ընկերության և Բանկի կողմից համատեղ ներդրվեց «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրական կապիտալում ԱԿԲԱ խմբի աշխատակիցների բաժնեմասնակցության ծրագիր: Բաժնեմասնակցության ծրագրի շրջանակներում «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲ ընկերության, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲ ընկերության և Բանկի ընդհանուր 1,116 աշխատակիցներին 2021թ. հուլիսին հատկացվեցին Բանկի 147,530 հատ բաժնետոմսեր (որը կազմել է կանոնադրական կապիտալի 2.95%-ը):

2.1.4. Բանկի մասնաճյուղերը

Ներկայումս Բանկն ունի 63 մասնաճյուղ: Բանկի կենտրոնական գրասենյակը և 19 մասնաճյուղերը գտնվում են Երևան քաղաքում, իսկ մնացածը՝ ՀՀ մարզերում:

Մասնաճյուղերի հասցեները մանրամասն ներկայացված են **Ազդագրի 4.3.1.5 մասում**:

---

* Բանկի Կանոնադրական կապիտալում խոշոր բաժնետերերին պատկանող բաժնեմասի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է տվյալ պարտատոմսերի թողարկման որոշման վերաբերյալ Բանկի Խորհրդի նիստի գումարման օրվա՝ 19.08.2022թ.-ի դրությամբ:

2.1.5. Բանկի խմբի կառուցվածքը

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն խմբի Մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է Բանկից և դրա դուստր կազմակերպություններից: Բանկի դուստր կազմակերպություններն են՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն, «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն և «ԱԿԲԱ ԲՐՈՔ» ՍՊԸ:

«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն իրականացնում է ֆինանսական լիզինգի գծով գործառնություններ և հիմնադրվել է 2003թ.-ին:

«ԱԿԲԱ ԲՐՈԿ» ՍՊԸ հիմնադրվել է 2004թ.-ին: Կազմակերպությունը ծավալել է ապահովագրական գծով միջնորդական գործունեություն: Ներկայումս գործունեություն չի ծավալում:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28/04/2017թ.-ի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ), «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ) և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն ճանաչվել են որպես ֆինանսական խումբ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԽՈՒՄԲ» անվանմամբ:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 14/08/2020թ.-ի որոշմամբ ֆինանսական խումբը վերանվանվել է «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խումբ: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն նշանակվել է որպես «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խմբի պատասխանատու անձ:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն իրականացնում է ներդրումային ֆոնդերի կառավարման գործունեություն և հիմնադրվել է 2013թ-ին:

2.1.6. Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը

Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է ***Հավելված 4*-ում:**

2.1.7. Բիզնեսի նկարագիրը

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ գործունեությունը թիրախավորված է 3 հիմնական բիզնես ուղղություններով՝ գյուղատնտեսական, մանրածախ, ՓՄՁ:

Նշված ուղղություններով Բանկի կողմից առաջարկվող հիմնական ծառայություններն են.

- գյուղատնտեսական, առևտրային, սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրումը
- հաշիվների սպասարկումը,
- ցպահանջ և ժամկետային ավանդների ներգրավումը,
- տեղական և միջազգային պլաստիկ քարտերի թողարկումը և սպասարկումը,
- արտարժութային գործառնությունները,
- էլեկտրոնային փոխանցումները, ներառյալ՝ արագ համակարգերով փոխանցումները,

- բրոքերային ծառայությունների մատուցումը, ռեեստրի վարումը և կորպորատիվ արժեթղթերի պահառությունը
- միջազգային առևտրային գործարքների ֆինանսավորումը (ակրեդիտիվներ, երաշխիքներ)
- այլ ծառայություններ

Բանկի կողմից մատուցվող ծառայությունների մեջ հատկապես կարևոր տեղ է հատկացվում վարկային ներդրումներին, որոնք կատարվում են Հայաստանի ողջ տարածքում:

Բանկի գործունեության կարևորագույն ուղղություններից է նաև ավանդների կայուն բազայի ընդլայնումը: Բանկը շարունակ ավելացնում է ցպահանջ և ժամկետային ավանդների ներգրավումը ֆիզիկական և իրավաբանական անձանցից:

Բանկը վարում է ակտիվ քաղաքականություն տեղական և միջազգային վճարային քարտերի թողարկման և սպասարկման ուղղությամբ՝ քարտապանների համար անկանխիկ գործառնությունները դարձնելով առավել շահավետ, հարմարավետ և ապահով:

Ներկայումս Բանկը միակն է շուկայում, որ սպասարկում է 7 վճարային համակարգ և հանդիսանում է 4 քարտային 3 խոշոր՝ American Express, Visa International, Mastercard Europe և 1 ազգային՝ ArCa վճարահաշվարկային համակարգերի քարտեր թողարկող: Ինչպես նաև Ակբա բանկը, լինելով Հայաստանում ռուսական МИР վճարային համակարգի առաջին գործընկերներից մեկը, թողարկում է նաև «ԱՐՔԱ-ՄԻՐ» չիպային, և սպասարկում МИР վճարային համակարգի քարտեր:

Հարկ է նշել, որ 2014թ. Բանկը համագործակցության նոր պայմանագիր կնքեց AmericanExpress ընկերության հետ՝ ևս 10 տարով երկարաձգելով բացառիկության հիմունքներով 2009թ.-ին կնքված պայմանագիրը: Բանկը ՀՀ տարածքում ունի բանկոմատների և POS-տերմինալների բավական ընդլայնված ցանց, որն ապահովում է կանխիկ և անկանխիկ գործարքների հարմարավետությունը ՀՀ ողջ տարածքում:

Բանկի ACBA DIGITAL բջջային և վեբ հարթակներում ներդրվել են մի շարք նոր թվային պրոդուկտներ և ծառայություններ (բանկոմատին փոխանցումը, գումարի հարցումը, Apple Pay, Garmin Pay, 5G օնլայն վարկեր, քարտից քարտ փոխանցումներ և այլն), որոնց արդյունքում Բանկի կողմից թվային բանկային ծառայությունների ասպարեզում արձանագրած հաջողություններն արդեն իսկ նկատելի են հաճախորդների շրջանում: Վերջին հետազոտությունների արդյունքները վկայում են, որ Բանկի ACBA DIGITAL հարթակը հանդիսանում է շուկայում ամենաշատ օգտագործելի բանկային հարթակներից մեկը:

Ի հավելումն վերոնշյալի, հարկ է նշել նաև, որ Բանկը՝ հավատարիմ մնալով իր սկզբունքներին, չի ֆինանսավորում շրջակա միջավայրի պահպանությանը վնասող գործունեությունը, զենքի/զինամթերքի արտադրությամբ և առևտրով, ինչպես նաև խաղատնային և վիճակախաղային գործունեությամբ զբաղվող

կազմակերպություններին: Ավելին, ֆինանսավորում իրականացնելիս հնարավորինս ուսումնասիրում է տվյալ գործունեության ազդեցությունը սոցիալական և շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև խթանում է էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործումը:

2.1.8. Ակտիվների որակը

Ստորև ներկայացվում է Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը.

հազ. ՀՀ դրամով

	30.06.2022թ. (Աուդիտ չանցած)	**31.12.2021թ. (Աուդիտ անցած)**	**31.12.2020թ. (Աուդիտ անցած)**
Ակտիվներ, այդ թվում՝	564,419,422	546,930,535	495,631,691
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	433,072,193	416,142,057	402,612,602
Պահանջներ հաճախորդների նկատմամբ	398,236,545	372,528,145	328,035,951
Պետական արժեթղթեր	13,748,239	16,541,954	9,452,410
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	76.73%	76.09%	81.23%
Բանկի բարձր իրացվելի ակտիվներ/Ընդհանուր ակտիվներ Ն²1	19.53%	24.57%	24.74%

2.2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր

2.2.1. Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Թողարկողին առնչվող ռիսկերի ամբողջական նկարագրությունը ներկայացված է **Ազդագրի 4.2.** մասում:

Իր գործունեության ընթացքում Բանկն առնչվում է հետևյալ հիմնական ռիսկերին.

Վարկային ռիսկ - բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկը, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ, որն ազդում է

վերջինիս գործունեության վրա, առաջացնում լրացուցիչ ծախսեր և բացասական անդրադառնում շահույթի վրա:

Իրացվելիության ռիսկ - ռիսկ, որ Բանկը չի ունենա բավարար իրացվելիություն սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունների դիմաց վճարում կատարելու համար:

Տոկոսադրույքի ռիսկ - այս ռիսկը տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխման արդյունքում ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է:

Արտարժութային ռիսկ - այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից:

Գնային ռիսկ - նյութական ակտիվների (գույք, գրավ) գների փոփոխության արդյունքում բանկի կորստի ռիսկն է:

Գործառնական ռիսկ - աշխատակիցների գործողությունների սխալների, տեխնի-կական անսարքության և խարդախությունների հետևանքով Բանկի մոտ առաջացող միջոցների կորստի հավանականությունն է:

Օրենսդրական և նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկ - բանկային գործունեությանը վերաբերող իրավական և օրենդրական դաշտի անբարենպաստ կամ անցանկալի փոփոխությունների, պայմանագրերում առկա հակասական դրույթների և այլ նմանատիպ հանգամանքների հետևանքով կորուստներ կրելու հավանականությունն է:

Համբավի ռիսկ - հավանականությունն է, որ Բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքը կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազմանը, կոնտրագենտների/հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատմանը, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկմանը: Այս առումով Բանկը բարձր է գնահատում իր բարի համբավը և գործադրում լավագույն ջանքեր Բանկի հեղինակության պահպանման ուղղությամբ:

Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ - Բանկի հանդեպ իրավական, վարչական կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման, էական ֆինանսական կորուստների և համբավին սպառնացող վտանգի ռիսկն է:

Երկրի ռիսկ - կախված է երկրի սոցիալ-տնտեսական զարգացվածության մակարդակից, նրա տեղից և դերից, ինչպես նաև տիրող քաղաքական իրադրությունից: Ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունները կարող են առաջացնել այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են բերել տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների նվազման, որն էլ բացասաբար կանդրադառնա Բանկի կողմից վարկավորվող տնտեսության բոլոր ճյուղերի վրա:

Մրցակցային պայմանների ռիսկ - շուկայում մրցակից բանկերի կողմից առավել բարենպաստ պայմաններով նույնանման ծառայությունների մատուցման հետ կապված Բանկի պոտենցիալ եկամուտները կորցնելու հավանականությունն է:

2.2.2. Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համալիր նկարագրությունը ներկայացված է Ազդագրի 3.1 մասում:

Վարկային կամ դեֆոլտի ռիսկ - առաջանում է, երբ կորպորատիվ պարտատոմս թողարկողն ապագայում հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման և սնանկացման հետևանքով չի կարողանում ժամանակին վճարել արժեկտրոնային վճարումները կամ մայր գումարները:

Տոկոսադրույքի ռիսկ - հաշվի առնելով, որ շուկայական տոկոսադրույքները և պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կապի մեջ՝ շուկայական տոկոսադրույքների բարձրացումը կհանգեցնի պարտատոմսերի գների անկմանը այլ հավասար պայմաններում:

Իրացվելիության ռիսկ - ի հայտ է գալիս, երբ կորպորատիվ պարտատոմսերի շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության, Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով ներդրողը ցանկացած պահի չի կարողանում իր համար շահավետ գնով արագ իրացնել պարտատոմսերը և հետևաբար կրում է ֆինանսկան կորուստներ՝ ստիպված լինելով այդ պարտատոմսերը վաճառել ցածր գնով:

Գնաճի ռիսկ - քանի որ պարտատոմսերի տոկոսային վճարումները ֆիքսված են, դրանց իրական արժեքը կարող է նվազել աճող գնաճի պայմաններում: Որքան երկար է պարտատոմսի ժամկետը, այնքան բարձր է գնաճի ռիսկը:

Վերաներդրման ռիսկ - ի հայտ է գալիս, երբ պարտատոմսից պարբերաբար ստացվող տոկոսային վճարումները հնարավոր չի լինում ներդնել նվազագույնը համարժեք եկամտաբերությամբ՝ կապված շուկայում տոկոսադրույքի նվազման հետ:

Արտարժութային ռիսկ - ի հայտ է գալիս փոխարժեքների տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված հասույթը գնահատում է ներդրման արժույթից տարբերվող արժույթով:

2.3. Բանկի զարգացման միտումները

2.3.1. Զարգացման միտումները

Առաջիկա ժամանակաշրջանի համար Բանկը շարունակելու է շեշտադրել իր գործունեությունը մանրածախ, ՓՄՁ, գյուղատնտեսական ուղղություններով: Կարևորելով հաճախորդներին հեռահար եղանակով տրամադրվող ծառայությունները՝ Բանկը շարունակելու է ընդլայնել հեռահար ծառայությունների մատուցման ուղիները: Այս առումով, Բանկի գործունեությունը նպատակաուղղվելու է ինչպես մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, ծախսերի կրճատմանը, սպասարկման որակի բարձրացմանը, այնպես էլ նոր ծառայությունների տրամադրմանը: Մասնավորապես՝

- առաջիկա տարիներին բանկը խիստ ուշադրություն է դարձնելու վարկավորման գործընթացների ավտոմատացման և արդյունավետության բարելավման վրա՝ հնարավորինս կրճատելով վերջիններիս գծով կատարվող գործառնական ծախսերը
- կարևորելով Բանկի հաճախորդներին հեռահար եղանակով տրամադրվող բանկային ծառայությունների ընդլայնումը, ինչպես նաև հաճախորդների կողմից բանկային ծառայություններից օգտվելու հարմարավետության բարելավումը՝ նախատեսվում է անընդհատ համալրել բջջային և վեբ հավելվածներով մատուցվող ծառայությունների ցանկը:
- հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումները (որոնք ժամանակի ընթացքում էապես ազդում են նաև հաճախորդների վարքագծի վրա)՝ Բանկը շարունակաբար զարգացնելու և ներդնելու է նոր բիզնես մոդելներ՝ գործարկելով իրական ժամանակի ռեժիմում տարատեսակ բանկային և ոչ բանկային ծառայությունների մատուցման նոր տեխնոլոգիական պլատֆորմներ և թվային ուղիներ:
- Բանկը կընդլայնի նաև քարտերի տրամադրման և սպասարկման ծավալներն ՀՀ ողջ տարածքում, ինչին զուգահեռ Բանկը կշարունակի ընդլայնել քարտերով տրամադրվող վարկային գծերի ընդհանուր ծավալը, որոնք կառաջարկվեն ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ կազմակերպություններին:

2.3.2. Դատական հայցեր, սպասվող փոփոխություններ

Բանկի Գործունեության համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը և լիցենզիաները ուժի մեջ են: Բանկը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթների մեջ, որոնք կարող են էականորեն ազդել Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա: Չեն սպասվում նաև կազմակերպական փոփոխություններ:

Մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի փոփոխությունները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	**30.06.2022թ. (Աուդիտ չանցած)**	**31.12.2021 (Աուդիտ անցած)**	**Աճ/նվազում**
Կապիտալ	95,429,972	88,193,367	8.21%
Ակտիվներ	564,419,422	546,930,535	3.20%
Պարտավորություններ	468,989,450	458,737,168	2.23%

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	01.01.22-30.06.22 (Աուդիտ չանցած)	01.01.21-30.06.21 (Աուդիտ չանցած)	Աճ/նվազում
Շահույթ/վնաս մինչև հարկումը	13,810,650	2,387,563	478.44%
Զուտ տոկոսային եկամուտներ	14,628,895	12,051,984	21.38%
Գործառնական եկամուտներ	25,574,275	16,374,426	56.18%

2.4. Աուդիտն իրականացնող անձինք և խորհրդատուներ

Բանկի անկախ աուդիտը վերջին հինգ տարիներին իրականացրել է.

- 2017-2021թթ.՝ «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ - հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0001, Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
հեռ.՝ +(374)10 50 07 90,
ինտերնետային կայք՝ www.ey.com/am,
կազմակերպության տնօրեն՝ Էրիկ Հայրապետյան:

Բանկը հայտարարել է արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ՝ 2022, 2023 և 2024 թվականների իր ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն իրականացնելու նպատակով: Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2022 թվականի սեպտեմբեր ամսին:

2.5. Ղեկավարությունը և բաժնետերերը

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով),
- Բանկի Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ),
- Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը (այսուհետ՝ Գործադիր տնօրեն):

Խորհուրդը և Գլխավոր գործադիր տնօրենը կառավարում են Բանկի գործունեությունը Բանկի կանոնադրությամբ իրենց տրված լիազորությունների շրջանակներում:

Բանկն ունի գլխավոր հաշվապահ, Ներքին աուդիտի ստորաբաժանում,Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և Կորպորատիվ քարտուղար:

2.5.1. Բանկի բաժնեփերերը

Բանկի նշանակալից բաժնետերերը ներկայացված են **Ամփոփաթերթի 2.1.3** մասում:

2.5.2. Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը բաղկացած է 10 (տասը) անդամներից՝ Խորհրդի նախագահից և ինը անդամներից, որոնց կազմը ներկայացվում է ստորև՝

Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառություն
Ռաֆայել Սարգսյան	Բանկի խորհրդի Նախագահ	Ընտրվել է 2022 թվականի հունվարին
Բրունո Շարիե	Բանկի խորհրդի անկախ անդամ	Ընտրվել է 2019 թվականի մայիսին
Կլաուս Գրեսենբաուեր	Բանկի խորհրդի անկախ անդամ	Ընտրվել է 2022 թվականի ապրիլին
Աշոտ Կարապետյան	Բանկի խորհրդի անկախ անդամ	Ընտրվել է 2022 թվականի ապրիլին
Արմեն Մկրտչյան	Բանկի խորհրդի անդամ	Ընտրվել է 2020 թվականի մայիսին
Հրաչ Սարգսյան	Բանկի խորհրդի անդամ	Ընտրվել է 2020 թվականի մայիսին
Վարդան Ուռուտյան	Բանկի խորհրդի անդամ	Ընտրվել է 2022 թվականի ապրիլին
Հենրիկ Քոչինյան	Բանկի խորհրդի անդամ	Ընտրվել է 2010 թվականի ապրիլին
Արամ Բաբայան	Բանկի խորհրդի անդամ	Ընտրվել է 2022 թվականի ապրիլին
Հարություն Փախչանյան	Բանկի խորհրդի անդամ	Ընտրվել է 2022 թվականի ապրիլին

2.5.3. Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը

Բանկի գլխավոր գործադիր տնօրենն է Հակոբ Անդրեասյանը. փորձառությունն ավելի քան 26 տարի: Բանկի գլխավոր գործադիր տնօրենը ունի 5 տեղակալներ, որոնց կազմը ներկայացվում է ստորև՝

Անուն ազգանուն	Զբաղեցրած պաշտոն	Փորձառություն
Նիկոլայ Հովհաննիսյան	Գործառնական կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ	ավելի քան 26 տարի
Ստյոպա Զաքինյան	Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ	ավելի քան 22 տարի
Նորիկ Նազարյան	Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ	ավելի քան 24 տարի
Արսեն Մելքոնյան	Բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ	ավելի քան 22 տարի
Տիգրան Սիմոնյան	Պլատֆորմների և տեխնոլոգիաների զարգացման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ	ավելի քան 13 տարի

Բանկի գլխավոր հաշվապահն է Արմեն Հակոբյանը. փորձառությունն ավելի քան 24 տարի:

Բանկի աշխատակիցների թիվը 30.06.2022թ. դրությամբ կազմել է 1550 շխատող:

2.6. Պարտատոմսերի հիմնական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են, ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն: Տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով:

Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են ԱՄՆ դոլարով/ՀՀ դրամով, դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվում են ըստ թողարկման արժույթի: Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմելու է առավելագույնը 30 000 000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար, 30 000 000 000 (երեսուն միլիարդ) ՀՀ դրամ:

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը կազմելու է առավելագույնը 300 000 (երեք հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում, 300 000 (երեք հարյուր հազար) հատ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը համապատասխանաբար կազմելու է 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար և 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ և ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Բանկի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման հիմնական նպատակն է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են վարկերի տրամադրմանը այդ թվում՝ էնեգոարդյունավետության և այլ կանաչ նախագծերի ֆինանսավորմանը:

2.7. Պարտատոմսերի առաջարկի նկարագիրը

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:

Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման առաջին օրը համընկնելու է: Պարտատոմսերի տեղաբաշխումը իրականացվելու է Բանկի կենտրոնական գրասենյակի և մասնաճյուղերի միջոցով:

Հայտերը ներկայացվում են Բանկի հաստատված տիպային օրինակով, որը հրապարակվում է նաև **www.acba.am** ինտերնետային կայքում, (այսուհետ՝ հայտ) հետևյալ եղանակներով.

- «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու միջոցնով, կամ
- ACBA DIGITAL հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով *(եթե առկա է համապատասխան տեխնիկական հնարավորություն)*:

Պարտատոմսերի ձեռքբերման համար հիմք է ընդունվում ներդրողների կողմից վերոնշյալ կարգով համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտի ներկայացումը և պարտատոմսերի գնման համար անհրաժեշտ վճարման կատարումը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունումը:

2.8 Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ստորև ներկայացվում են Բանկի 2020-2021թթ., ինչպես նաև 2022թ.-ի 2-րդ եռամսյակի ֆինանսական տվյալները՝

հազ. ՀՀ դրամով

Ցուցանիշի անվանումը	30.06.2022թ. (Աուդիտ չանցած)	2021թ. (Աուդիտ անցած)	2020թ. (Աուդիտ անցած)
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	10,658,183	9,813,482	2,724,631
Սեփական կապիտալի միջին մեծություն	91,811,670	79,351,235	69,575,833
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) %	23.22%*	12.37%	3.92%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	10,658,183	9,813,482	2,724,631
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	555,674,979	521,281,113	464,122,333
Ակտիվների շահութաբերություն (ROA) %	3.84%*	1.88%	0.59%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	10,658,183	9,813,482	2,724,631
Գործառնական եկամուտ	25,574,275	34,936,357	32,740,768
Զուտ շահույթի մարժա (NPM) %	41.68%	28.09%	8.32%
Գործառնական եկամուտ	25,574,275	34,936,357	32,740,768
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	555,674,979	521,281,113	464,122,333
Ակտիվների օգտագործման գործակից (AU) %	9.20%*	6.70%	7.05%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	555,674,979	521,281,113	464,122,333
Սեփական կապիտալի միջին մեծություն	91,811,670	79,351,235	69,575,833
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) %	605%	657%	667%
Զուտ տոկոսային եկամուտ	14,628,895	25,515,533	25,904,432

* Տվյալ ցուցանիշը տարեկանացված է:

Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	421,224,762	409,377,330	375,826,242
Զուտ տոկոսային մարժա (NIM) %	6.95%*	6.23%	6.89%
Տոկոսային եկամուտ	26,130,013	46,810,424	46,090,166
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	421,224,762	409,377,330	375,826,242
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն %	12.41%*	11.43%	12.26%
Տոկոսային ծախսեր	11,501,118	21,294,891	20,185,734
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	446,399,172	435,964,194	406,534,131
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր%	5.15%*	4.88%	4.97%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	10,658,183	9,813,482	2,724,631
Բաժնետոմսերի թիվը	5,500,000	5,333,333	5,000,000
Զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	3.876*	1.840	0.545
Սպրեդ	7.25%*	6.55%	7.29%

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են ***Հավելված 3-ում:***

* Տվյալ ցուցանիշը տարեկանացված է:

ԲԱԺԻՆ 3. ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1. Ռիսկային գործոններ

Ներդրումները պարտատոմսերում, ինչպես նաև այլ արժեթղթերում կապված են որոշակի ռիսկերի հետ, որոնք կարող են հանգեցնել Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի և իրացվելիության անկմանը: Այդ իսկ պատճառով ներդրողը ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելու ընթացքում պետք է ուսումնասիրի և վերլուծի ներդրման հետ կապված և սույն ազդագրում բացահայտված հավանական ռիսկերը, ինչպես նաև ներկայացված այլ տեղեկատվությունը:

Պետք է հաշվի առնել նաև, որ ներկայացված ռիսկերից բացի, կարող են առաջանալ այլ անկանխատեսելի ռիսկային գործոններ, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ներդրումների վերադարձելիության և/կամ արժեքի վրա: Հետևաբար ներդրողը ներդրման որոշումը կայացնելիս պետք է լիարժեք գիտակցի ներդրման էությունը և առաջնորդվի նաև իր սեփական փորձով, նպատակներով ու ակնկալիքներով:

Ստորև ներկայացվում են Բանկի կողմից բացահայտված այն հիմնական ռիսկերը, որոնք ներդրողը պետք է կարևորի կորպորատիվ պարտատոմսերում ներդրումներ կատարելիս.

Վարկային կամ դեֆոլտի ռիսկ - առաջանում է, երբ կորպորատիվ պարտատոմս թողարկողն ապագայում հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման և սնանկացման հետևանքով չի կարողանում ժամանակին վճարել արժեկտրոնային վճարումները կամ մայր գումարները:

Տոկոսադրույքի ռիսկ - հաշվի առնելով, որ շուկայական տոկոսադրույքները և պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կապի մեջ՝ շուկայական տոկոսադրույքների բարձրացումը կհանգեցնի պարտատոմսերի գների անկմանը այլ հավասար պայմաններում, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը, մինչև մարումը պարտատոմսը վաճառելու դեպքում կարող է կրել վնասներ, կամ չստանալ նախատեսված եկամուտը:

Իրացվելիության ռիսկ - ի հայտ է գալիս այն դեպքում, երբ կորպորատիվ պարտատոմսերի շուկայում ձևավորված իրավիճակի կտրուկ փոփոխության, Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման հետևանքով ներդրողը ցանկացած պահի չի կարողանում իր համար շահավետ գնով արագ իրացնել պարտատոմսերը և, հետևաբար, կրում է ֆինանսական կորուստներ՝ ստիպված լինելով այդ պարտատոմսերը վաճառել ցածր գնով:

Բանկը՝ որպես թողարկող, պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար վերջիններիս նախատեսում է օժտել որոշակի ներդրումային որակներով, այն է՝ պարբերական արժեկտրոնային վճարումներ, մրցակցային եկամտաբերություն, ցուցակում և առևտրին թույլատվություն կարգավորվող շուկայում, ինչպես նաև շուկա ստեղծող ընկերության հետ համապատասխան պայմանագրի կնքում:

Այնուամենայնիվ, Բանկը չի կարող բացառել շուկայական անբարենպաստ փոփոխությունների արդյունքում իրացվելիության ռիսկի ծագման հավանականությունը:

Միևնույն ժամանակ ներդրողը պետք է հաշվի առնի որ, անկախ շուկայական պայմանների փոփոխություններից, Բանկի կողմից վճարվող անվանական արժեկտրոնների վճարման և պարտատոմսի անվանական գումարի մարման մեծություններն, արտահայտված թողարկման արժույթով, անփոփոխ են:

Ինֆլյացիոն ռիսկ - քանի որ պարտատոմսերի տոկոսային վճարումները ֆիքսված են, դրանց իրական արժեքը կարող է նվազել ինֆլյացիայի հետևանքով: Որքան երկար է պարտատոմսի ժամկետը, այնքան բարձր է ինֆլյացիոն ռիսկը:

Վերաներդրման ռիսկ - ի հայտ է գալիս, երբ պարտատոմսից պարբերաբար ստացվող տոկոսային վճարումները հնարավոր չի լինում ներդնել նվազագույնը համարժեք եկամտաբերությամբ՝ կապված շուկայում տոկոսադրույքի նվազման հետ: Հարկ է նշել, սակայն, որ վերաներդրման ռիսկը ներդրումային որոշում կայացնելու գործընթացում էական գործոն չի հանդիսանա ընթացիկ կամ կարճաժամկետ (մեկ արժեկտրոնային ժամանակամիջոցից ոչ ավել) ներդրումային նպատակներ ունեցող ներդրողների համար:

Արտարժութային ռիսկ - ի հայտ է գալիս փոխարժեքների տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի պարտատոմսերից ստացված եկամուտների վրա, երբ ներդրողը պարտատոմսից ստացված հասույթը գնահատում է ներդրման արժույթից տարբերվող արժույթով: Արտարժութային ռիսկի օրինակ է, երբ ներդրողը ներդրում կատարելու համար արտարժույթը փոխարկում է ՀՀ դրամի և պարտատոմսերի մարումից հետո ստացված ՀՀ դրամը փոխարկում է արտարժույթի: ՀՀ դրամի արժեզրկման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները փոխարկելու դեպքում, արտարժույթով հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ լինել:

3.2. Հիմնական տեղեկատվություն

Բանկի կողմից անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվելու են Բանկի հիմնական գործունեության, այն է՝ կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի տրամադրմանը, այդ թվում՝ էնեգոարդյունավետության և այլ կանաչ նախագծերի ֆինանսավորմանը:

3.2.1. Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ Բանկի ինտերնետային կայքում:

3.3. Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն

3.3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

Թողարկվող պարտատոմսերն անվանական արժեկտրոնային պարտատոմսեր են, անբաժանելի են և փոխարկելի չեն: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

3.3.2. Երկիրը

Պարտատոմսերը թողարկվելու են ՀՀ տարածքում՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
Դրանց շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկված պարտատոմսերն ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը կվարի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ (ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա 5-րդ հարկ, հեռ.՝ +(374) 60 61 55 55, լրաց.111, +(374) 10 54 33 21, լրաց.136) (այսուհետ՝ Դեպոզիտարիա)՝ ըստ համապատասխան կանոնների, ընթացակարգերի:

3.3.4. Արժեթղթի անվանական արժեքը և քանակը

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Թողարկվող պարտատոմսերի ընդհանուր քանակը կազմելու է առավելագույնը 300 000 (երեք հարյուր հազար) հատ հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում, 300 000 (երեք հարյուր հազար) հատ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում:

3.3.5. Թողարկման արժույթը

Թողարկման արժույթն ԱՄՆ դոլարն է/ՀՀ դրամը:

3.3.6. Պարտատոմսերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ՝

առաջին - ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.

երկրորդ - այն պարտատերերի պահանջները, որոնք Բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ Բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել Բանկում ադմինիստրացիա

նշանակվելուց հետո՝ բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի.

երրորդ - ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև տասնվեց միլիոն դրամի չափով, իսկ արտարժութային ավանդների (հաշիվների) դեպքում՝ յոթ միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը տասնվեց միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ յոթ միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում, տվյալ անձի՝ մինչև տասնվեց միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ յոթ միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով: Մեկ անձի՝ բանկում մեկից ավելի ավանդներ (հաշիվներ) ունենալու դեպքում նրա բոլոր ավանդները միավորվում են, և դրանց հանրագումարը համարվում է մեկ ավանդ:

չորրորդ - բանկի այլ պարտավորությունները՝ ներառյալ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից հատուցման կազմակերպման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների

հինգերորդ - պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

վեցերորդ - ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

յոթերորդ - բանկի մասնակիցների պահանջները:

Առաջարկվող պարտատոմսերի դեպքում, սեփականատերերի պահանջները կբավարարվեն վերոնշյալ հերթականության 4-րդ հերթին, բացառությամբ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի իմաստով ավանդ հանդիսացող ներդրումներից, որոնք հատուցվում են 3-րդ հերթին: Ընդ որում՝ յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերից), ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն դրամային Պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը տասնվեց միլիոն ՀՀ դրամ է.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային Պարտատոմսեր, ապա երաշխավորված դրամական միջոցների չափը յոթ միլիոն ՀՀ դրամ է.
- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային Պարտատոմսեր, և դրամային Պարտատոմսերի գումարը յոթ միլիոն ՀՀ դրամից

ավելի է, ապա երաշխավորվում է միայն դրամային Պարտատոմսերի գումարը՝ մինչև տասնվեց միլիոն ՀՀ դրամով.

- եթե Ներդրողն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժութային Պարտատոմսեր, և նրա դրամային Պարտատոմսերի գումարը պակաս է յոթ միլիոն ՀՀ դրամից, ապա երաշխավորվում է դրամային Պարտատոմսերի գումարն ամբողջությամբ և արտարժութային Պարտատոմսերի գումարը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային Պարտատոմսերի տարբերության չափով:

Ներդրողի՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները, ներառյալ Պարտատոմսերում ներդրումները, համարվում են մեկ ավանդ՝ բացառությամբ չերաշխավորված ավանդների և ավանդատուի՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ ավանդ՝ բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները

Բանկի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:

3.3.7. Արժեթղթերից բխող իրավունքները

Պարտատոմսերից բխող իրավունքները հետևյալն են.

1. ստանալ պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամուտները և մարման գումարը՝ ըստ Ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը /պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին Թողարկողի կողմից: Եթե պարտատոմսերով նախատեսված արժեկտրոնային եկամտի և պարտատոմսերի մարման գումարի վճարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա արժեկտրոնի/պարտատոմսերի մարման գումարի վճարումը իրականացվում է տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,
2. Թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,
3. գրավադրել պարտատոմսերն օրենքով սահմանված կարգով,
4. իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր, բացառությամբ ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հետևյալ դեպքերի՝

   4.1. մասնավոր գործարքների համար.

- այնպիսի գործարքներ, որոնց կողմերը նախապես հայտնի են, ընդ որում՝ համաձայն ՀՀ ԿԲ-ի սահմանման՝ մասնավոր գործարքներ են համարվում ՀՀ ԿԲ-ի և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքները,
- թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետգնման կամ ձեռքբերման գործարքները,
- արժեթղթերը հանձնելու առաջարկի շրջանակներում բաժնային արժեթղթերով կատարվող գործարքները,

4.2. պարտատոմսերի տեղաբաշխման շրջանակներում տեղաբաշխողների կողմից իրականացվող գործարքների համար,

4.3. շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերն այլ կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության և վաճառելու դեպքերի համար,

5. օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

Միաժամանակ պարտատոմսերում ներդրողները պարտավոր են.

1. «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորներից որևէ մեկում կամ անվանատիրոջ մոտ, վերջինիս կողմից սահմանված կանոնների համաձայն իր հաշվին բացել անձնական հաշիվ,
2. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կամ ցանկացած այլ բանկում իր անվամբ ունենալ դրամային/արտարժութային հաշիվ,
3. պարտատոմսերի թողարկման պայմաններով սահմանված ժամկետներում իրականացնել պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարների փոխանցում համապատասխան բանկային հաշվին, կատարել պարտատոմսերի ձեռքբերումից, օտարումից և այլ գործողություններից ծագող դրամային և ոչ դրամային ցանկացած պարտավորություն,
4. կրել օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

3.3.8. Անվանական տոկոսադրույքը և վճարման պայմանները

Պարտատոմսերի դիմաց հաշվարկվելու և վճարվելու է արժեկտրոնային անվանական եկամուտ, որը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար, սակայն այն կսահմանվի ոչ ավել քան տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված 2 տարի ժամկետով դասական ժամկետային ավանդի տոկոսադրույք գումարած 1%՝ ԱՄՆ դոլարի դեպքում, և ոչ ավել քան տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված 2 տարի ժամկետով դասական ժամկետային ավանդի տոկոսադրույք գումարած 2%՝ ՀՀ դրամի դեպքում: Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային անվանական եկամուտը վճարվելու է կիսամյակային պարբերականությամբ:
Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ըստ թողարկման արժույթի:

Արժեկտրոնների հաշվարկման օրեր ենթակա են որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Արժեկտրոնները (տոկոսագումարները) ստանալու իրավունք ունեն պարտատոմսերի արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրը պարտատոմսերի սեփականա-տերերի ռեեստրի փակման դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք՝ (սեփականատերերը):

Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը փակվելու է պարտատոմսերի հերթական արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող օրվա ժամը 18:00-ին, այսինքն՝ նշված ժամից հետո ռեեստրում գրանցված սեփականատերերը չեն կարող օգտվել նախորդող արժեկտրոնային ժամանակաշրջանի համար (նախորդ կիսամյակի) վճարվող արժեկտրոնի ստացման իրավունքից:

Արժեկտրոնային վճարումների համար նախատեսվող գումարներն սեփականատերերին վճարվում են մինչև 10 ՀՀ դրամ ճշտությամբ (ընդ որում կլորացումը իրականացվում է թվաբանական կլորացման կանոնների համաձայն՝ մինչև ամենամոտ ամբողջ տասնավոր թիվը):

Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում միավորի ամբողջ թիվը չի փոխվում, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 0-ից 4-ի, և փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա տասնորդական միավորը հավասար է 5-ից 9-ի:

Բանկն արժեկտրոնի գումարները վճարելու է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու կամ բացակայության դեպքում վճարումները իրականացվելու են Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտում նշված հաշվեհամարին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ կանխիկ՝ Բանկի գլխամասային գրասենյակում:

Արժեկտրոնի գումարները կանխիկ վճարելու դեպքում ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ վերոնշյալ գումարի՝ հատուկ հաշվի վրա մնալը, մինչև դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI=FV \times \frac{C}{K} \times \frac{DCS}{DCC}$$

AI – մեկ պարտատոմսի կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV – մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը (արժեկտրոնների կիսամյակային վճարման դեպքում k=2),
Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է **Actual/Actual**-ը, ընդ որում

DCS – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2 - D1M1Y1],

DCC – արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանա-կանության դեպքում [D3M3Y3 - D1M1Y1],

D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,

D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,

D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մար-ման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

3.3.9. Արժեթղթերի մարման ժամկետը

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրը փակվում է պարտատոմսերի մարման օրվան նախորդող օրը՝ ժամը 18:00-ին, այսինքն՝ պարտատոմսերի մարման գումարն իրավունք ունեն ստանալ մինչև ռեեստրի փակման պահը պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք:

Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, այսինքն՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի փակման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում:
Բանկը պարտատոմսերի մարման գումարները վճարում է անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների ճիշտ չլինելու կամ բացակայության դեպքում վճարումները իրականացվելու են Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտում նշված հաշվեհամարին, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ կանխիկ՝ Բանկի գլխամասային գրասենյակում:

Մարման գումարները կանխիկ վճարելու դեպքում ներդրողները պետք է տեղյակ լինեն, որ վերոնշյալ գումարի՝ հատուկ հաշվի վրա մնալը, մինչև դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի մարման դիմաց վճարումները կատարվելու են ՀՀ դրամով/ԱՄՆ դոլարով:

Հաշվի առնելով պարտատոմսերի մարման հետ կապված հնարավոր միջբանկային փոխանցումների անհրաժեշտությունը (եթե ներդրողի դրամային հաշիվը չի գտնվում Բանկում)՝ ներդրողները պետք է նկատի ունենան, որ մարման գումարների փոխանցման (միջբանկային փոխանցումներ) հետ կապված միջնորդավճարների ծախսերը պետք է կատարվեն ներդրողի հաշվին, հետևաբար նման ներդրողները մարման գումարները կստանան պահումներով՝ համաձայն համապատասխան Բանկում գործող սակագների:

Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.3.10. Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար առաջնային տեղաբաշխման ողջ ժամանակահատվածի ընթացքում տեղաբաշխման տարեկան եկամտաբերությունը (մինչև մարումը տարեկան եկամտաբերություն, Yield to maturity), համարժեք է լինելու տվյալ տրանշի համար նախատեսված տարեկան արժեկտրոնային դրույքին:

3.3.11. Նոր թողարկման մասին տեղեկատվություն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ անվանական պարտատոմսերը թողարկվում են համաձայն 2022թ. օգոստոսի 19-ի Բանկի խորհրդի թիվ 138-3.3 որոշման, որով սահմանվել են թողարկման և տեղաբաշխման հետևալ հիմնական պայմանները.

1. Պարտատոմսերի արժույթը՝ ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ:

Թողարկման ընդհանուր ծավալը՝ Առավելագույնը՝ 30 000 000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար, 30 000 000 000 (երեսուն միլիարդ) ՀՀ դրամ

2. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:
3. Յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից, սակայն.
   3.1. ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ ոչ պակաս քան 2 000 000 (երկու միլիոն) և ոչ ավել քան 10 000 000 (տաս միլիոն) ԱՄՆ դոլար,
   3.1. ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում՝ ոչ պակաս քան 1 000 000 000 (մեկ միլիարդ) և ոչ ավել քան 10 000 000 000 (տաս միլիարդ) ՀՀ դրամ:
4. Պարտատոմսերի շրջանառության ժամկետը՝ ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից, սակայն այն կարող է սահմանվել ոչ պակաս քան 2 տարի և ոչ ավել քան 4 տարի մարման ժամկետով:
5. Տարեկան արժեկտրոնային դրույքը՝ ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից, սակայն այն կսահմանվի ոչ ավել քան տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված 2 տարի ժամկետով դասական ժամկետային ավանդի

տոկոսադրույք գումարած 1%՝ ԱՄՆ դոլարի դեպքում, և ոչ ավել քան տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված 2 տարի ժամկետով դասական ժամկետային ավանդի տոկոսադրույք գումարած 2%՝ ՀՀ դրամի դեպքում:

6. Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:
7. Արժեկտրոնների հաշվարկման օրը՝ ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից:
8. Պարտատոմսերի մարման օրը՝ ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից:
9. Պարտատոմսերի քանակը՝ Առավելագույնը՝ 300 000 (երեք հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում, 300 000 (երեք հարյուր հազար) հատ ՝ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում
10. Մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումները՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից, սակայն.

- ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ կարող է սահմանվել ոչ պակաս քան 5 (հինգ) և ոչ ավել քան 10 000 (տաս հազար) հատ,
- ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում՝ կարող է սահմանվել ոչ պակաս քան 5 (հինգ) և ոչ ավել քան 5 000 (հինգ հազար) հատ,

11. Պարտատոմսերի տեսակը՝ անվանական արժեկտրոնային:
12. Պարտատոմսերի ձևը՝ ոչ փաստաթղթային:
13. Պարտատոմսերի փոխարկելիությունը՝ ոչ փոխարկելի:
14. Արժեկտրոնի արժույթը՝ հաշվարկվելու է և վճարվելու է ԱՄՆ դոլարով/ ՀՀ դրամով (ըստ թողարկման արժույթի):
15. Պարտատոմսերի ապահովվածությունը՝ չապահովված:
16. Պարտատոմսերի շրջանառության ձևը՝ ազատ շրջանառության իրավունքով:
17. Կարգավորվող շուկայում պարտատոմսերի ցուցակումը՝ պարտատոմսերը ենթական են ցուցակման «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում:
18. Պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն՝ պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.3.12. Շրջանառության սահմանափակումներ

Թողարկողի կանոնադրությամբ կամ պարտատոմսերի թողարկման մասին Թողարկողի համապատասխան իրավասու մարմնի որոշմամբ պարտատոմսերի թողարկման, ինչպես նաև պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ որևէ այլ սահմանափակումներ չեն սահմանվում, բացառությամբ Բանկի ֆինանսական անվտանգության քաղաքականությամբ սահմանված դեպքերի (որին կարելի է

ծանոթանալ Բանկի կենտրոնական գրասենյակում) և տեղաբաշխման ընթացքում մեկ ներդրողի նկատմամբ կիրառվող ձեռք բերվող պարտատոմսերի ծավալի սահմանափակումների, որն ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված որևէ այլ ահմանա-փակումներ չկան՝ բացառությամբ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության, պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ:

3.3.13. Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Կարևոր ծանուցում: Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ, Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից՝ կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից*:**

Թողարկողի պարտատոմսերից ստացվող եկամուտն ենթակա է հարկման ըստ հետևյալ հարկատեսակների.

1. Շահութահարկ
2. Եկամտային հարկ

<u>ՀՀ-ում շահութահարկ են վճարում.</u>

1. ռեզիդենտ կազմակերպությունները, բացառությամբ ՀՀ հարկային օրենսգրքի 103-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի.
2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված՝
   - անհատ ձեռնարկատերերը
   - նոտարները
3. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած պայմանագրային ներդրումային ֆոնդերը (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի).
4. Ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

Շահութահարկով հարկման օբյեկտ է համարվում՝

1. ռեզիդենտ կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների (այսուհետ՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող կամ ստացման ենթակա (այսուհետ՝ սույն բաժնում՝ ստացվող) համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների անձնական եկամուտների.
2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառված, կանոնները գրանցած ներդրումային ֆոնդերի (բացառությամբ կենսաթոշակային ֆոնդերի և երաշխիքային ֆոնդերի), ինչպես նաև «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված արժեթղթավորման հիմնադրամի համար՝ զուտ ակտիվների հանրագումարը.

3. ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, ինչպես նաև մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներ) համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող անձանական եկամուտների:

Շահութահարկի գումարը 1. և 2. կետերով սահմանված անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ **18 տոկոս** դրույքաչափով:

Շահութահարկի գումարը 3. կետով սահմանված անձանց համար հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ **10 տոկոս** դրույքաչափով:

ՀՀ հարկային օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողներին վճարված եկամուտների գծով ձևավորվող հարկման բազայի մասով շահութահարկը հաշվարկում և պահում է հարկային գործակալը, ընդ որում՝ տվյալ դեպքում որպես հարկային գործակալ հանդես է գալիս Բանկը:

4. 2020 թվականի մարտի մեկից ուժի մեջ մտած Հարկային օրենսգրքի փոփոխությունների համաձայն, Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխարկումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները ազատվում են շահութահարկի վճարումից:

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում.

1. ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք
2. անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ որպես ֆիզիկական անձինք, եկամտային հարկ վճարորղներ են համարվում միայն անձնական եկամուտների մասով:

Եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում.

1. ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի

Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների.

2. ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող և (կամ) մշտական հաստատության միջոցով Հայաստանի Հանրապետության աղբյուրներից եկամուտ ստացող ոչ ռեզիդենտ Ֆիզիկական անձանց մշտական հաստատությանը վերագրվող եկամուտների, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների:

3. 2020 թվականի մարտի մեկից ուժի մեջ մտած Հարկային օրենսգրքի փոփոխությունների համաձայն.

3.1. տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը երկու տարուց պակաս թողարկված պարտատոմսերից ֆիզիկական անձանց կողմից ստացած տոկոսային եկամուտն ենթակա է հարկման, իսկ հարկման դրույքաչափը ներկայումս սահմանված է **10 տոկոս:**

3.2. Տեղաբաշխման պահից երկու տարի և ավել ժամկետ ունեցող պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտը ենթակա չէ հարկման եկամտային հարկով, եթե դրանք ցուցակվել են Հայաստանի Հանրապետության գործող ֆոնդային բորսայում ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկը պահում (գանձում) է հարկային գործակալը, ընդ որում՝ տվյալ դեպքում ֆիզիկական անձանց համար հարկային գործակալ է հանդիսանում Բանկը: Եկամտային հարկի պահումը (գանձումը) իրականացվում է տոկոսների յուրաքանչյուր վճարման դեպքում:

Պարտատոմսերից ստացվող եկամուտների հարկման կանոնները և եկամտային հարկի կիրառվող դրույքաչափը նույնն են ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:

3.4. Առաջարկի ժամկետները և պայմանները

3.4.1. Առաջարկի պայմանները և վիճակագրությունը

Պարտատոմսերի բաժանորդագրություն չի նախատեսվում:

Պարտատոմսերի տեղաբաշխման օրը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի ***կողմից:***

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի մինչև պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտի ներկայացման օրվա ժամը.

- 16:30՝ Բանկի ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու դեպքում: Ժամը 16:30-ից հետո համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր:
- 18:00՝ ACBA DIGITAL հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու դեպքում *(եթե առկա է համապատասխան տեխնիկական հնարավորություն)*:

Ընդ որում՝ տվյալ դեպքում, եթե հայտի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչև տվյալ օրվա 18:00-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 18:00-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված թողարկման նպատակով Բանկի կողմից բացված ***220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար) կամ 220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար)*** բանկային հաշվին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ ներկայացնողները պետք է տեղյակ լինեն, որ իրենց հայտերը չբավարարվելու կամ մասնակի բավարարվելու դեպքում պարտատոմսերի ձեռքբերման համար վճարված գումարների՝ հատուկ հաշվի վրա մնալը, մինչև դրանք իրենց վերադարձնելու պահը, միջոցների ապօրինի պահում կամ դրանք վերադարձնելուց խուսափել չի հանդիսանում և դրանց վրա տոկոսներ չեն հաշվարկվում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին ապահովել հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ է դրամական միջոցները մուտքագրել Տեղաբաշխողի կողմից «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված՝ Բանկի պարտատոմսերի տեղաբաշխման միջոցների հավաքագրման ***220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար) կամ 220004131292000(ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար)*** տարանցիկ հաշվեհամարին:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V = P x Q,$$

որտեղ՝

V-ն՝ պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ դրամական միջոցների մեծությունն է, որը կլորացվում է ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ:

P-ն՝ պարտատոմսերի ձեռք բերման հայտի Բանկ ներկայացման օրվա դրությամբ պարտատոմսի գինն է, որը հաշվարկվում է **Ազդագրի 3.4.3.1 ենթաբաժնի** համաձայն:

Q-ն՝ պարտատոմսերի այն քանակն է, որը ներդրողը ցանկանում է ձեռք բերել:

3.4.1.1. Առաջարկի ընդհանուր ծավալը

Թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը՝ 30 000 000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար, 30 000 000 000 (երեսուն միլիարդ) ՀՀ դրամ, որը կարող է իրականացվել մի քանի տրանշով: Տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի ծավալը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից:

3.4.1.2. Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման հստակ ժամանակահատվածը՝ ներառյալ տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը, ենթակա է որոշման Բանկի գործադիր տնօրենի կողմից: Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար թողարկման և տեղաբաշխման առաջին օրը համընկնելու է:

Մինչև Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի առաջնային տեղաբաշխման ավարտը չտեղաբաշխված Պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ժամկետը կարող է երկարաձգվել Բանկի գլխավոր գործադիր տնօրենի որոշմամբ մինչև 20 օրացուցային օրով՝ Ազդագրում սահմանված պայմաններով, եթե Բանկի խորհրդի կողմից չի կայացվել որոշում այդ պարտատոմսերի տեղաբաշխման պայմանների փոփոխության կամ դրանք մարելու վերաբերյալ:

Թողարկողի կողմից պարտատոմսերի առաջարկը, ինչպես նաև տեղաբաշխումը կարող է հետաձգվել կամ չեղյալ հայտարարվել միայն անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում (Ֆորս մաժոր):

Եթե Թողարկողը տեղաբաշխման ընթացքում ներկայացնում է Ծրագրային Ազդագրի լրացում, որը կապված է ազդագրում ներառված տեղեկատվության էական փոփոխության, նոր էական հանգամանքի կամ փաստի ի հայտ գալու հետ և ապա նա ներդրողի պահանջով պարտավոր է չեղյալ համարել ներդրողի տված ակցեպտը և առնվազն նրա կողմից արժեթղթերի ձեռքբերման գնով հետ վերադարձնել տեղաբաշխման ընթացքում նրանից ստացված միջոցները կամ հետ գնել մինչև լրացման ներկայացումը ներդրողին վաճառված արժեթղթերը: Սահմանված հետգնման պահանջը պետք է տեղաբաշխողին ներկայացվի գրավոր: Հետգնման պահանջի ներկայացման ժամկետը չի կարող ավելի կարճ լինել, քան Ծրագրային Ազդագրի լրացման հրապարակումից հետո 5-րդ աշխատանքային օրը:

Արժեթղթերի հետգնումն և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցների վերադարձն իրականացվում են Բանկի կողմից անկանխիկ եղանակով՝ ներդրողի հետգնման պահանջը գրավոր ներկայացնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշման կայացման և տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցները ներդրողներին վերադարձվում են կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին: Արժեկտրոնային եկամուտը նման դեպքում հաշվարկվում է ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռք բերման օրվա և այն դադարեցնելու մասին որոշման կայացման օրերի միջև ընկած ժամանակաշրջանի համար:

ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք):

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն ՀՀ ԿԲ համաձայնությամբ՝ առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրով:

Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա Բանկը պարտավոր է կայացնել տեղաբաշխումը դադարեցնելու մասին որոշում և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց Օրենքով

սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.1.3. Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացը

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու: Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները ներկայացնում են պարտատոմսերի ձեռքբերման հայտերը, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր: Հայտերը ներկայացվում են Բանկի հաստատված տիպային օրինակով, որը հրապարակվում է նաև **www.acba.am** ինտերնետային կայքում, (այսուհետ՝ հայտ) հետևյալ եղանակներով.

- «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու միջոցնով, կամ
- ACBA DIGITAL հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու միջոցով *(եթե առկա է համապատասխան տեխնիկական հնարավորություն)*:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի մինչև պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտի ներկայացման օրվա ժամը.

- 16:30՝ Բանկի ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու միջոցով: Ժամը 16:30-ից հետո համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտերը համարվում են անվավեր
- 18:00՝ ACBA DIGITAL հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու դեպքում *(եթե առկա է համապատասխան տեխնիկական հնարավորություն)*:

  Ընդ որում՝ տվյալ դեպքում, եթե հայտի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչև տվյալ օրվա 18:00-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 18:00-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:

Պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով Բանկում բացված 220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար) կամ 220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար՝ Ազդագրի 3.4.1 մասում նշված անհրաժեշտ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն:

Թողարկողման նպատակով Բանկում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին դրամական միջոցների ստացումից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարական՝ ներդրողի արժեթղթերի հաշվին համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և հաշվեգրման համար:

Պարտատոմսերի տեղաբաշխման համար նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված ***220004131136001 (ԱՄՆ դոլարով***

արտահայտված պարտատոմսերի համար) կամ 220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվեհամարին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտերը չեն կարող բավարարվել անկախ դրանց Բանկի կողմից ընդունման ժամկետից:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը կհամարվի պատշաճ կերպով ընդունված Բանկի կողմից, եթե միաժամանակ առկա են ստորև նշված բոլոր հանգամանքները.

- հայտը ներկայցվել է Ազդագրում նշված կարգով, և
- պարտատոմսերի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարն ապահովվել է Ազդագրում նշված կարգով, և
- պարտատոմսերի ձեռքբերման գործարքի վերաբերյալ առկա չէ Ազդագրի ***3.3.12.*** կետով սահմանված հանգամանքները:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ազդագրի ***Հավելված 1-ում***: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտի ձևը ներկայացված է Ազդագրի ***Հավելված 2-ում***:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտեր:

3.4.1.4. Հայտի լրացում

Պարտատոմսերի ձեռքբերման համար ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք լրացնում են հայտում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտի վավերականությունն ապահովելու համար:

Հայտում նշված «Ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր գումար» դաշտում ներդրողները պետք է նշեն «Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գին» դաշտում ամրագրված թվի արտադրյալը:

3.4.1.5. Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորություն կարող է նախատեսվել Բանկի Գործադիր տնօրենի կողմից:

Տեղաբաշխման կարգով պայմանավորված՝ հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտի և/կամ հայտերի մասնակի բավարարում:

Հայտի մասնակի բավարարման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

3.4.1.6. Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Ազդագրի 3.4.1.3. ենթաբաժնում նկարագրված պարտատոմսերի ձեռքբերման պայմանների չպահպանման դեպքում ներդրողների հայտերը համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքից, ներդրողները պարտատոմսերի հայտերը պատշաճ կերպով Բանկի կողմից ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող հետ կանչել:

3.4.1.7. Նվազագույն և առավելագույն գումարները

Թողարկման ընթացքում գոյություն են ունենալու Պարտատոմսերի ձեռքբերման քանակական սահմանափակումներ, որը ենթակա է որոշման յուրաքանչյուր թողարկումից առաջ Բանկի Գործադիր տնօրենի կողմից, սակայն.

- ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում՝ կարող է սահմանվել ոչ պակաս քան 5 (հինգ) և ոչ ավել քան 10 000 (տաս հազար) հատ,
- ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում՝ կարող է սահմանվել ոչ պակաս քան 5 (հինգ) և ոչ ավել քան 5 000 (հինգ հազար) հատ,

3.4.1.8. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելը

Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված ***220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար) կամ 220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար)*** տարանցիկ հաշվեհամարին: Համապատասխան հայտերը բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտի բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

3.4.1.9. Առաջարկի արդյունքների հրապարակումը

Տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն տեղաբաշխման ավարտից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Բանկի ինտերնետային կայքում:

3.4.1.10. Նախապատվության իրավունքը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտերի ներկայացման և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն՝ առաջնահերթություն ունի այն ներդրողը ում՝ ներկայացրած հայտը և հայտի համաձայն Թողարկման նպատակով «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված ***220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար) կամ 220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար)*** տարանցիկ հաշվեհամարին վճարումն ավելի վաղ է ստացվել:

Թողարկվող պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեցող անձինք չկան:

3.4.2. Տեղաբաշխման պլանը

3.4.2.1. Ներդրողների խմբերը

Առաջարկն ուղղված է ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ ներառյալ որակավորված և ինստիտուցիոնալ ներդրողներին, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերին:

3.4.2.2. Հայտերի բավարարման մասին տեղեկացումը

Ներդրողները Թողարկողից տեղեկանում են իրենց հայտերի բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտերի բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է առձեռն՝ Բանկի ցանկացած մասնաճյուղում հայտն առձեռն ներկայացնելու դեպքում, կամ էլեկտրոնային եղանակով՝ ACBA DIGITAL հավելվածի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու դեպքում :

Ներդրողները տեղաբաշխման արդյունքներին կարող են ծանոթանալ հետևյալ տարբերակներով՝

1. ACBA DIGITAL հավելվածում առկա համապատասխան բաժնում՝ հայտի հաստատման հաղորդագրությունը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
2. CDA Online հավելվածի միջոցով՝ հայտի հաստատման հաղորդագրությունը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
3. Բանկի մասնաճյուղում կամ էլ.հասցեով, եթե պարտատոմսերի ձեռքբերման հայտը ընդունվել է բանկի մասնաճյուղում՝ հայտի հատատումից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

3.4.3. Առաջարկի գինը

3.4.3.1. Արժեթղթերի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$P = \frac{C}{f}\sum_{t=1}^{n}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{n-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

P – Պարտատոմսի լրիվ գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն),,

DSN - գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանա-կանության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է 2 (երկու) կիսամյակային վճա-րումների համար),

n - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,

C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

Y - մինչև մարում եկամտաբերություն:

Ազդագրի գրանցումից հետո՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումը սկսելուց 3 աշխատանքային օր առաջ, տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար, ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կիրապարակվի Բանկի ինտերնետային կայքում: Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

3.4.4. Տեղաբաշխումը

3.4.4.1. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն:

3.4.4.2. Չերաշխավորված տեղաբաշխում իրականացնողները

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ չերաշխավորված եղանակով տեղաբաշխելու է իր կողմից թողարկվող անվանական արժեկտրոնային ոչ փաստաթղթային մինչև ՝ 30 000 000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար և 30 000 000 000 (երեսուն միլիարդ) ՀՀ դրամ թողարկման ընդհանուր ծավալով պարտատոմսերը:

3.4.4.3. Տեղաբաշխման պայմանները

Թողարկողը և Տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ը: Թողարկող/Տեղաբաշխողը այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղ տեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

3.4.4.4. Վճարում ընդունող բանկերը և պահառուները

Պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել թողարկման նպատակով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում (ՀՀ, Երևան 0002, Արամի փողոց, 82-84 շենք) բացված ***220004131136001 (ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերի համար) կամ 220004131292000 (ՀՀ դրամով արտահայտված պարտատոմսերի համար)*** տարանցիկ հաշվեհամարին:

Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու՝ համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (Դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա 5-րդ հարկ, հեռ.՝ +(374) 60 61 55 55, (լրաց.111), +(374) 10 54 33 21, (լրաց.136):

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է «ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ:

3.5. Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

3.5.1. Առևտրին թույտվությունը

Սույն Ծրագրային Ազդագիրը ՀՀ ԿԲ կողմից գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո Բանկը դիմելու է «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ տեղաբաշխված պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրին թույլատրելու համար:

Ներդրողները պետք է հաշվի առնեն, որ առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Պարտատոմսերի առևտրի թույլտվություն չստանալու դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ:

3.5.2. Շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն Ծրագրային Ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի ոչ մի շուկայում:

Հարկ է նշել նաև, որ մինչ օրս Բանկն իրականացրել է պարտատոմսերի 7 թողարկում, որից երեքը՝ դոլարային, իսկ չորսը՝ դրամային արտահայտությամբ:

Ինչպես նաև 2021թ.-ին իրականացվեց Բանկի լրացուցիչ թողարկման բաժնետոմսերի առաջնային, հրապարակային տեղաբաշխում՝ թողարկելով 500 000 (հինգ հարյուր հազար) հատ բաժնետոմս՝ ընդհանուր 7 500 000 000 (յոթ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ տեղաբաշխման գումարով:

Բանկի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ առկա պարտատոմսերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ աղյուսակում.

Պարտատոմսի ԱՄՏԾ	Թողարկում	Ժամկետ	Թողարկման Ծավալ	Արժույթ	Արժեկտրոնային դրույք	Մարում
AMACBAB27ER7	01.06.2021	24 ամիս	2,000,000,000	AMD	9.50%	01.06.2023
AMACBAB26ER9	01.06.2021	30 ամիս	3,000,000	USD	4.10%	01.12.2023

Բանկի կողմից թողարկված բոլոր պարտատոմսերը ցուցակվել են «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում և ընդգրկվել պարտատոմսերի հիմնական (Abond) և երկրորդային (Bbond) ցուցակներում:

Բանկի բաժնետոմսերը ցուցակված են Հայաստանի Ֆոնդային Բորսայի ամենաիրացվելի՝ (A) հարթակում:

3.5.3. Շուկա ստեղծողները

Բանկը մասնագիտացված անձանց հետ դեռ չի կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) ծառայություններից օգտվելու վերաբերյալ պայմանագիր:

Բանկը պարտավորվում է մասնագիտացված անձանց հետ կնքել երկրորդային շուկայում շուկա ստեղծողի պայմանագիր, որի կնքումից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակել անհրաժեշտ տեղեկատվությունը:

3.6. Լրացուցիչ տեղեկատվություն

3.6.1. Խորհրդատուներ

Սույն Ազդագրի պատրաստման ընթացքում Բանկը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

3.6.2. Աուդիտորական եզրակացությունը

Բացի սույն Ծրագրային Ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվությունների, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն Ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից: Հաշվետվությունների և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունների պատճենները ներկայացված են **Ազդագրի Հավելված 6-ում**:

3.6.3. Թողարկողի վարկանիշը

Թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել, սակայն հարկ է նշել, որ 2022թ.-ի հուլիսին Ֆիթչ վարկանիշային գործակալության (Fitch Ratings) կողմից ԱԿԲԱ ԲԱՆԿԻՆ շնորհվել է «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» B+ վարկանիշ՝ բացասական հեռանկարով (long-term Issuer Default Rating IDR):

Համաձայն գործակալության կողմից հրապարակված զեկույցի՝ շնորհված վարկանիշը հաշվի է առնում Ֆիթչ վարկանշային գործակալության գնահատականը Հայաստանի բարդ գործառնական միջավայրի հետ և կենտրոնացված տնտեսության վարկային ռիսկերը: Բացասական հեռանկարն արտացոլում է տարածաշրջանային և գլոբալ ռիսկերը՝ կապված բանկի գործառնական միջավայրի հետ: Զեկույցում միաժամանակ նշվում է Բանկի կապիտալի բարձր մակարդակի մասին, ինչպես նաև կայուն ֆինանսավորման աղբյուրների և իրացվելության կայուն մակարդակի մասին: Ֆինանսավորման կայունությունը պայմանավորված է մանրածախ ավանդների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների և կառավարության միջոցների կայուն բազայով, որը փոխհատուցում է մեծածախ ֆինանսավորման չափավոր ռիսկերը:

Միջազգային վարկանիշային սանդղակում B+ վարկանիշը համարվում է բարձր ներդրումային ռիսկ ունեցող վարկանիշ, որի գործնական նշանակությունը հետևյալն է՝ տվյալ վարկանիշն ունեցող թողարկողներն իրենց վարկային բեռի և այլ պարտավորությունների չսպասարկման ավելի մեծ հավանականություն ունեն քան այդ B+ վարկանիշից ավելի բարձր/ կամ սանդղակով վերև գտնվող վարկանիշ ստացած թողարկողները:

ԲԱԺԻՆ 4. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1. Անկախ աուդիտորներ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով յուրաքանչյուր տարի Բանկի կողմից հրավիրվում է արտաքին աուդիտ: Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:

Բանկի անկախ աուդիտը վերջին հինգ տարիներին իրականացրել են.

- 2017-2021թթ.՝ «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ գլոբալ «Էրնսթ ընդ Յանգ» (EY) միջազգային աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կազմակերպության անդամ է: Ընկերությունն իր գործունեությունը Հայաստանում սկսել է 2008թ.-ից:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0001, Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27, հեռ.՝ +(374)10 50 07 90, ինտերնետային կայքի հասցեն է՝ www.ey.com/am: Կազմակերպության տնօրենն է Էրիկ Հայրապետյանը:

Բանկը հայտարարել է արտաքին աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ՝ 2022, 2023 և 2024 թվականների իր ֆինանսատնտեսական գործության ստուգումն իրականացնելու նպատակով: Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2022 թվականի սեպտեմբեր ամսին:

Պատմական ֆինանսական ժամանակաշրջանի անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են **Հավելված 5-ում**:

4.2. Ռիսկային գործոններ

Ինչպես ցանկացած ֆինանսական գործունեություն, այնպես էլ բանկայինը, մշտապես ռիսկ է պարունակում: Բանկային ռիսկն այն բանի հավանականությունն է, որ բանկը տվյալ գործունեության արդյունքում շահույթ չի ստանա, կստանա նախատեսված ծավալներին զգալիորեն զիջող շահույթ կամ ընդհանրապես վնաս կկրի:

Ցանկացած տնտեսական գործունեության ընթացքում, առավել ևս բանկային, անհնարին է զրոյական ռիսկի հասկացությունը և հարցը ոչ թե ընդհանրապես բացառումն է, այլ նրա ճիշտ ծավալային բնութագրի գնահատումը և արդյունավետ կառավարումը:

Ռիսկերի կառավարումը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում և այն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցյալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված

գործողությունների ամբողջություն: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար:

Ստորև նշված ռիսկերից յուրաքանչյուրը կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և կանխիկ դրամական հոսքերի վատթարացմանը, ինչպես նաև շուկայական դիրքի, մրցունակության և հեռանկարային զարգացման անկմանը, ինչը իր հերթին կարող է հանգեցնել Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների՝ լրիվ կամ մասնակի չկատարմանը կամ որոշակի կերպով դժվարացնել ներդրողների կողմից ապագայում պարտատոմսերի արագ և շահավետ գնով իրացումը և արժեկտրոններով նախատեսված տոկոսագումարների ստացումը:

Ներդրողները պետք է հաշվի առնեն նաև, որ ստորև ներկայացվող ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որոնք Բանկը կարող է երբևէ կրել: Ենթադրաբար կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք բանկն այժմ չի համարում էական, կամ որոնք ներկայումս հայտնի չեն նրան, և ցանկացած այդպիսի ռիսկ կարող է հանգեցնել ներդրողի կողմից ներդրված գումարի մասնակի կամ ամբողջական կորստին:

Իր գործունեության ընթացքում Բանկն առնչվում է հետևյալ հիմնական ռիսկերի հետ.

Վարկային ռիսկ - Բանկը ենթարկվում է վարկային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ֆինանսական վնաս կրելու ռիսկը, երբ փոխառուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Բանկի նկատմամբ, որն ազդում է վերջինիս գործունեության վրա, առաջացնում լրացուցիչ ծախսեր և բացասական անդրադառնում շահույթի վրա:

Վարկային ռիսկը Բանկի հիմնական ռիսկերից մեկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Վարկային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի ու փոխատվությունների տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտահաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները:

Վարկային ռիսկի կառավարումը և վերահսկողությունը իրականացվում է Բանկի Ռիսկերի կառավարման և համապատասխանության վարչության կողմից, և հաշվետվությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի խորհրդին, Ռիսկերի կառավարման հանձնաժողովին և Գլխավոր գործադիր տնօրենին:

Համաձայն Բանկի վարկային պորտֆելի ռիսկայնության վերլուծությունների՝ Բանկի պորտֆելը ունի հետևյալ կառուցվածքը.

Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություններ	30.06.2022թ. (Աուդիտ չանցած)	31.12.2021թ. (Աուդիտ անցած)	31.12.2020թ. (Աուդիտ անցած)
Վարկեր, այդ թվում՝	368,212,833	348,959,692	315,211,734
Խումբ 1*	344,386,094	315,949,398	273,686,080
Խումբ 2†	9,835,455	16,552,085	25,070,067
Խումբ 3‡	13,834,125	16,271,566	16,140,724
POCI§	157,159	186,643	314,863
Հնարավոր կորուստների պահուստ	(7,108,961)	(7,664,614)	(12,193,177)

Վարկային ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Բանկը կարևորում է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիան, հսկողություն սահմանում տարբեր տեսակի կենտրոնացումների վրա, շարունակաբար վերահսկում է առանձին վարկերի վիճակը և կանոնավոր կերպով գնահատում է իր հաճախորդների

* **Խումբ 1:** Ֆինանսական գործիքի սկզբնական ճանաչման պահին այն հիմնականում դասվում է Խումբ 1-ում: Խումբ 1-ում դասվում են նաև այն վարկերը, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ ունեցել են վարկային ռիսկի էական բարելավում և տեղափոխվել են այստեղ Խումբ 2-ից:

† **Խումբ 2:** Տրամադրման պահից վարկային ռիսկի էական վատացմամբ բնութագրվող վարկերը տեղափոխվում են Խումբ 2, որոնց գծով պահուստավորումը կատարվում է մինչև մարում ընկած ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով գնահատված ԱՎԿ-ների (ակտիվների վարկային կորուստ) հիման վրա: Վարկը կարող է դասակարգվել Խումբ 2-ում նաև տրամադրման պահին, եթե համապատասխանում է Խումբ 2-ի դասակարգման չափանիշներին, օրինակ վերաֆինանսավորման պայմանի առկայություն: Անկախ այլ պատճառների առկայությունից, 31 օր ժամկետանց հատելու պահին վարկը տեղաթոխվում է Խումբ 2:

‡ **Խումբ 3:** Բոլոր արժեզրկված ակտիվները տեղափոխվում են Խումբ 3, որոնց գծով պահուստավորումը կատարվում է մինչև մարում ընկած ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով գնահատված ԱՎԿ-ների հիման վրա:

§ **POCI:** Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

վճարունակությունը՝ անհրաժեշտության դեպքում փոփոխելով վարկի տրամադրման սահմանաչափերը և սքորի ընդունելի նվազագույն մակարդակը:
Բանկը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկը զսպելու համար: Մասնավորապես գրավային ապահովածության միջոցով վարկային ռիսկի կրճատում: Բանկը կանոններ է սահմանում գրավի հատուկ տեսակների ընդունելի լինելու կամ ռիսկերի զսպման վերաբերյալ:
Վարկերի և փոխատվությունների համար գրավի հիմնական տեսակներն են.

- հիփոթեքային պայմանագրերով գրավադրվող անշարժ գույքը.
- կազմակերպությունների գործառնական ակտիվները՝ շենքերը, այլ հիմնական միջոցներ, պաշարները.
- ֆինանսական գործիքները՝ պարտքային և բաժնային արժեթղթերը.
- շարժական գույք:

Տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը սովորաբար ապահովված չեն:

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է՝, որ Բանկը չի ունենա բավարար իրացվելիություն սահմանված ժամկետներում ստանձնած պարտավորությունների դիմաց վճարում կատարելու համար: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում:

Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունն իրացվելիության կառավարման էական գործոն է: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ամբողջական համապատասխանությունը բնորոշ չէ ֆինանսական կազմակերպություններին՝ պայմանավորված իրականացվող գործարքների տարաբնույթ լինելով և ժամկետների անորոշությամբ: Անհամապատասխանությունը հնարավորություն է տալիս բարձրացնել շահութաբերությունը, սակայն կարող է նաև մեծացնել իրացվելիության ռիսկը:

Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները՝ հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական, շաբաթական, ամսական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները: Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել՝ դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բացի այդ, ՀՀ ԿԲ պահանջով Բանկը ՀՀ ԿԲ-ում պահում է պարտադիր պահուստներ՝ իր դրամային պարտավորությունների 4%-ի չափով ՀՀ դրամ և արտարժութային

պարտավորությունների 8%-ի և 10% չափով համապատասխանաբար ՀՀ դրամ և արտարժույթ, որը հանդիսանում է պահուստային բուֆեր՝ հնարավոր արտահոսքի սպասարկման համար:

Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում՝ հաշվի առնելով սթրես գործոնները՝ կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ՝ մասնավորապես: Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ ԿԲ-ի պահանջներին համապատասխան:

Ստորև ներկայացվում են իրացվելիության նորմատիվները 2020-2021թթ.-ի և 2022թ.-ի 2-րդ եռամսյակի համար.

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ սահմանած թույլատրելի մեծություն	Փաստացի մեծություն 30.06.2022 թ. (Աուդիտ չանցած	Փաստացի մեծություն 31.12.2021 թ. (Աուդիտ անցած)	Փաստացի մեծություն 31.12.2020թ. (Աուդիտ անցած)
$Ն_2^{1*}$	Նվազագույնը 15%	19.53%	24.57%	24.74%
$Ն_2^{2**}$	Նվազագույնը 60%	80.49%	111.12%	125.48%

* Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն

** Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցություն

Տոկոսադրույքի ռիսկ - այս ռիսկը տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխման արդյունքում ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է: Շուկայական տոկոսադրույքների տատանումները կարող են ազդել Բանկի ֆինանսական վիճակի, եկամուտ/ծախսերի և դրամական միջոցների հոսքերի վրա:

Արտարժութային ռիսկ - այն ռիսկն է, երբ արտարժույթով արտահայտված ակտիվները գերազանցում են կամ պակաս են նույն արտարժույթով արտահայտված պարտավորություններից: Հետևաբար Բանկը կարող է կրել արտարժութային ռիսկ արտարժութային բաց դիրքերի առկայության դեպքում:

Բանկի կառավարման մարմինները սահմանել են սահմանաչափեր արտարժութային դիրքերի համար: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով: Բանկում արտարժութային ռիսկը բավականին ցածր մակարդակի վրա է, քանի որ այդ հարցում Բանկը վարում է հավասարակշռված և ցածր ռիսկային քաղաքականություն:

Գնային ռիսկ - նյութական ակտիվների (գույք, գրավ) գների փոփոխության արդյունքում բանկի կորստի ռիսկն է:

Գործառնական ռիսկ - աշխատակիցների գործողությունների սխալների, տեխնիկական անսարքության և խարդախությունների հետևանքով Բանկի մոտ առաջացող միջոցների կորստի հավանականությունն է: Տեխնիկական միջոցների խափանման հետ կապված ռիսկերից Բանկի համար առավել մեծ նշանակություն ունեն տվյալների բազայի ամբողջական պահպանումը վտանգող ռիսկերը: Այս առումով Բանկն իրականացնում է տվյալների բազայի պարբերաբար արխիվացում, որոնց կրկնօրինակները պահվում են, ինչպես Բանկի սերվերների և համակարգիչների մեջ, այնպես և արտաքին կրիչների վրա: Մարդկային գործոններով պայմանավորված ռիսկերը նվազեցնելու նպատակով Բանկում ներդրված է ներքին հսկողության համակարգ, ինչի տարր են հանդիսանում գործարքների կրկնակի ստուգումը և առնվազն երկու անձի կողմից հաստատումը, Բանկի ներքին աուդիտորի, մշտական հսկող կողմից պարբերաբար իրականացվող ստուգումները և այլն:

Օրենսդրական և նորմատիվային դաշտի փոփոխության ռիսկը առաջ է գալիս օրենսդրական փոփոխությունների արդյունքում, որոնք կարող են ազդել ինչպես Բանկի գործունեության, այնպես էլ շուկայում տիրող իրավիճակի վրա: Բանկային գործունեությունը պետական կառավարման մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է և ՀՀ տնտեսության ամենավերահսկվող հատվածներից մեկը: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել Բանկի ցուցանիշների վրա:

Համբավի ռիսկ - հավանականությունն է,որ Բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքը (իրականությանը համապատասխանող կամ չհամապատասխանող) կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազմանը, կոնտրագենտների/հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատմանը, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկմանը: Այս առումով Բանկը բարձր է գնահատում իր բարի համբավը և գործադրում լավագույն ջանքեր Բանկի հեղինակության պահպանման ուղղությամբ: Բանկը ձեռնարկում է միջազգային սանկցիաների պահանջների (մասնավորապես՝

ՄԱԿ-ի, Եվրամիության, Ֆրանսիայի և ԱՄՆ կողմից կիրառված) պահպանման համապատասխան միջոցառումները համբավի ռիսկ չկրելու նպատակով:

Անհամապատասխանության (non-compliance) ռիսկ - Բանկի հանդեպ իրավական, վարչական կամ կարգապահական պատժամիջոցների կիրառման, էական ֆինանսական կորուստների և համբավին սպառնացող վտանգի ռիսկն է, որը բանկային և ֆինանսական գործունեությունը կարգավորող օրենսդրական և կանոնակարգային պահանջների չպահպանման, Բանկի ներքին իրավական ակտերի, գործադիր ղեկավարության կարգադրությունների, մասնագիտական և էթիկայի կանոնների խախտման արդյունք է:

Այս տեսակ ռիսկի արդյունավետ կառավարման և զսպման նպատակով Բանկը մշակել է ներքին Ֆինանսական անվտանգության քաղաքականություն, իրավական ակտեր և հսկողության խստագույն միջոցներ՝ ապահովելու իր գործունեության համապատասխանությունը օրենքներով և կանոնակարգերով ամրագրված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի պահանջներին: Բանկը պարբերաբար, բայց ոչ ուշ քան տարին մեկ անգամ վերանայում է իր ՓԼ/ԱՖ հնարավոր և առկա ռիսկերը:

Երկրի ռիսկ - կախված է երկրի սոցիալ-տնտեսական զարգացվածության մակարդակից, նրա տեղից և դերից, ինչպես նաև տիրող քաղաքական իրադրությունից: Աշխարհաքաղաքական և ներքաղաքական իրավիճակի անբարե-նպաստ փոփոխությունները կարող են առաջացնել այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ երկրի ընդհանուր տնտեսական վիճակի վրա, կարող են բերել տնտեսական ակտիվության և բնակչության եկամուտների նվազման, որն էլ բացասաբար կանդրադառնա Բանկի կողմից վարկավորվող տնտեսության բոլոր ճյուղերի վրա: Բանկում ռիսկերի արդյունավետ կառավարման և նվազեցման նպատակով պարբերաբար իրականացվում է տնտեսության վիճակի հնարավոր բացասական փոփոխությունների ազդեցության տարբեր սցենարային իրավիճակների վերլուծություններ:

Մրցակցային պայմանների ռիսկ - շուկայում մրցակից բանկերի կողմից առավել բարենպաստ պայմաններով նույնանման ծառայությունների մատուցման հետ կապված Բանկի պոտենցիալ եկամուտները կորցնելու հավանականությունն է: Մրցակցային պայմանների ռիսկը առաջանում է ՀՀ բանկային ծառայությունների շուկայում անընդհատ սրվող մրցակցության պայմաններում:

ՀՀ բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է և Բանկն իր մրցունակ դիրքերն ամրապնդելու նպատակով առաջնորդվում է կորպորատիվ կառավարման սկզբունքներով, ներդնում է բանկային ինովացիոն առաջատար տեխնոլոգիաներ և բարձրացնում է մատուցվող ծառայությունների որակը:

Գիտակցելով վերը նշված ռիսկերը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մշտապես սահմանում և իրականացնում է այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի ռիսկերի արդյունավետ կառավարման և զսպման մեխանիզմների կիրառմանը:

4.3. Տեղեկատվություն թողարկողի մասին

4.3.1. Թողարկողի պատմությունը և զարգացումը

4.3.1.1. Թողարկողի անվանումը և կազմակերպաիրավական ձևը

Բանկի լրիվ անվանումն է՝

հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն,
անգլերեն՝ “ACBA BANK” Open Joint Stock Company:

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ »,
անգլերեն՝ “ACBA BANK”:

Բանկը ստեղծվել է 1995թ. օգոստոսի 28-ին Ընդհանուր ժողովի որոշման և 1995թ. դեկտեմբերի 1-ին կնքված հիմնադիր պայմանագրի հիման վրա՝ որպես «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկ: Այնուհետև, 1996թ. մարտի 3-ին գրանցվել է ՀՀ ԿԲ-ում (գրանցման վկայականի համար՝ թիվ 0170) և նույն թվականի մարտի 29-ին տրամադրվել է բանկային գործունեության թիվ 70 լիցենզիան: 2006թ. սեպտեմբերի 9-ին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկը վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության: «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն 29.04.2020թ. Ընդհանուր ժողովի որոշմամբ վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և վերջինիս գործունեությունը կարգավորվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Բանկի ապրանքային նշանն է՝

որը գրանցվել է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 2021թ.-ի փետրվարի 12-ին:

4.3.1.2. Պետական գրանցումը և գործունեության վայրը

Բանկի պետական գրանցման վայրն է՝ Արամի 82-84 շենք, 89, 99, 100 տարածքներ Երևան 0002, ՀՀ:

Բանկի պետական գրանցման համարն է՝ 70:

4.3.1.3. Ստեղծման տվյալներ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (նախկինում՝ «Հայաստանի Գյուղացիական Փոխօգնության Բանկ» կոոպերատիվ բանկ) հիմնադրվել է 1996թ.-ին Եվրամիության «TACIS» ծրագրի շրջանակում:

Ֆրանսիական «Credit Agricole» բանկի «Credit Agricole Consultant» խորհրդատվական ծառայությունը հոլանդական «Rabobank» և գերմանական «DG-Ագրոպրոգրեսս» ընկերությունների հետ համատեղ հաջողությամբ իրականացրին բանկի ստեղծման եռափուլ ծրագիրը.

- ծրագրի իրականացման առաջին փուլում (1993–1994թթ.) ուսումնասիրվեցին Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորման հնարավոր տարբերակները, որի արդյունքում առաջարկվեց Եվրոպական կոոպերատիվ բանկի մոդելով գյուղատնտեսական բանկի ստեղծման գաղափարը:
- 1994թ. սեպտեմբերից մինչև 1995թ. դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցավ Բանկի կառուցվածքային հիմնադրում, որի հիմնական ձեռքբերումը եղավ 60 գյուղացիական փոխօգնության միավորումների ստեղծումը: Գյուղացիական փոխօգնության միավորումներ ստեղծվեցին Հայաստանի չորս մարզերում՝ Արմավիրում (Էջմիածին), Արարատում (Արտաշատ), Շիրակում (Գյումրի) և Վայոց Ձորում (Եղեգնաձոր):
- Գործառնական հիմնադրումը (1996թ.) նշանավորվեց Բանկի և նրա երեք մասնաճյուղերի ստեղծմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ԿԲ-ի կողմից 1996թ. մարտի 29-ին բանկային գործառնությունների իրականացման արտոնագրի տրամադրմամբ:

Բանկի նշանակալից բաժնետերն է՝

- «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունը, որի մասնակցությունը Բանկի կանոնադրական կապիտալում կազմում է 83.80 %[*]:

- Այժմ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (շուկայում գործում է շուրջ 27 տարի) Հայաստանի խոշորագույն և ֆինանսապես կայուն բանկերից մեկն է:

[*] Բանկի Կանոնադրական կապիտալում խոշոր բաժնետերերին պատկանող բաժնեմասի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է տվյալ պարտատոմսերի թողարկման որոշման վերաբերյալ Բանկի Խորհրդի նիստի գումարման օրվա՝ 19.08.2022թ.-ի դրությամբ:

4.3.1.4. Բանկի գտնվելու վայրը, կապի միջոցները

Բանկի գտնվելու վայրն է՝ Արամի 82-84, Երևան 0002, ՀՀ:

Կապի միջոցները՝
Հեռ.՝ +(374)10 31 88 88,
Ֆաքս՝ +(374)10 54 34 85,
էլ. Փոստ՝ acba@acba.am,
Ինտերնետային կայք՝ www.acba.am:
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

4.3.1.5. Բանկի մասնաճյուղերը

Բանկն ունի 63 մասնաճյուղ և Կենտրոնական գրասենյակ:

Կենտրոնական գրասենյակի հասցեն է ՝ ք. Երևան, Արամի փողոց 82-84 շենք, 89, 99, 100 տարածքներ:

Մասնաճյուղի հասցեներն են՝

1. «Կենտրոն» մասնաճյուղ՝ ք. Երևան, Արամի փողոց 82-84 շենք,
2. «Տերյան» մասնաճյուղ՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 7 շենք, 12 տարածք,
3. «Սայաթ-Նովա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 8 շենք, 21/1 տարածք և Աբովյան 22 շենք, թիվ 1/1 տարածք,
4. «Շենգավիթ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Բագրատունյաց փողոց 16/2,
5. «Արմենիա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Վ. Սարգսյան փողոց, 10 շենք, թիվ 123,124 տարածքներ,
6. «Տիգրան Մեծ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Էրեբունի, Տիգրան Մեծի պողոտա 74 շենք, 56-57 տարածքներ,
7. «Մալաթիա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա հ., Ռաֆֆու 55 շենք, հ.1/1,
8. «Դավթաշեն» մասնաճյուղ՝ ք. Երևան, Դավթաշեն I թաղամաս, թիվ 42/2,
9. «Զեյթուն» մասնաճյուղ՝ ք. Երևան, Դ. Անհաղթի փողոց 13/5,
10. «Երիտասարդական» մասնաճյուղ՝ ք. Երևան, Աբովյան 36, թիվ 49,
11. «Կոմիտաս» մասնաճյուղ՝ ք. Երևան, Կոմիտասի պողոտա 56 շենք, 167,
12. «Արաբկիր» մասնաճյուղ՝ ք. Երևան, Սունդուկյան փողոց 64ա շենքի թիվ 2/1 ոչ բնակելի տարածք,
13. «Նոր Նորք» մասնաճյուղ՝ ք. Երևան, Գայի պողոտա 16/46,
14. «Երևան Մոլ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Արշակունյաց 34/3 համար 93 տաղ.,
15. «Օպերա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Մաշտոցի պողոտա 42 շենք, 17/1,
16. «Կեսարիա» մասնաճյուղ՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շերամի փող. 93/3, 93/5,
17. «Շինարարներ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Աջափնյակ, Շինարարների փողոց 15 շենք 156 ոչ բնակելի տարածք,

18. «Արմավիր» մասնաճյուղ՝ ք. Արմավիր, Երևանյան 16,
19. «Էջմիածին» մասնաճյուղ՝ ք. Էջմիածին, Մաշտոցի փ. 30,
20. «Մեծամոր» մասնաճյուղ՝ ք. Մեծամոր, 1-ին թաղամաս, 2 բն, 1-6 հասցե,
21. «Արարատ» մասնաճյուղ՝ ք. Արտաշատ, Շահումյան փ. 31,
22. «Մասիս» մասնաճյուղ՝ ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 3,
23. «Վեդի» մասնաճյուղ՝ ք. Վեդի, Արարատյան 42/2,
24. «Արաքս» մասնաճյուղ՝ ք. Արարատ, Շահումյան 45/1,
25. «Արագածոտն» մասնաճյուղ՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հրապարակ 1/1,
26. «Արագած» մասնաճյուղ՝ ք. Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փ. 1/2,
27. «Աշտարակ» մասնաճյուղ՝ ք. Աշտարակ, Երևանյան փ. 1,
28. «Թալին» մասնաճյուղ՝ ք. Թալին, Կոմիտասի 4,
29. «Ապարան» մասնաճյուղ՝ ք. Ապարան, Բաղրամյան 37,
30. «Շիրակ» մասնաճյուղ՝ ք. Գյումրի, Պուշկինի 23,
31. «Անի» մասնաճյուղ՝ ք. Գյումրի, Անի թաղամաս, 7-րդ փողոց, 5/2,
32. «Գյումրի» մասնաճյուղ՝ ք. Գյումրի, Շիրակացու փ. 18ա,
33. «Արթիկ» մասնաճյուղ՝ ք. Արթիկ, Անկախության 28/1,
34. «Աշոցք» մասնաճյուղ՝ Շիրակի մարզ, գյուղ Աշոցք,
35. «Մարալիկ» մասնաճյուղ՝ ք. Մարալիկ, Ազատության հրապարակ թիվ 13,
36. «Գեղարքունիք» մասնաճյուղ՝ ք. Գավառ, Բոշնաղյան փ. 6,
37. «Մարտունի» մասնաճյուղ՝ ք.Մարտունի, Երևանյան 52,
38. «Սևան» մասնաճյուղ՝ ք. Սևան, Նաիրյան 2-րդ նրբանցք, թիվ 2, 3,
39. «Վարդենիս» մասնաճյուղ՝ ք. Վարդենիս, Ռոմանի 5/1,
40. «Լոռի» մասնաճյուղ՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի փ. 22ա,
41. «Տաշիր» մասնաճյուղ՝ ք. Տաշիր, Կիրովի փ., թաղ. 5, թիվ 192,
42. «Սպիտակ» մասնաճյուղ՝ ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան թիվ 3,
43. «Ալավերդի» մասնաճյուղ՝ ք. Ալավերդի, Թումանյան 59,
44. «Ստեփանավան» մասնաճյուղ՝ ք. Ստեփանավան, Գ. Նժդեհի 9,
45. «Տավուշ» մասնաճյուղ՝ ք. Իջևան, Վալանսի փ. 6/4,
46. «Նոյեմբերյան» մասնաճյուղ՝ ք. Նոյեմբերյան, Բարեկամության 2,
47. «Բերդ» մասնաճյուղ՝ ք. Բերդ, Լևոն Բեկի 1/3,
48. «Դիլիջան» մասնաճյուղ՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան փ. 37/2,
49. «Կոտայք» մասնաճյուղ՝ ք. Աբովյան, Հատիսի փ. 4/2,
50. «Եղվարդ» մասնաճյուղ՝ ք. Եղվարդ, Չարենցի 48,
51. «Հրազդան» մասնաճյուղ՝ ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս, 31-րդ շենքի հարակից տարածք,
52. «Չարենցավան» մասնաճյուղ՝ ք. Չարենցավան, Խանջյան փողոց 2/1-2/3,
53. «Սյունիք» մասնաճյուղ՝ ք. Կապան, Արամ Մանուկյան 4,
54. «Գորիս» մասնաճյուղ՝ ք. Գորիս, Անկախության 2/5,
55. «Սիսիան» մասնաճյուղ՝ ք. Սիսիան, Սիսական փ. 39դ,
56. «Վայոց Ձոր» մասնաճյուղ՝ ք. Եղեգնաձոր, Վ. Ձորավար փ. 37,
57. «Վայք» մասնաճյուղ՝ ք. Վայք, Շահումյան 98/3-4,
58. «Բաղրամյան» մասնաճյուղ՝ Մյասնիկյան համայնք,Երևանյան փողոց 10/1 վարչական շենք,

59. «Էրեբունի» մասնաճյուղ՝ ք. Երևան, Էրեբունի փողոց 23 շենք, թիվ 74 տարածք,
60. «Մեղրի» մասնաճյուղ՝ ք. Մեղրի, Զ.Անդրանիկի փողոց 1 կինոթատրոնի շենք,
61. «Ճամբարակ» մասնաճյուղ՝ ք. Ճամբարակ, Գ.Նժդեհի փողոց 127/2 սպասարկման գրասենյակ,
62. «Գառնի» մասնաճյուղ՝ գ.Գառնի, Ալեքյան փողոց 28, 28/1,
63. «Գարաժ մոլ» մասնաճյուղ՝ ք. Երևան, Աջափնյակ, Մազմանյան 1 :

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

4.3.1.6 Նշանակալի դեպքեր

1996թ.-ից մինչ օրս ԱԿԲԱ ԲԱՆԿԸ գրանցել է դինամիկ զարգացման կայուն տեմպեր: Բանկն իր ֆինանսական կայունության և հուսալիության շնորհիվ ձեռք է բերել մեծ հեղինակություն և վստահություն ինչպես Հայաստանում, այնպես էլ միջազգային ֆինանսական ասպարեզում:

Բանկի գործունեությունն ի սկզբանե ուղղված էր Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորմանը: 1996թ.-ին Բանկը տրամադրում էր միայն կարճաժամկետ սեզոնային գյուղատնտեսական վարկեր: Ստեղծմանը հաջորդող տարիներին Բանկն աստիճանաբար տրամադրել է նաև վարկեր գյուղացիական միջավայրում իրականացվող ոչ գյուղատնտեսական ծրագրերի, իսկ 1999թ.-ից՝ նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման համար:

****

1999թ.-ին Բանկը Հայաստանի բանկերի միության կողմից ճանաչվել է Տարվա լավագույն բանկ:

Նույն տարում Բանկն անդամակցել է SWIFT և FACET համակարգերին և բացել թղթակցային հաշիվներ ֆրանսիական «CREDIT AGRICOLE» և հոլանդական «ABN AMRO» բանկերում:

****

2000թ.-ին Բանկի գործունեությունը բարձր գնահատականների է արժանացել միջազգային ասպարեզում, մասնավորապես բրիտանական «The Financial Times» հեղինակավոր կազմակերպության «The Banker» ամսագրի կողմից Բանկը ճանաչվել է Հայաստանում տարվա լավագույն բանկը: Հետագայում նույնպես՝ 2001, 2002, 2006 և 2008 թվականներին նույն ամսագրի կողմից ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը (ներկայիս՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ) ճանաչվել է Հայաստանում տարվա լավագույն բանկ: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ու ՀՀ ԿԲ-ի կողմից ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկը ճանաչվել է պետական պարտատոմսերի շուկայում լավագույն

դիլեր: 2000թ.-ից մինչ օրս Բանկը հանդիսանում է «Արմենիան քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնի հիմնադիր անդամ:

****

2001թ.-ին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը (ներկայիս՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ) թողարկել է իր առաջին ArCa Classic վճարային քարտը:

****

2002թ.-ին Բանկը դարձել է VISA International միջազգային վճարային համակարգի լիիրավ անդամ և տարեվերջին թողարկել է առաջին VISA Electron, VISA Classic, VISA Business և VISA Gold քարտերը: Տարվա ընթացքում Բանկն իր ընդհանուր կապիտալի մեծությամբ զբաղեցրել է առաջատարի դիրք Հայաստանի բանկային համակարգում:

****

2003թ.-ին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը ՀՀ բանկային համակարգում համարվել է առաջատար՝ իրական հատվածի վարկային ներդրումների ծավալով:

ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը ՀՀ առաջին բանկն է, որին միջազգային աուդիտորական ընկերության կողմից շնորհվել է որակի կառավարման միջազգային համակարգի ISO 9001:2000 արտոնագիր: Նույն տարում Բանկը ձեռք է բերել VISA International վճարահաշվարկային համակարգի արտոնագիր՝ առևտրի և սպասարկման կետերում այլ բանկերի թողարկած VISA քարտերի սպասարկման համար:

2003թ.-ի ամենանշանակալի իրադարձությունը դարձել է «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ ստեղծումը, որն առաջին գրանցված մասնագիտացված լիզինգային ընկերությունն է Հայաստանում:

****

2006թ.-ից Ֆրանսիական հեղինակավոր «ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Էս. Էյ.» բանկային խումբը դարձել է Բանկի 28%-ի բաժնետերը և Բանկը վերակազմավորվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ մինչև 29.04.2020թ.: 2006թ.-ին Բանկը եղել է Հայաստանի բանկային համակարգի միանձնյա առաջատարը:

****

2007թ.-ին Բանկը գնել է «ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Էս.Էյ.» բանկային խմբի անդամ՝ «Կրեդիտ Ագրիկոլ Լիզինգ և ֆակտորինգ» ԲԸ-ին պատկանող բաժնետոմսերը՝ դառնալով «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթի սեփականատեր:

Fitch Ratings միջազգային վարկանիշային գործակալության կողմից Բանկին շնորհվել է երկարաժամկետ թողարկողի «BB» վարկանիշը (կայուն հեռանկարով):

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD) աշխարհում խոշորագույն բանկերից մեկի՝ Citigroup-ի հետ համատեղ՝ 2007թ. օգոստոսին Հայաստանի բանկային պատմության մեջ առաջին անգամ Բանկին տրամադրել է սինդիկացված վարկ, որն ուղղվել է Հայաստանում գործող փոքր և միջին (այդ թվում՝ Հայաստանի հեռավոր վայրերում գործող) ձեռնարկությունների վարկավորմանը:

****

2008թ.-ին Բանկը ճանաչվել է ՀՀ բանկային համակարգի առաջատար ունիվերսալ բանկը:

****

2009թ.-ին Բանկը, չնայած համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի հետևանքով բանկային գործունեության համար ստեղծված ոչ նպաստավոր իրավիճակին, բանկային գործունեության գրեթե բոլոր կարևորագույն ցուցանիշներով շարունակում է մնալ առաջատարը և պետական բյուջե մուծված հարկերի ծավալով ՀՀ բանկային համակարգում դառնում է առաջինը:

2009թ. ՀՀ բանկային համակարգի շահույթի շուրջ կեսը բաժին է ընկնում ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկին:

****

2010թ.-ին իրական հատվածում կատարված վարկային ներդրումների ծավալով Բանկն առաջին անգամ ՀՀ բանկային պատմության մեջ հատել է 100 մլրդ դրամ սահմանագիծը:

2010թ.-ին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը Հայաստանի բանկային համակարգում հանդիսանում է միակը, որը թողարկում և սպասարկում է միջազգային 3 խոշոր (AmericanExpress, VISA International, MasterCard International) և մեկ ազգային (ArCa) վճարահաշվարկային համակարգերի քարտերը:

Նույն տարվա ընթացքում միջազգային փոխանցումների կատարման բարձր որակ ապահովելու համար Գերմանական «Commerzbank AG» բանկը ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկին շնորհել է «Որակի գերազանցության» մրցանակ:

****

2011թ.-ին ՀՀ կառավարության կողմից իրականացվել է գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր, որի շրջանակում տրամադրված վարկերի ավելի քան 94%-ը տրամադրվել է ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկի կողմից:

****

2012թ.-ին Հայաստանի բանկային համակարգում Բանկը դարձյալ համարվել է ամենախոշոր հարկատուն: Միջազգային փոխանցումների իրականացման բարձր որակի համար Բանկն ավստրիական «Raiffesien Bank International»-ի կողմից արժանանցել է մրցանակի:

****

2013թ.-ի դրությամբ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկի ընդհանուր ակտիվները կազմել են Հայաստանի բանկային համակարգի ակտիվների համախառն ծավալի 9%-ը, իսկ ընդհանուր կապիտալի՝ շուրջ 12%-ը:

Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ «Ամունդի Ասեթ Մենեջմենթ» ընկերության հետ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկը հիմնադրել է «Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ:

****

2014թ.-ին Փոխանցումների շուկայում Բանկը ներդրել է արագ դրամական փոխանցումների 4 նոր համակարգ՝ Converse Transfer, Sigue Money, Anelik Online և Tandem Transfers:

Հանդիսանալով Հայաստանի խոշոր կազմակերպություններից մեկը՝ ներդրել է Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության համակարգ, որի գերակա ուղղություններն են սահմանամերձ հեռավոր բնակավայրերի աջակցությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, պատմամշակութային արժեքների պահպանությունը և երիտասարդությանն ուղղված ծրագրերի իրականացումը:

****

2015թ.-ին Բանկն իրականացրեց կառուցվածքային փոփոխություններ, որոնց արդյունքում ձևավորվեցին բանկային գործունեության հիմնական 3 բիզնես ուղղությունները՝ գյուղատնտեսական, մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ:

****

2017թ.-ին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը կորպորատիվ բիզնես լուծումների շուկայում, աշխարհում առաջատար SAP ընկերության հետ ստորագրեց ծրագրային ապահովման ձեռքբերման պայմանագիր, որի համաձայն Բանկը SAP-ի կողմից ստեղծված ժամանակակից լուծումների կիրառման միջոցով իրականացնում է Բանկի ամբողջական թվային տրանսֆորմացիա:

Միջազգային ճանաչում ունեցող և ոլորտում առաջատար SAP-ի լուծումների կիրառմամբ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկի թվային տրանսֆորմացիայի արդյունքում Բանկն ինտերակտիվ կերպով կարձագանքի հաճախորդների բոլոր պահանջմունքներին և կտրամադրի այն ծառայությունների փաթեթը և լուծումները, որոնք լավագույնս կհամապատասխանեն նրանց պահանջներին և մաքսիմալ արդյունավետ կլինեն նրանց համար:

2017թ.-ին Բանկը թողարկել է նաև ռուսական МИР վճարային համակարգի նոր «ԱՐՔԱ-ՄԻՐ» չիպային քարտերը:

****

2018թ.-ին Բանկն ընդլայնեց իր գործընկերների շարքը միջազգային քարտային բիզնեսում: Այսպես, Ճապոնական JCB Co. International-ի և ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ համագործակցության արդյունքում Հայաստանում առաջին անգամ սկսվել է աշխարհում շուրջ 117 մլն քարտապան ունեցող JCB քարտերի սպասարկումը:

****

2019թ.-ին ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկը միջազգային ֆինանսական երկու կազմակերպություններից ներգրավել է 9 մլն եվրոյի ստորադաս փոխառություն, ինչը Բանկի նկատմամբ միջազգային ներդրողների վստահության ևս մեկ ապացույց է:

Նույն տարում ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկի և չինական UnionPay International-ի համագործակցության արդյունքում Հայաստանում մեկնարկեց UnionPay քարտերի սպասարկումը:

****

2020թ. մարտին Ֆիթչ վարկանիշային գործակալության (Fitch Ratings) կողմից ԱԿԲԱ ԲԱՆԿԻՆ շնորհվել է «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» B+ վարկանիշ՝ կայուն հեռանկարով (long-term Issuer Default Rating IDR):

Համաձայն գործակալության կողմից հրապարակված զեկույցի՝ Բանկն արժանացել է նման գնահատականի շնորհիվ ներքին ֆինանսական կենսունակության: Ստացված վարկանիշը սահմանելիս հաշվի են առնվել Բանկի բացարձակ առաջատար դիրքը գյուղատնտեսության ֆինանսավորման ոլորտում, ենթակառուցվածքային հագեցվածությունը, այդ թվում՝ մասնաճյուղերի առկայությունը հանրապետության բոլոր մարզերում, ինչպես նաև իրացվելիության բարձր մակարդակը և ակտիվների բարձր որակը:

2020թ.-ին ապրիլի 29-ին Բանկի Ընդհանուր ժողովի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերակազմակերպվել և վերանվանվել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության:

****

2021թ.-ին Բանկն իրականացրեց վերաբրենդավորում և հասարակությանը ներկայացավ նորովի՝ պահպանելով, Բանկի լավագույն արժեքներն ու ավանդույթները: Նույն տարում իրականացվեց աշխատակիցների՝ Ակբա բանկի բաժնետեր դառնալու գործընթացը, որի շրջանակում Ակբա ֆինանսական խմբի աշխատակիցների շուրջ 75%-ը դարձավ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետեր, իսկ հետո բանկն իրականացրեց բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում՝ թողարկելով 500 000 հատ բաժնետոմս՝ ընդհանուր 7,5 միլիարդ ՀՀ դրամ տեղաբաշխման ծավալով: Սահմանված ժամկետներում այս բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվեցին, Ակբան դարձավ Հայաստանում ամենաշատ բաժնետեր ունեցող ընկերություններից մեկը: Բանկի բաժնետոմսերը ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայի ամենալիկվիդային՝ (A) հարթակում:

Այժմ ԱԿԲԱ ԲԱՆԿԸ ՀՀ խոշորագույն բանկերից է:

Բանկն իր գործունեության 25 տարիների ընթացքում ֆինանսական տարատեսակ ծառայություններ է առաջարկել և առաջարկում հասարակության լայն շերտերին: Բանկի գործունեության թիրախում երեք հիմնական ոլորտներ են. գյուղատնտեսական, մանրածախ և ՓՄՁ: Նշված ոլորտների հետ փոխշահավետ համագործակցությունն անընդմեջ զարգացնելու համար Բանկը նպատակաուղղված է հետագա տարիներին ևս ծանրակշիռ աշխատանքներ իրականացնել:

Նշված թիրախային ոլորտների հաճախորդներին Բանկն առաջարկում է այնպիսի պրոդուկտներ և ծառայություններ, որոնց հիմքում ընկած է վերջիններիս պահանջմունքների բավարարումը: Ուսումնասիրելով հաճախորդների սպառողական

վարքագիծն ու նախասիրությունները, Բանկը մշտապես իր հաճախորդներին առաջարկում է ֆինասնական տարատեսակ լուծումներ՝ օժտված վերջիններիս պահանջներին համապատասխանող հատկանիշներով:

Թիրախային ուղղություններով Բանկի կողմից առաջարկվող հիմնական ծառայություններն են՝

- գյուղատնտեսական, առևտրային, սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրում,
- հաշիվների սպասարկում,
- ցպահանջ և ժամկետային ավանդների ներգրավում,
- տեղական և միջազգային պլաստիկ քարտերի թողարկում և սպասարկում,
- արտարժութային գործառնություններ,
- էլեկտրոնային փոխանցումներ (ներառյալ՝ արագ համակարգերով),
- հեռահար բանկային ծառայություններ,
- ռեեստրի վարումը և կորպորատիվ արժեթղթերի պահառություն,
- միջազգային առևտրային գործարքների ֆինանսավորում (ակրեդիտիվներ, երաշխիքներ):

Միաժամանակ, իր ակտիվների և պասիվների, իրացվելիության կառավարման, ինչպես նաև ՀՀ ԿԲ նորմատիվային պահանջների ապահովման նպատակով Բանկը զբաղվում է նաև հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ներդրումներ պարտատոմսերում,
- այլ կարճաժամկետ ներդրումներ (միջբանկային վարկեր, ավանդներ, ռեպո):

Բանկի կողմից տրամադրվող ծառայություններում հատկապես կարևորվում են վարկային ներդրումները, որոնք կատարվում են Հայաստանի ամբողջ տարածքում:

Հարկ է նշել, որ՝

- Բանկը ՀՀ գյուղատնտեսության վարկավորման ոլորտում շուկայի բացարձակ առաջատարն է,
- առևտրային վարկերը Բանկի կողմից տրամադրվում են հիմնականում առևտրի և ծառայությունների ոլորտների իրավաբանական անձանց և ձեռնարկատերերին,
- սպառողական վարկերը ներառում են քաղաքացիների՝ սպառողական ծախսերը ֆինանսավորելու նպատակով տրամադրվող վարկերը,
- Բանկն առաջարկում է նաև հիփոթեքային վարկեր՝ ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման, ինչպես նաև վերանորոգման նպատակով: Վարկավորումը իրականացվում է ինչպես Բանկի ռեսուրսներով, այնպես էլ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ և «Բնակարան Երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ միջոցներով:

Բանկի գործունեության կարևորագույն ուղղություններից է նաև ավանդների կայուն բազայի ընդլայնումը: Բանկը շարունակում է զարգացնել ցպահանջ և ժամկետային ավանդների սեկտորը՝ դրամական միջոցներ ներգրավելով ֆիզիկական և իրավաբանական անձանցից (ցպահանջ ավանդները հիմնականում ձևավորվում են

Բանկի վարկառու և քարտապան հաճախորդների ընթացիկ և քարտային հաշիվների հիման վրա):

Բանկը վարում է ակտիվ քաղաքականություն տեղական և միջազգային վճարային քարտերի թողարկման և սպասարկման ուղղությամբ՝ քարտապանների համար անկանխիկ գործառնությունները դարձնելով առավել շահավետ, հարմարավետ և ապահով: Բանկն այժմ միակն է շուկայում, որ սպասարկում է վճարային 7 համակարգ և հանդիսանում է 4 քարտային համակարգերի թողարկող:

Այժմ Ակբա բանկը թողարկում և սպասարկում է միջազգային 3 խոշոր՝ American Express, Visa International, Mastercard Europe և 1 ազգային՝ ArCa վճարահաշվարկային համակարգերի քարտեր: Հարկ է նշել, որ 2014թ.-ին Բանկը համագործակցության նոր պայմանագիր կնքեց American Express ընկերության հետ՝ ևս 10 տարով երկարաձգելով բացառիկության հիմունքներով 2009թ.-ին կնքած պայմանագիրը: Այժմ Ակբա բանկը թողարկում է American Express ապրանքանիշի երեք տեսակի քարտ՝ American Express Gold, American Express Blue և American Express Cashback:

Ակբա բանկը, լինելով Հայաստանում ռուսական МИР վճարային համակարգի առաջին գործընկերներից մեկը, թողարկում է նաև «ԱՐՔԱ-ՄԻՐ» չիպային, ինչպես նաև սպասարկում МИР վճարային համակարգի քարտեր: Քարտը Հայաստանի Հանրապետության տարածքում գործում է որպես ԱրՔա քարտ, իսկ Ռուսաստանի Դաշնությունում՝ որպես МИР քարտ:

ՀՀ տարածքում Քարտերի սպասարկման ծավալների ընդլայնման նպատակով Բանկի կողմից արդեն իսկ ներդրվել է JCB և China Union Pay վճարային համակարգերի քարտերի սպասարկում:

Բանկում մշտապես կատարվում են մի շարք վճարային քարտերի գծով սերտիֆիկացիաներ, բարելավումներ և տեխնոլոգիական նորամուծություններ՝ VTS (Visa Token Service) ֆունկցիոնալի սերտիֆիկացում և ներդրում (NFC վճարումներ), 3DS2.0 տեխնոլոգիայի սերտիֆիկացում, վարկային գծերի ակնթարթային ակտիվացում/դադարեցում, Էմբոսսինգային հանգույցի վերազինում, անհպում կանխիկացումներ բանկոմատներով, 3DS2.0 տեխնոլոգիայի սերտիֆիկացում և այլն

Բանկում մշտապես կատարվում են մի շարք վճարային քարտերի գծով սերտիֆիկացիաներ, բարելավումներ և տեխնոլոգիական նորամուծություններ՝ VTS (Visa Token Service) ֆունկցիոնալի սերտիֆիկացում և ներդրում (NFC վճարումներ), 3DS2.0 տեխնոլոգիայի սերտիֆիկացում, վարկային գծերի ակնթարթային ակտիվացում/դադարեցում, Էմբոսսինգային հանգույցի վերազինում, անհպում կանխիկացումներ բանկոմատներով, 3DS2.0 տեխնոլոգիայի սերտիֆիկացում և այլն:

2022թ.-ի հունիսի 30-ի դրությամբ Բանկի կողմից տրամադրված քարտերի քանակը շուրջ 365 243 է:

Ակբա Բանկը ունի բանկոմատների, կանխիկի ընդունման և տարադրամի փոխանակման տերմինալների ավելի քան 400 սարքավորում տեղակայված ՀՀ տարածքում:

Բանկը հանդիսանում է նաև վճարային գործիքների առաջատար անկանխիկ վճարումների ընդունման (Acquiring) ոլորտում, ունի 5000-ից ավել սեփական POS/vPOS տերմինալներ, ինչպես նաև ինտեգրացիաներ ՀԴՄ սարքավորումների և այլ բանկերի POS տերմինալների հետ:

Ոչ տոկոսային եկամտի աճ ապահովելու նպատակով Բանկը շարունակաբար զարգացնում է թվային բիզնեսը, այդ թվում վճարահաշվարկային գործունեությունը:

Ժամանակին համահունչ թվային բիզնեսի զարգացման հիմքում պետք է ընկած լինեն արդիական տեղեկատվական տեխնոլոգիաներն ու ենթակառուցվածքները: Այս ուղղությամբ Բանկը սկսել է ռազմավարական ներդրումներ իրականացնել դեռևս 2017 թվականից: Աշխարհի առաջատար կորպորատիվ ծրագրային ապահովման լուծումներ տրամադրող ՝ գերմանական SAP-ի հետ կնքված պայմանագրով 2018թ.-ից Բանկում մեկնարկել է թվային տրանսֆորմացիայի հնգամյա լայնածավալ ծրագիր, որի արդյունքում Բանկում արդեն իսկ ստեղծվել է գերժամանակակից տեղեկատվական հենք/ենթակառուցվածք:

Այս համատեքստում դեռևս 2020 թվականի ապրիլին Բանկում իրականացվեցին վարչակազմակերպական կառուցվածքի էական փոփոխություններ, ինչը թույլ կտա արդյունավետ կերպով լուծել սահմանված ռազմավարական խնդիրները: Վերոնշյալ փոփոխությունների շրջանակներում Բանկում ստեղծվել են արհեստական բանականության և մեքենայի ուսուցման (AI/ML), գործընթացների ռոբոտացման (Robotic Process Automation) և տվյալների վերլուծության մասնագիտացված ստորաբաժանումներ (data analytics):

RPA տեխնոլոգիայի կիրառմամբ Բանկը իրագործում է թվային աշխատուժի կոնցեպտը, ինչը կարճաժամկետ և միջնաժամկետ ապագայում բերելու է գործառնական պրոցեսների արդյունավետության էական աճի և գործառնական ծախսերի կրճատման: Բանկում արդեն իսկ ներդրված են գործառնական գործառույթների իրականացնող ռոբոտներ:

Իրական ժամանակի ռեժիմում աշխատող տվյալների վերլուծական համակարգը նպաստում է Բանկի կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ թույլ տալով կայացնել արդյունավետ կառավարչական որոշումներ՝ հիմնված տվյալների խորը և համապարփակ վերլուծության վրա:

Արհեստական բանականության և մեքենայի ուսուցման ալգորիթմերի կիրառությունը Բանկի գործունեության տարբեր բնագավառներում թույլ է տալիս լուծել այնպիսի խնդիրներ, որոնք ուղղակի անհնար է լուծել այլ ավանդական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Վերոնշյալ տեխնոլոգիաների շարունակական զարգացումն ու կիրառումը Բանկի գործարար գործընթացներում թույլ կտան էապես բարձրացնել գործառնական արդյունավետությունը և Բանկին կտան էական մրցակցային առավելություններ:

Բանկը շարունակաբար զարգանում է հեռահար և թվային բանկային ծառայությունները՝ ներդնելով ծառայությունների մատուցման և սպասարկման նոր թվային ուղիներ: Մասնավորապես 2020թ.-ի սեպտեմբերին թողարկվեց ամբողջովին նոր acba digital համակարգը, որը օգտատերերին հնարավորություն է տալիս օգտվելու բազմաթիվ բանկային ծառայություններից թե՛ web և թե՛ բջջային հավելվածի միջոցով (ios, android): acba digital հավելվածը նաև հնարավորություն ընձեռեց Հայաստանում առաջին անգամ կատարել իրական NFC վճարումներ՝ հնարավորություն տալով սմարթֆոնը կիրառել որպես վճարման միջոց:

Acba digital հավելվածում ներառված են լուծումներ, ինչպես բանկի հաճախորդների այնպես էլ բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց համար, մասնավորապես՝ հաշիվների բացում, ԱՐՔԱ անդամ Բանկերի թողարկած քարտերի կցագրում, visa virtual նոր քարտի պատվերներ, միջազգային փոխանցումների ստացման հնարավորություն, Apple Pay, Garmin Pay, 5G օնլայն վարկեր, Visa Direct և MasterCard MoneySend քարտից քարտ փոխանցումներ, ավանդների ձևակերպում, կոմունալ վճարումներ, օնլայն հերթագրումներ և այլն (ավելին՝ acba.digital կայքում):

Թվային պլատֆորմների և պրոդուկտների զարգացումը կրում են շարունակական բնույթ, որի հիմնական նպատակն է մեր հաճախորդներին տրամադրել բանկային և ոչ բանկային ծառայություններ իրական ժամանակի ռեժիմում (24/7)՝ միևնույն ժամանակ ապահովելով գործառնական բարձր արդյունավետություն:

Բանկը շարունակում է իր հետևողական աշխատանքներն արագ դրամական փոխանցումների զարգացման ոլորտում՝ ներդնելով «փոխանցումների ստացում հեռախոսազանգով ծառայությունը», որը հաճախորդներին հնարավորություն է ընձեռում առանց Բանկ այցելելու դրամական փոխանցումներ ստանալ անվճար տրամադրվող ACBA Transfer քարտի միջոցով:

Ակբա բանկն այժմ անդամակցում է MoneyGram, RIA Money Transfer, Unistream արագ դրամական փոխանցումների համակարգերին:

Բանկը թղթակցային հաշիվներ ունի միջազգային ավելի քան 10 բանկերում, ինչը հնարավորություն է տալիս ապահովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը ցանկացած ազատ փոխարկելի արժույթով:

Իր գործունեությունն իրականացնելու համար Ակբա բանկն օգտվում է ինչպես միջազգային SWIFT վճարային, Bloomberg տեղեկատվական, այնպես էլ ՀՀ-ում գործող BankMail և CBANet համակարգերից: Ակբա բանկը մշտապես բաց է միջազգային հեղինակավոր ֆինանսաբանկային կազմակերպությունների հետ համագործակցություն սկսելու համար՝ միաժամանակ մնալով գրավիչ և վստահելի գործընկեր նշված կառույցների համար:

Բանկն այժմ ակտիվորեն համագործակցում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD), Հարավ-Արևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամի (EFSE), , Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC), ReponsAbility Investments AG-ի, Green for Growth Fund (GGF) Հիմնադրամի, Տրիոդոս Ինվեսթմենթ Մենեջմենթ (Triodos Investment Management B.V.), Վերականգնման վարկերի բանկի (KFW), Գյուղատնտեսական Զարգացման Միջազգային Հիմնադրամի (IFAD), «Միկրո, Սմոլ Էնդ Մեդիում Էնթեռփռայզիս Բոնդս Էսէյ»-ի (Micro, Small & Medium Enterprises Bonds SA), Եվրոպական ներդրումային բանկի (EIB) և այլ միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Հայաստանում լինելով բանկային բազմաթիվ ծառայությունների և պրոդուկտների առաջին թողարկողը, Բանկը տարիներ շարունակ պահպանել է իր մրցակցային առաջատար դիրքերը՝ մշտապես առաջարկելով հաճախորդների պահանջմունքների բավարարմանն ուղղված լուծումներ: Բանկը մշտապես ուսումնասիրում է հաճախորդների պահանջմունքները և մշակում, ներդնում նոր պրոդուկտներ և ծառայություններ, որոնք ուղղված են հաճախորդների կարիքների բավարարմանը, սպասարկման որակի բարձրացմանը, հեռահար եղանակով ծառայությունների մատուցման զարգացմանը:

Մասնավորապես, Բանկի ռազմավարական նպատակներից է վարկավորման համակարգերի արդիականացումը, ավտոմատ որոշումների կայացման համակարգերի ստեղծումն ու ինտեգրումը հեռահար սպասարկման համակարգերում: 2020 թվականի ընթացքում արդիականացվել է ապառիկ վարկերի տրամադրման համակարգերը՝ ապահովելով վարկերի տրամադրում վայրկյանների ընթացքում: Բանկը ներդրել է ավտոմատ որոշումների կայացման համակարգեր ինչպես սպառողական վարկերի, այնպես էլ գյուղատնտեսական վարկերի համար: Այժմ աշխատանքներ են տարվում այլ սեգմենտների համար վարկավորման ավտոմատ որոշման համակարգերի ներդրման ուղղությամբ:

Բանկում կարևոր զարգացման ուղղություններից է նաև քարտային բիզնեսի զարգացումը և միջազգային լավագույն փորձի ուսումասիրման արդյուքում նոր ծառայությունների ներդրումը: Մասնավորապես, վերջին շրջանում Բանկում ներդրվել է նոր Visa Signature պրեմիում դասի քարտատեսակը, որը, բացի ավանդական քարտային ծառայություններից, տրամադրում է նաև այլ ծառայություններ, ինչպիսիք են՝ ապահովագրություն, Կոնսիերժ ծառայություն, տարատեսակ զեղչային ծրագրեր, անվճար մուտքեր օդանավակայանների սպասասրահներ և այլն: Ներդրվեց նաև Visa Virtual քարտը, որը հնարավորություն է տալիս մի քանի ժամվա ընթացքում ակտիվացնել վճարային քարտ և վճարումներ իրականացնել վիրտուալ տիրույթում: Նախատեսվում է նաև նոր քարտային և վճարային ծառայությունների ներդրում:

Բանկի կողմից նախատեսվում է թվային առաջատար տեխնոլոգիաների ներդրում, որոնք կբարձրացնեն հաճախորդների սպասարկման որակը, հնարավորություն կընձեռեն օգտվել ավելի բազմակողմանի ծառայություններից:

ԱԿԲԱ ԲԱՆԿԸ գործում է Հայաստանի բոլոր մարզերում: Բանկի 63 մասնաճյուղերից 19-ը և Կենտրոնական գրասենյակը գործում են Երևանում, մնացածը՝ Հայաստանի 10 մարզերում: Աշխատակիցների թիվը հասնում է 1550-ի :

2014թ.-ի վերջին ՀՀ ԿԲ-ը Հայաստանի բանկային համակարգում մեկնարկեց խոշորացման գործընթաց: Չնայած բանկային համակարգը բավական կապիտալացված էր, այնուհանդերձ բարձացվեցին համակարգի կայունության պահանջները: Մասնավորապես վերանայվեց բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափը և 5 մլրդ ՀՀ դրամի փոխարեն սահմանվեց 30 մլրդ ՀՀ դրամ շեմը, որը անհրաժեշտ էր ապահովել մինչև 2017թ. հունվարի 1-ը: Նման պահանջը այդ պահի դրությամբ հաղթահարեցին Հայաստանի Հանրապետությունում գործող 21 առևտրային բանկերից 6-ը:

Ընդհանուր կապիտալի չափով ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ Բանկը (ներկայիս՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ) այդ 6 բանկերի կազմում զբաղեցնում էր երկրորդ տեղը:

Այժմ՝ 2022թ.-ի հունիսի 30-ի դրությամբ, ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ընդհանուր կապիտալը կազմում է շուրջ 95 429 մլն ՀՀ դրամ, որը տոկոսային արտահայտությամբ կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի 8.4%, ընդհանուր ակտիվները՝ 564 419 մլն ՀՀ դրամ՝ Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր ակտիվների 7.8%ը, իսկ վարկային պորտֆելը ՝ 398 236 մլն ՀՀ դրամ, որն իր հերթին կազմում է ընդհանուր բանկային համակարգի վարկային պորտֆել 10.06%ը:

4.3.2. Ներդրումները

4.3.2.1. Էական ներդրումներ

Վերջին երկու ֆինանսական տարիների ընթացքում և դրանից հետո մինչև Ծրագրային Ազդագրի գրանցման ներկայացման պահը Բանկի կողմից այլ անձանց կապիտալում էական ներդրումներ չեն կատարվել:

Բանկի կառավարման մարմինները չեն ստանձնել որևէ պարտավորություն ապագայում էական ներդրումներ իրականացնելու վերաբերյալ:

4.4. Բիզնեսի նկարագիրը

4.4.1. Հիմնական գործունեությունը

4.4.1.1. Բանկի առաքելությունը, արժեքներն ու նպատակները

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»-ի ստեղծման սկզբնական առաքելությունն է եղել՝ ֆինանսավորել Հայաստանի գյուղատնտեսության զարգացումը, այն է՝ հենվելով փոխօգնության գաղափարի վրա, նախ և առաջ հասանելի դարձնել վարկային ռեսուրսները մանր և միջին գյուղացիական տնտեսություններին, որոնք մինչև Բանկի ստեղծումը գրեթե զրկված էին վարկավորման ֆինանսական աղբյուրներից:

Բանկի առաքելությունը ներկայումս ավելի ընդգրկուն է, չնայած գյուղատնտեսության ֆինանսավորումը մինչև այժմ էլ հանդիսանում է Բանկի գործունեության կենտրոնական տարրերից մեկը: Գործունեության 25 տարիների ընթացքում Բանկը անընդհատ ամրապնդել է իր դիրքերը բանկային բոլոր հիմնական ծառայությունների ոլորտում և աստիճանաբար անցում է կատարել համալիր ծառայություններ մատուցող բանկի կարգավիճակի:

Ներկայումս Բանկի առաքելությունն է՝

Ինքնատիպ և նորարար լուծումներով նպաստել հասարակության կայուն զարգացմանը:

Բանկն իր գործունեության ընթացքում ուղղորդվում է հետևյալ հիմնական արժեքներով՝

- **Սոցիալական պատասխանատվություն**
- **Հավատարմություն**
- **Թափանցիկություն**
- **Նորարարություն**
- **Հոգատարություն հաճախորդների հանդեպ**

Միջնաժամկետ և երկարաժամկետ հորիզոնում Բանկի տեսլականը հետևյալն է՝

- Լինել առաջին ընտրության բանկը՝ մշտապես առաջարկելով ճկուն և ստեղծարար լուծումներ
- Լինել գյուղատնտնեսական արժեշղթայի զարգացման երաշխավոր
- Լինել ամենաարժեքավոր և ճանաչելի ապրանքանիշը ֆինանսական շուկայում
- Լինել բացարձակ առաջատար ֆինանսական շուկայում արդյունավետության և շահութաբերության ցուցանիշներով
- Լինել առաջին ընտրության գործատուն ՀՀ ֆինանսական շուկայում

4.4.2. Հիմնական շուկաները

4.4.2.1. Հիմնական շուկաները

Բանկի գործունեությունն ի սկզբանե ուղղված է եղել Հայաստանի գյուղատնտեսության ֆինանսավորմանն ու աջակցմանը: Բանկի ստեղծման հիմքում 1991թ.-ին գյուղատնտեսության ոլորտում իրականացված բարեփոխումներն են, որի արդյունքում հանրապետությունում գործող 938 խոշոր պետական և կոլեկտիվ տնտեսությունները տրոհվեցին և ձևավորվեցին փոքր գյուղացիական տնտեսություններ: 1998թ.-ից սկսած Բանկը սկսել է ընդլայնել իր վարկային և այլ բանկային գործառնությունների շրջանակը՝ աստիճանաբար վերափոխվելով ունիվերսալ բանկի:

Այժմ Բանկը տրամադրում է բանկային լայնածավալ ծառայություններ: Բանկն ունի ամբողջական ծառայությունների փաթեթ հետևյալ երեք բիզնես ուղղությունների համար.

- ՓՄՁ,
- գյուղատնտեսական բիզնես ուղղություն,
- մանրածախ բիզնես ուղղություն:

Նշված սեգմենտների հաճախորդներին Բանկի կողմից առաջարկվող հիմնական գործառնություններն ու ծառայություններն են.

- գյուղատնտեսական, առևտրային, սպառողական և հիփոթեքային վարկերի տրամադրում,
- հաշիվների սպասարկում,
- ցպահանջ և ժամկետային ավանդների ներգրավում,
- տեղական և միջազգային պլաստիկ քարտերի թողարկում և սպասարկում,
- արտարժութային գործառնություններ,
- էլեկտրոնային փոխանցումներ (ներառյալ՝ արագ համակարգերով),
- բրոքերային ծառայությունների մատուցում, ռեեստրի վարում և կորպորատիվ արժեթղթերի պահառություն,
- միջազգային առևտրային գործարքների ֆինանսավորում (ակրեդիտիվներ, երաշխիքներ),
- այլ ծառայություններ:

Բանկը նաև առաջինն է Հայաստանում, որ փոքր և միջին ձեռնարկատերերի համար կազմակերպեց բիզնես դասընթացներ՝ աջակցելով ՓՄՁ-ների զարգացմանը ֆինանսական գրագիտության ընդլայնման միջոցով:

Դասընթացների ֆորմատը հնարավորություն է ընձեռում ոչ միայն ձեռք բերել տեսական և պրակտիկ գիտելիքներ, այլ նաև վերջինս հարթակ է՝ փորձի փոխանակման և նոր գործընկերական կապերի ստեղծման համար:

Դասընթացներն իրականացվում են անվճար ինչպես Բանկի հաճախորդների, այնպես էլ հաճախորդ չհանդիսացող բոլոր փոքր և միջին ձեռնարկությունների համար: Մինչև այժմ իրականացվել է ավելի քան 90 Բիզնես դասընթաց, որի շրջանակում մասնակցել են Բիզնեսում որոշում կայացնող շուրջ 1200 անձինք:

Բանկն իր գործունեությունը ծավալում է Հայաստանի ամբողջ տարածքում՝ մասնաճյուղային լայն ցանցի միջոցով: Բանկի վարկային պորտֆելի 62.9%-ը կազմում են մանրածախ վարկերը, այդ թվում՝ գյուղատնտեսական վարկերը կազմում են 31.9%, իսկ 37.1%-ը՝ ՓՄՁ և կորպորատիվ վարկերը:

Բանկը, վարկավորելով գյուղատնտեսության ոլորտի շուրջ 50%-ը, Հայաստանի Հանրապետությունում հանդիսանում է տվյալ շուկայի բացարձակ առաջատարը: Հատկանշական է, որ գյուղատնտեսական շուկայի վրա մեծ ազդեցություն են ունեցել պետական աջակցության ծրագրերը, որոնց արդյունքում հաճախորդների հետաքրքրվածությունը մեծացել է թե՛ գյուղ ոլորտում արդի համակարգերի ներդրման, և թե՛ ինտենսիվ մշակության ճյուղերի ուղղությամբ:

Վերջին կիսամյակի ընթացքում Բանկի կողմից գեներացված տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների շուրջ 70%-ը բաժին է ընկնում վարկային գործառնություններին: Ներդրումային և արտարժութային գործառնություններից եկամուտները կազմում է Բանկի եկամուտների շուրջ 24%-ը:

Բանկը շուկայում դիրքավորված է որպես ընդգծված սոցիալական պատասխանատվությամբ կառույց՝ բազմաթիվ ծրագրեր իրականացնելով տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման, սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ: Հատուկ ուշադրության է արժանի Բանկի և Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) համագործակցությունը, որի շնորհիվ, բազմաթիվ ֆերմերներ և գյուղատնտեսներ Բանկի և NABU-ի համատեղ ֆինանսական աջակցության միջոցով ստացել են օրգանական սնունդ արտադրողի հավաստագրում՝ անհամեմատ մեծացնելով արտադրանքի արտահանման հեռանկարները: Բանկը գործընկեր կազմակերպություններին հնարավորություն է ընձեռել նաև իրենց արտադրանքը ցուցադրել Բանկի խոշոր մասնաճյուղերում, ինչպես նաև մի շարք կազմակերպությունների տրամադրել է Բանկի գովազդային տարածքները, որի արդյունքում, վերջիններս հնարավորություն են ստացել ներկայացնել իրենց բրենդը Հայաստանի լավագույն հարթակներում:

Բարեգործությունը ևս Բանկի ուշադրության կենտրոնում է: Բարեգործական մեկանգամյա միջոցառումներից զատ, Բանկը նախաձեռնեց և կյանքի կոչեց Հայաստանում մինչ այդ գոյություն չունեցող նոր ֆորմատ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ համատեղ Բանկը թողարկեց Visa Բարերար տեսակի քարտը, որի միջոցով իրականացված վճարային գործարքների 0,3%-ը

փոխանցվել և այժմ էլ փոխանցվում են հիմնադրամի հատուկ հաշվեհամարին: Կուտակող միջոցներն ուղղվում են բարեգործական տարատեսակ նախագծերի իրականացմանը:

2020թ.-ի ընթացքում Բանկի կողմից օժանդակություն ցուցաբերվեց նաև COVID 19–ի շրջանակում իրականացվող առողջապահական գործառույթներին (շուրջ 27 մլն ՀՀ դրամ), ինչպես նաև 2020 թվականին Բանկը մեկնարկեց և 2021 թվականի ամբողջ ընթացքում շարունակեց աջակցել «Հայաստան» համահայկական հիմնադրամին և «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին, ընդ որում, 2020թ.-ի հոկտեբերից Բանկի ցանկացած քարտով իրականացված վճարային գործարքների 0,3%-ը փոխանցվում է «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին (բացառությամբ Visa Բարերար տեսակի քարտի): Առանձին աջակցություն տրամադրեց պատերազմի հետևանքով ժամանակավորապես տեղահանված մեր հայրենակիցներին: Աջակցությանը միացան նաև Ակբա ֆինանսական խմբի մյուս անդամները՝ Ակբա Լիզինգն ու Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը: Բանկի և Ակբա ֆինանսական խմբի մյուս անդամների կողմից նշված հիմադրամներին տրամադրված աջակցության ընդհանուր չափը կազմեց ավելի քան 438 միլիոն ՀՀ դրամ:

Բանկի ուշադրության կենտրոնում են նաև երիտասարդական, բնապահպանական, այլընտրանքային էներգիայի, առողջ ապրելակերպին և մշակութային մի շարք ծրագրերին միտված նախաձեռնությունները:

2019-2020թթ. ընթացքում Բանկը «Ցույց պլաստիկի դեմ» խորագրով գովազդային լայնամասշտաբ արշավ իրականացրեց, որի հիմքում պլաստիկի դեմ պայքարն էր: Արշավը մեծ աղմուկ բարձրացրեց և սկիզբ դրեց պլաստիկ թափոնների դեմ մեծ շարժմանը:

Բարեգործության շրջանակում Բանկի կողմից սահմանամերձ տարբեր գյուղերում և համայնքային նշանակության կառույցներում տեղադրվել են նաև արևային ջրատաքացուցիչներ:

Բանկի անմիջական աջակցությամբ ամեն տարի ֆրանսահայ բժիշկների կողմից անվճար բուժզննման ծառայություն է իրականացվում սահմանամերձ մի շարք մարզերում և գյուղերում:

Ընդհանուր առմամբ, Բանկի գործունեությունն ուղղված է ոչ միայն տնտեսության զարգացմանն ու երկրում բարեկեցության ապահովմանը, այլ նաև

ֆինանսական և տեխնոլոգիական նորարարական լուծումների ներդրմանը, դրանց զարգացմանը, ինչպես նաև իր գործունեության միջավայրի զարգացմանը:

4.4.2.2.Մրցակցային դիրքը

Բանկը, լինելով ՀՀ առաջատար բանկերից մեկը և բարձր պահելով իր մրցակցային դիրքը բանկային համակարգում, արդյունավետ, համախմբված թիմային աշխատանքի և կանոնակարգված գործունեության շնորհիվ շարունակ պահպանում է իր առանցքային դերն ու կարևորությունը Հայաստանի բանկային շուկայում:

Բանկի հիմնական մրցակցային առավելություններն են՝

- Ունենալով գյուղատնտեսության վարկավորման առաձնահատուկ տեխնոլոգիաներ՝ Բանկը հանդիսանում է գյուղատնտեսության վարկավորման ոլորտում բացարձակ առաջատար,
- Վարկային պորտֆելի ցածր դոլարիզացիա,
- Ավանդային պորտֆելի համեմատաբար ցածր դոլարիզացիա,
- Սերտ համագործակցություն և վստահություն միջազգային մի շարք հեղինակավոր ֆինանսաբանկային կազմակերպությունների կողմից, որոնք ապահովում են Բանկին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով,
- Պրոֆեսիոնալ և նվիրված անձնակազմ, աշխատակիցների ցածր հոսունության ցունցանիշներ և կարիերայի լայն հնարավորություններ,
- Բարի համբավ հասարակության լայն շերտերում:

ԱԿԲԱ ԲԱՆԿԸ, շարունակելով իր ակտիվ գործունեությունը Հայաստանի Ֆինանսական համակարգում և գործելով առողջ մրցակացության պայմաններում, պահպանում է իր առաջատար դիրքը բանկային համակարգում կապիտալի (4-րդ տեղ), ակտիվների (4-րդ տեղ) և վարկային պորտֆելի (4-րդ տեղ) մեծությամբ: Ընդ որում գյուղացիական տնտեսություններին տրամադրված վարկերի գծով Բանկը զբաղեցնում է 1-ին տեղը, որի տոկոսային բաժինը կազմում է Հայաստանի բանկային շուկայի շուրջ կեսը:

ԱԿԲԱ ԲԱՆԿԸ հանդիսանում է նաև ֆիզիկական անձանց տրամադրվող վարկերի գծով շուկայի բացարձակ առաջատարը:

Նմանատիպ առաջատար դիրքերը ևս մեկ անգամ վկայում են Բանկի հուսալիության, մրցունակության և կայունության մասին :

Այսպիսով՝ ԱԿԲԱ ԲԱՆԿԸ իր նորարական մոտեցումների, պրոֆեսիոնալ թիմի անխափան աշխատանքի, մրցունակության էական հնարավորությունների շնորհիվ մշտապես ամրապնդում է տարիների ընթացքում ձևավորած արժեքները և ստեղծում հաճախորդների և գործընկերների հետ փոխշահավետ և երկարաժամկետ համագործակցության առաջընթացի նոր ուղիներ :

4.5. Թողարկողի կառուցվածքը

4.5.1. Բանկի խմբի կառուցվածքը

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն խմբի մայր կազմակերպությունն է: Խումբը բաղկացած է ԱԿԲԱ ԲԱՆԿԻՑ և դրա դուստր կազմակերպություններից: Բանկի դուստր կազմակերպություններն են՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն, «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն և «ԱԿԲԱ ԲՐՈՔ» ՍՊԸ-ն:

«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն գրանցվել է 2003թ.-ի ապրիլի 23-ին ՀՀ ԿԲ կողմից թիվ 4 արտոնագրային համարով և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Կազմակերպությունը իրականացնում է ֆինանսական լիզինգի գծով գործառնություններ:

Հարկ է նշել նաև որ, «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ) 2017թ. դեկտեմբերին ֆրանսիական «ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԼԻԶԻՆԳ ԸՆԴ ՖԱԿՏՈՐԻՆԳ» ընկերությունից և 3 ֆիզիկական անձանցից գնել է վերջիններիս պատկանող՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ կանոնադրական կապիտալում ունեցած՝ ընդհանուր թվով, 92 հատ բաժնետոմսերը: Արդյունքում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասնակցությունն «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ կանոնադրական կապիտալում կազմում է 100%:

«ԱԿԲԱ ԲՐՈՔ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2004թ.-ին ՀՀ-ում: Կազմակերպությունը գրանցվել է 2004թ.-ի հուլիսի 29-ին ՀՀ ԿԲ-ի կողմից: «ԱԿԲԱ ԲՐՈՔ» ՍՊԸ-ն ծավալել է ապահովագրական գծով միջնորդական գործունեություն, իսկ ներկայումս գործունեություն չի իրականացնում:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 28/04/2017թ.-ի որոշմամբ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն, (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ) «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ)

և «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն ճանաչվել են որպես ֆինանսական խումբ՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԽՈՒՄԲ» անվանմամբ: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 14.08.2020թ.-ի որոշմամբ ֆինանսական խումբը վերանվանվել է ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսականխումբ: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն նշանակվել է որպես «ԱԿԲԱ ԽՈՒՄԲ» ֆինանսական խմբի պատասխանատու անձ:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն գրանցվել է 19.11.2013թ.-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ (գրանցման համարը՝ 2): Կազմակերպությունը ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված է իրականացնել ներդրումային ֆոնդերի կառավարչի գործունեություն և ներկայումս հանդիսանում է ՀՀ-ում կենսաթոշակային ֆոնդերի կառավարում իրականացնող 2 ընկերություններից մեկը:

4.6. Զարգացման վերջին միտումները

4.6.1. Բանկի ծառայությունների ծավալների փոփոխման միտումները

Վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև Ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածում Բանկի կողմից մատուցվող ծառայությունների սակագների էական փոփոխություն չի գրանցվել, որոնք ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս: Ակնկալվում է, որ Բանկի կողմից մատուցվող ծառայությունները կաճեն, տոկոսադրույքները հիմնականում կմնան կայուն:

Ողջամիտ ներդրողի ներդրումային որոշման կայացման համար՝ Բանկը ներկայացնում է նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվապասիվային ցուցանիշների ծավալային փոփոխությունները:

Հազ. ՀՀ դրամ

Միջոցների Ներգրավում	**2020թ.** (Աուդիտ անցած)	**Աճ/ նվազում 2019թ. նկատմամբ (%)**	**2021թ.** (Աուդիտ անցած)	**Աճ/ նվազում 2020թ. նկատմամբ (%)**	**30.06.2022թ.** (Աուդիտ չանցած)	**Աճ/ նվազում 30.06.2021թ. նկատմամբ (%)**
Բանկերից և այլ ֆինանսական կազմակեր-պություններից	117,858,276	21.5%	103,733,170	-12.0%	112,810,496	8.75%
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	296,944,080	16.6%	337,492,635	13.7%	340,782,689	0.97%

Հազ. ՀՀ դրամ

Միջոցների տեղաբաշխում	**2020թ** (Աուդիտ անցած)	**Աճ/ նվազում 2019թ. նկատմամբ (%)**	**2021թ.** (Աուդիտ անցած)	**Աճ/ նվազում 2020թ. նկատմամբ (%)**	**30.06.2022թ.** (Աուդիտ չանցած)	**Աճ/ նվազում 30.06.2021թ. նկատմամբ (%)**
Հաճախորդներին տրված վարկեր և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	328,035,951	10.9%	372,528,145	14%	398,236,545	6.9%
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություն ներին տրված վարկեր և փոխառություններ	57,171,584	87.3%	19,619,083	-66%	30,488,551	55.4%

Արժեթղթերի պորտֆել	17,405,067	-23.5%	23,994,829	38%	19,317,739	-19.5%

COVID-19 համաճարակը կտրուկ փոխեց բանկային ոլորտի պատկերը մի շարք ճակատներում: Համաճարակի ամենանշանավոր հետևանքներից են մի քանի մեգաթրենդների մասշտաբներն ու արագացումը, իսկ մյուսների դանդաղեցումը: Մի կողմից այն հանդես եկավ՝ տնտեսության մի քանի ոլորտներին հարվածելով: Մյուս կողմից, այժմ շատ պարզ է, որ COVID-19- ը հանդես է եկել որպես թվայնացման կատալիզատոր: Բացի թվայնացման արագացումից, ճգնաժամը նաև որպես խթան է ծառայել բանկերի թվային ենթակառուցվածքների համար:

Բայց թվային դաշտում ամբողջությամբ ինտեգրվելու համար բանկերը պետք է զուգահեռ օգտագործեն տարբեր լծակներ՝ հաճախորդների ներգրավվածությունը բարձրացնելու համար: Դրանք կարող են ներառել թվային և մարդկային փոխազդեցությունների օպտիմալ խառնուրդի ստեղծումը, տվյալների խելացի օգտագործումը, նոր գործընկերության հաստատումը և ծառայությունների մատուցման գրավիչ մոդելների կիրառումը:

Վերոնշյալով պայմանավորված Բանկային համակարգի վերափոխման միտումները կարելի է բաժանել մի քանի հիմնական ուղղության.

- Կենտրոնացում թվային բանկային փորձի և ամբողջական թվայնացման վրա
- Մեքենայական ուսուցման և արհեստական բանականության /AI/-ի կիրառում
- Գործընթացների ավտոմատացում, ռոբոտացում
- Ներդրումներ գաղտնիության և անվտանգության ոլորտում
- Աշխատանքի վերակազմակերպում

Վերոնշյալ միջազգային տենդեցները իրենց ազդեցությունը կունենան նաև Հայաստանյան բանկային ոլորտի վրա:

Հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ առաջիկա տարիներին հայաստանյան բանկային ոլորտի զարգացմանը կնպաստեն նաև ՀՀ ԿԲ-ի թվային վերափոխման ծրագիրը, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից կազմված 2021-2026թթ. ծրագրում ներառված մի շարք ոլորտներին (գյուղատնտեսություն, մշակվող արդյունաբերություն, էներգետիկ ենթակառուցվածքների, ՓՄՁ, SS, զբոսաշրջային ոլորտ) առնչվող նախագծերը: Մասնավորապես՝

- Ազգային էլեկտրոնային նույնականացման համակարգի ներդնումը կնպաստի հաճախորդների ներգրավման և սպասարկման գործընթացների վրա ծախսվող ժամանակի կրճատմանը, ինչպես նաև կբարձրացնի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի արդյունավետության մակարդակը: Ավելին, վերջինս մեծ ազդեցություն կունենա Բանկի գործառնական ծախսերի կրճատման վրա:
- ԿԲ-ի կողմից նախատեսվող օրենսդրական բարեփոխումների և նոր ապրանքներ ու ծառայություններ մատուցողների համար լրացուցիչ լիցենզիաների ներդրման արդյունքում ակնկալվում է խթանել FinTech-երի մուտքը ՀՀ ֆինանսական շուկա:
- Կարգավորման ավտոմատացման (RegTech) և վերահսկողության (SupTech) նոր տեխնոլոգիաների ներդրումը կնպաստի ԿԲ պահանջների համապատասխանության ապահովմանը, ինչպես նաև պահանջվող տարատեսակ հաշվետվությունների վրա բանկերի կողմից ծախսերի և ծախսվող ժամանակի կրճատմանը:
- ՓՄՁ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ում առաջիկա 5 տարիների ընթացքում պլանավորվում է հասցնել 55%-ի, հատկապես շեշտադրվում է «արտադրված է Հայաստանում» ուղղությանը նոր թափ հաղորդելուն: Դա կնպաստի արտահանման ծավալների աճին: Կանխատեսվում է ՓՄՁ վարկավորման նկատմամբ պահանջարկի ավելացում, հատկապես.
  - առևտրի ֆինանսավորման գործիքների նկատմամբ պահանջարկի աճ, մասնավորապես սոցիալական ձեռնարկատիրության մասով,
  - գյուղերում հյուրատնային կամ այլ ձեռնարկությունների ստեղծման մասով:
- Մշակվող արդյունաբերության մասնաբաժինն առաջիկա 5 տարիների ընթացքում նախատեսվում է 11.7%-ից հասցնել 15%, այս իմաստով միջավայրը բարենպաստ կլինի լիզինգային պրոդուկտների առաջխաղացման համար:
- Էներգետիկայի ոլորտում կանխատեսվում է բնական գազի պաշարների նվազում դեպի խիստ սակավություն, առաջիկա 45-55 տարիների ընթացքում: Այս առումով կանխատեսվում է անցում դեպի էլեկտրականության օգտագործման աճի, կանաչ տնտեսությունների ստեղծմանը խթանող ծրագրերի առկայությանը: Այսպիսով, պահանջարկը արևային համակարգերի/ էլեկտրական մեքենաներ/ սարքավորումների ձեռքբերման, կանաչ տնտեսություններ հիմնելուն նպաստող ֆինանսական միջոցների նկատմամբ աճի միտումը կպահպանվի:
- Բարձր տեխնոլոգիաների, պաշտպանության, ազգային անվտանգության և կրթության ոլորտները զարգացնելու ուղղությամբ Կառավարության քայլերի արդյունքում կանխատեսվում է աշխատուժի ավելացում, պետական աշխատավարձերի ավելացում, նոր ստարտափերի հիմնման գործընթացի բարձր տեմպ, տեխնոլոգիական աշխատանքային ներուժի ներգաղթ, «Ինժեներական քաղաքի» օրինակով ճարտարագիտական և արդյունաբերական հատուկ գոտիների ստեղծում և զարգացում, ինչը կնպաստի նոր աշխատավարձային ծրագրերի և հարակից այլ պրոդուկտների ներգրավմանը:
- Կառավարությունը շեշտադրում է պետական սպասարկման թվայնացման ուղղությունը, մասնավորապես, պետական համակարգում միասնական

շտեմարանների ստեղծման տեսանկյունից, ինչը բանկային ոլորտում կստեղծի հաճախորդներին հեռավար և պարզեցված գործընթացներով սպասարկելու նոր հնարավորություններ:

- Գյուղատնտեսության ոլորտում առկա հնարավորությունները կապված են կառավարության համապատասխան քաղաքականության հետ, որտեղ գերակա ուղղություններ են ինտենսիվ այգիների հիմնման խթանումը, բարձրակարգ մշակաբույսերի արտադրությունը և սերմերի ձեռքբերումն ու գյուղ տեխնիկայի արդիականացումը: Առաջիկա 5 տարիներին պետական սուբսիդավորման ծրագրերը շարունակական բնույթ են կրելու:
- Զբոսաշրջության ոլորտի զարգացումը ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարական ուղղություններից է: Կառավարությունը ծրագրում է մինչև 2026 թվականը միջազգային այցելուների թիվը հասցնել 25 միլիոնի, մինչև 2025 թվականը ապահովել 25 նոր ուղղություններով չվերթներ, 20 զբոսաշրջային վայրերի բարեկարգում, մարզերում գաստրո, մշակութայն փառատոնների կազմակերպում: Այս տեսանկյունից կանխատեսվում է անկանխիկ շրջանառության ավելացում, հետևաբար POS/e-POS, քարտային, NFC/Apple Pay վճարումների, ճամփորդական նպատակով վարկային պրոդուկտների նկատմամբ պահանջարկի ավելացում:

Այսպիսով, հաշվի առնելով ֆինանսական համակարգի դինամիկ զարգացման միտումները և կանխատեսվող տենդենցները, գալիս ենք այն եզրահանգմանը, որ կայուն աճ ապահովելու և մրցունակ լինելու համար ֆինանսական կազմակերպությունները պետք է պատրաստ լինեն կատարել համապատասխան ներդրումներ նորարարական լուծումների միջոցով հաճախորդների պահանջները բավարարելու համար, ինչը կնպաստի նաև արտաքին աշխարհի մարտահրավերներին դիմակայելուն:

Այս համատեքստում Բանկը 2022-2024թթ. համար նպատակադրել է հիմնական ֆինանսական ցուցանիշների հետևյալ թիրախները՝

- Վարկային պորտֆելի 15% միջին տարեկան աճ՝ 3 տարում ապահովելով պորտֆելի ավելացում ավելի քան 50%-ով,
- Ավանդային պորտֆելի 12,5% միջին տարեկան աճ, որը ենթադրում է առաջիկա 3 տարիներին ավանդային պորտֆելի ավելացում ավելի քան 42%-ով,
- Բանկը նախատեսում է գործառնական ծախսեր հարաբերած զուտ բանկային եկամուտներ ցուցանիշը բարելավել 7,1 տոկոսային կետով,
- Բիզնես պրոցեսների արդյունավետության բարձրացման, թվային նոր լուծումների և պրոդուկտների հաշվին առաջիկա երեք տարիներին նախատեսվում է շուրջ 40%-ով ավելացնել ակտիվ հաճախորդների քանակը, ինչպես նաև ավելացնել զուտ ստացված միջնորդավճարները,

- 2022թ-ի համար վարկերի հնարավոր կորուստների գծով զուտ մասհանումներ/ վարկային պորտֆել ցուցանիշի թիրախային մակարդակը Բանկի համար 0.7%-ն է, հետագա տարիներին ցուցանիշը կպահպանվի,
- Պլանավորվող երեք տարիների ընթացքում վարկերը կազմելու են ակտիվների շուրջ 66 տոկոսը, իսկ վերջիններիս համար որպես ֆինանսավորման աղբյուր հանդես են գալու ինչպես հաճախորդների ավանդները, այնպես էլ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցները,
- Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը կպահպանվի 14%-16% շրջանակներում,
- Իրացվելիության կառավարման արդյունքում բանկի Բարձր իրացվելի ակտիվներ հարաբերած Ընդհանուր ակտիվներ նորմատիվի մեծությունը նախատեսվում է պահել 23%,
- Բանկի բիզնեսի վերոնշյալ զարգացման տեմպերի և հիմնական ֆինանսական ցուցանիշների ապահովման պայմաններում Բանկը նպատակ ունի ապահովել կապիտալի և ակտիվների շահութաբերության աստիճանական աճ՝ առաջիկա 3 տարիներին համապատասխանաբար հասցնելով շուրջ 13.6% և 2.3%:

4.7. Բանկի կառավարման մարմինները և դրանց անդամները

4.7.1. Կառավարման մարմինները և կառուցվածքը

Համաձայն Բանկի կանոնադրության՝ Բանկն ունի կորպորատիվ կառավարման հետևյալ կառուցվածքը՝



Բանկն ունի Գլխավոր հաշվապահ, Ներքին աուդիտի ստորաբաժանում, Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և Կորպորատիվ քարտուղար:

4.7.2.1. Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողով

Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ընդհանուր Ժողով) - Բանկի բարձրագույն կառավարման մարմինն է:

Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1. Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
2. Բանկի վերակազմակերպումը,
3. Բանկի լուծարումը,
4. ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
5. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, Խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում կարող է քննարկ-վել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,
6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
7. Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
8. բաժնետոմսերի հետգնման միջոցով Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցումը,
9. օրենքով սահմանված խոշոր համարվող այնպիսի գործարքի մասին որոշման կայացումը, որի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 տոկոսը, սակայն որի կնքման մասին որոշումը չի ընդունվել Խորհրդի կողմից, և Խորհուրդը որոշում է կայացրել այդ գործարքի մասին հարցը Ընդհանուր ժողովի կողմից քննարկելու մասին,
10. օրենքով սահմանված խոշոր համարվող այնպիսի գործարքի մասին որոշման կայացումը, որի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին,
11. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,
12. Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը,
13. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
14. բաժնետոմսերի համախմբումը և բաժանումը,
15. օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,
16. հաստատված օրակարգի շրջանակում՝ օրենքով Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություն համարվող այլ հարցեր:

Վերոնշյալ բոլոր կետերով նախատեսված բոլոր հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմիններին: Ընդհանուր ժողովը չի կարող քննարկել և որոշում ընդունել իր իրավասությանը չվերաբերող հարցերի վերաբերյալ:

4.7.2.2. Բանկի խորհուրդ

Բանկի խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհրդի իրավասություններն են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,
2. Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
3. Գլխավոր գործադիր տնօրենի և Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
4. Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
5. Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
6. Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
7. շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
8. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,
9. Ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,
10. Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,
11. Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

12. Բանկի կողմից ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
13. Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը,
14. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,
15. Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
16. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
17. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,
18. դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
19. դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,
20. առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,
21. առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,
22. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմ-սերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական հիմնադրամի ավելացումը,
23. Բանկի կողմից օրենքով սահմանված խոշոր համարվող այն գործարքների կնքմանը համաձայնության տալը, որոնց արժեքը, գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ, կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը,
24. Բանկի կողմից ցանկացած այլ ներդրմանը համաձայնություն տալը, որը նախատեսված չէ սույն կետի 18, 19, 20, 21 ենթակետերով և որի գումարը կազմում է Բանկի սեփական կապիտալի 25%-ը և ավելին,
25. օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Բանկի խորհուրդը կազմված է 10 (տասը) անդամից, որոնք ընտրվում են Ընդհանուր ժողովի կողմից սահմանված ժամկետով:

Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից Խորհրդի անդամների կազմից:

Բանկի խորհրդի նախագահը՝

1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
2. գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
3. կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
4. նախագահում է Ընդհանուր ժողովում,
5. կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը, եթե այդպիսիք առկա են:

Բանկն ունի Կորպորատիվ քարտուղար, որն աջակցում է Խորհրդի աշխատանքներին: Կորպորատիվ քարտուղարի նշանակումը, վերջինիս

իրավասությունների սահմանումը և լիազորությունների դադարեցումն իրականացվում են Խորհրդի կողմից:

4.7.2.3. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գլխավոր գործադիր տնօրենը: Գլխավոր գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ:

Գլխավոր գործադիր տնօրենը նշանակվում է Խորհրդի կողմից, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ: Գլխավոր գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Բանկի անունից կնքում է գործարքներ, գործում է Բանկի անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

Գլխավոր գործադիր տնօրենը՝

1. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,
2. նախօրոք քննարկում է Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի կողմից քննարկման ենթակա բոլոր հարցերը, որի համար պատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերը, կազմակերպում բաժնետերերի Ընդհանուր ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը,
3. Բանկի անունից կնքում է այնպիսի գործարքներ, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված չեն Խորհրդի և Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը,
4. տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
5. հաստատում է աշխատատեղերը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Բանկի աշխատակիցներին, լուծում է անձնակազմի ընտրության, տեղաբաշխման, պատրաստման և վերապատրաստման հարցերը,
6. Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
7. կատարում է Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների միջև պարտականությունների բաշխումը,
8. իրականացնում է Բանկի կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

Գլխավոր գործադիր տնօրենի որոշումները, որպես կանոն, իրագործվում են նրա հրամանների և կարգադրությունների հիման վրա:

Գլխավոր գործադիր տնօրենը Խորհրդին, պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ Խորհրդի սահմանած կարգով:

Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի

ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին:

4.7.2.4. Բանկի գլխավոր հաշվապահը

1. Բանկի գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
2. Բանկի գլխավոր հաշվապահը նշանակվում է Խորհրդի կողմից՝ Գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ:
3. Բանկի գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, Խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:
4. Բանկի գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ Խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

Բանկի գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

4.7.2.5. Ներքին աուդիտի ստորաբաժանումը

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

   Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:
2. Բանկի ներքին աուդիտը Բանկի Խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝
   - վերահսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,
   - վերահսկողություն է իրականացնում Գլխավոր գործադիր տնօրենի, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին իրավական ակտերի, Գլխավոր գործադիր տնօրենին տված հանձնարարականների կատարման նկատմամբ,

- եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ: Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

3. Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

- հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,
- արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գլխավոր գործադիր տնօրենի կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:

Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք գրավոր ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

4.7.2.6. Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

1. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

- բացահայտում, գնահատում է բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը.
- հսկողություն և մոնիտորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը.
- խորհրդի հաստատմանն է ներկայացնում բանկի ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, խորհրդի սահմանած պարբերականությամբ խորհուրդ և գործադիր մարմին հաշվետվություն է ներկայացնում բանկի ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ.
- իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել բանկի ռիսկերի կառավարման գործառույթի արդյունավետ իրականացման նվազագույն պահանջներ:

4.7.2.7. Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

1. Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

- ապահովում է բանկի և բանկի աշխատակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին.
- ապահովում է բանկում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը.
- գնահատում է բանկի գործունեության վրա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերը.
- իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել բանկի համապատասխանության ապահովման գործառույթի արդյունավետ իրականացման նվազագույն պահանջներ:

4.7.2.8. Կորպորատիվ քարտուղարը

1. Բանկի Կորպորատիվ քարտուղարը՝

- Աջակցում է Բանկի կորպորատիվ կառավարման կատարելագործմանը.
- Իրականացնում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստական աշխատանքներ կազմակերպումը, աջակցում է ժողովի անցկացմանը.
- Իրականացնում է Բանկի Խորհրդի և նրա հանձնաժողովների նիստերի նախապատրաստումը աջակցում է նիստերի անցկացմանը.
- Պրոֆեսիոնալ օգնություն և խորհրդատվություն է տրամադրում Բանկի Խորհրդին, գործադիր մարմնին և բաժնետերերին.
- Պատասխանատու է կորպորատիվ տեղեկատվության պահպանման և բացահայտման համար.
- Պատասխանատու է շահառուների հետ փոխհարաբերությունների կառավարման համար:

4.7.3. Թողարկողի կառավարման մարմինների անդամները

4.7.3.1. Բանկի խորհրդի անդամները

Սույն ազդագիրը կազմելու պահին Բանկի խորհուրդը բաղկացած էր 10 (տասը) անդամից՝ նախագահ և ինը անդամ, որոնցից 3-ը՝ անկախ անդամներ: Ստորև ներկայացվում է տեղեկատվություն ըստ յուրաքանչյուր կառավարման մարմնի անդամի՝

1. **Բանկի խորհրդի նախագահ՝ Ռաֆայել Սարգսյան**

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի հունիսին: Մինչ այդ, 2007 թվականից սկսած Ռաֆայել Սարգսյանն աշխատել է ԱԿԲԱ բանկում. 2007-2012 թվականներին՝ որպես իրավաբան, 2012-2014 թվականներին՝ որպես Իրավաբանական բաժնի պետ, իսկ 2014-2021 թվականներին՝ որպես Իրավաբանական վարչության պետ:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	2019 թվականից մինչ օրս դասավանդում է Բանկային իրավունք առարկան Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետում

2. **Բանկի խորհրդի անկախ անդամ՝ Բրունո Շարիե**

Բնակության վայրը	Ֆրանսիա, ք. Ժընե
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2019 թվականի մայիսին: Մինչ այդ, 1974 թվականից մինչև 2016 թվականն աշխատել է հեղինակավոր ֆրանսիական «Կրեդիտ Ագրիկոլ» բանկային խմբի տարբեր ընկերություններում: 2013-2016 թվականներին՝ Կրեդիտ Ագրիկոլ Սերբիայի Գործադիր խորհրդի նախագահի և Կրեդիտ Ագրիկոլ Լիզինգ Սերբիայի Գործադիր խորհրդի նախագահի պաշտոնները:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Անցել է թոշակի

3. **Բանկի խորհրդի անկախ անդամ՝ Կլաուս Գրեսենբաուեր**

Բնակության վայրը	Ավստրիա, ք. Վիեննա
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: Մինչ այդ, 1984 թվականից զբաղեցրել է առանցքային տարբեր պաշտոններ ավստրիական CREDITANSTALT բանկում և Եվրոպական արժույթի ինստիտուտում: 1998-2004 թվականներին զբաղեցրել է Եվրոպական կենտրոնական բանկի Պլանավորման և հսկողության տնօրինության տնօրենի պաշտոնը, իսկ 2005-2018 թվականներին զբաղեցրել է Եվրոպական կենտրոնական բանկի Ներքին աուդիտի ղեկավարի պաշտոնը:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի	Ներկայումս հանդիսանում է Միջուկային հետազոտությունների եվրոպական

ծավալած գործունեություն	կազմակերպության (CERN) աուդիտի կոմիտեի անդամ, Apex Group Ltd.-ի Եվրոպական կառավարման վերահսկման կոմիտեի անդամ, դասավանդում է Միջազգային հակակոռուպցիոն ակադեմիայում (IACA):

4. Բանկի խորհրդի անկախ անդամ՝ Աշոտ Կարապետյան

Բնակության վայրը	Կանադա, ք. Տորոնտո
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: Մինչ այդ, 1995-2002 և 2004-2007 թվականներին աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ: 2007 թվականից բնակություն է հաստատել Կանադայում և աշխատանքի անցել Կանադայի հիփոթեքային և բնակարանային կորպորացիայում՝ զբաղեցնելով Շուկայի վերլուծաբան/տնտեսագետի, Կապիտալի շուկաների վարչության Արժեթղթավորման քաղաքականության ավագ վերլուծաբանի և Արժեթղթավորման ռիսկերի կառավարման, ռազմավարության և պրոդուկտների ավագ մասնագետի պաշտոնները
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Կանադայի հիփոթեքային և բնակարանային կորպորացիայի Արժեթղթավորման ռիսկերի կառավարման, ռազմավարության և պրոդուկտների ավագ մասնագետ

5. Բանկի խորհրդի անդամ՝ Հրաչ Սարգսյան

Բնակության վայրը	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Չկալովկա
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2020 թվականի մայիսին: 2000 թվականից մինչ օրս զբաղվում է գյուղատնտեսությամբ (ֆերմերային գործունեությամբ): 2003 թվականից մինչ օրս Գեղարքունիքի մարզի Չկալովկա գյուղի դպրոցի զինղեկն է: Հանդիսանում է «Գեղարքունիքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահը
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Գյուղատնտես «Գեղարքունիքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ

6. Բանկի խորհրդի անդամ՝ Արմեն Մկրտչյան

Բնակության վայրը	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Քարահունջ
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2020 թվականի մայիսին: 1994-2002 թվականներին աշխատել է Գորիսի շրջանի Քարահունջի գյուղապետարանում, որպես աշխատակազմի քարտուղար: 2002թ.-ից մինչ օրս հանդիսանում է Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրենը: 2016թ.-ի մինչ օրս Գորիսի ավագանու անդամ է: Հանդիսանում է «Սյունիքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահը:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրեն, Գորիսի համայնքապետարանի Ավագանու անդամ «Սյունիքի Գյուղացիական Փոխօգնության Մարզային Միավորում» հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ

7. Բանկի խորհրդի անդամ՝ Վարդան Ուռուտյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: Մինչ այդ, 2000 թվականի սեպտեմբերից, որպես դասախոս և հետազոտող, աշխատանքի է անցել Ագրարային համալսարանի, ԱՄՆ գյուղդեպարտամենտի և Տեխասի A&M համալսարանի կողմից հիմնադրված Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում (ԱՈՒԿ): 2005 թվականին նշանակվել է կենտրոնի փոխտնօրեն, իսկ 2008 թվականի սեպտեմբերից մինչև 2018 թվականի օգոստոսը՝ Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի տնօրեն և ՀԱԱՀ ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ: 2010 թվականի փետրվարից հանդիսանում է Տեխասի A&M համալսարանի Գյուղատնտեսական էկոնոմիկայի դեպարտամենտի հրավիրյալ պրոֆեսոր: 2018 թվականի դեկտեմբերին ընտրվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր

8. Բանկի խորհրդի անդամ՝ Արամ Բաբայան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: 2005-2009 թվականներին

	աշխատել է Հայաստանի պետական ագրարային համալսարանում՝ դասավանդելով հաշվապահական հաշվառում և աուդիտ: 2009 թվականից անցել է աշխատանքի Գերմանական միջազգային համագործակցությունում (GIZ)՝ տարբեր ծրագրերում զբաղեցնելով փորձագետի, ծրագրերի համակարգողի, ղեկավարի տեղակալի և ղեկավարի պաշտոնները: Ներկայումս Արամ Բաբայանը հանդիսանում է Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) «Հարավային Կովկասում մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում» ծրագրի թիմի ղեկավարը
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Գերմանական միջազգային համագործակցության (GIZ) «Հարավային Կովկասում մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում» ծրագրի թիմի ղեկավար

9. Բանկի խորհրդի անդամ՝ Հարություն Փախչանյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2022 թվականի ապրիլին: 2008-2009 թվականներին աշխատել է Ադիդաս Արմենիայում որպես մենեջեր, 2009-2010 թվականներին ՎիվաՍել-ՄՏՍ-ում որպես պահեստի մասնագետ, 2011-2012 թվականներին Պիցցա Էքսպրեսս ընկերությունում (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) որպես մենեջերի օգնական, 2012-2014 թվականներին աշխատել է Գոնդոլա Գրուպում (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) որպես ֆինանսական վերահսկող: 2015 թվականից հանդիսանում է «ԱՐՄԲԵՐՐԻ» ընկերության գլխավոր տնօրենը:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	«ԱՐՄԲԵՐՐԻ» ընկերության գլխավոր տնօրեն

10. Բանկի խորհրդի անդամ՝ Հենրիկ Քոչինյան

Բնակության վայրը	ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր
Փորձառությունը	Խորհրդի կազմում 1-ին անգամ նշանակվել է 2010 թվականի մայիսին: Զբաղեցրել է բազմաթիվ առանցքային պաշտոններ ՀՀ պետական կառավարման համակարգում, խոշոր կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատությունում: 1971-1974 թվականներին աշխատել է ՀԽՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի նախարարության կոնստրուկտորային-տեխնոլոգիական բյուրոյում: Դրանից հետո՝ մինչև 1995

	թվականը, աշխատել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1990-1998 թվականներին եղել է Հայաստանի տրանսպորտի և կապի նախարար: 1998-2006 թվականներին եղել է Լոռու մարզպետ, 2008-2010 թվականներին՝ ՀՀ Կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի հարկային տեսչության պետ, վարչության պետի տեղակալ, 2010-ից՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն: Ներկայումս դասավանդում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում:
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Հայաստանի Պետական Ճարտարագիտական համալսարանի դասախոս

Բանկի խորհրդի անդամների իրավասություններն ու պարտականությունները ներկայացվում են ստորև.

Խորհրդի անդամն իրավունք ունի՝

1. Խորհրդի քննարկմանը ներկայացնել Խորհրդի որոշումների նախագծեր,
2. ունենալ ելույթներ, տալ հարցեր և անել առաջարկություններ Խորհրդի նիստերում, առաջադրվել և ընտրվել Խորհրդի նախագահի կամ նրա տեղակալի (եթե Բանկում առկա է նման պաշտոն) պաշտոններում, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել Բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Խորհրդի անդամը կարող է ունենալ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

Խորհրդի անդամը պարտավոր է՝

1. մասնակցել Խորհրդի նիստերին,
2. պահպանել ՀՀ օրենսդրությամբ, Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջները,
3. ուսումնասիրել Բանկի խորհրդի նախագահից, Գլխավոր գործադիր տնօրենից, նրա տեղակալներից, գլխավոր հաշվապահից, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարից և այլ անձանցից ստացված առաջարկությունները և հայտնել իրենց կարծիքը,
4. ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին:

Խորհրդի անդամը կարող է ունենալ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Բանկի խորհրդի նախագահը, բացի վերոնշյալ իրավասություններից ու պարտականություններից իրականացնում է նաև հետևյալ գործառույթները.

- կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
- գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը.
- կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
- նախագահում է Բանկի ընդհանուր ժողովում:

4.7.3.2. Բանկի գլխավոր գործադիր տնօրենը

Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է Բանկի գլխավոր գործադիր տնօրենը: Բանկի գլխավոր գործադիր տնօրենը ունի 5 տեղակալներ, որոնց փոխլրացնող փորձառությունը, որակավորումն ու հմտությունները անմիջականորեն անդրադառնում են Բանկի գործադիր կառույցի գործունեության արդյունավետության վրա:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Հակոբ Անդրեասյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	Գլխավոր գործադիր տնօրենն ապահովում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ռազմավարական ծրագրի և ներքին իրավական ակտերի կատարումը: Գլխավոր գործադիր տնօրենի կողմից նշանակվում են կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև հաստատվում են վերջիններիս կողմից առաջարկված Բանկի աշխատակիցների թեկնածությունները: Բանկի գլխավոր գործադիր տնօրենն իրականացնում է իրավասությունների և պարտականությունների բաշխում աշխատակիցների միջև՝ հստակ սահմանելով հաշվետվական հարաբերություններ:
Փորձառությունը	Ավելի քան 26 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ խորհրդի նախագահ, «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ խորհրդի նախագահ, ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ, ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ-ի խորհրդի անդամ, Հայաստանի Ալիանս Ֆրանսեզ ՀԿ խորհրդի նախագահ, ԱԿԲԱ ՏԵԽՆՈԼԱԲ ՍՊԸ խորհրդի նախագահ, ԱԿԲԱ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ ՓԲԸ խորհրդի նախագահ, ՌԵՎՈԼՈՒՇՆԱՐԻ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ ՓԲԸ խորհրդի նախագահ:

1. Գործառնական կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Նիկոլայ Հովհաննիսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	Գործառնական կառավարման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը ղեկավարում է Բանկի Գործառնական ուղղությունը: Բանկի գլխավոր գործադիր տնօրենի հետ միասին սահմանում է Բանկի տեխնիկական անվտանգության իրականացման գործընթացը, լոգիստիկայի և գույքի կառավարման գործընթացների համակարգումը, մեթոդական օժանդակություն է ցուցաբերում և համակարգում է Բանկի գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի կազմման գործընթացը, իրականացնում է կորպորատիվ ոճի ստանդարտների մշակումը և վերահսկումը, կոորդինացնում և վերահսկում է Բեք օֆիսի բաժնի, ինչպես նաև Փորձագիտական բաժնի գործառույթների համակարգը:
Փորձառությունը	Ավելի քան 26 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	«ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ խարհրդի անդամ

2. Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Ստյոպա Զաքինյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը ղեկավարում է Ֆինանսական ուղղությունը: Բանկի գլխավոր գործադիր տնօրենի հետ միասին սահմանում է Բանկի ռազմավարական զարգացման ծրագիրը, կազմակերպում է ֆինանսական ռազմավարության և աշխատանքային ծրագրերի կազմումը և հաստատում է դրանք, ինչպես նաև կազմակերպում է ռազմավարական պլանավորման ֆինանսական և բյուջետավորման ծրագրերը, հետևում դրանց կատարմանը:
Փորձառությունը	Ավելի քան 22 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ խորհրդի անդամ, Բերդի տարածաշրջանի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ

3. Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման գծով Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Նորիկ Նազարյան

Բնակության վայրը	ՀՀ, ք Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման գծով Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը ղեկավարում է

	Բանկի Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման ուղղությունը: Բանկի գլխավոր գործադիր տնօրենի հետ միասին սահմանում է վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման ուղղության ռազմավարական զարգացման ծրագիրը, վերահսկում է ռեգիոնալ մենեջերների, մասնաճյուղերի, վաճառքների կառավարման, ապառիկ բիզնեսի և առևտրի ֆինանսավորման ստորաբաժանումների աշխատանքների իրականացումը:
Փորձառությունը	Ավելի քան 24 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Բանկի գործունեությունից դուրս որևէ գործունեություն չի ծավալում:

4. Բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Արսեն Մելքոնյան

Բնակության վայրը	ՀՀ, ք Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	Բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը ղեկավարում է Բիզնես գործառույթների համակարգման ուղղությունը: Բանկի գլխավոր գործադիր տնօրենի հետ միասին մշակում և իրականացնում է նոր բիզնես ծրագրեր և ռազմավարություններ: Մշակում և հանդես է գալիս բանկային պրոդուկտների/ծառայությունների նոր առաջարկներով, վերլուծում տարածաշրջանային շուկայի միտումները և բացահայտում նոր աճի հնարավորությունները, առաջարկում նոր ծառայություններ, ապրանքներ՝ ուղղված հաճախորդների կարիքների բավարարմանը:
Փորձառությունը	Ավելի քան 22 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	Բանկի գործունեությունից դուրս որևէ գործունեություն չի ծավալում:

5. Պլատֆորմների և տեխնոլոգիաների զարգացման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Տիգրան Սիմոնյան

Բնակության վայրը	ՀՀ, ք Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	Պլատֆորմների և տեխնոլոգիաների զարգացման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը ղեկավարում է Բանկի տեխնոլոգիական զարգացման

	ուղղությունը: Բանկի գլխավոր գործադիր տնօրենի հետ միասին սահմանում է ՏՏ և թվային բանկային պլատֆորմների ու ծառայությունների ներդրման և զարգացման, ինչպես նաև ինովացիայի գործընթացները:
Փորձառությունը	Ավելի քան 13 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ ՓԲԸ խորհրդի անդամ, ԱԿԲԱ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ ՓԲԸ գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ, ՌԵՎՈԼՈՒՇՆԱՐԻ ԹԵՔՆՈԼՈՋԻՍ ՓԲԸ գլխավոր տնօրեն, խորհրդի անդամ, ԱԿԲԱ ՏԵԽՆՈԼԱԲ ՍՊԸ խորհրդի անդամ:

4.7.3.3. Բանկի Գլխավոր հաշվապահը

Սույն Ազդագիրը կազմելու պահին Բանկի Գլխավոր հաշվապահն է Արմեն Հակոբյանը:

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան
Իրավասություններն ու պարտականությունները	Բանկի Գլխավոր հաշվապահը պատասխանատու է Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, ֆինանսական հաշվետվություններն ՖՀՄՍ-երի պահանջներին համապատասխան կազմելու և օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված մարմիններին ժամանակին ներկայացնելու համար, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Բանկի կանոնադրությանը համապատասխան:
Փորձառությունը	Ավելի քան 24 տարի
Բանկի գործունեությունից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեություն	ՀՊՏՀ <<Ֆինանսական հաշվառում>> ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի անդամ, պալատի որակավորման հանձնաժողովի անդամ, ՀՀ ԲՈԿ-ի <<Տնտեսագիտության>> մասնագիտական խորհրդի անդամ

4.7.4. Թողարկողի մասնաճյուղերի կառավարիչները

Սույն Ազդագրի պատրաստման պահին Բանկի «Արմենիա» մասնաճյուղը կենտրոնացրել էր Բանկի ակտիվների շուրջ 10 տոկոսը: «Արմենիա» մասնաճյուղի կառավարիչն է Հայկ Պետրոսյանը: Բնակության վայրը՝ ՀՀ, ք. Երևան: Փորձառությունը՝ շուրջ 11 տարի: Հայկ Պետրոսյանը իրականացնում է մասնաճյուղի օպերատիվ գործունեության ղեկավարումը և կոորդինացումը, ղեկավարում ակտիվների և պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ տեղեկությունների տնօրինումը, սահմանում վերահսկողություն վարկավորման և ավանդային բաժնի աշխատանքների նկատմամբ, տրված լիազորությունների սահմաններում ներկայացնում է Բանկն այլ մարմիններում:

4.7.5. Շահերի բախումը

Բանկի և Բանկի կառավարմանը մասնակցող անձանց միջև շահերի բախումը բացակայում է և կարգավորվում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ վարվելակերպի և ներքին կարգապահության կանոնների մասին քաղաքականությամբ:

4.8. Հսկող անձինք

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Բանկը գտնվում է ներքոնշյալ անձի **ուղղակի** հսկողության տակ՝

- **«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» փակ բաժնետիրական ընկերություն** – ունի ուղղակի նշանակալից մասնակցությունը Բանկի կապիտալում՝83.80%(4,608,952 բաժնետոմս)[*]:

4.9. Ակտիվներ և պարտավորություններ, ֆինանսական վիճակ

4.9.1. Պատմական և միջանկյալ ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2020-2021թթ.-ի աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան, ինչպես նաև 2022թ.-ի 2-րդ եռամսակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները (պատճենները), ներկայացված են սույն ազդագրի ***Հավելված* 6-ում:**

Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են բեռնել նաև Բանկի ինտերնետային կայքից հետևյալ հասցեով՝ https://www.acba.am/hy/reports:

[*] Բանկի Կանոնադրական կապիտալում խոշոր բաժնետերերին պատկանող բաժնեմասի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է տվյալ պարտատոմսերի թողարկման որոշման վերաբերյալ Բանկի Խորհրդի նիստի գումարման օրվա՝ 19.08.2022թ.-ի դրությամբ:

4.9.2. Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություններ

2022թ.-ի 1-ին կիսամյակի դրությամբ՝ մինչև Ազդագրի գրանցման ներկայացման օրը Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի փոփոխությունները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	30.06.2022թ. (Աուդիտ չանցած)	31.12.2021 (Աուդիտ անցած)	Աճ/նվազում
Կապիտալ	95,429,972	88,193,367	8.21%
Ակտիվներ	564,419,422	546,930,535	3.20%
Պարտավորություններ	468,989,450	458,737,168	2.23%

Հազ. ՀՀ դրամ

Ֆինանսական ցուցանիշներ	01.01.22-30.06.22 (Աուդիտ չանցած)	01.01.21-30.06.21 (Աուդիտ չանցած)	Աճ/նվազում
Շահույթ/վնաս մինչև հարկումը	13,810,650	2,387,563	478.44%
Զուտ տոկոսային եկամուտներ	14,628,895	12,051,984	21.38%
Գործառնական եկամուտներ	25,574,275	16,374,426	56.18%

4.9.3. Դատական, արբիտրաժային և վարչական վարույթներ

Սույն Ծրագրային ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկը ներգրավված չէ դատական, արբիտրաժային և (կամ) վարչական իրավական վարույթներում, որոնք կարող են էական ազդել Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա և/կամ կարող են ունենալ կամ վերջերս ունեցել են էական ազդեցություն:

4.10. Էական պայմանագրեր

Բանկում առկա չեն Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 1 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

4.11. Մասնագիտական կարծիքներ

Բացի ֆինանսական աուդիտի ենթարկված և Ազդագրում ներկայացված Բանկի ֆինանսական հաշվետվություններից, Ազդագրի որևէ մասում այլ անձանց մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն չի օգտագործվել:

4.12. Այլ տեղեկատվություն

Ծրագրային ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, աուդիտորական եզրակացությունները մշտապես հասանելի են հանրությանը էլեկտրոնային տարբերակով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի պաշտոնական կայքում՝ www.acba.am հասցեով:
Հարկ է նշել նաև, որ Ազդագրում ներկայցված բոլոր ֆինանսկան ցուցանիշները հաշվարկված են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի և նրա դուստր ընկերության՝ «ԱԳԲԱ ԼԻԶԻՆԳ» ՓԲԸ-ի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

ԲԱԺԻՆ 5. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսսերի ձեռք բերման հայտ իրավաբանական անձանց համար

Հայտ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման

Իրավաբանական անձանց համար

Հայտի ներկայացման ամսաթիվ		**ժամը**	
Ներդրող			
Ներդրողի բանկային վավերապայմանները			
	ՀՀ դրամով բանկային հաշիվ		**ԱՄՆ դոլարով բանկային հաշիվ**
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը			
Արժեթղթերի հաշվի համարը			
Պարտատոմսի ԱՄՏԾ			
Մեկ պարտատոմսի ձեռք բերման գինը			
			գինը տառերով
Ձեռք բերվող պարտատոմսի քանակը			
			քանակը տառերով
Ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր գումար			
			գումարը տառերով

Լրացվում է Բանկի կողմից

Դրամական միջոցների մուտքագրման ամսաթիվ		**ժամը**	

Հիշեցում. Հայտը բավարարվում է, եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռք բերման համար դրամական միջոցները Բանկի ***220004131292000(ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում)/220004131136001(ԱՄՆ դրամով պարտատոմսերի դեպքում)*** բանկային հաշվին ստացվում են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, հակառակ դեպքում հայտը համարվում է անվավեր:

Սույն Հայտը ստորագրելով՝ ներդրողը հաստատում է, որ

1. ծանոթացել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրին,
2. լիովին գիտակցում է սույն պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը:

Սույնով Ներդրողն ընդունում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման առաջարկը՝ ձեռք բերելով Ազդագրում սահմանված պայմաններով և Հայտում նշված չափերով պարտատոմսեր:

ԲԱՆԿ	***ՆԵՐԴՐՈՂ***
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	
անվանում 0002, Երևան, Արամի 82-84	*անվանում*
հասցե **acba@acba.am**	*Գրանցման հասցե*
էլեկտրոնային հասցե ***010 31 88 88***	*Գործեության վայրի հասցե*
հեռախոսահամար	*ՀՎՀՀ*
պաշտոն	*հեռախոսահամար*
անուն ազգանուն Լիազորագիր թիվ ___ տրված՝ __/___/____թ.	*Ներդրողի ներկայացուցիչ*
հիմք	*անուն ազգանուն*
ստորագրություն *Կ.Տ.*	*ստորագրություն* *Կ.Տ.*

ՀԱՎԵԼՎԱԾ 2: «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսսերի ձեռք բերման հայտ ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար

Հայտ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման

Ֆիզիկական անձանց համար

Հայտի ներկայացման ամսաթիվ		**ժամը**	
Ներդրող			
Ներդրողի բանկային վավերապայմանները			
	ՀՀ դրամով բանկային հաշիվ		**ԱՄՆ դոլարով բանկային հաշիվ**
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը			
Արժեթղթերի հաշվի համարը			

Պարտատոմսի ԱՄՏԾ			
Մեկ պարտատոմսի ձեռք բերման գինը			
		գինը տառերով	
Ձեռք բերվող պարտատոմսի քանակը			
		քանակը տառերով	
Ձեռք բերվող պարտատոմսերի ընդհանուր գումար			
		գումարը տառերով	

Լրացվում է Բանկի կողմից

Դրամական միջոցների մուտքագրման ամսաթիվ		**ժամը**	

Հիշեցում. Հայտը բավարարվում է, եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռք բերման համար դրամական միջոցները Բանկի ***220004131292000 (ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում) /220004131136001 (ԱՄՆ դրամով պարտատոմսերի դեպքում)*** բանկային հաշվին ստացվում են մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, հակառակ դեպքում հայտը համարվում է անվավեր:

Ծանուցում

Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերի ձեռք բերման հայտը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը
Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6,
Հեռախոսը՝ 58-35-14,

Ինտերնետային կայքը՝ www.adgf.am,

Սույն ծանուցման մեջ կիրառվող սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	**Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ**	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	**Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է**
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	**մինչև 16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)**	երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք« ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝
ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս
գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի
դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ
զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ □ *(այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի*

չերաշխավորված ավանդ □

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ,

Սույն Հայտը ստորագրելով՝ Ներդրողը հաստատում է,որ

1. ծանոթացել է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ պարտատոմսերի թողարկման ազդագրին,
2. լիովին գիտակցում է սույն պարտատոմսերում ներդրումների հետ կապված ռիսկերը,
3. տեղյակ է, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն է Ավանդների հատուցման

Սույնով Ներդրողն ընդունում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման առաջարկը՝ ձեռք բերելով Ազդագրում սահմանված պայմաններով և Հայտում նշված չափերով պարտատոմսեր:

ԲԱՆԿ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
անվանում ***0002, Երևան, Արամի 82-84***
հասցե **acba@acba.am**
էլեկտրոնային հասցե ***010 31 88 88***
հեռախոսահամար
պաշտոն
անուն, ազգանուն Լիազորագիր թիվ ___ տրված՝ __/___/____թ.
հիմք
ստորագրություն *Կ.Տ.*

ՆԵՐԴՐՈՂ
անուն ազգանուն
անձը հաստատող փաստաթուղթ
հասցե
ծննդյան ամսաթիվ
բջջային հեռախոսահամար
ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) = (Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) = Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) = Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) = Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն = Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր = Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) = Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ = (Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

ՀԱՎԵԼՎԱԾ 4: Բանկի կազմակերպական կառուցվածքը

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ուժի մեջ է 03/10/2022 թ.-ից:

Հաստատում եմ
Խորհրդի նախագահ
Ռ. Սարգսյան
19/10/2022

Գլխավոր գործադիր
տնօրեն
Հ. Անդրեասյան
19/10/2022



ՀԱՎԵԼՎԱԾ 5: Թողարկման վերջնական պայմաններ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
(Թողարկողի անվանումը)

Անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս
(արժեթղթի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռք բերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է _____ _____ 2022թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում՝ ՀՀ, 0002, ք. Երևան, Արամի 82-84 հասցեում:

1. Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ,առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.1.	Թողարկողը (Թողարկողի անվանումը)	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
1.2.	Երաշխավորողը	Նախատեսված չէ ներգրավել երաշխավոր
1.3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	
1.4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	
1.5.	Արժեթղթերի դակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը ՝ ըստ ստորադասության	Մանրամասն ներկայացված է **Ծրագրային Ազդագրի 3.3.6** մասում

1.6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար, ՀՀ դրամ
1.7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ. $$P = \frac{C}{f}\sum_{t=1}^{n}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)}$$ որտեղ՝ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ **P** – Պարտատոմսի լրիվ գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն), **DSN** - գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, **DCC** - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանա-կանության դեպքում, **f** - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է 2 (երկու) կիսամյակային վճարումների համար), **n** - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, **C** - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, **Y** - մինչև մարում եկամտաբերություն: Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավոր է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.acba.am
1.8.	Անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար/ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ

1.9.	Քանակը	Առավելագույնը՝ 300 000 (երեք հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով պարտատոմսերի դեպքում, 300 000 (երեք հարյուր հազար) հատ ՀՀ դրամով պարտատոմսերի դեպքում
1.10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխություն)	ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից
1.11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխություն)	ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից
1.12.	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
1.13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի 19.08.2022թ. թիվ 138-3.3 որոշման
2. Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
2.1.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից և համընկնում է տեղաբաշխման առաջին օրվա հետ
2.2.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե Արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն ,թե ինչ ցուցանիշից է (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/ դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Արժեկտրոնի տոկոսադրույքը ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից, սակայն ոչ ավել տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված 2 տարի ժամկետով դասական ժամկետային ավանդի տոկոսադրույք գումարած 1%՝ ԱՄՆ դոլարի դեպքում, և ոչ ավել տվյալ պահին Բանկի սակագներով սահմանված 2 տարի ժամկետով դասական ժամկետային ավանդի տոկոսադրույք գումարած 2%՝ ՀՀ դրամի դեպքում, իսկ վճարման պարբերականությունը՝ կիսամյակային
2.3.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից
2.4.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրնակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/ Փաստացի օրեր տարվա ընթացքում(Actual/Actual)
2.5.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	«ոչ կիրառելի»

2.6.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	
2.7.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3. Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկատվություն		
3.1.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից, սակայն այն կարող է սահմանվել ոչ պակաս քան 2 տարի և ոչ ավել քան 4 տարի մարման ժամկետով:
3.2.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հանրավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար 1 պարտատոմսի համար / 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ 1 պարտատոմսի համար
3.3.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	«ոչ կիրառելի
3.4.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3.4.1	Ժամկետ(ներ)ը	
3.4.2	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	«ոչ կիրառելի»
3.4.3	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեք	«ոչ կիրառելի»
3.4.4	Այլ տեղեկություններ	
3.5.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»

3.5.1	Ժամկետ(ներ)ը	
3.5.2	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	«ոչ կիրառելի»
3.5.3	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
4. Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
4.1.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ՀՀ, 0002, ք. Երևան, Արամի 82-84
4.2.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	ենթակա է որոշման Բանկի Գործադիր տնօրենի կողմից
5. Այլ տեղեկություններ		
5.1.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թուլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թուլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրին
5.2.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թուլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թուլտվության սպասվող ամսաթիվը(հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում՝ «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում, ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:
5.3.	Արժեթղթերի վարկանիշը	Արժեթղթերը վարկանիշ չունեն
5.4.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը,բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Ներկայացված է **<u>Ծրագրային Ազդագրի 3.4</u>** մասում

Թողարկողը պատասխանատու է սույն *«Թողարկման վերջնական պայմաններում»* ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են Ծրագրային Ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Ռաֆայել Սարգսյան (անուն,ազգանուն)	Խորհրդի նախագահ (պաշտոն)		06.10.2022թ. (ամսաթիվ)
Հենրիկ Քոչինյան (անուն,ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Վարդան Ուռուտյան (անուն,ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Արամ Բաբայան (անուն,ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Հարություն Փախչանյան (անուն,ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Արմեն Մկրտչյան (անուն,ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)
Հրաչ Սարգսյան (անուն,ազգանուն)	Խորհրդի անդամ (պաշտոն)	ստորագրություն	06.10.2022թ. (ամսաթիվ)

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		06.10.2022թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստյոպա Զաքինյան	Ֆինանսական գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ		06.10.2022թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Հակոբյան	Գլխավոր հաշվապահ		06.10.2022թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		06.10.2022թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

L.S.

ՀԱՎԵԼՎԱԾ 6 : Ֆինանսական հաշվետվություններ

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 1
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 5

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն 6
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները 6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր 7
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ 24
5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն 25
6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 28
7. Առևտրային արժեթղթեր 29
8. Ածանցյալ ֆինանսական գործիքներ 29
9. Պահանջներ բանկերի նկատմամբ 30
10. Ներդրումային արժեթղթեր 31
11. Հաճախորդներին տրված վարկեր 32
12. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ 41
13. Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ 44
14. Հարկում 45
15. Վարկային կորուստների գծով ծախս 46
16. Այլ ակտիվներ 47
17. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ 48
18. Թողարկված պարտքային արժեթղթեր 48
19. Այլ փոխառություններ 48
20. Ստորադաս վարկեր 49
21. Այլ պարտավորություններ 50
22. Կապիտալ 50
23. Պայմանական և պայմանագրային պարտավորություններ 50
24. Զուտ տոկոսային եկամուտ 53
25. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ 53
26. Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից 54
27. Այլ եկամուտ 54
28. Այլ գործառնական ծախսեր 54
29. Այլ ընդհանուր վարչական ծախսեր 54
30. Ռիսկերի կառավարում 55
31. Իրական արժեքի չափում 68
32. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 71
33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ 71
34. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում 73
35. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն 74
36. Ֆինանսական գործիքների հաշվանցում 74
37. Կապիտալի համարժեքություն 75
38. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր 76

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և համախմբված հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացում, ներկայացված է այդ համատեքստում:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում, այդ թվում այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարց	Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացում
Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստ	
Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստը հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների էականության (Խմբի ընդհանուր ակտիվների 66.2%-ը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ), այնպես էլ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար պահանջվող դատողությունների պատճառով:	Աուդիտն իրականացնելիս մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալին՝ ► Վարկային ռիսկի մոդելների գնահատումը և պորտֆելի հիմունքով ԱՎԿ սահմանելու համար կիրառվող ենթադրությունները, ներառյալ՝ անցած ժամանակաշրջանի հետ համեմատ COVID-19-ի ազդեցության պատճառով մոդելների վերանայումները. ► Խմբի՝ վարկային ռիսկի էական աճը բացահայտելու նկատմամբ ներքին հսկողության միջոցների թեստավորում:
Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի ակնկալվող արժեքը և դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը մեծապես կախված է նախնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճի առկայության գնահատումից: Այդ գնահատումը էապես կախված է վարկառուի ժամկետանց օրերի ցուցանիշից (ներառյալ այլ ֆինանսական հաստատություններում ժամկետանց օրերը) և վարկառուի ֆինանսական պայմանների վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումից:	Պորտֆելային հիմունքով հաշվարկված պահուստի թեստավորման նպատակով մենք գնահատել ենք դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՎԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների վերանայված կանխատեսումները: Մենք թեստավորել ենք վարկային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են վարկերի ժամկետանց օրերը, հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների՝ դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնման վիճակագրությունը և արժեզրկված վարկերի մնացորդների փոփոխությունը սկզբնական ճանաչման ամսաթվից մինչև դեֆոլտի ամսաթիվը:
2020թ.-ին ղեկավարությունը վերանայել է ԱՎԿ գնահատման մեթոդը և մակրոտնտեսական ցուցանիշները Խմբի՝ հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների պորտֆելի վրա COVID-19-ի ազդեցության պատճառով:	Մենք գնահատել ենք նաև հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկի էական աճը որոշելու համար ղեկավարության կողմից ընտրված չափանիշների կիրառման հետևողականությունը:
Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող էր հանգեցնել ԱՎԿ էականորեն տարբեր գնահատումների: Սա կարող էր նշանակալի ազդեցություն ունենալ Խմբի ֆինանսական արդյունքների վրա:	Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Խմբի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը նկարագրող բացահայտումների նկատմամբ:
Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ գծով արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 11-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր», Ծանոթագրություն 12-ում՝ «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» և Ծանոթագրություն 30-ում՝ «Ռիսկերի կառավարում»:	

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Խմբի 2020 թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի համախմբված ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է՝ ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը,
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, սպառնալիքների վերացմանը և անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Մարիա Իգնատևան է:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր — Մարիա Իգնատևա

Գլխավոր տնօրեն — Էրիկ Հայրապետյան

27 ապրիլի, 2021թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2020թ.*	*2019թ.*
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	66,398,135	55,915,251
Առևտրային արժեթղթեր	7	319,353	251,177
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	8	250,207	277
Պահանջներ բանկերի նկատմամբ	9	57,171,584	30,523,274
Ներդրումային արժեթղթեր	10	17,405,067	22,760,449
Հաճախորդներին տրված վարկեր	11	303,018,557	275,443,307
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	25,017,394	20,312,851
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	34	984,442	749,442
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	20,144,910	21,372,430
Այլ ակտիվներ	16	4,754,606	5,256,616
Հետաձգված հարկային ակտիվներ	14	167,436	27,901
Ընդամենը ակտիվներ		**495,631,691**	**432,612,975**
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8	79,893	200,090
Բանկերի ավանդներ և մնացորդներ		45,717	32,066
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	17	296,944,080	254,667,620
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	8,500,960	12,796,122
Այլ փոխառություններ	19	101,043,374	85,203,800
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		126,703	152,542
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	680,497	521,910
Այլ պարտավորություններ	21	6,570,526	5,541,956
Ստորադաս վարկեր	20	11,130,839	4,854,305
Ընդամենը պարտավորություններ		**425,122,589**	**363,970,411**
Կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	22	30,000,000	30,000,000
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		2,946,536	3,009,091
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		3,572,143	2,730,236
Չբաշխված շահույթ		33,990,423	32,903,237
Ընդամենը կապիտալ		**70,509,102**	**68,642,564**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**495,631,691**	**432,612,975**

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝

Հակոբ Անդրեասյան — Գլխավոր գործադիր տնօրեն

Արմեն Հակոբյան — Գլխավոր հաշվապահ

27 ապրիլի, 2021թ.

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2020թ.*	*2019թ.*
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	24	43,414,170	37,167,281
Այլ տոկոսային եկամուտ	24	2,675,996	2,000,371
Տոկոսային ծախս	24	(20,185,734)	(18,209,541)
Զուտ տոկոսային եկամուտ		**25,904,432**	**20,958,111**
Վարկային կորուստների գծով ծախս	15	(10,774,703)	(947,662)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո		**15,129,729**	**20,010,449**
Միջնորդավճարների գծով եկամուտ	25	4,916,294	4,805,567
Միջնորդավճարների գծով ծախս	25	(1,868,608)	(1,865,074)
Զուտ վնաս/ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		(132,117)	1,565,583
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	26	2,351,308	885,642
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	34	399,958	223,905
Այլ եկամուտ	27	1,569,459	1,294,312
Ոչ տոկոսային եկամուտ		**7,236,294**	**6,909,935**
Անձնակազմի գծով ծախսեր		(10,888,617)	(10,838,738)
Մաշվածություն և ամորտիզացիա	13	(2,314,182)	(2,015,076)
Այլ գործառնական ծախսեր	28	(1,972,523)	(1,546,322)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	29	(3,466,759)	(3,595,210)
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսերի հակադարձում	16	49,975	72,890
Ոչ տոկոսային ծախս		**(18,592,106)**	**(17,922,456)**
Շահույթ մինչև շահութահարկ		**3,773,917**	**8,997,928**
Շահութահարկի գծով ծախս	14	(1,049,286)	(2,042,700)
Հաշվետու տարվա շահույթ		**2,724,631**	**6,955,228**

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2020թ.*	*2019թ.*
Հաշվետու տարվա շահույթ		**2,724,631**	**6,955,228**
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական գործիքների գծով իրական արժեքի զուտ փոփոխություն		258,888	270,487
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		92,348	(270,297)
Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	14	(63,222)	(34)
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ/(վնաս) վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ		**288,014**	**156**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների գծով օգուտ		597,001	773,399
Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	14	(107,460)	(139,211)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		**489,541**	**634,188**
Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս՝			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող		64,352	63,696
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս		**64,352**	**63,696**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		**841,907**	**698,040**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**3,566,538**	**7,653,268**

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Բաժնետիրական կապիտալ	*Հիմնական միջոցների վերագնահատումից աճ*	*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը կապիտալ*
2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**30,000,000**	**3,047,359**	**2,032,196**	**28,609,741**	**63,689,296**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	6,955,228	**6,955,228**
Այլ համապարփակ եկամուտ	–	–	698,040	–	**698,040**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**698,040**	**6,955,228**	**7,653,268**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	–	(38,268)	–	38,268	**–**
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում					
Հայտարարված շահաբաժիններ	–	–	–	(2,700,000)	**(2,700,000)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**–**	**–**	**–**	**(2,700,000)**	**(2,700,000)**
2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**30,000,000**	**3,009,091**	**2,730,236**	**32,903,237**	**68,642,564**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ					
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	2,724,631	**2,724,631**
Այլ համապարփակ եկամուտ	–	–	841,907	–	**841,907**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**841,907**	**2,724,631**	**3,566,538**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	–	(62,555)	–	62,555	**–**
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում					
Հայտարարված շահաբաժիններ	–	–	–	(1,700,000)	**(1,700,000)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**–**	**–**	**–**	**(1,700,000)**	**(1,700,000)**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**30,000,000**	**2,946,536**	**3,572,143**	**33,990,423**	**70,509,102**

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2020 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2020թ.	2019թ.
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		45,644,846	38,979,352
Վճարված տոկոսներ		(19,971,332)	(16,225,114)
Ստացված միջնորդավճարներ		4,992,954	4,805,567
Վճարված միջնորդավճարներ		(1,868,607)	(1,865,074)
Զուտ ելքեր/ մուտքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		(132,117)	1,565,583
Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից		2,147,112	1,598,083
Վճարված այլ գործառնական ծախսեր		(220,306)	(1,206,698)
Ստացված այլ եկամուտ		313,619	944,554
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(10,952,092)	(10,630,177)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(3,466,758)	(3,520,268)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**16,487,319**	**14,445,808**
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում			
Առևտրային արժեթղթեր		(68,176)	(251,177)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		(249,870)	4,091
Պահանջներ բանկերի նկատմամբ		(26,633,310)	(24,857,050)
Հաճախորդներին տրված վարկեր		(36,695,515)	(70,982,124)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		(4,051,999)	(6,783,081)
Այլ ակտիվներ		990,943	759,211
Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/(նվազում)			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		(120,116)	150,940
Բանկերի ավանդներ և մնացորդներ		13,660	613
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		42,136,691	50,996,468
Այլ պարտավորություններ		1,300,782	421,336
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում մինչև շահութահարկը		**(6,889,591)**	**(36,094,965)**
Վճարված շահութահարկ		(1,226,755)	(2,924,697)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում		**(8,116,346)**	**(39,019,662)**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(2,215,321)	(2,869,843)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր		131,840	206,220
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(8,724,750)	(481,815)
Ներդրումային արժեթղթերի վաճառք և մարում		15,139,588	5,763,327
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված ներդրումային գործունեությունում		**4,331,357**	**2,617,889**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	35	–	5,263,384
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	35	(3,631,337)	(1,553,514)
Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր	35	47,077,963	51,957,148
Այլ փոխառությունների մարումներ	35	(33,580,438)	(37,805,078)
Ստորադաս վարկերից մուտքեր	35	7,098,874	4,830,467
Ստորադաս վարկերի մարումներ		(950,933)	–
Վճարված շահաբաժիններ	22	(1,700,000)	(2,700,000)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված ֆինանսավորման գործունեությունում		**14,314,129**	**19,992,407**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(53,199)	(50,323)
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		6,943	69,977
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**10,482,884**	**(16,389,712)**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		55,915,251	72,304,963
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	6	**66,398,135**	**55,915,251**

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեության նկարագրություն

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն (նախկին «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, այսուհետ՝ «Բանկ») մայր կազմակերպությունն է Խմբում, որը բաղկացած է Բանկից և իր դուստր կազմակերպությունից՝ «ԱԳԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ից (միասին՝ «Խումբ»): Այն ձևավորվել է 1995թ.-ին, որպես միացյալ սեփականությամբ կոոպերատիվ բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, և 2006թ.-ին վերակազմակերպվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից տրված ընդհանուր բանկային լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրության պետական համակարգի անդամ:

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ և մատուցում է այլ բանկային ծառայություններ իր կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին: Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևան քաղաքում, և այն ունի 62 մասնաճյուղեր (ներառյալ՝ գլխամասը) Երևանում և ՀՀ այլ մարզերում: Բանկի գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84:

Բանկի անվանումը և կազմակերպչաիրավական ձևը փոխվել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ից «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի՝ համաձայն 26.05.2020թ.-ի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի: ՀՀ Կենտրոնական բանկը Բանկի անվանման և կազմակերպչաիրավական ձևի փոփոխությունը գրանցել է 2020թ.-ի հուլիսի 3-ին:

ԱԳԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպությունը ձևավորվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ: Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա՝ տրված ՀՀ ԿԲ-ի կողմից: Ընկերությունը հանդիսանում է Խմբի դուստր կազմակերպություն և համախմբվում է սույն ֆինանսական հաշվետվություններում: Բանկին է պատկանում «ԱԳԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են

Բաժնետեր	*2020թ., %*	*2019թ., %*
«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ	95.00	95.00
Սակամ Ինտերնասիոնալ ՍԱՍ	5.00	5.00
Ընդամենը	**100.00**	**100.00**

Խմբի մայր կազմակերպությունը «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն է, որը չունի վերահսկող կողմ:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր մաս

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի: Օրինակ՝ ներդրումային և առևտրային արժեթղթերը, ածանցյալ ֆինանսական գործիքները, հողը, շենքերը և փոխադրամիջոցները գնահատված են իրական արժեքով:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ:

COVID-19 համաճարակի ազդեցությունը

2020թ. COVID-19 համաճարակի արագ տարածման պատճառով մի շարք կառավարություններ, այդ թվում՝ ՀՀ կառավարությունը, նախաձեռնել են համաճարակի բռնկման դեմն ուղղված տարբեր միջոցառումներ, ներառյալ՝ ճանապարհորդության սահմանափակումները, կարանտինները, բիզնեսի և այլ վայրերի փակումը և որոշակի

(հազար ՀՀ դրամ)

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

COVID-19 համաճարակի ազդեցությունը (շարունակություն)

տարածքների արգելափակումը: Այս միջոցառումները ազդել են համաշխարհային առաջարկի շղթայի, ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև բիզնես գործունեության ծավալների վրա: Ակնկալվում է, որ ինչպես համաճարակը, այնպես էլ դրա հետ կապված հանրային առողջապահական և սոցիալական միջոցառումները կարող են ազդեցություն ունենալ տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող ընկերությունների վրա: Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից ներկայացվել են աջակցության միջոցառումներ՝ COVID-19 համաճարակի հետևանքով տնտեսական անկմանը դիմակայելու նպատակով: Ի թիվս այլ միջոցառումների՝ այս միջոցառումները ներառում են տուժած ոլորտների և անհատների վարկավորման սուբսիդավորում, վճարման արձակուրդներ և որոշ կարգավորման սահմանափակումների թուլացում՝ ֆինանսական հատվածին օգնելու համար պահպանել ռեսուրսներ տրամադրելու իր կարողությունները և հաճախորդներին օգնելու խուսափել COVID -19 զսպման միջոցառումների արդյունքում առաջացած իրացվելիության պակասից:

Խումբը շարունակում է գնահատել համաճարակի և փոփոխվող տնտեսական պայմանների ազդեցությունը իր գործունեության, ֆինանսական դրության և ֆինանսական արդյունքների վրա:

Գնահատման անորոշություններ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հասանելի տեղեկատվության հիման վրա, Խումբը ապագայում սպասվող դրամական հոսքերի գնահատումները արտացոլել է ակնկալվող վարկային կորուստների (Ծանոթագրություն 11) և ֆինանսական գործիքների իրական արժեքների գնահատումներում (Ծանոթագրություն 31):

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 16-ի փոփոխությունը՝ «COVID -19»-ի հետ կապված վարձավճարների զիջումները, որը վարձակալողներին բացառություն է տալիս գնահատելուց, թե արդյոք COVID-19-ի հետ կապված վարձավճարի զիջումը վարձակալության փոփոխություն է, թե՝ ոչ:

Ընկերությունը չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը թողարկվել է, սակայն դեռևս ուժի մեջ չի մտել:

Համախմբման հիմունքներ

Դուստր ընկերությունները, որոնց գործունեության նկատմամբ Խումբը վերահսկողություն է իրականացնում, համախմբվում են: Վերահսկողությունն իրականացվում է այն դեպքում, երբ Խումբն իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով: Մասնավորապես, Խումբը վերահսկում է ներդրումը, միայն և միայն այն դեպքում, երբ բավարարվում են հետևյալ պայմանները՝

- Խումբն ունի իրավասություն ներդրման օբյեկտի նկատմամբ (այսինքն՝ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք ապահովում են ներդրման օբյեկտի նշանակալի գործունեությունը կառավարելու հնարավորություն),
- Խումբն ունի իրավունք ներդրումներից ստացվող փոփոխական արդյունքների նկատմամբ և ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին,
- Խումբն ունի հնարավորություն օգտագործելու իր իրավասությունները ներդրման օբյեկտի նկատմամբ՝ ներդրումներից փոփոխական արդյունքների վրա ազդելու նպատակով:

Որպես կանոն, ենթադրվում է, որ վերահսկողությունը պայմանավորված է ձայնի իրավունքի մեծամասնությամբ: Սույն ենթադրության հաստատման, ինչպես նաև Խմբի մոտ մեծամասնությունից ավելի քիչ քվեարկման կամ ներդրման օբյեկտի նկատմամբ մեծամասնությունից ավելի քիչ նմանատիպ իրավունքների առկայության դեպքում, Խումբը հաշվի է առնում է բոլոր փաստերը և հանգամանքները տվյալ ներդրման օբյեկտի նկատմամբ իրավասության առկայությունը գնահատելիս, ներառյալ՝

- ներդրման օբյեկտի նկատմամբ ձայնի իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրային համաձայնությունը,
- այլ համաձայնագրերից ծագող իրավունքները,
- Խմբին պատկանող առկա և հնարավոր քվեարկման իրավունքները:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխանեցնելու նպատակով:

Առանց վերահսկման կորստի դուստր ընկերությունում մասնակցության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալում փոփոխություն: Դուստր կազմակերպության վնասները վերագրվում են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե այն հանգեցնում է բացասական մնացորդի:

Եթե Խումբը կորցնում է դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը, այն ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները (ներառյալ՝ գուդվիլը) և պարտավորությունները, ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեք, սեփական կապիտալում արտացոլվող փոխարկման կուտակված տարբերությունները, ճանաչում է ստացված փոխհատուցման իրական արժեքը, մնացած ներդրման իրական արժեքը, գործարքի արդյունքում առաջացած ավել կամ պակաս գումարը շահույթում կամ վնասում, վերադասակարգում է նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերի մայր կազմակերպության բաժինը շահույթում կամ վնասում կամ չբաշխված շահույթում:

Ձեռնարկատիրական գործունեության միավորում

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են՝ օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող ընկերության ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հանրագումար: Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման համար ձեռքբերող կողմը չափում է ձեռքբերված կազմակերպության չվերահսկվող բաժնեմասը, որը բաժնետերերին ներկա պահին էլ տալիս է ընկերության զուտ ակտիվներում համապատասխան բաժնի իրավունք ընկերության լուծարման դեպքում, կա՛մ իրական արժեքով, կա՛մ ձեռքբերված ընկերության որոշելի զուտ ակտիվների համապատասխան մասի գումարի չափով: Չվերահսկվող բաժնեմասի այլ բաղադրիչները գնահատվում են ձեռքբերման պահին իրական արժեքով: Առաջացած ձեռքբերման ծախսումները ծախսագրվում են:

Եթե Խումբը ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն, ապա ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասակարգվում են պայմանագրի պայմաններին, տնտեսական բնույթին և ձեռքբերման պահին այլ էական պայմաններին համապատասխան: Սա ներառում է ձեռքբերվող կազմակերպության հիմնական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների տարանջատման անհրաժեշտության վերլուծությունը:

Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռքբերողը ձեռքբերվող կազմակերպությունում իր նախկինում ունեցած բաժնեմասը պետք է վերաչափի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով և արդյունքում ստացված օգուտը կամ վնասը ճանաչի շահույթում կամ վնասում:

Ցանկացած պայմանական հատուցում, որը պետք է փոխանցվի ձեռքբերողի կողմից, ճանաչվում է ձեռքբերման պահին իրական արժեքով: Ակտիվ կամ պարտավորություն հանդիսացող պայմանական հատուցումների իրական արժեքի ցանկացած հետագա փոփոխություն ճանաչվում է ՖՀՄՍ 9 -ի համաձայն շահույթում կամ վնասում կամ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների փոփոխություն: Եթե պայմանական հատուցումը դասակարգվում է որպես սեփական կապիտալ, ապա այն չի վերաչափվում՝ մինչև կապիտալում ամբողջական մարումը:

Գուդվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկվող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքների տարբերությունը: Եթե փոխհատուցումը ավելի քիչ է, քան ձեռքբերված դուստր ընկերության զուտ ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կուտակված ցանկացած կորստով: Արժեզրկման ստուգման նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, ձեռքբերման ամսաթվից սկսած, պետք է բաշխվի Խմբի այն դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան օգուտներ ձեռնարկատիրական գործունեության միավորումից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք ձեռքբերվողի այլ ակտիվները կամ պարտավորությունները վերագրված են այդ միավորներին, թե՝ ոչ:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ձեռնարկատիրական գործունեության միավորում (շարունակություն)

Եթե գուդվիլը կազմում է դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մաս, և այդ ստորաբաժանման մի մասն օտարվում է, օտարվող մասին վերագրելի գուդվիլը ընդգրկվում է այդ գործունեության հաշվեկշռային արժեքի մեջ օտարումից շահույթը կամ վնասը որոշելիս: Այս պարագայում օտարվող գուդվիլը գնահատվում է օտարվող գործունեության արժեքի և դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մնացած մասի արժեքի հարաբերության հիման վրա:

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող դուստր կազմակերպությունների ձեռքբերումը

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող դուստր կազմակերպությունների ձեռքբերման հաշվառումն իրականացվում է բաժնեմասերի միավորման մեթոդով:

Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կողմերի միջև փոխանցված դուստր կազմակերպության ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմում հաշվեկշռային արժեքով, որով արտացոլված են դուստր կազմակերպության ֆինանսական հաշվետվության մեջ՝ փոխանցման ամսաթվի դրությամբ: Նախորդ սեփականատիրոջ կողմից կազմակերպության գնման ժամանակ առաջացած գուդվիլը նույնպես արտացոլվում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման տարբերությունը ընդգրկվում է այս համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ որպես սեփական կապիտալի ճշգրտում:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ համեմատական տվյալները, կազմվում են այնպես, եթե դուստր կազմակերպությունը ձեռք բերված լիներ Խմբի կողմից նախորդ սեփականատիրոջ կողմից սկզբնական ձեռքբերման ամսաթվով:

Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված են համարվում այն կազմակերպությունները, որոնցում Խումբը ունի 20%-ից 50% քվեարկող բաժնեմաս կամ Խումբն ունի էական ազդեցության այլ հնարավորություններ, որը, սակայն, չի նշանակում լիովին վերահսկում: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը: Հաշվեկշռային արժեքի հետագա փոփոխությունները արտացոլում են միավորմանը հաջորդող Խմբի՝ ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվների բաժնեմասի փոփոխությունները: Խմբի՝ ասոցիացված կազմակերպության շահույթի կամ վնասի բաժնեմասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստներում փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Այնուամենայնիվ, երբ Խմբի՝ ասոցիացված կազմակերպություններում վնասների բաժինը գերազանցում է իր բաժնեմասը ասոցիացված կազմակերպությունում, Խումբը չի ճանաչում հետագա կորուստները, եթե Խումբը չի պարտավորվում հետագա վճարումներ կատարել ասոցիացված կազմակերպությանը կամ ասոցիացված կազմակերպության անունից:

Խմբի և իր ասոցիացված կազմակերպության միջև գործարքներից չիրացված օգուտները բացառվում են մինչև Խմբի՝ ասոցիացված կազմակերպությունում բաժնեմասը. չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին:

Իրական արժեքի չափում

Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ում:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև՝ սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Իրական արժեքի չափում (շարունակություն)

Խումբը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Խումբն օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Խումբը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչում

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման տեսակներ

Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
Ֆինանսական վարձակալության ժամկետի երկարացման հնարավորություն ունեցող պայմանագրով սահմանված ցանկացած ժամանակահատվածի հետ միասին Խումբը ֆինանսական վարձակալության ժամկետը սահմանում է որպես ֆինանսական վարձակալության չչեղարկվող ժամկետ, եթե հիմնավորված է, որ այն կկիրառվի, կամ ֆինանսական վարձակալության ավարտման հնարավորությամբ պայմանագրով սահմանված ցանկացած ժամանակահատված, եթե հիմնավորված է, որ այն չի կիրառվի:

Ֆինանսական վարձակալության որոշ պայմանագրերի համաձայն, Խումբն ակտիվները լրացուցիչ ժամկետով վարձակալելու հնարավորություն ունի: Խումբը կիրառում է դատողություն `գնահատելու համար, թե հիմնավորված է արդյոք կիրառել պայմանագրի նորացման հնարավորությունը:

Այսինքն ` այն հաշվի է առնում բոլոր կարևոր գործոնները, որոնք տնտեսական խթան են ստեղծում դրա իրականացման համար: Մեկնարկի ամսաթվից հետո Խումբը վերանայում է վարձակալության ժամկետը, եթե կա որևէ նշանակալից իրադարձություն կամ հանգամանքների փոփոխություն, որն իր վերահսկողության տակ է և ազդում է պայմանագրի նորացման հնարավորությունը կիրառելու (կամ չկիրառելու) կարողության վրա (օրինակ ` բիզնեսի ռազմավարության փոփոխություն):

Գնահատումների անորոշություն

Խմբի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված գումարների վերաբերյալ ղեկավարությունը կատարել է հետևյալ առավել կարևոր գնահատումները և դատողությունները.

Հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում

Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է շուկայական համեմատական մեթոդով: Այսինքն, գնահատողի կողմից իրականացված գնահատումը հիմնված է շուկայական գործարքների գների վրա՝ էականորեն ճշգրտված գույքի բնույթի, գտնվելու վայրի և պայմանների տարբերություններն արտացոլելու համար: Խումբը ներգրավում է անկախ փորձագետների իր գույքերը գնահատելու համար:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար անհրաժեշտ է կիրառել դատողություններ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 31-ում:

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստ

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի և գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկման գծով վնասների որոշման և վարկային ռիսկի զգալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Խմբի՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Գնահատումների անորոշություն (շարունակություն)

ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

- Վիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված վարկերի և ֆինանսական վարձակալության արժեզրկման գծով պահուստը կազմել է 13,082,663 հազար դրամ (2019: 7,666,035 հազ. դրամ): Մանրամասները ներկայացված են 11-րդ և 12-րդ ծանոթագրություններում:

Վարձակալություն- լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատումը

Խումբը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալության ենթադրվող տոկոսադրույքը, հետևաբար, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները չափելու համար այն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը (IBR): Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը (IBR) այն տոկոսադրույքն է, որը Խումբը պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Հետևաբար, լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն (IBR) արտացոլում է այն, ինչ Խումբը «պետք է վճարեր», որը պահանջում է գնահատել, երբ դիտարկվող տոկոսադրույքներ մատչելի չեն (օրինակ՝ դուստր ընկերությունների համար, որոնք ֆինանսավորման գործարքներ չեն կնքում) կամ երբ դրանք պետք է ճշգրտվեն՝ արտացոլելու ֆինանսական վարձակալության ժամկետներն ու պայմանները (օրինակ, երբ վարձակալությունները դուստր ընկերության գործառնական արժույթով չեն):

Խումբը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն (IBR)՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալները (օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), երբ առկա է, և պահանջվում է իրականացնել Ընկերությանը բնորոշ որոշակի գնահատումներ (օրինակ՝դուստր ընկերության առանձին վարկանիշը): Լրացուցիչ մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 3-ում:

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներով և հիմնվելով մատուցվող ապրանքների և ծառայությունների տարատեսակների վրա, Խումբը բաժանվում է հետևյալ չորս սեգմենտների.

Մանրածախ բանկային գործունեություն	Ֆիզիկական անձանց ավանդներ, սպառողական վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում և դրամական փոխանցումներ:
Կորպորատիվ բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն	Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնական գործառնություններ:
Ֆինանսական վարձակալություն	Կորպորատիվ և անհատ հաճախորդներին ֆինանսական վարձակալության գծով ծառայությունների մատուցում:

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Սեգմենտի գործունեությունը, ինչպես նկարագրված է ստորև բերված աղյուսակում, չափվում է այլ կերպ, քան համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված շահույթը կամ վնասը: Շահութահարկը կառավարվում է Խմբի մակարդակով և բաշխվում է գործառնական սեգմենտների միջև:

(հազար ՀՀ դրամ)

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Գործառնական սեգմենտների միջև տրանսֆերային գնագոյացումը, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում, համապատասխանում է շուկայական պայմաններին:

2020 և 2019թթ. ընթացքում արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Խմբի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

Ստորև նշված աղյուսակները ներկայացնում են Խմբի գործառնական սեգմենտների գծով եկամտի և շահութի, ինչպես նաև առանձին ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն.

2020թ.	*Մանրածախ բանկային գործունեություն*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն*	*Ֆինանսական վարձակալություն*	*Ընդամենը*
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	32,165,113	8,685,677	2,563,380	–	**43,414,170**
Այլ տոկոսային եկամուտ	–	–	–	2,675,996	**2,675,996**
Տոկոսային ծախս	(8,066,612)	(4,096,669)	(7,420,331)	(602,122)	**(20,185,734)**
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս)	**24,098,501**	**4,589,008**	**(4,856,951)**	**2,073,874**	**25,904,432**
Վարկային կորուստների գծով ծախս	(7,256,540)	(2,608,244)	–	(909,919)	**(10,774,703)**
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս) վարկային կորուստների գծով ծախսից հետո	**16,841,961**	**1,980,764**	**(4,856,951)**	**1,163,955**	**15,129,729**
Միջնորդավճարների գծով եկամուտ	2,255,815	2,189,242	131,732	339,505	4,916,294
Միջնորդավճարների գծով ծախս	(1,191,202)	(460,010)	(99,504)	(117,892)	**(1,868,608)**
Զուտ վնաս ածանցյալ գործիքներից	–	–	(132,117)	–	**(132,117)**
Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	–	–	2,403,899	(52,591)	**2,351,308**
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս	–	–	399,958	–	**399,958**
Այլ եկամուտ	1,070,892	305,969	153,926	38,672	**1,569,459**
Ոչ տոկոսային եկամուտ	**2,135,505**	**2,035,201**	**2,857,894**	**207,694**	**7,236,294**
Անձնակազմի գծով ծախսեր	(7,428,984)	(2,122,567)	(1,061,283)	(275,783)	**(10,888,617)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(1,593,373)	(455,250)	(227,625)	(37,934)	**(2,314,182)**
Այլ գործառնական ծախսեր	(1,354,827)	(387,093)	(193,545)	(37,058)	**(1,972,523)**
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,370,406)	(677,258)	(338,629)	(80,466)	**(3,466,759)**
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով ծախսեր հակադարձում	32,484	17,491	–	–	**49,975**
Ոչ տոկոսային ծախս	**(12,715,106)**	**(3,624,677)**	**(1,821,082)**	**(431,241)**	**(18,592,106)**
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ	**6,262,360**	**391,288**	**(3,820,139)**	**940,408**	**3,773,917**
Շահութահարկի գծով ծախս	(650,285)	(185,796)	(164,891)	(48,314)	**(1,049,286)**
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	**5,612,075**	**205,492**	**(3,985,030)**	**892,094**	**2,724,631**
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	196,705,787	106,312,770	75,146,211	25,017,394	**403,182,162**
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	181,382,242	118,360,679	106,579,086	11,422,862	**417,744,869**

(հազար ՀՀ դրամ)

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

2019թ.	*Մանրածախ բանկային գործունեություն*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն*	*Ֆինանսական վարձակալություն*	*Ընդամենը*
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	27,809,460	7,260,714	2,097,107	–	**37,167,281**
Այլ տոկոսային եկամուտ	–	–	–	2,000,371	**2,000,371**
Տոկոսային ծախս	(7,211,512)	(3,409,185)	(7,057,837)	(531,007)	**(18,209,541)**
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս)	**20,597,948**	**3,851,529**	**(4,960,730)**	**1,469,364**	**20,958,111**
Վարկային կորուստների գծով ծախս/ հակադարձում	(2,090,884)	1,159,815	–	(16,593)	**(947,662)**
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս) վարկային կորուստների գծով ծախսից հետո	**18,507,064**	**5,011,344**	**(4,960,730)**	**1,452,771**	**20,010,449**
Միջնորդավճարների գծով եկամուտ	2,111,896	2,414,884	68,309	210,478	**4,805,567**
Միջնորդավճարների գծով ծախս	(1,200,537)	(517,488)	(43,000)	(104,049)	**(1,865,074)**
Զուտ եկամուտ ածանցյալ գործիքներից	–	–	1,565,583	–	**1,565,583**
Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	–	–	903,166	(17,524)	**885,642**
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս	–	–	223,905	–	**223,905**
Այլ եկամուտ	878,841	251,097	115,790	48,584	**1,294,312**
Ոչ տոկոսային եկամուտ	**1,790,200**	**2,148,493**	**2,833,753**	**137,489**	**6,909,935**
Անձնակազմի գծով ծախսեր	(7,402,879)	(2,115,108)	(1,057,554)	(263,197)	**(10,838,738)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(1,390,029)	(397,151)	(198,575)	(29,321)	**(2,015,076)**
Այլ գործառնական ծախսեր	(1,031,021)	(294,577)	(137,527)	(83,197)	**(1,546,322)**
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(2,464,188)	(704,054)	(352,026)	(74,942)	**(3,595,210)**
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով ծախսեր հակադարձում	47,378	25,512	–	–	**72,890**
Ոչ տոկոսային ծախս	**(12,240,739)**	**(3,485,378)**	**(1,745,682)**	**(450,657)**	**(17,922,456)**
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ	**8,056,525**	**3,674,459**	**(3,872,659)**	**1,139,603**	**8,997,928**
Շահութահարկի գծով ծախս	(1,745,020)	(791,449)	709,375	(215,606)	**(2,042,700)**
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	**6,311,505**	**2,883,010**	**(3,163,284)**	**923,997**	**6,955,228**
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	195,751,086	79,692,222	53,529,474	20,312,851	**349,285,633**
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	199,686,802	67,022,940	81,755,870	9,288,391	**357,754,003**

Խումբն իր հիմնական գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Բացի ֆինանսական գործիքներից, Խումբը չունի ՀՀ-ի տարածքից դուրս այլ ոչ ընթացիկ ակտիվներ:

ՖՀՄՍ 15-ի շրջանակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի բացվածքը ըստ սեգմենտների 2020 և 2019 թվականների դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն է.

(հազար ՀՀ դրամ)

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

2020թ.	*Մանրածախ բանկային գործունեություն*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն*	*Ֆինանսական վարձակալություն*	*Ընդամենը*
Միջնորդավճարների գծով եկամուտ	**2,255,815**	**2,189,242**	**131,732**	**339,505**	**4,916,294**
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,288,112	1,343,864	–	–	**2,631,976**
Դրամական փոխանցումներ	505,572	216,674	–	–	**722,246**
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	–	258,964	129,482	–	**388,446**
Կանխիկացման ծառայություններ	136,143	58,347	–	–	**194,490**
Բանկային հաշվի սպասարկման վճարներ	278,205	231,138	–	–	**509,343**
Այլ	47,783	80,255	2,250	339,505	**469,793**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ	**2,255,815**	**2,189,242**	**131,732**	**339,505**	**4,916,294**

2019թ.	*Մանրածախ բանկային գործունեություն*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն*	*Ֆինանսական վարձակալություն*	*Ընդամենը*
Միջնորդավճարների գծով եկամուտ	**2,111,896**	**2,414,884**	**68,309**	**210,478**	**4,805,567**
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,182,078	1,660,113	–	–	**2,842,191**
Դրամական փոխանցումներ	532,965	228,413	–	–	**761,378**
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	–	45,153	66,251	–	**111,404**
Կանխիկացման ծառայություններ	123,584	52,965	–	–	**176,549**
Բանկային հաշվի սպասարկման վճարներ	267,185	311,531	–	–	**578,716**
Այլ	6,084	116,709	2,058	210,478	**335,329**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ	**2,111,896**	**2,414,884**	**68,309**	**210,478**	**4,805,567**

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

	2020թ.	*2019թ.*
Կանխիկ միջոցներ	15,507,824	16,643,360
ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդներ, ներառյալ պարտադիր պահուստները (չսահմանափակված մասը, Ծան. 9)	43,875,865	34,623,321
Այլ բանկերում հաշիվների մնացորդներ	7,084,277	4,654,854
Արժեզրկում	(69,831)	(6,284)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**66,398,135**	**55,915,251**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդները ներառում են պարտադիր պահուստներ 16,777,146 հազ. դրամի չափով (2019թ.՝ 17,542,146 հազ. դրամ):

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 2%-ի չափով (2019: 2%) և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով (2019: 18%):

(հազար ՀՀ դրամ)

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

2020թ. սկսած բանկերը պարտավոր են արտարժույթով ներգրավված գումարների 10%-ը (2019թ.՝ 12%) պահել ՀՀ դրամով որպես դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում և 8% (2019թ.՝ 6%)՝ արտարժույթով:

Ավելին, արտարժույթով պահուստավորված միջոցների ելքագրումը սահմանափակված է, հետևաբար Խումբը արտարժույթով պարտադիր պահուստները դասակարգում է որպես պահանջներ բանկերի նկատմամբ (Ծանոթագրություն 9):

Դրամական միջոցների բոլոր մնացորդները վերագրված են առաջին փուլին: Տարվա ընթացում ԱՎԿ պահուստի փոփոխության վերլուծությունը հետևյալն է.

	2020թ.	*2019թ.*
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	**6,284**	**76,264**
ԱՎԿ փոփոխություն	53,199	(69,977)
Արտարժույթի փոխարկման ճշգրտումներ	10,348	(3)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**69,831**	**6,284**

Դրամական միջոցներ և դրանց համարժեքների որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

7. Առևտրային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթեր բաղկացած են՝

	2020թ.	*2019թ.*
Հայկական բանկերի կորպորատիվ պարտատոմսեր	319,353	251,177
Ընդամենը առևտրային արժեթղթեր	**319,353**	**251,177**

2019թ.-ի մայիսին Խումբը ձեռք է բերել հայկական բանկի կորպորատիվ պարտատոմս 9.75% տոկոսադրույքով և մինչև 2022թ.-ի մայիսը մարման ժամկետով:

8. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները.

	2019թ.		*2018թ.*	
	Պայմանական արժեք	*Իրական արժեք*	*Պայմանական արժեք*	*Իրական արժեք*
Ակտիվներ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Արժութային սվոպ	7,318,900	250,207	145,337	277
	7,318,900	**250,207**	**145,337**	**277**
Պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Տոկոսադրույքային սվոպ	–	–	1,918,800	55,521
Արժութային սվոպ	15,412,670	79,893	18,334,320	144,569
	15,412,670	**79,893**	**20,253,120**	**200,090**

(հազար ՀՀ դրամ)

9. Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջները ներառում են հետևյալ հոդվածները.

	2020թ.	*2019թ.*
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների գծով դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	868,000	562,000
Արտարժույթով պարտադիր պահուստներ ՀՀ ԿԲ-ում (Ծան. 6)	11,077,718	7,081,196
Ընդամենը	**11,945,718**	**7,643,196**
Պահանջներ այլ բանկերի նկատմամբ		
Հայկական բանկեր	6,188,910	2,882,504
Օտարերկրյա բանկեր	591,713	540,667
Ընդամենը պահանջներ այլ բանկերի նկատմամբ	**6,780,623**	**3,423,171**
Այլ դեբիտորական պարտքեր		
Դրամական փոխանցումների համակարգերից ստացվելիք գումարներ	1,043,174	947,909
Պլաստիկ քարտերով գործարքներից ստացվելիք գումարներ	530,948	464,451
Այլ գումարներ	99,766	365,078
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		
Հայկական բանկերից ստացվելիք գումարներ	36,843,265	17,708,358
Պահանջներ բանկերի նկատմամբ մինչև արժեզրկումը	**57,243,494**	**30,552,163**
Արժեզրկում	(71,910)	(28,889)
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	**57,171,584**	**30,523,274**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պարտադիր պահուստները ներառում են 11,077,718 հազ. դրամի արտարժույթով պարտադիր պահուստներ (2019թ.՝ 7,081,196 հազ. դրամ) (տես Ծանոթագրություն 6):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 591,713 հազ. դրամ (2019թ.՝ 540,667 հազ. դրամ) ավանդների տեսքով տեղաբաշխված է միջազգայնորեն ճանաչված երեք ՏՀԶԿ բանկերում (2019թ.՝ երեք), որոնք հանդիսանում են Խմբի հիմնական գործընկերները միջազգային գործառնությունների իրականացման գծով:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ միջբանկային վարկերը ներառում են 6,188,910 հազ. դրամի վարկեր՝ տեղաբաշխված երկու հայկական բանկերում (2019թ.՝ 2,882,504 հազ. դրամի վարկեր՝ տեղաբաշխված երկու հայկական բանկերում):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի հակադարձ հետգնման պայմանագրեր վեց հայկական բանկի հետ (2019թ.՝ երկու): Այս պայմանագրերի գծով գրավադրված են հայկական պետական պարտատոմսեր 38,913,124 հազ. դրամ իրական արժեքով (2019թ.՝ 19,143,479 հազ դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև՝

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**30,552,163**	**30,552,163**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	57,243,494	**57,243,494**
Մարված ակտիվներ	(30,552,163)	**(30,552,163)**
2020 թ. դեկտեմբերի 31-ին	**57,243,494**	**57,243,494**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**28,889**	**28,889**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	71,910	**71,910**
Մարված ակտիվներ	(28,889)	**(28,889)**
2020թ. դեկտեմբերի 31-ին	**71,910**	**71,910**

(հազար ՀՀ դրամ)

9. Պահանջներ բանկերի նկատմամբ (շարունակություն)

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև՝

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**5,743,495**	**5,743,495**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	30,552,163	**30,552,163**
Մարված ակտիվներ	(5,743,495)	**(5,743,495)**
2019 թ. դեկտեմբերի 31-ին	**30,552,163**	**30,552,163**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**47,684**	**47,684**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	28,889	**28,889**
Մարված ակտիվներ	(47,684)	**(47,684)**
2019 թ. դեկտեմբերի 31-ին	**28,889**	**28,889**

Բանկերի նկատմամբ պահանջների որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

10. Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը, 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, դասակարգվում են որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ և ներառում են՝

	2020թ.	*2019թ.*
Պարտքային և այլ ֆիքսված եկամտով գործիքներ		
Պետական պարտատոմսեր		
ՀՀ կառավարության արժեթղթեր	9,452,410	16,212,563
Կորպորատիվ պարտատոմսեր		
Հայկական ընկերությունների պարտքային արժեթղթեր	4,824,872	4,079,615
Բաժնային գործիքներ		
Գնանշված բաժնային արժեթղթեր – միջազգային ընկերություններ	3,009,909	2,373,451
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	117,876	94,820
	17,405,067	**22,760,449**

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային գործիքների 66.21%-ը կազմել են ՀՀ պետական պարտատոմսերը:

2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետանց կամ արժեզրկված արժեթղթերը բացակայում են, ինչպես նաև բացակայում են վերանայված մնացորդներ ներդրումային արժեթղթերի գծով, որոնք հակառակ դեպքում կլինեին ժամկետանց:

Պարտքային գործիքների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 30-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**20,292,178**	**20,292,178**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	8,724,750	**8,724,750**
Մարված ակտիվներ	(15,139,588)	**(15,139,588)**
Իրական արժեքի զուտ փոփոխություն	258,888	**258,888**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	141,054	**141,054**
2020 թ. դեկտեմբերի 31	**14,277,282**	**14,277,282**

(հազար ՀՀ դրամ)

10. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**216,674**	**216,674**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	96,593	**96,593**
Մարված ակտիվներ	(31,056)	**(31,056)**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	9,687	**9,687**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	17,124	**17,124**
2020 թ. դեկտեմբերի 31	**309,022**	**309,022**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**25,265,705**	**25,265,705**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	481,815	**481,815**
Մարված ակտիվներ	(5,763,327)	**(5,763,327)**
Իրական արժեքի զուտ փոփոխություն	270,487	**270,487**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	37,498	**37,498**
2019 թ. դեկտեմբերի 31	**20,292,178**	**20,292,178**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**486,971**	**486,971**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	160	**160**
Մարված ակտիվներ	(59,586)	**(59,586)**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(210,602)	**(210,602)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(269)	**(269)**
2019 թ. դեկտեմբերի 31	**216,674**	**216,674**

11. Հաճախորդներին տրված վարկեր

	2020թ.	*2019թ.*
Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր		
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	79,678,711	67,861,883
Վարկեր խոշոր ընկերություններին	29,977,548	20,290,738
Ընդամենը կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր	**109,656,259**	**88,152,621**
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր		
Սպառողական վարկեր	95,348,630	76,468,356
Գյուղատնտեսական վարկեր	70,316,815	81,858,193
Հիփոթեքային վարկեր	25,028,359	16,671,950
Վարկային քարտեր	13,367,120	15,220,788
Ոսկու գրավադրմամբ վարկեր	1,494,551	4,613,158
Ընդամենը մանրածախ հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**205,555,475**	**194,832,445**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**315,211,734**	**282,985,066**
Արժեզրկման գծով պահուստ	(12,193,177)	(7,541,759)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր ամորտիզացված արժեքով	**303,018,557**	**275,443,307**

Բանկի գործունեությունը հիմնականում ուղղված է երկրում գյուղատնտեսության ֆինանսավորմանը: Բանկը տրամադրում է գյուղատնտեսական վարկեր ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք իրականացնում կամ նախատեսում են իրականացնել գյուղատնտեսական արտադրության կամ մշակման գործունեություն: Գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են գյուղատնտեսական երկարաժամկետ ներդրումների, ինչպես նաև կարճաժամկետ ֆինանսավորման կարիքների համար:

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում կորպորատիվ վարկավորման համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Կորպորատիվ վարկավորում	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**82,478,850**	**498,280**	**4,954,288**	**221,203**	**88,152,621**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	52,647,330	–	–	15,449	**52,662,779**
Մարված ակտիվներ	(28,706,208)	(1,199,636)	(805,789)	(1,689)	**(30,713,322)**
Տեղափոխում Փուլ 1	162,750	(162,750)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(14,534,636)	14,534,636	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(6,086,665)	(68,671)	6,155,336	–	**–**
Վերականգնումներ	–	–	774,521	–	**774,521**
Դուրս գրված գումարներ	–	–	(4,786,123)	–	**(4,786,123)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	2,391,981	824,119	340,127	9,556	**3,565,783**
2020 թ. դեկտեմբերի 31	**88,353,402**	**14,425,978**	**6,632,360**	**244,519**	**109,656,259**

Կորպորատիվ վարկավորում	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**184,681**	**9,768**	**4,363,961**	**146,476**	**4,704,886**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,030,470	–	–	–	**1,030,470**
Մարված ակտիվներ	(49,636)	(1,342)	(574,249)	–	**(625,227)**
Տեղափոխում Փուլ 1	2,218	(2,218)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(196,315)	196,315	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(560,859)	(3,119)	563,978	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(1,034)	360,791	1,420,527	–	**1,780,284**
Չեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	57,607	–	**57,607**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	126,550	2,594	236,863	(114,734)	**251,273**
Վերականգնումներ	–	–	774,521	–	**774,521**
Դուրս գրված գումարներ	–	–	(4,786,123)	–	**(4,786,123)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	14,337	33,934	113,867	–	**162,138**
2020 թ. դեկտեմբերի 31	**550,412**	**596,723**	**2,170,952**	**31,742**	**3,349,829**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում գյուղատնտեսական վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Գյուղատնտեսական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը				
2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**72,894,053**	**1,388,961**	**2,185,342**	**76,468,356**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	50,838,950	–	–	**50,838,950**
Մարված ակտիվներ	(30,611,624)	(770,382)	(1,876,360)	**(33,258,366)**
Տեղափոխում Փուլ 1	249,061	(249,061)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(3,753,787)	3,753,787	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(2,459,634)	(571,449)	3,031,083	**–**
Վերականգնումներ	–	–	2,662,329	**2,662,329**
Դուրս գրված գումարներ	–	–	(1,970,139)	**(1,970,139)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	534,158	32,847	40,495	**607,500**
2020 թ. դեկտեմբերի 31	**87,691,177**	**3,584,703**	**4,072,750**	**95,348,630**

Գյուղատնտեսական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**417,819**	**32,288**	**854,730**	**1,304,837**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,042,449	–	–	**1,042,449**
Մարված ակտիվներ	(64,550)	(4,647)	(1,312,825)	**(1,382,022)**
Տեղափոխում Փուլ 1	4,387	(4,387)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(84,335)	84,335	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(225,337)	(18,674)	244,011	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(557)	230,768	765,140	**995,351**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	99,704	**99,704**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	312,319	4,605	(56,132)	**260,792**
Վերականգնումներ	–	–	2,662,329	**2,662,329**
Դուրս գրված գումարներ	–	–	(1,970,139)	**(1,970,139)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	12,641	3,215	23,932	**39,788**
2020թ. դեկտեմբերի 31	**1,414,836**	**327,503**	**1,310,750**	**3,053,089**

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Սպառողական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը				
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**78,212,234**	**1,479,242**	**2,166,717**	**81,858,193**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	27,054,380	–	–	**27,054,380**
Մարված ակտիվներ	(34,511,441)	(816,054)	(1,154,051)	**(36,481,546)**
Տեղափոխում Փուլ 1	279,641	(279,641)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(6,178,909)	6,178,909	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(4,144,946)	(934,985)	5,079,931	**–**
Վերականգնումներ	–	–	1,564,922	**1,564,922**
Դուրս գրված գումարներ	–	–	(3,679,134)	**(3,679,134)**
2020թ. դեկտեմբերի 31	**60,710,959**	**5,627,471**	**3,978,385**	**70,316,815**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

Սպառողական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**296,891**	**51,090**	**710,609**	**1,058,590**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,329,006	–	–	**1,329,006**
Մարված ակտիվներ	(74,071)	(5,423)	(638,972)	**(718,466)**
Տեղափոխում Փուլ 1	4,086	(4,086)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(255,830)	255,830	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(429,157)	(40,336)	469,493	**–**
ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	2,605	736,757	1,422,258	**2,161,620**
Չեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	155,193	**155,193**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	844,657	11,502	2,052,542	**2,908,701**
Վերականգնումներ	–	–	1,564,922	**1,564,922**
Դուրս գրված գումարներ	–	–	(3,679,134)	**(3,679,134)**
2020թ. դեկտեմբերի 31	**1,718,187**	**1,005,334**	**2,056,911**	**4,780,432**

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հիփոթեքային վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Հիփոթեքային վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**16,117,329**	**155,701**	**280,923**	**117,997**	**16,671,950**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	10,788,456	–	–	19,050	**10,807,506**
Մարված ակտիվներ	(2,632,739)	(65,175)	(249,841)	(72,199)	**(3,019,954)**
Տեղափոխում Փուլ 1	46,363	(46,363)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(1,211,925)	1,211,925	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(227,002)	(84,326)	311,328	–	**–**
Վերականգնումներ	–	–	291,135	–	**291,135**
Դուրս գրված գումարներ	–	–	(137,913)	–	**(137,913)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	348,801	44,790	17,949	4,095	**415,635**
2020թ. դեկտեմբերի 31	**23,229,283**	**1,216,552**	**513,581**	**68,943**	**25,028,359**

Հիփոթեքային վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**29,189**	**3,773**	**113,809**	**80,531**	**227,302**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	36,586	–	–	–	**36,586**
Մարված ակտիվներ	(2,224)	(282)	(194,184)	(40,652)	**(237,342)**
Տեղափոխում Փուլ 1	1,092	(1,092)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(12,170)	12,170	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(781)	(1,988)	2,769	–	**–**
ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(989)	28,692	78,620	–	**106,323**
Չեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	9,817	–	**9,817**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	9,443	12	(41,625)	(3,655)	**(35,825)**
Վերականգնումներ	–	–	291,135	–	**291,135**
Դուրս գրված գումարներ	–	–	(137,913)	–	**(137,913)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	1,123	1,763	6,319	2,310	**11,515**
2020թ. դեկտեմբերի 31	**61,269**	**43,048**	**128,747**	**38,534**	**271,598**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում վարկային քարտերով և ոսկով ապահովված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**19,001,266**	**364,793**	**467,887**	**–**	**19,833,946**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,871,404	–	–	1,401	**2,872,805**
Մարված ակտիվներ	(7,833,329)	(124,212)	(432,861)	–	**(8,390,402)**
Տեղափոխում Փուլ 1	68,834	(68,834)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(191,718)	191,718	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(817,739)	(157,577)	975,316	–	**–**
Վերականգնումներ	–	–	593,193	–	**593,193**
Դուրս գրված գումարներ	–	–	(686,000)	–	**(686,000)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	602,541	9,475	26,113	–	**638,129**
2020թ. դեկտեմբերի 31	**13,701,259**	**215,363**	**943,648**	**1,401**	**14,861,671**

Վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**82,963**	**11,689**	**151,492**	**–**	**246,144**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	105,501	–	–	–	**105,501**
Մարված ակտիվներ	(20,340)	(4,592)	(318,524)	–	**(343,456)**
Տեղափոխում Փուլ 1	989	(989)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(4,627)	4,627	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(49,681)	(6,039)	55,720	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(584)	36,162	225,529	–	**261,107**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	30,843	–	**30,843**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	192,207	1,347	305,743	793	**500,090**
Վերականգնումներ	–	–	593,193	–	**593,193**
Դուրս գրված գումարներ	–	–	(686,000)	–	**(686,000)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	13,763	2,231	14,813	–	**30,807**
2020թ. դեկտեմբերի 31	**320,191**	**44,436**	**372,809**	**793**	**738,229**

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում կորպորատիվ վարկավորման համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Կորպորատիվ վարկավորում	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**59,453,665**	**314,223**	**6,262,638**	**41,679**	**66,072,205**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	54,596,585	–	–	181,227	**54,777,812**
Մարված ակտիվներ	(30,464,419)	(123,160)	(2,204,928)	(1,703)	**(32,794,210)**
Տեղափոխում Փուլ 1	1,814	(1,814)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(437,963)	437,963	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(535,525)	(126,663)	662,188	–	**–**
Վերականգնումներ	–	–	594,890	–	**594,890**
Դուրս գրված գումարներ	–	–	(321,828)	–	**(321,828)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(135,307)	(2,269)	(38,672)	–	**(176,248)**
2019 թ. դեկտեմբերի 31	**82,478,850**	**498,280**	**4,954,288**	**221,203**	**88,152,621**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

Կորպորատիվ վարկավորում	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**120,736**	**11,013**	**5,090,734**	**34,658**	**5,257,141**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	132,326	–	–	–	**132,326**
Մարված ակտիվներ	(38,536)	(141)	(1,709,997)	–	**(1,748,674)**
Տեղափոխում Փուլ 1	5	(5)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(2,073)	2,073	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(17,738)	(7,464)	25,202	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա	(5)	5,379	150,171	–	**155,545**
Ջեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	11,357	–	**11,357**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(9,727)	(1,048)	558,744	111,818	**659,787**
Վերականգնումներ	–	–	594,890	–	**594,890**
Դուրս գրված գումարներ	–	–	(321,828)	–	**(321,828)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(307)	(39)	(35,312)	–	**(35,658)**
2019 թ. դեկտեմբերի 31	**184,681**	**9,768**	**4,363,961**	**146,476**	**4,704,886**

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում գյուղատնտեսական վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Գյուղատնտեսական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**57,865,381**	**1,897,789**	**2,345,936**	**62,109,106**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	45,244,843	–	–	**45,244,843**
Մարված ակտիվներ	(26,576,944)	(929,449)	(2,626,165)	**(30,132,558)**
Տեղափոխում Փուլ 1	227,639	(227,639)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(1,254,899)	1,254,899	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(2,579,512)	(604,522)	3,184,034	**–**
Վերականգնումներ	–	–	1,395,416	**1,395,416**
Դուրս գրված գումարներ	–	–	(2,110,035)	**(2,110,035)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(32,455)	(2,117)	(3,844)	**(38,416)**
2019 թ. դեկտեմբերի 31	**72,894,053**	**1,388,961**	**2,185,342**	**76,468,356**

Գյուղատնտեսական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**264,221**	**40,801**	**1,089,221**	**1,394,243**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	405,010	–	–	**405,010**
Մարված ակտիվներ	(50,581)	(10,859)	(1,680,991)	**(1,742,431)**
Տեղափոխում Փուլ 1	2,718	(2,718)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(12,366)	12,366	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(162,691)	(20,713)	183,404	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա	(1,734)	15,496	430,219	**443,981**
Ջեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	55,530	**55,530**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(26,488)	(2,035)	1,493,871	**1,465,348**
Վերականգնումներ	–	–	1,395,416	**1,395,416**
Դուրս գրված գումարներ	–	–	(2,110,035)	**(2,110,035)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(270)	(50)	(1,905)	**(2,225)**
2019թ. դեկտեմբերի 31	**417,819**	**32,288**	**854,730**	**1,304,837**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Սպառողական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը				
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**58,418,018**	**612,622**	**1,191,154**	**60,221,794**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	56,193,275	–	–	**56,193,275**
Մարված ակտիվներ	(31,621,300)	(521,903)	(1,443,404)	**(33,586,607)**
Տեղափոխում Փուլ 1	66,278	(66,278)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(1,809,026)	1,809,026	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(3,035,011)	(354,225)	3,389,236	**–**
Վերականգնումներ	–	–	515,390	**515,390**
Դուրս գրված գումարներ	–	–	(1,485,659)	**(1,485,659)**
2019թ. դեկտեմբերի 31	**78,212,234**	**1,479,242**	**2,166,717**	**81,858,193**

Սպառողական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**106,196**	**16,353**	**361,845**	**484,394**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	535,094	–	–	**535,094**
Մարված ակտիվներ	(37,555)	(2,905)	(587,378)	**(627,838)**
Տեղափոխում Փուլ 1	279	(279)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(34,825)	34,825	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(300,053)	(13,023)	313,076	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(140)	15,853	366,482	**382,195**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	43,413	**43,413**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	27,895	266	1,183,440	**1,211,601**
Վերականգնումներ	–	–	515,390	**515,390**
Դուրս գրված գումարներ	–	–	(1,485,659)	**(1,485,659)**
2019թ. դեկտեմբերի 31	**296,891**	**51,090**	**710,609**	**1,058,590**

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հիփոթեքային վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Հիփոթեքային վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը					
2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**9,524,387**	**40,209**	**273,856**	**71,682**	**9,910,134**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	9,371,377	–	–	50,073	**9,421,450**
Մարված ակտիվներ	(2,418,017)	(11,782)	(190,712)	(3,758)	**(2,624,269)**
Տեղափոխում Փուլ 1	5,326	(5,326)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(163,534)	163,534	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(172,157)	(30,302)	202,459	–	**–**
Վերականգնումներ	–	–	98,751	–	**98,751**
Դուրս գրված գումարներ	–	–	(102,136)	–	**(102,136)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(30,053)	(632)	(1,295)	–	**(31,980)**
2019թ. դեկտեմբերի 31	**16,117,329**	**155,701**	**280,923**	**117,997**	**16,671,950**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

Հիփոթեքային վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ	**23,302**	**893**	**102,565**	**44,645**	**171,405**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	34,291	–	–	–	**34,291**
Մարված ակտիվներ	(3,125)	(37)	(108,721)	–	**(111,883)**
Տեղափոխում Փուլ 1	154	(154)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(1,368)	1,368	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(18,423)	(701)	19,124	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(145)	2,418	35,971	–	**38,244**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	5,548	–	**5,548**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(5,439)	–	63,233	35,886	**93,680**
Վերականգնումներ	–	–	98,751	–	**98,751**
Դուրս գրված գումարներ	–	–	(102,136)	–	**(102,136)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(58)	(14)	(526)	–	**(598)**
2019թ. դեկտեմբերի 31	**29,189**	**3,773**	**113,809**	**80,531**	**227,302**

2019 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում վարկային քարտերով և ոսկով ապահովված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**14,539,420**	**174,617**	**537,042**	**15,251,079**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	11,399,669	–	–	**11,399,669**
Մարված ակտիվներ	(6,154,908)	(65,669)	(598,195)	**(6,818,772)**
Տեղափոխում Փուլ 1	26,654	(26,654)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(352,810)	352,810	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(400,523)	(68,962)	469,485	**–**
Վերականգնումներ	–	–	372,753	**372,753**
Դուրս գրված գումարներ	–	–	(312,039)	**(312,039)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(56,236)	(1,349)	(1,159)	**(58,744)**
2019թ. դեկտեմբերի 31	**19,001,266**	**364,793**	**467,887**	**19,833,946**

Վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2019թ. հունվարի 1-ի դրությամբ	**52,291**	**4,748**	**187,569**	**244,608**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	60,772	–	–	**60,772**
Մարված ակտիվներ	(12,651)	(1,962)	(413,851)	**(428,464)**
Տեղափոխում Փուլ 1	245	(245)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(4,340)	4,340	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(23,506)	(2,540)	26,046	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(156)	7,414	77,862	**85,120**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	10,861	**10,861**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	10,645	–	202,756	**213,401**
Վերականգնումներ	–	–	372,753	**372,753**
Դուրս գրված գումարներ	–	–	(312,039)	**(312,039)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(337)	(66)	(465)	**(868)**
2019թ. դեկտեմբերի 31	**82,963**	**11,689**	**151,492**	**246,144**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

COVID-19 համաճարակի ազդեցությունը Խմբի կողմից ԱՎԿ-ի գնահատման վրա

Խումբը տրամադրել է վարկային արձակուրդներ COVID-19 համաճարակի ազդեցությունից տուժած որոշ վարկառուների՝ COVID-19 համաճարակի ազդեցությունը ընկերությունների և անհատների համար մեղմելու նպատակով՝ ՀՀ կենտրոնական բանկի առաջարկի համաձայն: Խումբը այս փոփոխությունները չի համարել վարկային ռիսկի էական աճի չափանիշ: Այնուամենայնիվ, վարկային արձակուրդներին հաջորդող ժամանակահատվածների համար այս մնացորդների նկատմամբ կիրառվել է փուլերի վերագրման ավելի խիստ մոտեցում, ինչը հանգեցրել է հավելյալ ԱՎԿ-ի 2,629,622 հազար ՀՀ դրամի չափով (Խմբի `փուլերի վերագրման ստանդարտ չափանիշով հաշվարկված ԱՎԿ-ի համեմատ):

Դուրսգրման քաղաքականության փոփոխություն

2020թ.-ի ընթացքում Խումբը վերանայել է հաճախորդներին տրված վարկերի դուրսգրման քաղաքականությունը՝ երկարացնելով ժամանակահատվածը, որից հետո վարկերը համարվում են չվերականգնվող Խմբի՝ վերականգնման պատմական վիճակագրության հիման վրա: Եթե կիրառվեր նախկին դուրսգրման քաղաքականությունը, 2020թ.-ի համար Խմբի կողմից ճանաչված վարկային կորուստների գծով ծախսը կլիներ 3,109,184 հազար ՀՀ դրամ ավել:

Գրավ և վարկային ռիսկը զսպող այլ գործիքներ

Պահանջվող գրավի տեսակն ու չափը կախված է վարկառուի վարկային ռիսկի գնահատականից: Խմբի կողմից սահմանված են ապահովման միջոցների թույլատրելիության և գնահատման չափորոշիչներ:

Ստորև ներկայացված են ստացված ապահովման միջոցների հիմնական տեսակները.

- Դրամական միջոցներ և արժեթղթեր՝ արժեթղթերի փոխատվության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում;
- Անշարժ գույք, պաշարներ և դեբիտորական պարտքեր՝ կորպորատիվ վարկավորման դեպքում;
- Ձեռք բերվող բնակտարածք, ոսկյա իրեր և այլն՝ սպառողական վարկավորման դեպքում:

Խումբը նաև ստանում է երաշխիքներ մայր կազմակերպություններից դուստր կազմակերպություններին տրամադրված վարկերի գծով:

Ղեկավարությունը հետևում է գրավի շուկայական արժեքին և պահանջում է լրացուցիչ գրավ՝ դրա հիմքում ընկած պայմանագրի համաձայն՝ վարկի արժեզրկման պահուստի բավարարության ստուգման ընթացքում:

Գրավի կամ ապահովվածության այլ միջոցների բացակայության դեպքում Փուլ 3-ի հաճախորդներին տրված վարկերի գծով հաշվեգրված ԱՎԿ-ն 2020թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կլիներ ավելի մեծ՝ հետևյալ գումարների չափով.

	2020թ.	*2019թ.*
Կորպորատիվ վարկավորում	3,102,920	451,753
Հիփոթեքային վարկեր	384,834	167,114
	3,487,754	**618,867**

Գրավադրված ակտիվներ

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված 21,928,036 հազ. դրամ (2019թ.՝ 24,040,631 հազ. դրամ) համախառն արժեքով վարկեր ծառայում են որպես գրավ այլ փոխառությունների համար (տես Ծանոթագրություն 19):

Խմբի սեփականությանն անցած գրավ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի սեփականությանն է անցել 149,439 հազ. դրամ գնահատված արժեքով գրավ (2019թ.՝ 224,103 հազ. դրամ), որը ներկայումս Խումբը վաճառում է: Խմբի քաղաքականությունն է՝ օտարել առգրավված գույքը ընդունված կարգով: Ստացված դրամական միջոցներն ուղղվում են չմարված պահանջի նվազեցմանը կամ մարմանը: Խումբը սովորաբար չի զբաղեցնում առգրավված գույքը իր գործունեության ծավալման նպատակով:

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի համակենտրոնացում

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երրորդ կողմ հանդիսացող տասը խոշորագույն վարկառուներին տրամադրված վարկերի գումարը կազմել է 18,839,216 հազ. դրամ (համախառն վարկային պորտֆելի 6%-ը) (2019թ.՝ 14,424,830 հազ. դրամ, համախառն վարկային պորտֆելի 5%-ը): Այդ վարկերի գծով ստեղծվել է պահուստ 241,681 հազ. դրամի չափով (2019թ.՝ 4,078,330 հազ. դրամ):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը գյուղատնտեսական վարկերի ոլորտում (անհատ և կորպորատիվ հաճախորդների գծով) ուներ 101,314,717 հազար ՀՀ դրամ համակենտրոնացում կամ 32% ընդամենը համախառն վարկերի նկատմամբ (2019՝ 78,232,361 կամ 28% ընդամենը համախառն վարկերի նկատմամբ):

Վարկերը առավելապես տրամադրվել են ՀՀ հաճախորդներին, որոնք իրենց գործունեությունը իրականացնում են տնտեսության հետևյալ ոլորտներում.

	2020թ.	*2019թ.*
Ֆիզիկական անձիք	205,555,475	194,832,445
Առևտուր	35,898,839	32,582,067
Սնունդ և խմիչք	32,406,379	27,569,655
Շինարարություն	14,458,523	8,582,795
Արտադրություն	7,860,414	8,723,208
Գյուղատնտեսություն	5,966,087	1,764,005
Ֆինանսական հատված	5,019,069	686,211
Տրանսպորտ	3,595,471	3,325,371
Էներգետիկա	3,247,464	3,233,218
Այլ	1,204,013	1,686,091
Արժեզրկման գծով պահուստ	(12,193,177)	(7,541,759)
	303,018,557	**275,443,307**

12. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ

	2020թ.	*2019թ.*
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		
Մինչև մեկ տարի ժամկետով	10,874,155	8,916,478
Մեկից հինգ տարի ժամկետով	18,805,608	14,605,212
Հինգ տարուց ավել ժամկետով	1,230,120	698,723
Նվազագույն վարձավճարներ	**30,909,883**	**24,220,413**
Չվաստակած ֆինանսական եկամուտ		
Մինչև մեկ տարի ժամկետով	(537,795)	(601,757)
Մեկից հինգ տարի ժամկետով	(3,941,865)	(2,938,665)
Հինգ տարուց ավել ժամկետով	(523,343)	(242,864)
Հանած՝ չվաստակած ֆինանսական եկամուտ	**(5,003,003)**	**(3,783,286)**
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում մինչև արժեզրկման գծով պահուստ	**25,906,880**	**20,437,127**
Հանած՝ արժեզրկման գծով պահուստ	(889,486)	(124,276)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**25,017,394**	**20,312,851**

Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարները 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում են 9,213 հազ. դրամով (2019 թ.՝ 103,216 հազ. դրամով) ֆինանսական վարձակալության պայմանագրերի շրջանակներում ձեռք բերված սարքավորումներ:

	2020թ.	*2019թ.*
Ֆինանսական վարձակալություն կորպորատիվ հաճախորդներին	22,009,853	17,098,900
Ֆինանսական վարձակալություն մանրածախ հաճախորդներին	3,897,027	3,338,227
Համախառն ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**25,906,880**	**20,437,127**
Արժեզրկման գծով պահուստ	(889,486)	(124,276)
Զուտ ներդրումներ ֆինանսական վարձակալությունում	**25,017,394**	**20,312,851**

(հազար ՀՀ դրամ)

12. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ (շարունակություն)

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում կորպորատիվ վարկավորման համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

	Փուլ 1	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը				
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**20,196,143**	**139,487**	**101,497**	**20,437,127**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	10,863,250	–	–	**10,863,250**
Մարված ակտիվներ	(6,635,441)	(54,422)	(27,711)	**(6,717,574)**
Տեղափոխում Փուլ 1	26,684	(26,684)	–	**–**
Վարկային ռիսկի աճը գնահատելիս Խմբի ղեկավարությունը նաև առաջնորդվում է հետևյալ գործոններով՝

- ՀՀ այլ ֆինանսական հաստատություններում տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը,
- կանխորոշված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերի քանակը,
- վարկառուի ֆինանսական պայմանների զգալի դժվարությունները,
- վարկառուի ֆինանսական պայմանների վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումը,
- վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքները:

Կանխատեսվող տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ՀՆԱ-ի տարեկան աճը,
- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ,
- Ֆիսկալ/Բյուջեի դեֆիցիտը,
- Սպառողական գնաճ,
- Արտահանման ծավալներ,
- Ներմուծման ծավալներ,
- ԱՄՆ դոլարի/դրամի փոխարժեքը (ժամանակաշրջանի վերջում),
- Շինարարության տարեկան աճ,
- ՀՆԱ-ում բանկի ընդհանուր վարկերի տեսակարար կշիռը:

Կանխատեսվող տեղեկատվությունը Խումբը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից, Համաշխարհային Բանկի տվյալների բազայից, ինչպես նաև ՀՀ կառավարության կանխատեսումներից): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխանաբար հետևյալ սցենարներից յուրաքանչյուրին. լավատեսական, բազիսային և վատատեսական սցենարներ: Ստորև ներկայացված աղյուսակում ցույց են տրված կանխատեսվող տնտեսական փոփոխականները/ենթադրությունները, ըստ տարբեր տնտեսական սցենարների, որոնց հիման վրա հաշվարկվում ԱՎԿ-ն:

(հազար ՀՀ դրամ)

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Հիմնական գործոնները	*ԱՎԿ սցենարը*	*Որոշված հավանակա-նությունը, %*	*2021 թ.*	*2022 թ.*	*2023 թ.*
ՀՆԱ-ի տարեկան աճը, %					
	Լավատեսական	15%	6.09%	8.51%	9.08%
	Բազիսային	70%	3.40%	4.70%	4.40%
	Վատատեսական	15%	0.71%	0.89%	-0.28%
Արդյունաբերական արտադրության տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	5.93%	8.52%	8.33%
	Բազիսային	70%	2.80%	3.20%	3.40%
	Վատատեսական	15%	-3.13%	1.68%	2.51%
Ֆիսկալ/բյուջեի դեֆիցիտ, հազ. դրամ					
	Լավատեսական	15%	(162,402,853)	(37,878,094)	(60,035,085)
	Բազիսային	70%	(341,400,000)	(228,832,136)	(258,820,471)
	Վատատեսական	15%	(520,397,147)	(419,786,179)	(457,605,856)
Սպառողական գնաճ, %					
	Լավատեսական	15%	1.22%	1.10%	1.23%
	Բազիսային	70%	3.30%	3.70%	4.20%
	Վատատեսական	15%	5.38%	6.30%	7.17%
Արտահանման ծավալներ, հազ. դրամ					
	Լավատեսական	15%	1,475,644,347	1,706,701,048	1,958,721,508
	Բազիսային	70%	1,350,542,177	1,447,781,214	1,550,573,680
	Վատատեսական	15%	1,225,440,007	1,210,023,715	1,203,168,612
Ներմուծման ծավալներ, հազ. դրամ					
	Լավատեսական	15%	2,747,902,737	3,281,384,516	3,876,590,198
	Բազիսային	70%	2,444,087,071	2,622,505,427	2,800,835,796
	Վատատեսական	15%	2,140,271,404	2,037,235,668	1,944,768,432
Շինարարության տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	8.70%	12.46%	13.96%
	Բազիսային	70%	1.70%	4.00%	4.50%
	Վատատեսական	15%	-5.30%	-4.46%	-4.96%
ՀՆԱ-ում բանկի ընդհանուր վարկերի տեսակարար կշիռը, %					
	Լավատեսական	15%	64.46%	66.86%	68.93%
	Բազիսային	70%	66.73%	70.57%	74.20%
	Վատատեսական	15%	69.24%	74.69%	80.08%
ԱՄՆ դոլարի/դրամի փոխարժեք (ժամանակաշրջանի վերջում)	Լավատեսական	15%	515.89	501.10	480.36
	Բազիսային	70%	533.00	538.50	539.50
	Վատատեսական	15%	550.11	577.24	603.26

(հազար ՀՀ դրամ)

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն 31 դեկտեմբերի 2020թ.-ի և 31 դեկտեմբերի 2019թ.-ի դրությամբ իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների ակտիվների դասի վարկային որակի մասին:

	Ծան.		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ստանդարտից ցածր դաս*	*Արժեզրկված*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	11						
- Կորպորատիվ վարկավորում		Փուլ 1	549,575	87,253,387	–	–	**87,802,962**
		Փուլ 2	–	–	13,829,254	–	**13,829,254**
		Փուլ 3	–	–	–	4,466,971	**4,466,971**
		POCI	–	–	–	212,777	**212,777**
- Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	451,186	85,825,885	–	–	**86,277,071**
		Փուլ 2	–	–	3,257,201	–	**3,257,201**
		Փուլ 3	–	–	–	2,762,075	**2,762,075**
- Սպառողական վարկեր		Փուլ 1	952,930	58,039,842	–	–	**58,992,772**
		Փուլ 2	–	–	4,622,137	–	**4,622,137**
		Փուլ 3	–	–	–	1,921,474	**1,921,474**
- Վարկային քարտեր		Փուլ 1	1,260,534	10,719,903	–	–	**11,980,437**
		Փուլ 2	–	–	148,209	–	**148,209**
		Փուլ 3	–	–	–	516,233	**516,233**
		POCI	–	–	–	608	**608**
- Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	5,033,842	18,134,172	–	–	**23,168,014**
		Փուլ 2	–	–	1,173,505	–	**1,173,505**
		Փուլ 3	–	–	–	384,834	**384,834**
		POCI	–	–	–	30,409	**30,409**
- Ոսկու գրավադրմամբ վարկեր		Փուլ 1	–	1,401,774	–	–	**1,401,774**
		Փուլ 2	–	–	22,717	–	**22,717**
		Փուլ 3	–	–	–	47,123	**47,123**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	Փուլ 1	–	22,322,854	–	–	**22,322,854**
		Փուլ 2	–	–	2,583,047	–	**2,583,047**
		Փուլ 3	–	–	–	111,493	**111,493**
Ընդամենը			**8,248,067**	**283,697,817**	**25,636,070**	**10,453,997**	**328,035,951**

	Ծան.		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ստանդարտից ցածր դաս*	*Արժեզրկված*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	11						
- Կորպորատիվ վարկավորում		Փուլ 1	359,292	81,934,877	–	–	**82,294,169**
		Փուլ 2	–	–	488,512	–	**488,512**
		Փուլ 3	–	–	–	590,327	**590,327**
		POCI	–	–	–	74,727	**74,727**
- Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	26,961	72,449,273	–	–	**72,476,234**
		Փուլ 2	–	–	1,356,673	–	**1,356,673**
		Փուլ 3	–	–	–	1,330,612	**1,330,612**
- Սպառողական վարկեր		Փուլ 1	1,225,043	76,690,300	–	–	**77,915,343**
		Փուլ 2	–	–	1,428,152	–	**1,428,152**
		Փուլ 3	–	–	–	1,456,108	**1,456,108**
- Վարկային քարտեր		Փուլ 1	1,390,567	13,107,672	–	–	**14,498,239**
		Փուլ 2	–	–	261,015	–	**261,015**
		Փուլ 3	–	–	–	225,668	**225,668**
- Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	1,031,443	15,056,697	–	–	**16,088,140**
		Փուլ 2	–	–	151,928	–	**151,928**
		Փուլ 3	–	–	–	167,114	**167,114**
		POCI	–	–	–	37,466	**37,466**
- Ոսկու գրավադրմամբ վարկեր		Փուլ 1	–	4,420,064	–	–	**4,420,064**
		Փուլ 2	–	–	92,089	–	**92,089**
		Փուլ 3	–	–	–	90,727	**90,727**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	Փուլ 1	–	20,151,425	–	–	**20,151,425**
		Փուլ 2	–	–	134,315	–	**134,315**
		Փուլ 3	–	–	–	27,111	**27,111**
Ընդամենը			**4,033,306**	**283,810,308**	**3,912,684**	**3,999,860**	**295,756,158**

(հազար ՀՀ դրամ)

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Ստորև աղյուսակում ներկայացված են 31 դեկտեմբերի 2020թ.-ի և 31 դեկտեմբերի 2019թ.-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալությունների գծով ստացվելիք գումարների դեֆոլտի հավանականության միջին մեծությունները, ըստ դասերի՝

	Դաս	*Միջին PD*
- Կորպորատիվ վարկավորում	Ստանդարտ	2.11%
	Ստանդարտից ցածր	14.54%
	Արժեզրկված	100%
- Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	4.33%
	Ստանդարտից ցածր	31.63%
	Արժեզրկված	100%
- Սպառողական վարկեր	Ստանդարտ	6.16%
	Ստանդարտից ցածր	65.90%
	Արժեզրկված	100%
- Վարկային քարտեր	Ստանդարտ	6.33%
	Ստանդարտից ցածր	48.64%
	Արժեզրկված	100.00%
- Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	1.21%
	Ստանդարտից ցածր	36.90%
	Արժեզրկված	100.00%
- Ոսկու գրավադրմամբ վարկեր	Ստանդարտ	1.85%
	Ստանդարտից ցածր	18.91%
	Արժեզրկված	100.00%
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	1.08%
	Ստանդարտից ցածր	7.47%
	Արժեզրկված	100.00%

	Դաս	*Միջին PD*
- Կորպորատիվ վարկավորում	Ստանդարտ	1.28%
	Ստանդարտից ցածր	10.62%
	Արժեզրկված	100%
- Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	2.10%
	Ստանդարտից ցածր	7.18%
	Արժեզրկված	100%
- Սպառողական վարկեր	Ստանդարտ	2.60%
	Ստանդարտից ցածր	16.91%
	Արժեզրկված	100%
- Վարկային քարտեր	Ստանդարտ	2.92%
	Ստանդարտից ցածր	19.88%
	Արժեզրկված	100%
- Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	0.82%
	Ստանդարտից ցածր	11.76%
	Արժեզրկված	100%
- Ոսկու գրավադրմամբ վարկեր	Ստանդարտ	0.82%
	Ստանդարտից ցածր	2.40%
	Արժեզրկված	100%
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	0.66%
	Ստանդարտից ցածր	7.57%
	Արժեզրկված	100%

(հազար ՀՀ դրամ)

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Բարձր դասի գործիքները ներառում են դրամական միջոցներով ապահովված՝ հաճախորդներին տրամադրված վարկեր: Այս վարկերի գծով արժեզրկման պահուստ չի ձևավորվում՝ ելնելով գրավի բնույթից:

Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն

Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների որակական վերլուծություն կատարելիս Խումբն առաջնորդվում է արտաքին վարկանիշերով: Չվարկանշված վարկերը դասակարգվում են ստանդարտ դասի, եթե դրանք արժեզրկված չեն.

31 դեկտեմբերի 2020թ.-ի դրությամբ

	Ծան.		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	6	Փուլ 1	5,989,212	44,970,930	**50,960,142**
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	9	Փուլ 1	–	57,243,494	**57,243,494**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	10	Փուլ 1	–	14,277,282	**14,277,282**
Ընդամենը			**5,989,212**	**116,491,706**	**122,480,918**

31 դեկտեմբերի 2019թ.-ի դրությամբ

	Ծան.		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	6	Փուլ 1	3,727,506	35,550,669	**39,278,175**
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	9	Փուլ 1	–	30,552,163	**30,552,163**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	10	Փուլ 1	–	20,292,178	**20,292,178**
Ընդամենը			**3,727,506**	**86,395,010**	**90,122,516**

Ստորև ներկայացված է Խմբի դասակարգման համակարգի և գործընկերների արտաքին վարկանիշների համեմատությունը 31 դեկտեմբերի 2020թ.-ի և 31 դեկտեմբերի 2019թ.-ի դրությամբ.

2020թ.:

Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ	*Ներքին վարկանիշ*	*Դեֆոլտի հավանականություն*
Aaa to A3	Բարձր դաս	0-0.06%
Baa1 to B3	Ստանդարտ դաս	0.06-3.3%
Caa1 to Ca	Ստանդարտից ցածր դաս	9.7%
C	Արժեզրկված	100%

2019թ.:

Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ	*Ներքին վարկանիշ*	*Դեֆոլտի հավանականություն*
Aaa to A3	Բարձր դաս	0-0.06%
Baa1 to B3	Ստանդարտ դաս	0.06-3.3%
Caa1 to Ca	Ստանդարտից ցածր դաս	9.7%
C	Արժեզրկված	100%

2020թ. մարտի 17-ից 2020թ. մայիսի 17-ն ընկած ժամանակահատվածում Խումբը վարկառուներին տրամադրել է վարկերի մարման արձակուրդներ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի առաջարկությունների՝ մեղմացնել ընկերությունների և ֆիզիկական անձանց վրա COVID-19-ի ազդեցությունը:

(հազար ՀՀ դրամ)

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի, իրականացնում է ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը ունի բարձր իրացվելի և տարատեսակ ակտիվների պորտֆել, ինչը դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում հեշտությամբ կիրացվի: Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է հաճախորդներից ներգրավված միջոցների ծավալից:

Խումբը գնահատում և կառավարում է իրացվելիությունը՝ հիմնվելով ԿԲ-ի կողմից սահմանած նորմատիվների վրա: Դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ նորմատիվները կազմել են՝

	Սահմանային արժեք	*2020 թ., %*	*2019 թ., %*
Ն21-Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ)	Նվազագույնը 15%	24.74%	23.80%
Ն22 -Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	Նվազագույնը 60%	125.48%	157.38%

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Առևտրային ածանցյալ գործիքներ*	*Մինչև 3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,893	–	–	–	–	**79,893**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	–	45,717	–	–	–	**45,717**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	–	136,230,632	124,719,006	42,040,892	10,777,823	**313,768,353**
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	14,145,121	3,113,853	131,100	–	**17,390,074**
Ստորադաս վարկեր	–	215,779	490,064	2,825,307	11,941,269	**15,472,419**
Այլ փոխառություններ	–	15,123,640	12,547,579	78,647,908	11,654,729	**117,973,856**
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	5,776,173	–	–	–	**5,776,173**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**79,893**	**171,537,062**	**140,870,502**	**123,645,207**	**34,373,821**	**470,506,485**
Վարկային բնույթի պարտավորվածություններ	**–**	**44,613,015**	**–**	**–**	**–**	**–**

(հազար ՀՀ դրամ)

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում (շարունակություն)

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Առևտրային ածանցյալ գործիքներ*	*Մինչև 3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	200,090	–	–	–	–	**200,090**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	–	32,066	–	–	–	**32,066**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	–	107,382,745	116,856,887	35,990,695	11,053,585	**271,283,912**
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	2,979,819	2,427,331	5,424,826	2,715,676	**13,547,652**
Ստորադաս վարկեր	–	33,990	266,240	2,277,956	4,330,532	**6,908,718**
Այլ փոխառություններ	–	1,582,535	14,751,646	80,975,849	10,269,364	**107,579,394**
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	4,833,592	–	–	–	**4,833,592**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**200,090**	**116,844,747**	**134,302,104**	**124,669,326**	**28,369,157**	**404,385,424**
Վարկային բնույթի պարտավորվածություններ	**–**	**32,340,742**	**–**	**–**	**–**	**32,340,742**

Մարման ժամկետների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում: Այդ մնացորդները աղյուսակում ներառված են մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող գումարներում:

Պահանջները հաճախորդների նկատմամբ ներառում են ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն Բանկը պարտավոր է հետ վճարել նման ավանդները ավանդատուի առաջին իսկ պահանջով: Վերոնշյալ աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ մարման ժամկետների:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների և բաժնային գործիքների գների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Խմբի ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր հավանական փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության զգայունությունը իրենից ներկայացնում է տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա, որը հաշվարկվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով ֆիքսված տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

Արժույթ	*Բազիսային կետերի ավելացում 2020թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2020թ.*	*Կապիտալի զգայունություն 2020թ.*
Հայկական դրամ	1.10%	(360,794)	(3,339)
ԱՄՆ Դոլար	1.00%	(156,777)	(376,375)

(հազար ՀՀ դրամ)

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Արժույթ	*Բազիսային կետերի նվազում 2020թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2020թ.*	*Կապիտալի զգայունություն 2020թ.*
Հայկական դրամ	1.10%	360,794	3,339
ԱՄՆ Դոլար	0.25%	39,194	94,094

Արժույթ	*Բազիսային կետերի ավելացում 2019 թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2019 թ.*	*Կապիտալի զգայունություն 2019 թ.*
Հայկական դրամ	1.00%	(304,879)	(7,818)
ԱՄՆ Դոլար	0.35%	(27,703)	(70,413)

Արժույթ	*Բազիսային կետերի նվազում 2019 թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2019 թ.*	*Կապիտալի զգայունություն 2019 թ.*
Հայկական դրամ	1.00%	304,879	7,818
ԱՄՆ Դոլար	0.35%	27,703	70,413

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Ղեկավարությունը սահմանել է արտարժութային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով ԿԲ կողմից սահմանված նորմատիվների վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի էական արժութային դիրքեր դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա, երբ այլ փոփոխական արժեքները հաստատուն են (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա ազդեցությունից: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը: Ղեկավարությունը սահմանել է արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկի թույլատրելի ռիսկի սահմանաչափ:

Արժույթ	*Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2020 թ.*	*Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2020 թ.*	*Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2019 թ.*	*Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2019 թ.*
ԱՄՆ դոլար	5.00%	46,043	3.00%	189,255
ԱՄՆ դոլար	(5.00%)	(46,043)	(3.00%)	(189,255)
Եվրո	8.50%	(77,159)	6.50%	94,329
Եվրո	(8.50%)	77,159	(6.50%)	(94,329)

(հազար ՀՀ դրամ)

30. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, ներքին գործընթացների անհամապատասխանության կամ ձախողման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Խումբը գործառնական ռիսկերի կառավարման շրջանակներում ընդունել է եռաշերտ պաշտպանության մեխանիզմ: Պաշտպանության առաջին գիծը ապահովում են առաջնագծի աշխատակազմը և գործառնական կառավարման խումբը, պաշտպանության երկրորդ գիծը ապահովվում է ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառույթների կողմից, ներքին աուդիտի գործառույթով ապահովվում է պաշտպանության երրորդ գիծը:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները՝ ռիսկի քարտեզագրում, միջադեպի վերլուծություն և մշտական վերահսկման գործառույթ: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում: Կառավարման խորհուրդը սահմանել է թույլատրելի ռիսկի սահմանաչափ գործառնական ռիսկի վրա:

31. Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթաց

Խմբի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են գույքերը, առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը և ածանցյալ գործիքները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պասիվների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Իրական արժեքի հիերարխիա

Գնահատման մոդելների միջոցով Ֆինանսական ակտիվների իրական արժեքները որոշելու և բացահայտելու համար Խումբը օգտագործում է հետևյալ հիերարխիան:

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. այլ մոդելները, որոնց ելակետային տվյալները ուղղակիորեն կամ անուղղակիորեն նշանակալի ազդեցություն ունեն գրանցված իրական արժեքի վրա,
- 3-րդ մակարդակ. մոդելներ, որոնք օգտագործում են մոդելներ, որոնք ունեն նշանակալի ազդեցություն գրանցված իրական արժեքի վրա, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա:

(հազար ՀՀ դրամ)

31. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Խումբը առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների, ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

	Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ակտիվ շուկայում գնանշվող գներ (1-ին մակարդակ)*	*Էական դիտարկելի ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)*	*Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
- Առևտրային արժեթղթեր	–	319,353	–	**319,353**
- Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	250,207	–	**250,207**
- Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	–	(79,893)	–	**(79,893)**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	–	14,277,282	–	**14,277,282**
- Բաժնային գործիքներ	3,009,909	–	–	**3,009,909**
- Չգնանշված բաժնային արժեթղթեր-ընկերություններ ՀՀ-ում	–	–	117,876	**117,876**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,398,135	–	–	**66,398,135**
- Պահանջներ բանկերի նկատմամբ	–	–	57,171,584	**57,171,584**
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	–	–	25,017,394	**25,017,394**
- Այլ ֆինանսական ակտիվներ	–	–	2,939,312	**2,939,312**
- Հաճախորդներին տրված վարկեր	–	–	302,920,513	**302,920,513**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
- Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	–	–	298,655,094	**298,655,094**
- Թողարկված պարտքային արժեթղթեր՝ ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	–	2,822,713	–	**2,822,713**
- Բանկերի ավանդներ և մնացորդներ	–	–	45,717	**45,717**
- Ստորադաս վարկեր	–	–	11,130,839	**11,130,839**
- Այլ փոխառություններ	–	–	101,043,374	**101,043,374**
- Այլ ֆինանսական պարտավորություններ	–	–	5,776,173	**5,776,173**

	Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով			
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ակտիվ շուկայում գնանշվող գներ (1-ին մակարդակ)*	*Էական դիտարկելի ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)*	*Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
- Առևտրային արժեթղթեր	–	251,177	–	**251,177**
- Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	277	–	**277**
- Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	–	(200,090)	–	**(200,090)**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	–	20,292,178	–	**20,292,178**
- Բաժնային գործիքներ	2,373,451	–	–	**2,373,451**
- Չգնանշված բաժնային արժեթղթեր-ընկերություններ ՀՀ-ում	–	–	94,820	**94,820**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	55,915,251	–	–	**55,915,251**
- Պահանջներ բանկերի նկատմամբ	–	–	30,523,274	**30,523,274**
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	–	–	20,312,851	**20,312,851**
- Այլ ֆինանսական ակտիվներ	–	–	2,908,970	**2,908,970**
- Հաճախորդներին տրված վարկեր	–	–	275,299,929	**275,299,929**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
- Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	–	–	251,663,709	**251,663,709**
- Թողարկված պարտքային արժեթղթեր՝ ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	–	5,913,962	–	**5,913,962**
- Բանկերի ավանդներ և մնացորդներ	–	–	32,066	**32,066**
- Ստորադաս վարկեր	–	–	4,854,305	**4,854,305**
- Այլ փոխառություններ	–	–	85,203,800	**85,203,800**
- Այլ ֆինանսական պարտավորություններ	–	–	4,833,592	**4,833,592**

(հազար ՀՀ դրամ)

31. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չարտացոլված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները, բացառությամբ հաճախորդներին տրված վարկերի, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների և ՀՀ-ում թողարկված պարտատոմսերի, մոտ են հաշվեկշռային արժեքներին: Այս գործիքների իրական արժեքները դասակարգված են իրական արժեքի հիերարխիայի երրորդ մակարդակում, բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների, որոնք դասակարգված են իրական արժեքի հիերարխիայի առաջին մակարդակում:

Ստորև ներկայացված աղյուսակում ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի, հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների և ՀՀ-ում թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային և իրական արժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	Հաշվեկշռային արժեք 2020թ.	*Իրական արժեք 2020թ.*	*Չճանաչված եկամուտ/ (ծախս) 2020թ.*	*Հաշվեկշռային արժեք 2019թ.*	*Իրական արժեք 2019թ.*	*Չճանաչված եկամուտ/ (ծախս) 2019թ.*
Ֆինասական գործիքներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,398,135	66,398,135	–	55,915,251	55,915,251	–
Պահանջներ բանկերի նկատմամբ	57,171,584	57,171,584	–	30,523,274	30,523,274	–
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	25,017,394	25,017,394	–	20,312,851	20,312,851	–
Այլ ֆինանսական ակտիվներ	2,939,312	2,939,312	–	2,908,970	2,908,970	–
Հաճախորդներին տրված վարկեր	303,018,557	302,920,513	(98,044)	275,443,307	275,299,929	(143,378)
Ֆինանսական պարտավորություններ						
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	296,944,080	298,655,094	(1,711,014)	254,667,620	251,663,709	3,003,911
Թողարկված պարտքային արժեթղթեր – ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	2,816,897	2,822,713	(5,816)	5,873,705	5,913,962	(40,257)
Ընդամենը չճանաչված՝ իրական արժեքում փոփոխություններ			**(1,814,874)**			**2,820,276**

Գնահատման մեթոդներ և ենթադրություններ

Ստորև նկարագրված են այն մեթոդներն ու ենթադրությունները, որոնք օգտագործվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում իրական արժեքով արտացոլված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշելու համար, ինչպես նաև իրական արժեքով չարտացոլված այն հոդվածների իրական արժեքը որոշելու համար, որոնց իրական արժեքը բացահայտվում է:

Ակտիվներ, որոնց իրական արժեքը մոտ է հաշվեկշռային արժեքին

Ենթադրվում է, որ իրացվելի և մարման կարճ ժամկետ (մինչև երեք ամիս) ունեցող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը մոտավորապես համարժեք է իրենց հաշվեկշռային արժեքին: Սույն ենթադրությունը նաև կիրառվում է ցպահանջ ավանդների և անժամկետ խնայողական հաշիվների նկատմամբ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք գնահատվում են օգտագործելով շուկայական ելակետային տվյալներ, հիմնականում տոկոսային և արժութային սվոպեր են և արտարժութային ֆորվարդ պայմանագրեր: Ամենահաճախ կիրառվող գնահատման մեթոդները ներառում են ֆորվարդների գնորոշման և սվոպ մոդելներ՝ օգտագործելով ներկա արժեքի հաշվարկներ: Այս մոդելները հաշվի են առնում տարբեր ելակետային տվյալներ, ինչպիսիք են՝ գործընկերների վարկունակությունը, արտարժույթի սփոթ և ֆորվարդ դրույքները և տոկոսադրույքի կորը:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

Գնահատման մեթոդների և գնորոշման մոդելների միջոցով գնահատված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը հիմնականում բաղկացած են ՀՀ Կառավարության պարտատոմսերից: Այդ արժեթղթերը գնահատվում են եկամտաբերության կորի միջոցով, ինչը ընդգրկում է շուկայի կողմից դիտարկելի և ՀՀ ԿԲ կողմից հրապարակված տվյալներ:

Հիմնական միջոցներ՝ հող, շենքեր և փոխադրամիջոցներ
Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է շուկայական համեմատական մեթոդով: Այսինքն, գնահատողի կողմից իրականացված գնահատումը հիմնված է շուկայական գործարքների գների վրա՝ էականորեն ճշգրտված գույքի բնույթի, գտնվելու վայրի և պայմանների տարբերություններն արտացոլելու համար:

(հազար ՀՀ դրամ)

32. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը, ըստ սպասվելիք վերականգնման կամ մարման ժամկետների: Խմբի պայմանագրային չզեղչված պարտավորությունների մարման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 30-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

	2020թ.			*2019թ.*		
	Մեկ տարվա ընթացքում	*Մեկ տարուց ավել*	*Ընդամենը*	*Մեկ տարվա ընթացքում*	*Մեկ տարուց ավել*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,398,135	–	**66,398,135**	55,915,251	–	**55,915,251**
Առևտրային արժեթղթեր	–	319,353	**319,353**	–	251,177	**251,177**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	250,207	–	**250,207**	277	–	**277**
Պահանջներ բանկերի նկատմամբ	43,424,475	13,747,109	**57,171,584**	21,632,838	8,890,436	**30,523,274**
Ներդրումային արժեթղթեր	3,824,061	13,581,006	**17,405,067**	15,139,588	7,620,861	**22,760,449**
Հաճախորդներին տրված վարկեր	45,423,135	257,595,422	**303,018,557**	34,791,260	240,652,047	**275,443,307**
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	9,366,831	15,650,563	**25,017,394**	7,270,574	13,042,277	**20,312,851**
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	–	984,442	**984,442**	–	749,442	**749,442**
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	–	20,144,910	**20,144,910**	–	21,372,430	**21,372,430**
Հետաձգված հարկային ակտիվներ	–	167,436	**167,436**	–	27,901	**27,901**
Այլ ակտիվներ	3,218,124	1,536,482	**4,754,606**	3,570,651	1,685,965	**5,256,616**
Ընդամենը	**171,904,968**	**323,726,723**	**495,631,691**	**138,320,439**	**294,292,536**	**432,612,975**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,893	–	**79,893**	172,897	27,193	**200,090**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	45,717	–	**45,717**	32,066	–	**32,066**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	253,327,757	43,616,323	**296,944,080**	216,845,902	37,821,718	**254,667,620**
Թողարկված պարտքային արժեթղթեր	8,500,960	–	**8,500,960**	4,978,335	7,817,787	**12,796,122**
Այլ փոխառություններ	21,420,925	79,622,449	**101,043,374**	9,791,980	75,411,820	**85,203,800**
Ստորադաս վարկեր	–	11,130,839	**11,130,839**	–	4,854,305	**4,854,305**
Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություններ	126,703	–	**126,703**	152,542	–	**152,542**
Հետաձգված հարկային պարտավորություններ	–	680,497	**680,497**	–	521,910	**521,910**
Այլ պարտավորություններ	5,842,673	727,853	**6,570,526**	5,210,395	331,561	**5,541,956**
Ընդամենը	**289,344,628**	**135,777,961**	**425,122,589**	**237,184,117**	**126,786,294**	**363,970,411**
Զուտ	**(117,439,660)**	**187,948,762**	**70,509,102**	**(98,863,678)**	**167,506,242**	**68,642,564**

Ժամկետայնության վերլուծությունը չի արտացոլում հաճախորդների ընթացիկ հաշիվների և ավանդների պատմական կայունությունը: Պատմականորեն դրանց մարումը տեղի է ունեցել ավելի երկար ժամանակահատվածում, քան ցույց է տրվում տվյալ աղյուսակում: Դրանց մնացորդները աղյուսակներում ընդգրկվում են մինչև մեկ տարի ժամանակահատվածի մնացորդներում:

ՀՀ օրենսդրության համաձայն Խումբը պարտավոր է վճարել ավանդատուին առաջին իսկ պահանջի դեպքում (տե՛ս Ծանոթագրություն 17):

33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ

ՀՀՄՍ 24 *«Կապակցված կողմերի բացահայտումներ»* ստանդարտի համաձայն կողմերը համարվում են կապակցված, եթե կողմերից մեկը հնարավորություն ունի վերահսկել կամ նշանակալի ձևով ազդել մյուս կողմի գործառնական և ֆինանսական որոշումների վրա: Կողմերի կապակցված լինելը որոշելիս հաշվի է առնվում կողմերի փոխհարաբերությունների բովանդակությունը, այլ ոչ միայն դրանց իրավական ձևը:

Կապակցված կողմերը կարող են այնպիսի գործարքների մեջ մտնել, որոնք չէին իրականացվի ոչ կապակցված կողմերի միջև, և կապակցված կողմերի միջև իրականացվող գործարքների գներն ու պայմանները կարող են տարբերվել ոչ կապակցված կողմերի հետ գործարքների գներից և պայմաններից:

(հազար << դրամ)

33. Կապակցված կողմերի հետ գործառնություններ (շարունակություն)

Կապակցված կողմերի հետ գործառնությունների գծով մնացորդները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

	2020թ.		*2019թ.*	
	Մայր կազմակեր-պություն	*Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ*	*Մայր կազմակեր-պություն*	*Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ*
Համախառն չմարված վարկեր հունվարի 1-ի դրությամբ	**–**	**406,218**	**–**	**416,523**
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	784,886	322,421	–	296,697
Տարվա ընթացքում վարկերի մարումներ	–	(325,443)	–	(304,630)
Այլ շարժեր	36,743	(2,518)	–	(2,372)
Համախառն չմարված վարկեր դեկտեմբերի 31-ի դրությամբ	**821,629**	**400,678**	**–**	**406,218**
Հանած՝ արժեզրկման գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	(5,304)	(5,968)	–	(1,212)
Զուտ չմարված վարկեր դեկտեմբերի 31-ի դրությամբ	**816,325**	**394,710**	**–**	**405,006**
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ հունվարի 1-ի դրությամբ	**363,765**	**1,145,398**	**62,597**	**783,255**
Տարվա ընթացքում ներգրավված ավանդներ և ընթացիկ հաշիվներ	2,227,485	2,743,951	5,255,737	1,398,200
Տարվա ընթացքում մարված ավանդներ և ընթացիկ հաշիվներ	(2,389,910)	(2,343,793)	(4,954,569)	(1,036,057)
Այլ շարժեր	–	–	–	–
Ընթացիկ հաշիվներ և ավանդներ դեկտեմբերի 31-ի դրությամբ	**201,340**	**1,545,556**	**363,765**	**1,145,398**

Ստորև ներկայացված է կապակցված կողմերի հետ գործառնություններից եկամուտներն ու ծախսերը.

	Դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար			
	2020թ.		*2019թ.*	
	Մայր կազմակերպու-թյուն	*Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ*	*Մայր կազմակերպու-թյուն*	*Առանցքային ղեկավար անձնակազմ և նրանց ընտանիքի անդամներ*
Տոկոսային եկամուտներ վարկերի գծով	36,743	19,016	–	16,354
Տոկոսային ծախսեր ավանդների գծով	29,472	118,678	18,025	79,485

Ղեկավար անձնակազմին փոխհատուցումները հետևյալն են.

	2020թ	*2019թ.*
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	1,263,401	1,217,477

(հազար ՀՀ դրամ)

34. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Խումբն ունի բաժնեմաս Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթ ՓԲԸ-ում, որտեղ Խմբին է պատկանում բաժնետոմսերի 49%-ը (2019թ. դեկտեմբերի 31-ին՝ 49%): Ասոցիացված կազմակերպությունը հիմնադրվել է 2013թ.-ին և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ: Ասոցիացված կազմակերպության հիմնական գործունեությունը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: Ասոցիացված կազմակերպության գործունեությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից: 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը կազմում է 984,442 հազ. դրամ (2019թ.՝ 749,442 հազ. դրամ):

Էական ասոցիացված կազմակերպության ամփոփ ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

	2020	*2019*
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	76,471	64,677
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	605,281	207,653
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումներ	1,387,790	1,254,455
Հիմնական միջոցներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	58,351	64,016
Հետաձգված հարկային ակտիվներ	5,975	4,589
Այլ ակտիվներ	182,110	119,564
Ընդամենը ակտիվներ	**2,315,978**	**1,714,954**
Պարտավորություններ		
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	118,001	48,962
Այլ պարտավորություններ	192,002	147,083
Ընդամենը պարտավորություններ	**310,003**	**196,045**
Զուտ ակտիվներ	**2,005,975**	**1,518,909**
Խմբի բաժնեմասը զուտ ակտիվներում	984,442	749,442
Զուտ ակտիվներ	**984,442**	**749,442**

	2020	*2019*
Միջնորդավճարների գծով եկամուտ	1,693,453	1,135,608
Տոկոսային և այլ եկամուտ	36,317	19,715
Ֆինանսական խորհրդատվության գծով եկամուտ	7,535	–
Այլ եկամուտ	3,254	86
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(13,975)	(249)
Անձնակազմի գծով ծախսեր	(94,428)	(79,239)
Վարչական և այլ ծախսեր	(696,840)	(541,326)
Շահույթ մինչև շահութահարկ	**935,316**	**534,595**
Շահութահարկի գծով ծախս	(179,078)	(110,903)
Հաշվետու տարվա շահույթ	**756,238**	**423,692**
Այլ համապարփակ եկամուտ		
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումների գծով չիրացված օգուտ	133,336	130,490
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո	**133,336**	**130,490**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**889,574**	**554,182**

Խմբի բաժնեմասը ասոցիացված կազմակերպության շահույթում կամ վնասում և այլ համապարփակ եկամտում հետևյալն է.

	2020թ.	*2019թ.*
Հաշվետու տարվա շահույթ	**399,958**	**223,905**
Այլ համապարփակ եկամուտ	64,352	63,696
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**464,310**	**287,601**

(հազար ՀՀ դրամ)

35. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

	Ծան.	*Թողարկված պարտքային արժեթղթեր*	*Այլ փոխառություն-ներ*	*Ստորադաս վարկեր*	*Ֆինանսավորման գործունեությունից ընդամենը պարտավորու-թյուններ*
Հաշվեկշռային արժեք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,19, 20	**9,031,081**	**68,569,714**	**–**	**77,600,795**
Թողարկումից մուտքեր		5,263,384	51,957,148	4,830,467	**62,050,999**
Մարումներ		(1,553,514)	(37,805,078)	–	**(39,358,592)**
Արտարժութային փոխարկումներ		11,641	(22,809)	4,655	**(6,513)**
Ոչ կանխիկ գործարքներ		–	2,233,852	–	**2,233,852**
Այլ		43,530	270,973	19,183	**333,686**
Հաշվեկշռային արժեք 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18, 19, 20	**12,796,122**	**85,203,800**	**4,854,305**	**102,854,227**
Թողարկումից մուտքեր		–	47,077,963	7,098,874	**54,176,837**
Մարումներ		(3,631,337)	(33,580,438)	(950,933)	**(38,162,708)**
Արտարժութային փոխարկումներ		2,000	20,946	2,600	**25,546**
Ոչ կանխիկ գործարքներ(ՖՀՄՍ 16)		–	172,968	–	**172,968**
Այլ		(665,825)	2,148,135	125,993	**1,608,303**
Հաշվեկշռային արժեք 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18, 19, 20	**8,500,960**	**101,043,374**	**11,130,839**	**120,675,173**

”Այլ” տողում ներառված են թողարկված պարտքային արժեթղթերի և այլ փոխառությունների գծով հաշվեգրված, բայց դեռևս չվճարված տոկոսները: Խումբը դասակարգում է վճարված տոկոսները, որպես դրամական միջոցների հոսքեր՝ ստացված գործառնական գործունեությունից:

36. Ֆինանսական գործիքների հաշվանցում

Ստորև ներկայացված աղյուսակները ներառում են ֆինանսական ակտիվները, որոնք հաշվանցվել են ֆինանսական պարտավորությունների հետ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, ինչպես նաև հաշվանցման վերաբերյալ իրավաբանորեն ամրագրված գլխավոր համաձայնագրերի և նմանատիպ համաձայնագրերի (ISDA, RISDA և այլն) հետևանքները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

2020թ. դեկտեմբերի 31	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավո-րությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվութ-յունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվութ-յունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված ոչ դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Պահանջներ բանկերի նկատմամբ՝ հակադարձ հետգնման պայմանագրեր	36,843,265	–	36,843,265	–	(36,843,265)	–
Վարկեր հաճախորդներին՝ հակադարձ հետգնման պայմանագրեր	3,324,179	–	3,324,179	–	(3,324,179)	–
Ընդամենը	**40,167,444**	**–**	**40,167,444**	**–**	**(40,167,444)**	**–**

(հազար ՀՀ դրամ)

36. Ֆինանսական գործիքների հաշվանցում (շարունակություն)

2019թ. դեկտեմբերի 31	*Ճանաչված ֆինանսական ակտիվների համախառն գումար*	*Ճանաչված ֆինանսական պարտավորությունների համախառն գումար՝ հաշվանցված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Ֆինանսական ակտիվների զուտ գումար՝ ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում*	*Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել*		*Զուտ գումար*
				Ֆինանսական գործիքներ	*Ստացված ոչ դրամական ապահովում*	
Ֆինանսական ակտիվներ						
Պահանջներ բանկերի նկատմամբ՝ հակադարձ հետգնման պայմանագրեր	17,708,358	–	17,708,358	–	(17,708,358)	–
Վարկեր հաճախորդներին՝ հակադարձ հետգնման պայմանագրեր	840,370	–	840,370	–	(840,370)	–
Ընդամենը	**18,548,728**	**–**	**18,548,728**	**–**	**18,548,728**	**–**

37. Կապիտալի համարժեքություն

Խմբի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են՝ համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է վերահսկողի կողմից սահմանված պահանջներին, և որ Խումբն ապահովում է ամուր վարկային վարկանիշ և ուժեղ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու նպատակով:

Խումբը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ՝ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել: ՀՀ Կենտրոնական բանկը սահմանում և վերահսկում է Բանկի կապիտալի նկատմամբ պահանջներ: Խումբը, որպես կապիտալ է ճանաչում այն հոդվածները, որոնք կարգավորման համաձայն սահմանվում են որպես կապիտալ բանկերի համար: ՀՀ ԿԲ-ի՝ կապիտալի նկատմամբ պահանջների համաձայն, որոնք հիմնված են Բազելյան համաձայնագրի դրույթների վրա, Բանկի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը (նորմատիվային կապիտալի գործակից) չպետք է գերազանցի սահմանված նվազագույն մակարդակը: 2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ նվազագույն մակարդակը կազմել է 12%: 2020 և 2019թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ընդհանուր կապիտալի գործակիցը համապատասխանում է պարտադիր պահանջներին:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կապիտալի համարժեքության նորմատիվը, որը հաշվարկվել է 1988թ. Բազելյան համաձայնագրի դրույթների համաձայն՝ հաշվի առնելով շուկայական ռիսկը ընդգրկելու գծով հետագա փոփոխությունները, կազմել է՝

	2020թ.	*2019թ.*
1- ին դասի կապիտալ	57,650,620	55,457,918
2 -րդ դասի կապիտալ	17,409,390	10,330,718
Ընդհանուր կապիտալ	**75,060,010**	**65,788,636**
Ընդամենը ռիսկով կշռված ակտիվներ	**459,110,363**	**366,772,103**
Ընդամենը կապիտալ՝ արտահայտված որպես ռիսկով կշռված ակտիվներից տոկոս (ընդհանուր կապիտալի գործակից)	**16.35%**	**17.94%**

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ռիսկերի կշռման գործակիցների հիերարխիայի միջոցով, որոնք դասակարգված են ըստ բնույթի և արտացոլում են յուրաքանչյուր ակտիվի ու պայմանագրային կողմի հետ կապված վարկային, շուկայական և այլ ռիսկերի գնահատականները՝ հաշվի առնելով ցանկացած գրավ կամ երաշխիք: Նմանատիպ մոտեցում է կիրառվում չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար՝ որոշակի ճշգրտումներով՝ հնարավոր վնասի՝ առավել պայմանական բնույթն արտացոլելու նպատակով:

(հազար ՀՀ դրամ)

38. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր

2021 թ.-ի փետրվարի 25-ին Բանկի Խորհուրդը որոշում կայացրեց Բանկի բաժնետիրական կապիտալը մեծացնելու վերաբերյալ՝ ուղղելով 20,000,000 հազար դրամ չբաշխված շահույթից բաժնետիրական կապիտալ: Արդյունքում, բաժնետիրական կապիտալը կկազմի 50,000,000 հազար դրամ. Բաժնետիրական կապիտալի ավելացումը կիրականացվի առկա բաժնետոմսերի անվանական արժեքի հաշվին՝ 6,000 դրամից 10,000 դրամ:

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ... 1
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ... 2
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ... 3
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն ... 4
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ... 5

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն ... 6
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները ... 6
3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր ... 7
4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ ... 28
5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն ... 29
6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ... 32
7. Առևտրային արժեթղթեր ... 33
8. Ածանցյալ ֆինանսական գործիքներ ... 33
9. Պահանջներ բանկերի նկատմամբ ... 34
10. Ներդրումային արժեթղթեր ... 35
11. Հաճախորդներին տրված վարկեր ... 37
12. Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ ... 47
13. Հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ ... 50
14. Հարկում ... 51
15. Վարկային կորուստների գծով ծախս ... 52
16. Այլ ակտիվներ ... 53
17. Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ ... 54
18. Թողարկված պարտքային արժեթղթեր ... 55
19. Այլ փոխառություններ ... 55
20. Ստորադաս վարկեր ... 56
21. Այլ պարտավորություններ ... 56
22. Կապիտալ ... 56
23. Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ ... 58
24. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ ... 58
25. Զուտ տոկոսային եկամուտ ... 61
26. Միջնորդավճարների գծով զուտ եկամուտ ... 61
27. Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից ... 62
28. Այլ եկամուտ ... 62
29. Այլ գործառնական ծախսեր ... 62
30. Այլ ընդհանուր վարչական ծախսեր ... 62
31. Ռիսկերի կառավարում ... 63
32. Իրական արժեքի չափում ... 78
33. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն ... 82
34. Կապակցված կողմերի հետ գործառնություններ ... 83
35. Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում ... 84
36. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն ... 85
37. Կապիտալի համարժեքություն ... 86
38. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած դեպքեր ... 86

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքների, համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և համախմբված հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարագրությունը, թե ինչպես է ստորև նշված հարցը դիտարկվել մեր աուդիտի ընթացքում, ներկայացված է այդ համատեքստում:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարագրված են «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում, այդ թվում այդ հարցի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր աուդիտը ներառել է ընթացակարգերի իրականացում՝ մշակված ի պատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը: Մեր աուդիտորական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիք արտահայտելու համար:

Աուդիտի առանցքային հարց	Ինչպես է այն դիտարկվել մեր աուդիտի ընթացում
Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստ	
Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների գծով արժեզրկման պահուստը հանդիսանում է առանցքային դատողությունների առարկա՝ ինչպես հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների էականության (Խմբի ընդհանուր ակտիվների 68.1%-ը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ), այնպես էլ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի («ՖՀՄՍ 9») շրջանակներում ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) գնահատման հետ կապված բարդությունների և գնահատման համար պահանջվող դատողությունների պատճառով: Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը ենթադրում է բարդ վիճակագրական մոդելավորում պահանջող գնահատման մեթոդների և մասնագիտական դատողությունների կիրառում: Այս մեթոդներն օգտագործվում են դեֆոլտի հավանականությունը, դեֆոլտի ժամանակ գործիքի ակնկալվող արժեքը և դեֆոլտի արդյունքում առաջացող կորուստները գնահատելու համար՝ հիմք ընդունելով անցյալ ժամանակաշրջանների առկա տեղեկատվությունը, որը ճշգրտվում է ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությամբ, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները: Պորտֆելային հիմունքով ԱՎԿ հաշվարկը մեծապես կախված է նախնական ճանաչումից ի վեր վարկային ռիսկի զգալի աճի առկայության գնահատումից: Այդ գնահատումը էապես կախված է վարկառուի ժամկետանց օրերի ցուցանիշից (ներառյալ այլ ֆինանսական հաստատություններում ժամկետանց օրերը) և վարկառուի ֆինանսական պայմանների վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումից: Մոդելավորման տարբեր մեթոդների և ենթադրությունների կիրառումը կարող է հանգեցնել ԱՎԿ էականորեն տարբեր գնահատումների: Սա կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Խմբի ֆինանսական արդյունքների վրա: Հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ գծով արժեզրկման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 11-ում՝ «Հաճախորդներին տրված վարկեր», Ծանոթագրություն 12-ում՝ «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» և Ծանոթագրություն 31-ում՝ «Ռիսկերի կառավարում»:	Աուդիտն իրականացնելիս մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալին՝ ► Վարկային ռիսկի մոդելների գնահատումը և պորտֆելի հիմունքով ԱՎԿ սահմանելու համար կիրառվող ենթադրությունները: ► Խմբի՝ վարկային ռիսկի էական աճը բացահայտելու նկատմամբ ներքին հսկողության միջոցների թեստավորում: Պորտֆելային հիմունքով հաշվարկված պահուստի թեստավորման նպատակով մենք գնահատել ենք դրա հիմքում ընկած վիճակագրական մոդելները, օգտագործված հիմնական ելակետային տվյալներն ու ենթադրությունները և ԱՎԿ հաշվարկում ներառված ապագա ժամանակաշրջանների կանխատեսվող տեղեկատվությունը, ներառյալ՝ մակրոտնտեսական ցուցանիշների վերանայված կանխատեսումները: Մենք թեստավորել ենք վարկային ռիսկի գործոնների հաշվարկի հիմքում ընկած առանցքային վիճակագրական տվյալները, ինչպիսիք են վարկերի ժամկետանց օրերը, հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների՝ դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնման վիճակագրությունը և արժեզրկված վարկերի մնացորդների փոփոխությունը սկզբնական ճանաչման ամսաթվից մինչև դեֆոլտի ամսաթիվը:Մենք գնահատել ենք նաև հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկի էական աճը որոշելու համար ղեկավարության կողմից ընտրված չափանիշների կիրառման հետևողականությունը: Մենք նաև իրականացրել ենք ընթացակարգեր Խմբի՝ վարկային ռիսկին ենթարկվածությունը նկարագրող բացահայտումների նկատմամբ:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Խմբի 2021 թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի համախմբված ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրելու կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է՝ ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն տրամադրվի մեզ, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

Ղեկավարության և Խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը,
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, սպառնալիքների վերացմանը և անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացում և, հետևաբար հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Մարիա Իգնատևան է:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր — Մարիա Իգնատևա

Գլխավոր տնօրեն — Էրիկ Հայրապետյան

27 ապրիլի, 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2021թ.*	*2020թ.*
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	96,447,988	66,398,135
Առևտրային արժեթղթեր	7	433,697	319,353
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	8	38,625	250,207
Պահանջներ բանկերի նկատմամբ	9	19,619,083	57,171,584
Ներդրումային արժեթղթեր	10	23,994,829	17,405,067
Հաճախորդներին տրված վարկեր	11	341,295,078	303,018,557
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	31,233,067	25,017,394
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	35	1,218,677	984,442
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	13	21,856,866	20,144,910
Այլ ակտիվներ	16	10,700,903	4,754,606
Հետաձգված հարկային ակտիվներ	14	91,722	167,436
Ընդամենը ակտիվներ		**546,930,535**	**495,631,691**
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	8	–	79,893
Բանկերի ավանդներ և մնացորդներ		1,070,890	45,717
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	17	337,492,635	296,944,080
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	5,068,908	8,500,960
Այլ փոխառություններ	19	92,331,761	101,043,374
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		1,187,740	126,703
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	1,296,678	680,497
Այլ պարտավորություններ	21	10,494,556	6,570,526
Ստորադաս վարկեր	20	9,794,000	11,130,839
Ընդամենը պարտավորություններ		**458,737,168**	**425,122,589**
Կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	22	55,000,000	30,000,000
Էմիսիոն եկամուտ	22	2,500,000	–
Լրացուցիչ վճարված կապիտալ	23	2,452,257	–
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		3,479,525	2,946,536
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ		3,446,766	3,572,143
Չբաշխված շահույթ		21,314,819	33,990,423
Ընդամենը կապիտալ		**88,193,367**	**70,509,102**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**546,930,535**	**495,631,691**

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝

Հակոբ Անդրեասյան — Գլխավոր գործադիր տնօրեն

Արմեն Հակոբյան — Գլխավոր հաշվապահ

27 ապրիլի, 2022թ.

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2021թ.*	*2020թ.*
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	25	43,312,133	43,414,170
Այլ տոկոսային եկամուտ	25	3,498,291	2,675,996
Տոկոսային ծախս	25	(21,294,891)	(20,185,734)
Զուտ տոկոսային եկամուտ		**25,515,533**	**25,904,432**
Վարկային կորուստների գծով ծախսի հակադարձում / (Վարկային կորուստների գծով ծախս)	15	232,100	(10,774,703)
Զուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո		**25,747,633**	**15,129,729**
Միջնորդավճարների գծով եկամուտ	26	6,294,559	4,916,294
Միջնորդավճարների գծով ծախս	26	(2,510,554)	(1,868,608)
Զուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից		560,811	(132,117)
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	27	2,051,949	2,351,308
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	35	579,024	399,958
Այլ եկամուտ	28	3,024,059	1,569,459
Ոչ տոկոսային եկամուտ		**9,999,848**	**7,236,294**
Անձնակազմի գծով ծախսեր		(14,567,050)	(10,888,617)
Մաշվածություն և ամորտիզացիա	13	(2,493,962)	(2,314,182)
Այլ գործառնական ծախսեր	29	(2,007,166)	(1,972,523)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	30	(3,966,843)	(3,466,759)
(Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր) / Ծախսերի հակադարձում	16	(95,529)	49,975
Ոչ տոկոսային ծախս		**(23,130,550)**	**(18,592,106)**
Շահույթ մինչև շահութահարկ		**12,616,931**	**3,773,917**
Շահութահարկի գծով ծախս	14	(2,803,449)	(1,049,286)
Հաշվետու տարվա շահույթ		**9,813,482**	**2,724,631**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ			
Բազային և նոսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ	22	1,840.03	544.93

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	*2021թ.*	*2020թ.*
Հաշվետու տարվա շահույթ		**9,813,482**	**2,724,631**
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների գծով իրական արժեքի զուտ փոփոխություն		(226,739)	258,888
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		304,374	92,348
Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	14	(13,974)	(63,222)
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ/(վնաս) վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ		**63,661**	**288,014**
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝			
Շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում		660,910	–
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների գծով (վնաս)/օգուտ		(253,375)	597,001
Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով	14	(73,356)	(107,460)
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ		**334,179**	**489,541**
Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս՝			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող		20,686	64,352
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս		**20,686**	**64,352**
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		**418,526**	**841,907**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ		**10,232,008**	**3,566,538**

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Բաժնետիրական կապիտալ	*Էմիսիոն եկամուտ*	*Լրացուցիչ վճարված կապիտալ*	*Հիմնական միջոցների վերագնահատումից աճ*	*Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ*	*Չբաշխված շահույթ*	*Ընդամենը կապիտալ*
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**30,000,000**	**–**	**–**	**3,009,091**	**2,730,236**	**32,903,237**	**68,642,564**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ							
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	–	2,724,631	**2,724,631**
Այլ համապարփակ եկամուտ	–	–	–	–	841,907	–	**841,907**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**–**	**841,907**	**2,724,631**	**3,566,538**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	**–**	**–**	**–**	**(62,555)**	**–**	**62,555**	**–**
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում							
Հայտարարված շահաբաժիններ	–	–	–	–	–	(1,700,000)	**(1,700,000)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**–**	**–**	**–**	**–**	**–**	**(1,700,000)**	**(1,700,000)**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**30,000,000**	**–**	**–**	**2,946,536**	**3,572,143**	**33,990,423**	**70,509,102**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ							
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	–	9,813,482	**9,813,482**
Այլ համապարփակ եկամուտ	–	–	–	543,903	(125,377)	–	**418,526**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**543,903**	**(125,377)**	**9,813,482**	**10,232,008**
Հիմնական միջոցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը չբաշխված շահույթին	**–**	**–**	**–**	**(10,914)**	**–**	**10,914**	**–**
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում							
Բաժնետիրական կապիտալի համալրում չբաշխված շահույթի հաշվին	20,000,000	–	–	–	–	(20,000,000)	**–**
Բաժետիրական կապիտալի թողարկում	5,000,000	2,500,000	–	–	–	–	**7,500,000**
Հայտարարված շահաբաժիններ	–	–	–	–	–	(2,500,000)	**(2,500,000)**
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	**25,000,000**	**2,500,000**	**–**	**–**	**–**	**(22,500,000)**	**5,000,000**
Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ (Ծան. 23)	–	–	2,452,257	–	–	–	**2,452,257**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**55,000,000**	**2,500,000**	**2,452,257**	**3,479,525**	**3,446,766**	**21,314,819**	**88,193,367**

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2021թ.	2020թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		46,518,664	45,644,846
Վճարված տոկոսներ		(20,945,909)	(19,971,332)
Ստացված միջնորդավճարներ		6,429,127	4,992,954
Վճարված միջնորդավճարներ		(2,510,553)	(1,868,607)
Զուտ մուտքեր/(ելքեր) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից		772,393	(132,117)
Զուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից		2,918,840	2,147,112
Վճարված այլ գործառնական ծախսեր		(2,422,846)	(220,306)
Ստացված այլ եկամուտ		2,712,820	313,619
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ		(11,535,954)	(10,952,092)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր		(3,888,701)	(3,466,758)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		**18,047,881**	**16,487,319**
Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/նվազում			
Առևտրային արժեթղթեր		(114,344)	(68,176)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		–	(249,870)
Պահանջներ բանկերի նկատմամբ		37,508,706	(26,633,310)
Հաճախորդներին տրված վարկեր		(39,050,452)	(36,695,515)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ		(12,598,205)	(4,051,999)
Այլ ակտիվներ		(946,313)	990,943
Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/(նվազում)			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		(79,831)	(120,116)
Բանկերի ավանդներ և մնացորդներ		1,019,240	13,660
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		40,188,480	42,136,691
Այլ պարտավորություններ		3,513,231	1,300,782
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված/(օգտագործված) գործառնական գործունեությունում մինչև շահութահարկը		**47,488,393**	**(6,889,591)**
Վճարված շահութահարկ		(1,137,847)	(1,226,755)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված/(օգտագործված) գործառնական գործունեությունում		**46,350,546**	**(8,116,346)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,719,781)	(2,215,321)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր		103,225	131,840
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(11,458,482)	(8,724,750)
Ներդրումային արժեթղթերի վաճառք և մարում		3,824,060	15,139,588
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված)/ստացված ներդրումային գործունեությունից		**(9,250,978)**	**4,331,357**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	22	7,500,000	–
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	36	3,461,498	–
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	36	(6,095,477)	(3,631,337)
Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր	36	33,778,000	47,077,963
Այլ փոխառությունների մարումներ	36	(43,034,045)	(33,580,438)
Ստորադաս վարկերից մուտքեր	36	–	7,098,874
Ստորադաս վարկերի մարումներ	36	–	(950,933)
Վճարված շահաբաժիններ	22	(2,500,000)	(1,700,000)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված)/ստացված ֆինանսավորման գործունեությունում		**(6,890,024)**	**14,314,129**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(84,277)	6,943
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(75,414)	(53,199)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		**30,049,853**	**10,482,884**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին		66,398,135	55,915,251
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	6	**96,447,988**	**66,398,135**

1-38 ծանոթագրությունները կազմում են համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

(հազար ՀՀ դրամ)

1. Հիմնական գործունեության նկարագրություն

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն (նախկին «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ, այսուհետ՝ «Բանկ») մայր կազմակերպությունն է Խմբում, որը բաղկացած է Բանկից և իր դուստր կազմակերպություններից՝ «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ից և «ԱԿԲԱ Տեխնոլաբ» ՍՊԸ-ից (միասին՝ «Խումբ»): Այն ձևավորվել է 1995թ.-ին, որպես միացյալ սեփականությամբ կոոպերատիվ բանկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, և 2006թ.-ին վերակազմակերպվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն: Բանկը գործունեություն է իրականացնում ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից տրված ընդհանուր բանկային լիցենզիայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ ավանդների ապահովագրության պետական համակարգի անդամ:

Բանկն ընդունում է բնակչությունից ավանդներ, տրամադրում է վարկեր և իրականացնում է դրամական փոխանցումներ Հայաստանի Հանրապետության տարածքում և ՀՀ տարածքից դուրս, իրականացնում է արտարժույթի փոխանակման գործարքներ և մատուցում է այլ բանկային ծառայություններ իր կորպորատիվ և ֆիզիկական անձ հաճախորդներին: Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է Երևան քաղաքում, և այն ունի 62 մասնաճյուղեր (ներառյալ՝ գլխամասը) Երևանում և ՀՀ այլ մարզերում: Բանկի գրանցման իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0002, Արամի փողոց 82-84:

Բանկի անվանումը և կազմակերպչաիրավական ձևը փոխվել է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ-ից «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի՝ համաձայն 2020թ.-ի մայիսի 26-ին կայացած բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի: ՀՀ Կենտրոնական բանկը Բանկի անվանման և կազմակերպչաիրավական ձևի փոփոխությունը գրանցել է 2020թ.-ի հուլիսի 3-ին:

«ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպությունը ձևավորվել է 2003թ.-ի մարտի 30-ին որպես փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության գծով գործառնություններն են իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների հետ: Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա՝ տրված ՀՀ ԿԲ-ի կողմից: Ընկերությունը հանդիսանում է Խմբի դուստր կազմակերպություն և համախմբվում է սույն ֆինանսական հաշվետվություններում: Բանկին է պատկանում «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100%-ը:

2021թ.-ի դեկտեմբերի 23-ին բանկը հիմնադրել է «ԱԿԲԱ Տեխնոլաբ» ՍՊԸ կրթական կենտրոնը: Կենտրոնի նպատակն է իրականացնել կրթական ծրագրեր և ներգրավել որակյալ մասնագետների:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի բաժնետերերն են.

Բաժնետեր	*2021թ., %*	*2020թ., %*
«ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ	83.68	95.00
Սակամ Ինտերնասիոնալ ՍԱՍ	4.55	5.00
Այլ	11.77	–
Ընդամենը	**100.0**	**100.0**

Խմբի մայր կազմակերպությունը «ԱԿԲԱ Ֆեդերացիա» ՓԲԸ-ն է, որը չունի վերահսկող կողմ:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր մաս

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի: Օրինակ՝ ներդրումային և առևտրային արժեթղթերը, ածանցյալ ֆինանսական գործիքները, հողը, շենքերը և փոխադրամիջոցները գնահատված են իրական արժեքով:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, բացառությամբ մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի, եթե այլ բան նշված չէ:

COVID-19 համաճարակի ազդեցությունը

2020թ. COVID-19 համաճարակի արագ տարածումից հետո, որը շարունակվեց նաև 2021թ.-ին մի շարք կառավարություններ, այդ թվում՝ ՀՀ կառավարությունը, նախաձեռնել են համաճարակի բռնկման դեմն ուղղված

(հազար ՀՀ դրամ)

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

COVID-19 համաճարակի ազդեցությունը (շարունակություն)

տարբեր միջոցառումներ, ներառյալ՝ ճանապարհորդության սահմանափակումները, կարանտինները, բիզնեսի և այլ վայրերի փակումը և որոշակի տարածքների արգելափակումը: Այս միջոցառումները ազդել են համաշխարհային առաջարկի շղթայի, ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև բիզնես գործունեության ծավալների վրա: Ակնկալվում է, որ ինչպես համաճարակը, այնպես էլ դրա հետ կապված հանրային առողջապահական և սոցիալական միջոցառումները կարող են ազդեցություն ունենալ տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող ընկերությունների վրա:

Կառավարության և Կենտրոնական բանկի կողմից ներկայացվել են աջակցության միջոցառումներ՝ COVID-19 համաճարակի հետևանքով տնտեսական անկմանը դիմակայելու նպատակով: Ի թիվս այլ միջոցառումների՝ այս միջոցառումները ներառում են տուժած ոլորտների և անհատների վարկավորման սուբսիդավորում, վճարման արձակուրդներ և որոշ կարգավորման սահմանափակումների թուլացում՝ ֆինանսական հատվածին օգնելու համար պահպանել ռեսուրսներ տրամադրելու իր կարողությունները և հաճախորդներին օգնել խուսափել COVID-19 զսպման միջոցառումների արդյունքում առաջացած իրացվելիության պակասից:

Խումբը շարունակում է գնահատել համաճարակի և փոփոխվող տնտեսական պայմանների ազդեցությունը իր գործունեության, ֆինանսական դրության և ֆինանսական արդյունքների վրա:

Գնահատման անորոշություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հասանելի տեղեկատվության հիման վրա, Խումբը ապագայում սպասվող դրամական հոսքերի գնահատումները արտացոլել է ակնկալվող վարկային կորուստների (Ծանոթագրություն 11) և ֆինանսական գործիքների և հիմնական միջոցների իրական արժեքների վերագնահատումներում (Ծանոթագրություն 32):

Վերադասակարգումներ

2021թ. Խումբը վերադասակարգել է «Այլ ակտիվներ»-ում «Կանխավճարներ վարձակալած գույքի մատակարարներին» տողը (Ծանոթագրություն 16) «Այլ ֆինանսական ակտիվներ»-ից «Այլ ոչ ֆինանսական ակտիվներ», և «Այլ պարտավորություններ» (Ծանոթագրություն 21) հոդվածում «Կանխավճարներ վարձակալներից» տողը «Այլ ֆինանսական պարտավորություններ»-ից «Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ»: Ազդեցությունը համադրելի տեղեկատվության վրա 1,956,666 հազար ՀՀ դրամ է՝ «Կանխավճարներ վարձակալած գույքի մատակարարներին» դեպքում և 1,139,852 հազար ՀՀ դրամ՝ «Կանխավճարներ վարձակալներից» դեպքում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Խումբն առաջին անգամ կիրառել է ստանդարտների փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2021 թվականի հուվարի 1-ից: Խումբը վաղաժամկետ չի ընդունել որևէ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք հրապարակվել են, բայց դեռ ուժի մեջ չեն մտել:

Տոկոսադրույքի չափորոշիչի բարեփոխում. փուլ 2՝ փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում, ՀՀՄՍ 39-ում, ՖՀՄՍ 7-ում, ՖՀՄՍ 4-ում, ՖՀՄՍ 16-ում (IBOR-ի բարեփոխման փուլ 2).

Փոփոխությունները տրամադրում են ժամանակավոր մեղմացումներ ֆինանսական հաշվառման համար, երբ միջբանկային առաջարկվող տոկոսադրույքը (IBOR) փոխարինվում է այլընտրանքային, գրեթե առանց ռիսկի տոկոսադրույքով (RFR): Փոփոխությունները ներառում են հետևյալ կիրառական մեղմացումները.

- Պայմանագրային փոփոխությունները կամ դրամական հոսքերում փոփոխությունները, որոնք ուղղակիորեն պահանջվում են բարեփոխումներով, կարելի է դիտարկել որպես լողացող տոկոսադրույքի փոփոխություն, որը համարժեք է շուկայական տոկոսադրույքի շարժին,
- Թույլատրում է IBOR-ի բարեփոխմամբ պահանջվող փոփոխությունները, հեջի հաշվառման և հեջավորման փաստաթղթերի համար՝ առանց հեջավորման հարաբերությունների դադարեցման,
- Տրամադրում է ժամանակավոր ազատում կազմակերպություններին առանձին ճանաչելի պահանջը բավարարելուց, երբ RFR գործիքը նախատեսված է որպես ռիսկի բաղադրիչի հեջ:

Խումբը կիրառել է փոփոխություններով նախատեսված գործնական արտոնությունները:

Մանրամասները տե՛ս Ծանոթագրություն 31-ում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները (շարունակություն)

COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնություններ, 2021 թվականի հունիսի 30-ից հետո Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում

2020թ. մայիսի 28-ին ՀՀՄՍԽ-ն թողարկել է COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնություններ՝ փոփոխություն ՖՀՄՍ 16 *«Վարձակալություն»* ստանդարտում: Փոփոխությունները հնարավորություն են ընձեռնում վարձակալներին չկիրառել ՖՀՄՍ 16-ի վարձակալության վերափոխման հաշվառման ցուցումները՝ վարձավճարների՝ COVID-19 համավարակի ուղղակի հետևանքով առաջացած արտոնությունների համար: Որպես գործնական մոտեցում վարձակալը կարող է ընտրել չգնահատել, արդյոք COVID-19-ով պայմանավորված վարձակալից ստացված վարձավճարների արտոնությունները համարվում են վարձակալության վերափոխում: Վերոնշյալ ընտրությունը կատարող վարձակալը հաշվառում է COVID-19-ով պայմանավորված վարձավճարների փոփոխությունը այնպես, ինչպես կհաշվառեր փոփոխությունը, եթե այն չլիներ վարձակալության վերափոխում:

Փոփոխությունը նախատեսված էր կիրառել մինչև 2021թ. հունիսի 30-ը, բայց COVID-19 համավարակի ազդեցության շարունակականությամբ պայմանավորված, 2021թ. մարտի 31-ին ՀՀՄՍԽ-ն երկարաձգեց գործնական մոտեցման կիրառման ժամանակահատվածը մինչև 2022թ. հունիսի 30: Փոփոխությունը կիրառվում է 2021թ. ապրիլի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը չի ստացել COVID-19-ի հետ կապված վարձավճարների արտոնություններ, սակայն մտադիր է կիրառել գործնական մոտեցումը կիրառելի դառնալու դեպքում՝ թույլատրելի ժամանակահատվածի ընթացքում:

Համախմբման հիմունքներ

Դուստր ընկերությունները, որոնց գործունեության նկատմամբ Խումբը վերահսկողություն է իրականացնում, համախմբվում են: Վերահսկողությունն իրականացվում է այն դեպքում, երբ Խումբն իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին և կարող է ազդել այդ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով: Մասնավորապես, Խումբը վերահսկում է ներդրումը, միայն և միայն այն դեպքում, երբ բավարարվում են հետևյալ պայմանները՝

- Խումբն ունի իրավասություն ներդրման օբյեկտի նկատմամբ (այսինքն՝ գոյություն ունեցող իրավունքներ, որոնք ապահովում են ներդրման օբյեկտի նշանակալի գործունեությունը կառավարելու հնարավորություն),
- Խումբն ունի իրավունք ներդրումներից ստացվող փոփոխական արդյունքների նկատմամբ և ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ռիսկին,
- Խումբն ունի հնարավորություն օգտագործելու իր իրավասությունները ներդրման օբյեկտի նկատմամբ՝ ներդրումներից փոփոխական արդյունքների վրա ազդելու նպատակով:

Որպես կանոն, ենթադրվում է, որ վերահսկողությունը պայմանավորված է ձայնի իրավունքի մեծամասնությամբ: Սույն ենթադրության հաստատման, ինչպես նաև Խմբի մոտ մեծամասնությունից ավելի քիչ քվեարկման կամ ներդրման օբյեկտի նկատմամբ մեծամասնությունից ավելի քիչ նմանատիպ իրավունքների առկայության դեպքում, Խումբը հաշվի է առնում է բոլոր փաստերը և հանգամանքները տվյալ ներդրման օբյեկտի նկատմամբ իրավասության առկայությունը գնահատելիս, ներառյալ՝

- ներդրման օբյեկտի նկատմամբ ձայնի իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրային համաձայնությունը,
- այլ համաձայնագրերից ծագող իրավունքները,
- Խմբին պատկանող առկա և հնարավոր քվեարկման իրավունքները:

Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր ընկերության նկատմամբ և դադարում է, երբ Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Ներխմբային բոլոր գործարքները, ինչպես նաև այդ գործարքների արդյունքում առաջացած մնացորդներն ու չիրացված օգուտները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում, դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ ընկերությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունները Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականություններին համապատասխանեցնելու նպատակով:

Առանց վերահսկման կորստի դուստր ընկերությունում մասնակցության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալում փոփոխություն: Դուստր կազմակերպության վնասները վերագրվում են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե այն հանգեցնում է բացասական մնացորդի:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Եթե Խումբը կորցնում է դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը, այն ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները (ներառյալ՝ գուդվիլը) և պարտավորությունները, ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հաշվեկշռային արժեք, սեփական կապիտալում արտացոլվող փոխարկման կուտակված տարբերությունները, ճանաչում է ստացված փոխհատուցման իրական արժեքը, մնացած ներդրման իրական արժեքը, գործարքի արդյունքում առաջացած ավել կամ պակաս գումարը շահույթում կամ վնասում, վերադասակարգում է նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված տարրերի մայր կազմակերպության բաժինը շահույթում կամ վնասում կամ չբաշխված շահույթում:

Ձեռնարկատիրական գործունեության միավորում

Ձեռնարկատիրական գործունեության միավորումները հաշվառվում են՝ օգտագործելով ձեռքբերման մեթոդը: Ձեռքբերման արժեքը չափվում է որպես ձեռքբերման օրվա դրությամբ փոխանցված հատուցման իրական արժեքի և ձեռքբերվող ընկերության ցանկացած չվերահսկվող բաժնեմասի հանրագումար: Յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործունեության միավորման համար ձեռքբերող կողմը չափում է ձեռքբերված կազմակերպության չվերահսկվող բաժնեմասը, որը բաժնետերերին ներկա պահին էլ տալիս է ընկերության զուտ ակտիվներում համապատասխան բաժնի իրավունք ընկերության լուծարման դեպքում, կա՛մ իրական արժեքով, կա՛մ ձեռքբերված ընկերության որոշելի զուտ ակտիվների համապատասխան մասի գումարի չափով: Չվերահսկվող բաժնեմասի այլ բաղադրիչները գնահատվում են ձեռքբերման պահին իրական արժեքով: Առաջացած ձեռքբերման ծախսումները ծախսագրվում են:

Եթե Խումբը ձեռք է բերում ձեռնարկատիրական գործունեություն, ապա ֆինանսական ակտիվները և պարտավորությունները դասակարգվում են պայմանագրի պայմաններին, տնտեսական բնույթին և ձեռքբերման պահին այլ էական պայմաններին համապատասխան: Սա ներառում է ձեռքբերվող կազմակերպության հիմնական պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքների տարանջատման անհրաժեշտության վերլուծությունը:

Ձեռնարկատիրական գործունեության փուլային ձեռքբերման դեպքում ձեռքբերողը ձեռքբերվող կազմակերպությունում իր նախկինում ունեցած բաժնեմասը պետք է վերաչափի ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով և արդյունքում ստացված օգուտը կամ վնասը ճանաչի շահույթում կամ վնասում:

Ցանկացած պայմանական հատուցում, որը պետք է փոխանցվի ձեռքբերողի կողմից, ճանաչվում է ձեռքբերման պահին իրական արժեքով: Ակտիվ կամ պարտավորություն հանդիսացող պայմանական հատուցումների իրական արժեքի ցանկացած հետագա փոփոխություն ճանաչվում է ՖՀՄՍ 9-ի համաձայն շահույթում կամ վնասում կամ որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունքների փոփոխություն: Եթե պայմանական հատուցումը դասակարգվում է որպես սեփական կապիտալ, ապա այն չի վերաչափվում՝ մինչև կապիտալում ամբողջական մարումը:

Գուդվիլը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը հանդիսանում է փոխանցված հատուցման և ճանաչված չվերահսկվող բաժնեմասի հանրագումարի և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների իրական արժեքների տարբերությունը: Եթե փոխհատուցումը ավելի քիչ է, քան ձեռքբերված դուստր ընկերության զուտ ակտիվների իրական արժեքը, ապա տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը չափվում է սկզբնական արժեքով՝ նվազեցնելով արժեզրկումից կուտակված ցանկացած կորստով: Արժեզրկման ստուգման նպատակով ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, ձեռքբերման ամսաթվից սկսած, պետք է բաշխվի Խմբի այն դրամաստեղծ միավորներին, որոնք ակնկալվում է, որ կստանան օգուտներ ձեռնարկատիրական գործունեության միավորումից՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք ձեռքբերվողի այլ ակտիվները կամ պարտավորությունները վերագրված են այդ միավորներին, թե՝ ոչ: Եթե գուդվիլը կազմում է դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մաս, և այդ ստորաբաժանման մի մասն օտարվում է, օտարվող մասին վերագրելի գուդվիլը ընդգրկվում է այդ գործունեության հաշվեկշռային արժեքի մեջ օտարումից շահույթը կամ վնասը որոշելիս: Այս պարագայում օտարվող գուդվիլը գնահատվում է օտարվող գործունեության արժեքի և դրամական միջոցներ ստեղծող ստորաբաժանման մնացած մասի արժեքի հարաբերության հիման վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում

Ասոցիացված են համարվում այն կազմակերպությունները, որոնցում Խումբը ունի 20%-ից 50% քվեարկող բաժնեմաս կամ Խումբն ունի էական ազդեցության այլ հնարավորություններ, որը, սակայն, չի նշանակում լիովին վերահսկում: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են բաժնեմասնակցության մեթոդով և սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով՝ ներառյալ գուդվիլը: Հաշվեկշռային արժեքի հետագա փոփոխությունները արտացոլում են միավորմանը հաջորդող Խմբի՝ ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվների բաժնեմասի փոփոխությունները: Խմբի՝ ասոցիացված կազմակերպության շահույթի կամ վնասի բաժնեմասը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ պահուստներում փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Այնուամենայնիվ, երբ Խմբի՝ ասոցիացված կազմակերպություններում վնասների բաժինը գերազանցում է իր բաժնեմասը ասոցիացված կազմակերպությունում, Խումբը չի ճանաչում հետագա կորուստները, եթե Խումբը չի պարտավորվում հետագա վճարումներ կատարել ասոցիացված կազմակերպությանը կամ ասոցիացված կազմակերպության անունից:

Խմբի և իր ասոցիացված կազմակերպության միջև գործարքներից չիրացված օգուտները բացառվում են մինչև Խմբի՝ ասոցիացված կազմակերպությունում բաժնեմասը. չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքի, երբ համապատասխան գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին:

Իրական արժեքի չափում

Խումբն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով պահվող ֆինանսական գործիքները և ոչ ֆինանսական ակտիվները չափում է իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Իրական արժեքն այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ ընթացիկ շուկայական պայմաններում, հիմնական կամ դրա բացակայության դեպքում՝ ամենաբարենպաստ շուկայում կստացվեր շուկայի մասնակիցների միջև՝ սովորական գործարքում ակտիվը վաճառելու կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելու դիմաց: Իրական արժեքով չափումը ենթադրում է, որ ակտիվի վաճառքը կամ պարտավորության փոխանցումը կատարվում է՝

- այդ ակտիվի կամ պարտավորության հիմնական շուկայում, կամ
- հիմնական շուկայի բացակայության դեպքում՝ տվյալ ակտիվի կամ պարտավորության համար ամենաբարենպաստ շուկայում:

Խումբը պետք է հասանելիություն ունենա հիմնական կամ ամենաբարենպաստ շուկա: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափվում է՝ կիրառելով այնպիսի ենթադրություններ, որոնք շուկայի այլ մասնակիցները կօգտագործեին ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը որոշելիս՝ ենթադրելով, որ շուկայի մասնակիցները գործում են իրենց լավագույն տնտեսական շահերից ելնելով: Ոչ ֆինանսական ակտիվի իրական արժեքի չափումը հաշվի է առնում շուկայի մասնակցի՝ տնտեսական օգուտներ ստեղծելու կարողությունը՝ ակտիվի առավել արդյունավետ և լավագույն օգտագործումից կամ այն շուկայի մեկ այլ մասնակցի վաճառելուց, ով ակտիվը կօգտագործեր առավել արդյունավետ և լավագույն կերպով:

Խումբն օգտագործում է գնահատման մեթոդներ, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, և որոնց համար բավարար տվյալներ կան իրական արժեքը չափելու համար՝ առավելագույնին հասցնելով համապատասխան դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը և նվազագույնին հասցնելով ոչ դիտարկելի ելակետային տվյալների օգտագործումը: Բոլոր ակտիվներն ու պարտավորությունները, որոնց իրական արժեքը չափվում կամ բացահայտվում է ֆինանսական հաշվետվություններում, դասակարգվում են ըստ ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիայի՝ ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից՝

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

Այն ակտիվների և պարտավորությունների համար, որոնք պարբերաբար ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում, Խումբը դիտարկում է հիերարխիայի մակարդակների փոփոխության անհրաժեշտությունը՝ նորից վերլուծելով դրանց դասակարգումը (ելնելով իրական արժեքի չափման համար էական ամենացածր մակարդակի ելակետային տվյալներից) յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

Սկզբնական ճանաչում

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքները ճանաչվում են գործարքի ամսաթվով: Կանոնավոր են համարվում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում:

Սկզբնական չափում

Ֆինանսական գործիքների դասակարգումը սկզբնական ճանաչման պահին կախված է պայմանագրային պայմաններից և գործիքների կառավարման բիզնես մոդելից: Ֆինանսական գործիքները սկզբնապես չափվում են իրական արժեքով և գործարքի ծախսերը նվազեցվում կամ ավելացվում են տվյալ գումարին, բացառությամբ՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման տեսակներ

Խումբն իր բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգում է ելնելով ակտիվների կառավարման բիզնես մոդելից և ակտիվի պայմանագրային պայմաններից, չափումն իրականացնելով՝

- Ամորտիզացված արժեքով,
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով,
- Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբն իր ածանցյալ և առևտրային պորտֆելը դասակարգում և չափում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Խումբը կարող է հաշվառել ֆինանսական գործիքները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, եթե այդ կերպ վերանում է կամ զգալիորեն նվազեցվում են չափման կամ ճանաչման անհամապատասխանությունները:

Ֆինանսական պարտավորությունները, բացի վարկային պարտավորություններից և ֆինանսական երաշխիքների պայմանագրերից, չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, երբ դրանք պահվում են վաճառքի համար, ածանցյալ գործիքներ են կամ կիրառվում է իրական արժեքով հաշվառում:

Բանկերին տրված վարկեր և փոխատվություններ, հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով չափվող պարտքային արժեթղթեր

Խումբը չափում է Բանկերին տրված վարկերը և փոխատվությունները, հաճախորդներին տրված վարկերը և ներդրումային արժեթղթերը ամորտիզացված արժեքով միայն այն դեպքում, եթե միաժամանակ բավարարվում են հետևյալ երկու պայմանները՝

- Ֆինանսական ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահել պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա չմարված մասի դիմաց տոկոսների վճարումներ (SPPI):

Այս պայմանների մանրամասները ներկայացված են ստորև.

Բիզնես մոդելի գնահատում

Խումբն իր բիզնես մոդելը սահմանում է այն մակարդակի վրա, որը լավագույն կերպով արտացոլում է գործունեության նպատակների իրագործման համար ֆինանսական ակտիվների խմբերի կառավարման ուղղությամբ որդեգրած մեթոդները:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Խմբի բիզնես մոդելը չի գնահատվում առանձին գործիքների հիմունքով, այլ ավելի բարձր՝ համախմբված պորտֆելների մակարդակով, և հիմնվում է այնպիսի դիտարկելի գործոնների վրա, ինչպիսիք են՝

- Բիզնես մոդելի արդյունավետության և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների գնահատման և Խմբի առանցքային ղեկավար անձնակազմին ներկայացման մեխանիզմները,
- Բիզնես մոդելի արդյունավետության (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ակտիվների) վրա ազդող ռիսկերը, մասնավորապես, այդ ռիսկերի կառավարման մեխանիզմները,
- Բիզնեսի կառավարիչների փոխհատուցման եղանակները (օրինակ՝ փոխհատուցումը հիմնված է կառավարվող ակտիվների իրական արժեքների կամ պայմանագրային դրամական հոսքերի վրա),
- Վաճառքների ակնկալվող հաճախականությունը, արժեքը և ժամկետները նույնպես հանդիսանում են Խմբի գնահատման կարևոր գործոններ:

Բիզնես մոդելի գնահատման հիմքում ընկած են ողջամիտ ակնկալվող սցենարները՝ առանց հաշվի առնելու «վատագույն» կամ «սթրեսային» սցենարները: Եթե սկզբնական ճանաչումից հետո դրամական միջոցների հոսքերը տեղի են ունենում Խմբի սկզբնական ակնկալիքներից տարբեր կերպով, Խումբը չի փոխում տվյալ բիզնես մոդելում պահվող մնացած ֆինանսական ակտիվների դասակարգումը, սակայն հետագայի համար հաշվի է առնում այդ տեղեկատվությունը նոր առաջացող կամ նոր ձեռք բերվող ֆինանսական ակտիվները գնահատելիս:

Միայն մայր գումարի և տոկոսի վճարման (SPPI) գնահատումներ

Որպես դասակարգման գործընթացի երկրորդ քայլ, Խումբը գնահատում է ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները՝ պարզելու համար, թե արդյոք դրանք բավարարում են SPPI գնահատման պահանջներին:

Այս գնահատման նպատակով, մայր գումար հասկացությունը սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման ժամանակ և կարող է փոխվել ֆինանսական ակտիվի կյանքի ընթացքում (օրինակ՝ եթե կան մայր գումարի մարումներ կամ վարձատրության/զեղչի ամորտիզացիա):

Վարկային պայմանագրի մեջ սովորաբար տոկոսի ամենակարևոր տարրերն են՝ փողի ժամանակային արժեքը և վարկային ռիսկը: SPPI գնահատումը իրականացնելու համար Խումբը կիրառում է դատողություն և հաշվի է առնում համապատասխան գործոններ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվի արժույթը և տոկոսադրույքի գործողության ժամանակահատվածը:

Համեմատության համար, այն պայմանագրային դրույթները, որոնք առաջացնում են ավելի քան նվազագույն ենթարկվածություն ռիսկերին կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի տատանողականության, որոնք կապված չեն բազային վարկային պայմանագրի հետ, չեն առաջացնում միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա տոկոսի վճարում հանդիսացող պայմանագրային դրամական միջոցների հոսքեր: Այս դեպքերում ֆինանսական ակտիվը պետք է չափվի իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ

Խումբը չափում է պարտքային գործիքները իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, եթե միաժամանակ առկա են հետևյալ երկու պայմանները.

- Գործիքը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ինչպես պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրումը, այնպես էլ ֆինանսական ակտիվների վաճառքը,
- Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բավարարում են SPPI ստուգման չափանիշներին:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները հետագայում չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները ճանաչելով այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից օգուտը և վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն կերպ, ինչպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները: Ապաճանաչման պահին, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված գումարային օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես շահույթ կամ վնաս:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ (շարունակություն)

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների համար ակնկալվող վարկային կորուստները չեն նվազեցնում այդ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքները, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում շարունակվում են ներկայացվել իրական արժեքով: Փոխարենը, այն պահուստի չափով գումարը, որը կառաջանար, եթե ակտիվները չափվեին ամորտիզացված արժեքով, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ որպես կուտակված արժեզրկման գումար, շահույթում կամ վնասում համապատասխան ծախսագրմամբ: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված վնասը ակտիվի ապաճանաչումից հետո վերադասակարգվում է շահույթի և վնասի կազմ:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ

Սկզբնական ճանաչումից հետո Խումբը, երբեմն ընտրում է իր բաժնային ներդրումների մի մասն առանց հետագա վերանայման դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքներ, երբ դրանք համապատասխանում են կապիտալի գործիքի սահմանմանը՝ համաձայն ՀՀՄՍ 32-ի *«Ֆինանսական գործիքներ. Ներկայացում»* ստանդարտի, և չեն պահվում առևտրային նպատակով: Նման դասակարգումը որոշվում է առանձին՝ յուրաքանչյուր գործիքի համար:

Այս բաժնային գործիքներից օգուտները կամ վնասները երբեք չեն վերադասակարգվում շահույթի կամ վնասի կազմ: Շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ, երբ վճարման իրավունքը հաստատվել է, բացառությամբ, երբ Խումբը օգուտ է ստանում տվյալ մուտքերից՝ գործիքի արժեքի մի մասի վերականգնման միջոցով: Այդ դեպքում նման օգուտները հաշվառվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքները ենթակա չեն արժեզրկման գնահատման: Այդ գործիքների օտարումից հետո, կուտակված վերագնահատման պահուստը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և չվճարված վարկային պարտավորվածություններ

Խումբը թողարկում է ֆինանսական երաշխիքի պայմանագրեր, ակրեդիտիվներ և վարկավորման չօգտագործված պարտավորվածություններ:

Ֆինանսական երաշխիքի պայմանագրերը ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, որը ստացված վարձատրությունն է: Սկզբնական ճանաչումից հետո ամեն երաշխիքի համար Խմբի պարտավորությունը չափվում է հետևյալ գումարների առավելագույնի չափով. սկզբնական ճանաչված արժեքի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված կուտակված ամորտիզացիայի տարբերության և ակնկալվող վարկային կորուստների պահուստի:

Վարկավորման չօգտագործված պարտավորվածությունները և ակրեդիտիվները պարտավորվածություններ են, որի շրջանակներում պարտավորվածության տևողության ընթացքում Խումբը հաճախորդին պետք է տրամադրի վարկ՝ նախապես սահմանված պայմաններով: Ինչպես ֆինանսական երաշխիքի պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերը ընդգրկված են ակնկալվող վարկային կորուստների պահանջների մեջ:

Կատարողական երաշխիքի պայմանագրեր

Կատարողական երաշխիքները պայմանագրեր են, որոնք տրամադրում են փոխհատուցում, երբ մյուս կողմը չի կատարում պայմանագրային պարտավորությունը: Կատարողական երաշխիքի պայմանագրերը վարկային ռիսկ չեն փոխանցում: Համաձայն կատարողական երաշխիքի պայմանագրի՝ ռիսկը, դա հավանականությունն է, որ մյուս կողմը չի կատարի պայմանագրային պարտավորությունը: Հետևաբար, կատարողական երաշխիքի պայմանագրերը չեն համարվում ֆինանսական գործիքներ և այդպիսով՝ չեն ընդգրկվում ՖՀՄՍ 9-ի շրջանակներում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերադասակարգում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո չի վերադասակարգում իր ֆինանսական ակտիվները, չհաշված բացառիկ դեպքերը, երբ Խումբը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքները ներառում են կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, բանկերում Նոստրո հաշիվները և ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցները, ներառյալ պարտադիր պահուստները ՀՀ դրամով՝ զերծ պայմանագրային սահմանափակումներից:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները արտացոլվում են ՀՀ ԿԲ գնման գներով, որոնք մոտավորապես համապատասխանում են իրական արժեքին՝ Լոնդոնի մետաղների բորսայի գնանշումների նկատմամբ զեղչմամբ: Թանկարժեք մետաղների հետ գործառնությունների ժամանակ ՀՀ ԿԲ գների փոփոխությունները հաշվառվում են որպես թանկարժեք մետաղների գործառնություններից գնային տարբերություններ այլ եկամուտների կազմում:

Հետգնման ու հակադարձ հետգնման պայմանագրեր և արժեթղթերի գծով փոխառության գործառնություններ

Հետգնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ռեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսավորման գործառնություններ: Հետգնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է բանկերի կամ հաճախորդների միջոցների կազմում: Հետադարձ վաճառքի պայմանագրով արժեթղթերի ձեռքբերումը (հակադարձ ռեպո) արտացոլվում է բանկերի նկատմամբ պահանջների կամ հաճախորդներին տրված վարկերի կազմում՝ կախված իրավիճակից: Վաճառքի գնի և ձեռք բերման գնի միջև տարբերությունը դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրի ժամկետի ընթացքում՝ արդյունավետ եկամտաբերության մեթոդով:

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գործընկերներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը բնականոն գործունեության ընթացքում արժութային և կապիտալի շուկաներում օգտագործում է տարատեսակ ածանցյալ ֆինանսական գործիքներ, ներառյալ՝ ֆորվարդները, ֆյուչերսները, սվոպերը և օպցիոնները: Այդ ֆինանսական գործիքները նախատեսված են առևտրի համար և սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշման հիման վրա կամ գնորոշման մոդելներով, որոնք հիմնված են բազիսային գործիքների ընթացիկ շուկայական և պայմանագրային արժեքների և այլ գործոնների վրա: Դրական իրական արժեքով ածանցյալ ֆինանսական գործիքները արտացոլվում են ակտիվների կազմում, իսկ բացասական արժեք ունեցողները՝ պարտավորությունների կազմում: Նշված գործառնություններից ստացված արդյունքները հաշվառվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ/(վնաս) կամ արտարժութային գործառնություններից զուտ շահույթ կամ վնաս՝ կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Պարունակվող ածանցյալ գործիքը հիբրիդային գործիքի բաղադրիչ է, որը ներառում է նաև ոչ ածանցյալ մայր-պայմանագիր, որի արդյունքում համակցված գործիքի դրամական հոսքերի մի մասը տատանվում է առանձին ածանցյալ գործիքի նման: Պարունակվող ածանցյալ գործիքը առաջացնում է փոփոխություններ որոշ կամ բոլոր դրամական միջոցների հոսքերում, որոնք հակառակ դեպքում պահանջվում էին պայմանագրով, կախված սահմանված տոկոսադրույքից, ֆինանսական գործիքի գնից, ապրանքի գնից, արտարժույթի փոխարժեքից, գների ինդեքսից կամ դրույքից, վարկանշից կամ վարկային ինդեքսից, այլ փոփոխականից, պայմանով, որ ոչ ֆինանսական փոփոխականի դեպքում այն հատուկ չէ պայմանագրի կողմի համար: Ֆինանսական գործիքին կցված, բայց այդ գործիքից անկախ փոխանցվող ածանցյալ գործիքը, կամ գործիքը, որի պայմանագրային կողմը տարբերվում է այդ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմից, չի հանդիսանում պարունակվող ներգրավված ածանցյալ գործիք, այլ առանձին ածանցյալ գործիք է:

Պարտավորություններում կամ ոչ ֆինանսական մայր պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե համապատասխանում են ածանցյալ գործիքի վերոնշյալ սահմանմանը, նրանց տնտեսական հատկանիշները և ռիսկերը սերտորեն կապված չեն մայր պայմանագիր հետ, և մայր պայմանագիրը չի համարվում առևտրային նպատակներով կնքված կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են բիզնես մոդելի և SPPI-ի գնահատումների հիման վրա:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ածանցյալ ֆինանսական գործիքներ (շարունակություն)

Մուրհակներ

Գնված մուրհակները ներառվում են առևտրային նպատակով պահվող արժեթղթերում, պահանջներ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր հոդվածներում՝ կախված ձեռք բերման նպատակից և պայմաններից, և հաշվառվում են հաշվետվությունում ակտիվների համապատասխան դասերի նկատմամբ կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության սկզբունքների հիման վրա:

Փոխառություններ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի հաստատուն գումարով դրամական միջոցների կամ այլ ֆինանսական ակտիվների՝ սեփական բաժնեմասային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները իրենց մեջ ներառում են ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները, բանկերի միջոցները, հաճախորդների հաշիվները, այլ փոխառություններ, թողարկված պարտատոմսերը: Սկզբնական ճանաչումից հետո փոխառու միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառման միջոցով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Եթե Խումբը գնում է իր սեփական պարտքը, այն հանվում է ֆինանսական վիճակի համախմբված հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Վարձակալություն

i. Խումբը՝ որպես վարձակալ

Խումբը կիրառել է ճանաչման և չափման միասնական մոտեցում բոլոր վարձակալությունների համար, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ՝ վարձակալության գծով վճարումներ կատարելու համար և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են պայմանագրի հիմքում ընկած ակտիվները օգտագործելու իրավունքը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ ձեռք կբերի վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը պայմանագրի ավարտին, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վարձակալություն (շարունակություն)

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Խումբն օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Խումբը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում գնման օպցիոն): Խումբը կիրառում է նաև փոքրարժեք ակտիվների վարձակալության ճանաչման բացառությունը այն ակտիվների վրա, որոնք համարվում են փոքրարժեք (2,500 հազ. ՀՀ դրամը չգերազանցող): Կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների գծով վարձավճարները ճանաչվում են որպես ծախս՝ գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում:

ii. Գործառնական – Խումբը՝ որպես վարձատու

Վարձակալությունները, երբ Խումբը չի փոխանցում հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված նշանակալի բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն: Վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է այլ եկամտի կազմում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, քանի որ գործառնական բնույթի է: Գործառնական վարձակալության բանակցությունների և պայմանավորվածությունների գծով կրած սկզբնավորման ուղղակի ծախսումները ավելացվում են տրամադրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, որը կիրառվում է վարձակալական եկամուտը ճանաչելիս: Պայմանական վարձավճարները ճանաչվում են որպես եկամուտ այն ժամանակահատվածի ընթացքում, որում դրանք ստացվում են:

iii. Ֆինանսական – Խումբը որպես վարձատու

Ֆինանսական վարձակալության ժամկետի մեկնարկի պահից Խումբը ճանաչում է ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ՝ վարձակալությունում զուտ ներդրումներին հավասար գումարով:

Ֆինանսական եկամտի ճանաչումը հիմնված է այնպիսի գրաֆիկի վրա, որն ապահովում է հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի զուտ ներդրումների նկատմամբ: Սկզբնական ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների սկզբնական գնահատման մեջ:

Ֆինանսական ակտիվների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները հաշվանցվում են պարտավորություններով և ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են զուտ մնացորդով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավական հիմք և գոյություն ունի դրանք զուտ հիմքով մարելու կամ միաժամանակ ակտիվները իրացնելու և պարտավորությունները մարելու մտադրություն: Հաշվանցում կատարելու իրավունքը չպետք է պայմանավորված լինի ապագա ժամանակաշրջանի դեպքերով և պետք է ունենա իրավական ուժ բոլոր ստորև ներկայացված դեպքերում՝

- բնականոն գործունեության ընթացքում,
- պարտականությունների չկատարման դեպքում,
- կազմակերպության կամ դրա որևէ գործընկերոջ վճարունակ չլինելու կամ լուծարման ժամանակ:

Սույն պայմանները, որպես կանոն, չեն տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, և համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վերանայված վարկեր

Հնարավորության դեպքում Խումբը ձգտում է վերականայել վարկերը, այլ ոչ թե բռնագանձել գրավադրված գույքը: Դա կարող է լինել վճարումների ժամկետները երկարաձգելու կամ նոր պայմաններով վարկային պայմանագրի կնքման միջոցով:

Խումբը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, ինչպիսին է հաճախորդին տրված վարկը, երբ պայմանները այն աստիճան են վերանայվել, որ այն դարձել է հիմնովին նոր վարկ, և տարբերությունը ճանաչվում է որպես ապաճանաչումից օգուտ կամ վնաս այն չափով, որքանով արժեզրկումից կորուստը դեռ չի ճանաչվել: Նոր ճանաչված վարկերը ակնկալվող վարկային կորուստների չափման նպատակով դասակարգվում են 1-ին փուլում, քանի դեռ նոր վարկը չի համարվում ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI): Երբ Խումբը գնահատում է՝ արդյոք պետք է ապաճանաչել հաճախորդին տրված վարկը թե ոչ, հաշվի է առնում հետևյալ գործոնները՝

- վարկի արժույթի փոփոխությունը,
- վարկի գործընկերոջ փոփոխությունը,
- եթե փոփոխությունը այնպիսին է, որ գործիքը այլևս չի համապատասխանի SPPI չափանիշին:

Եթե փոփոխությունը չի հանգեցնում զգալիորեն տարբերվող դրամական հոսքերի, փոփոխությունը չի բերում ապաճանաչման: Հիմք ընդունելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (EIR) զեղչված դրամական հոսքերի փոփոխությունը, Խումբը հաշվառում է փոփոխությունից օգուտը կամ վնասը՝ ներկայացնելով այն ֆինանսական արդյունքների մասին ֆինանսական հաշվետվությունում որպես տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով (EIR), այն չափով, որքանով արժեզրկումից վնասը դեռ չի հաշվառվել:

Այն փոփոխությունների համար, որոնք չեն հանգեցնում ապաճանաչման, Խումբը նաև վերագնահատում է, թե արդյոք եղել է վարկային ռիսկի զգալի աճ կամ արդյոք ակտիվները պետք է դասակարգվեն որպես արժեզրկված:

Երբ ակտիվը փոփոխության արդյունքում դասակարգվում է որպես արժեզրկված, այն պետք է մնա 3-րդ փուլում: Որպեսզի վերակազմավորված վարկը վերադասակարգվի 3-րդ փուլից, պետք է բավարարվեն ստորև նշված պայմանները.

1. Ամսական վճարումների գրաֆիկով վարկերի դեպքում, ժամկետանց գումարները ամբողջությամբ վճարվել են, մայր գումարի և տոկոսների 3 անընդմեջ վճարումներ կատարվել են `փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան.
2. Ճկուն վճարման գրաֆիկով վարկերի դեպքում, ժամկետանց գումարներ ամբողջությամբ վճարվել են, այնուհետև մայր գումարի և տոկոսների հերթական վճարումները կատարվել են նվազագույնը 6 ամիս փորձաշրջանի համար `փոփոխված վճարման ժամանակացույցի համաձայն, և 7 օրից ավել ժամկետանց օրեր չկան:

IBOR-ի բարեփոխման համատեքստում շատ ֆինանսական գործիքներ արդեն փոփոխվել են կամ կփոփոխվեն, քանի որ դրանք անցում են կատարում IBOR-ից RFR-ների: Ֆինանսական գործիքի տոկոսադրույքի փոփոխումից բացի, անցման պահին ֆինանսական գործիքի պայմաններում կարող են կատարվել այլ փոփոխություններ: Տոկոսադրույքի IBOR-ից RFR փոփոխությունը արտացոլելու համար ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների դեպքում Խումբը նախ օգտվում է կիրառական մեղմացումներից, ինչպես նկարագրված է Ծանոթագրություն 3-ում: Երկրորդ, ցանկացած փոփոխության համար, որը չի դիտարկվում որպես կիրառական մեղմացում, Խումբը կիրառում է դատողություն՝ գնահատելու, թե արդյոք փոփոխությունները էական են, և եթե այդպես է, ապա ֆինանսական գործիքը ապաճանաչվում է, և նոր ֆինանսական գործիք է ճանաչվում: Եթե փոփոխությունները էական չեն, Խումբը ճշգրտում է ֆինանսական գործիքի համախառն հաշվեկշռային արժեքը կիրառական մեղմացում չհամարվող փոփոխությունների ներկա արժեքով՝ զեղչված վերանայված EIR-ով:

Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների ապաճանաչումը

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելի դեպքերում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրով, ինչպես նաև,
- Խումբը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ և պարտավորությունների ապաճանաչումը (շարունակություն)

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, ո՞չ փոխանցել և ո՞չ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը, ակտիվը ճանաչվում է այնքանով, որքանով Խումբը շարունակում է մասնակցություն ունենալ տվյալ ակտիվում: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և փոխհատուցման առավելագույն գումար, որը կարող է պահանջվել Խմբից:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով վաճառված օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ գործիքներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Դուրսգրում

Ֆինանսական ակտիվները մասամբ կամ ամբողջությամբ դուրս են գրվում միայն այն ժամանակ, երբ Խումբը դադարեցրել է վերականգնումը՝ կապված գրավի իրացման կամ դրա բռնագանձման ցածր հավանականությամբ: Եթե դուրս գրվող գումարը գերազանցում է կուտակված կորուստների պահուստը, տարբերությունը նախ ավելացվում է պահուստին, որը այնուհետև կիրառվում է համախառն հաշվեկշռային արժեքի հանդեպ: Բոլոր հետագա վերականգնումները թղթակցում են վարկային կորուստներից ծախսերի հետ: Դուրսգրումը հանդիսանում է ապաճանաչման դեպք:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ լրանում է դրա գործողության ժամկետը:

Եթե նույն վարկատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն փոփոխված են նախորդի համեմատ, նման փոխարինումը կամ փոփոխությունը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը արտացոլվում է շահույթում կամ վնասում:

Հարկում

Շահութահարկի գծով ընթացիկ ծախսը հաշվարկվում է ՀՀ օրենսդրության համաձայն:

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ հարկի այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միավորներին կամ ուղղակիորեն կապիտալում ճանաչված՝ բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն կապիտալում:

Ընթացիկ հարկը ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա ակնկալվող շահութահարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, ինչպես նաև նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ չեն ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար՝ գուդվիլ, որը չի նվազեցվում հարկային նպատակներով, ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչում, որոնք ազդեցություն չունեն ոչ հաշվապահական, ոչ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև այն դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող ժամանակավոր տարբերություններ, որտեղ մայր ընկերությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության հակադարձումը, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի մոտ ապագայում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Հարկում (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Խումբը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջինները հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր հարկային տարբերությունները:

Հիմնական միջոցներ

Սկզբնական ճանաչման ժամանակ հիմնական միջոցները արտացոլվում են սկզբնական արժեքով առանց ամենօրյա սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ իրավիճակների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են, որ այդպիսի ակտիվների արժեքը, հնարավոր է, որ չի փոխհատուցվի:

Փաստացի արժեքով սկզբնական ճանաչումից հետո հողը, շենքերը և փոխադրամիջոցները արտացոլվում են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունն ու արժեզրկումից կուտակված վնասները: Վերագնահատումն իրականացվում է բավարար պարբերականությամբ, որպեսզի վերագնահատված ակտիվի իրական արժեքը էականորեն չտարբերվի դրա հաշվեկշռային արժեքից:

Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը բացառվում է՝ միաժամանակ նվազեցվելով ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից, և ստացված գումարը վերահաշվարկվում է՝ հաշվի առնելով ակտիվի վերագնահատված գումարը: Վերագնահատման արժեքի աճը արտացոլվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների կազմում, եթե այն տվյալ ակտիվի արժեքի նախորդ նվազման վերականգնում չէ, որը նախկինում արտացոլվել էր ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Այս դեպքում ակտիվի արժեքի աճը վերագրվում է ֆինանսական արդյունքներին: Վերագնահատումից արժեքի նվազումը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ նախկինում հիմնական միջոցների վերագնահատման պահուստում արտացոլված նույն ակտիվի գծով արժեքի աճի հաշվին այդպիսի նվազեցման անմիջական հաշվանցմանը:

Ակտիվի օտարման դեպքում վերագնահատման պահուստում ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ:

Ակտիվի մաշվածության հաշվարկումը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար մատչելի է դառնում: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով՝ ակտիվների ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում՝

	Տարի
Շենքեր	50
Սարքավորումներ	5-10
Փոխադրամիջոցներ	7-10
Այլ	7-10

Վարձակալության բարելավումները կապիտալացվում և ամորտիզացվում են վարձակալության ժամկետի և դրանց օգտակար ծառայության ժամանակահատվածից նվազագույնով՝ գծային հիմունքներով:

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության հաշվարկման մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում:

Վերանորոգումների և արդիականացման հետ կապված ծախսումները ծախսագրվում են կատարման ժամանակ և ներառվում են այլ գործառնական ծախսերի կազմում, բացառությամբ, եթե դրանք որակավորվում են որպես կապիտալացվող:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Գուդվիլ

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը սկզբնապես ճանաչվում է Խմբի կողմից փոխանցված հատուցման և ձեռքբերված որոշելի զուտ ակտիվների և ստանձնած պարտավորությունների տարբերության արժեքով: Դուստր ընկերության ձեռքբերման ժամանակ առաջացող գուդվիլը ճանաչվում է գուդվիլի և ոչ նյութական ակտիվների կազմում: Ասոցիացված կազմակերպության ձեռքբերման ժամանակ առաջացող գուդվիլը արտացոլվում է ասոցիացված կազմակերպություններում կատարված ներդրումների կազմում: Սկզբնական ճանաչումից հետո գուդվիլը հաշվառվում է սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

Գուդվիլը գնահատվում է արժեզրկման տեսանկյունից յուրաքանչյուր տարի կամ ավելի հաճախ, եթե ինչ-որ իրադարձություններ կամ հանգամանքների փոփոխություններ վկայում են հաշվեկշռային արժեքի արժեզրկման մասին:

Ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում ձեռքբերված գուդվիլը, արժեզրկման տեսանկյունից գնահատելու նպատակով, ձեռքբերման ամսաթվից սկսած բաշխվում է Խմբի դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերի միջև, որոնք ակնկալվում է, որ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում կստանան օգուտներ՝ անկախ այն բանից, թե ձեռքբերված կազմակերպության այլ ակտիվներն ու պարտականությունները վերագրվում են այդ դրամաստեղծ միավորների կամ դրամաստեղծ միավորների խմբերին, թե՝ ոչ: Յուրաքանչյուր դրամաստեղծ միավոր կամ դրամաստեղծ միավորների խումբ, որին վերաբերում է գուդվիլը, պետք է.

- իրենից ներկայացնի ներքին կառավարման նպատակով գուդվիլի վերլուծության տեսանկյունից Խմբի կազմում առավել ցածր մակարդակի վարչական միավոր,
- մինչ միավորումը չգերազանցի գործառնական սեգմենտը՝ համաձայն ՖՀՄՍ 8 *«Գործառնական սեգմենտներ»* ստանդարտի սահմանման:

Գուդվիլի արժեզրկումը գնահատվում է դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) փոխհատուցվող արժեքի հիման վրա: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են, եթե դրամաստեղծ միավորի (կամ դրամաստեղծ միավորների խմբի) հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող արժեքը: Գուդվիլի արժեզրկումից կորուստները հետագայում չեն հակադարձվում:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված վնասները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 7-ից 10 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են ոչ նյութական ակտիվի արժեզրկման հայտանիշեր: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են, նվազագույնը՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ

Խումբը դասակարգում է ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) որպես վաճառքի համար պահվող, եթե դրա հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի, այլ ոչ թե շարունակական օգտագործման միջոցով: Դրա համար ակտիվը (կամ օտարման խումբը) պետք է իր ներկա վիճակում պատրաստ լինի անմիջապես վաճառքի համար՝ միայն այդպիսի ակտիվների (կամ օտարման խմբերի) վաճառքների համար բնորոշ և ընդունված պայմաններով, իսկ դրա վաճառքը պետք է լինի բարձր հավանական:

Որպեսզի վաճառքը ունենա բարձր հավանականություն, Խմբի ղեկավարությունը պետք է հստակորեն նպատակադրված լինի վաճառել ոչ ընթացիկ ակտիվը (կամ օտարման խումբը) և պետք է ձեռնարկի գնորդ գտնելու և վաճառքի պլանը կատարելու ակտիվ ծրագիր: Ավելին, ակտիվը (կամ օտարման խումբը) իր ընթացիկ իրական արժեքի համեմատ ողջամիտ գնով պետք է ակտիվորեն առաջարկվի շուկայում վաճառքի համար, բացի այդ պետք է ակնկալվի, որ դասակարգման ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում վաճառքը կհամարվի ավարտված:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Վաճառքի համար պահվող դասակարգված ակտիվներ (շարունակություն)

Խումբը վաճառքի համար պահվող ակտիվը (կամ օտարման խումբը) չափում է հաշվեկշռային արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված իրական արժեքից նվազագույնով: Խումբը ճանաչում է արժեզրկումից վնասներ՝ ակտիվի (կամ օտարման խմբի) արժեքի սկզբնական կամ հետագա՝ մինչև վաճառքի համար անհրաժեշտ ծախսումներով նվազեցված իրական արժեքը դուրսգրումների միջոցով, եթե իրադարձությունները կամ պայմանների փոփոխությունները վկայում են, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է արժեզրկված լինել:

Բռնագանձված ակտիվներ

Որոշ դեպքերում ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրական արժեքից՝ հանած վաճառքի գծով ծախսերը, նվազագույնով:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի գործող իրավական կամ կառուցողական պարտավորություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Կենսաթոշակի և աշխատակիցներին այլ հատուցումների գծով պարտավորություններ

Խումբը չունի կենսաթոշակային պայմանավորվածություններ և նշանակալի հետաշխատանքային հատուցումներ:

Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը և չմարվող արտոնյալ բաժնետոմսերը, որոնք դիսկրետցիոն շահաբաժինների իրավունք են տալիս, դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորման դեպքերի, արտացոլվում են սեփական կապիտալում՝ որպես թողարկման գծով մուտքերից նվազեցում: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը ճանաչվում է որպես էմիսիոն եկամուտ:

Հետգնված բաժնետոմսեր

Երբ Բանկը կամ իր դուստր կազմակերպությունները գնում են Բանկի բաժնետոմսերը, վճարված փոխհատուցումը, ներառյալ գործարքի հետ կապված ծախսերը և հանած շահութահարկը, նվազեցվում է ընդհանուր կապիտալից՝ որպես հետգնված բաժնետոմսեր, մինչև դրանց չեղյալ հայտարարումը կամ վերաթողարկումը: Երբ նման բաժնետոմսերը հետագայում վաճառվում կամ վերաթողարկվում են, ստացված փոխհատուցումը ներառվում է սեփական կապիտալում: Հետգնված բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված գնով:

Շահաբաժիններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ շահաբաժինները նվազեցվում են սեփական կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն միայն այն դեպքում, երբ դրանք հայտարարվել են մինչև հաշվետու ամսաթիվը ներառյալ: Մինչև հաշվետու ամսաթիվը առաջարկված կամ հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը առաջարկված կամ հայտարարված շահաբաժինները բացահայտվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվներ

Հավատարմագրային կառավարման շրջանակներում գտնվող ակտիվները չեն արտացոլվում Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, քանի որ չեն հադիսանում Խմբի ակտիվներ:

Սեգմենտային հաշվետվություն

Խմբի սեգմենտային հաշվետվությունը հիմնված է հետևյալ գործառնական սեգմենտների վրա. մանրածախ բանկային գործունեություն, կորպորատիվ բանկային գործունեություն, գյուղատնտեսություն, առևտրային և ներդրումային բանկային գործունեություն և ֆինանսական վարձակալություն:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական:

Եկամուտների և ծախսերի ճանաչումը

Եկամուտները ճանաչվում են, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կներհոսեն Խումբ, և այդ եկամուտները հնարավոր է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն նախքան եկամտի ճանաչումը.

Տոկոսային և համանման եկամուտ և ծախս

Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվների գծով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվների համախառն արժեքի նկատմամբ, բացառությամբ արժեզրկված ակտիվների: Արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով զեղչված ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ կիրառելի դեպքերում՝ ավելի կարճ ժամանակահատվածում, ճշգրտորեն զեղչվում են մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և միջնորդավճարների գծով կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից միջոցների ելքերի կամ մուտքերի գնահատումների վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվը դառնում է արժեզրկված, Խումբը հաշվարկում է տոկոսային եկամուտը՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ֆինանսական ակտիվը վերականգնվում է և այլևս արժեզրկված չէ, Խումբը վերադառնում է համախառն հիմքով տոկոսային եկամտի հաշվարկին:

Ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների համար Խումբը տոկոսային եկամուտը հաշվարկում է՝ հաշվարկելով վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) և կիրառելով այն ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Վարկային ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը (EIR) այն տոկոսադրույքն է, որով սկզբնական ճանաչման ժամանակ զեղչվում են ակնկալվող ապագա դրամական հոսքերը (ներառյալ՝ վարկային կորուստները)՝ ձեռք բերված կամ ստեղծված արժեզրկված (POCI) ֆինանսական ակտիվների ամորտիզացված արժեքին:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բոլոր ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով պայմանագրային տոկոսադրույքը, և ներկայացվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ «Այլ տոկոսային եկամուտներում»:

Հաճախորդներին տրված վարկերի տույժերից տոկոսային եկամուտը ճանաչվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքը և ներկայացվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ «Այլ եկամուտ» հոդվածում:

Միջնորդավճարների գծով եկամուտ

Հաճախորդներին մատուցվող տարբեր ծառայություններից Խումբը ստանում է միջնորդավճարների գծով եկամուտ: Միջնորդավճարների գծով եկամուտը կարող է բաժանվել հետևյալ երկու խմբի.

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Եկամուտների և ծախսերի ճանաչումը (շարունակություն)

Միջնորդավճարների գծով եկամուտ, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից

Միջնորդավճարների գծով եկամուտը, որը ստացվում է որոշակի ժամանակահատվածում մատուցվող ծառայություններից, հաշվեգրվում է այդ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ համապատասխան կատարողական պարտավորությունները բավարարված են: Նման հոդվածները ներառում են միջնորդավճարների գծով եկամուտը ակտիվների կառավարման, պահառության և կառավարման ու խորհրդատվական այլ ծառայությունների համար միջնորդավճարները: Վարկերի տրամադրման գծով պարտավորության դիմաց միջնորդավճարները, եթե վարկի օգտագործման հավանականությունը բարձր է, և վարկերի հետ կապված այլ միջնորդավճարները հետաձգվում են (վարկերի տրամադրման հետ կապված ցանկացած լրացուցիչ ծախսումների հետ միասին) և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում:

Միջնորդավճարների գծով եկամուտ՝ մատուցված միջնորդային ծառայությունների գծով

Երրորդ անձի անունից գործարքի բանակցություններն անցկացնելու և մասնակցելու համար (օրինակ՝ երբ Խմբի կատարողական պարտավորությունն է բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի առքը, կամ ընկերության առք ու վաճառքի համաձայնագրի կնքումը) ստացված կոմիսիոն վճարները ճանաչվում են այդ գործարքի ավարտից հետո:

Կոմիսիոն վճարները կամ դրանց բաղկացուցիչ մասերը, որոնք կապված են որոշակի կատարողական պարտավորությունների հետ, ճանաչվում են համապատասխան ցուցանիշների բավարարումից հետո: Երբ պայմանագրով նախատեսված է փոփոխական փոխհատուցում, միջնորդավճարների գծով եկամուտը ճանաչվում է միայն այն չափով, որքանով որ հավանական է, որ ճանաչված կուտակային եկամտի զգալի մասի հակադարձում տեղի չի ունենա, մինչև հետագայում լուծվի փոփոխական փոխհատուցման հետ կապված անորոշությունը:

Հաճախորդների հավատարմության ծրագրեր

Խումբն առաջարկում է հաճախորդների հավատարմության մի շարք ծրագրեր: Նման ծրագրերի հաշվապահական հաշվառումը տարբերվում է՝ կախված նրանից, թե ով է ճանաչվում որպես հաճախորդ, և/կամ Խումբը որպես գործակալ, թե որպես պայմանագրի գլխավոր կողմ է հանդես գալիս: Միավորներով իրականացված ծրագրերի դեպքում Խումբը, ընդհանուր առմամբ, հաճախորդների կողմից կուտակված և չիրացված միավորների գծով պարտավորություն է ճանաչում, իրացվելու դեպքում՝ ճանաչում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում: Պլաստիկ քարտերով գործառնություններից քեշբեքերը նվազեցնում են միջնորդավճարների գծով եկամուտը:

Շահաբաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, երբ Խմբի՝ վճարումը ստանալու իրավունքը սահմանվում է:

Արտարժույթի վերահաշվարկ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը Խմբի գործառնական ու հաշվետվությունների ներկայացման արժույթն է: Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթի՝ գործարքի օրվա միջին շուկայական փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված գործարքների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Արտարժութային գործառնություններից օգուտներ/(վնասներ)՝ արտարժույթի վերագնահատում» հոդվածում: Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով, վերագնահատման ժամանակ կիրառվում է սկզբնական գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքը:

Գործարքի ամսաթվի դրությամբ պայմանագրային փոխարժեքի և ԿԲ փոխարժեքի տարբերությունը ներառվում է եկամտի կազմում՝ նվազեցված արտարժույթով կատարված գործարքի գծով ծախսերը: 2021 և 2020 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ԿԲ-ի կողմից հայտարարված փոխարժեքը կազմում էր 1 ԱՄՆ դոլարի համար 480.14 և 522.59, 1 Եվրոյի համար 542.61 և 641.11 ՀՀ դրամ համապատասխանաբար:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

Խմբի աշխատակիցները (ներառյալ ղեկավարները) վարձատրություն են ստանում բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների տեսքով: Այսպիսով, աշխատակիցները ծառայությունների մատուցման համար վարձատրություն են ստանում բաժնային գործիքներով (բաժնային գործիքներով մարվող գործարքներ):

Բաժնային գործիքներով մարվող գործարքներ

Բաժնային գործարքներով մարվող գործարքների արժեքը որոշվում է իրական արժեքի հիման վրա այն ամսաթվի դրությամբ, երբ վարձատրությունը տրամադրվում է, համապատասխան գնահատման մոդելի կիրառմամբ, որի հետագա մանրամասները տրված են Ծանոթագրություն 23-ում:

Այդ ծախսը ճանաչվում է անձնակազմի գծով ծախսերում՝ սեփական կապիտալի համապատասխան աճի հետ միասին այն ժամանակաշրջանի ընթացքում, որում ծառայությունը մատուցվել է և անհրաժեշտության դեպքում, կատարողական պայմանները կատարվել են (տրամադրման ժամանակաշրջանում): Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ մինչև իրավունքի առաջացման ամսաթիվը ճանաչված կուտակային ծախսը արտացոլում է իրավունքի առաջացման ամսաթվի լրանալու աստիճանը և բաժնային գործիքների նկատմամբ իրավունքների առաջացման՝ Խմբի լավագույն գնահատականը: Ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մասին համախմբված հաշվետվության ծախսը կամ կրեդիտը ներկայացնում է այդ ժամանակաշրջանի սկզբում և վերջում ճանաչված կուտակային ծախսի շարժը:

Իրավունքի ստացման ամսաթվի դրությամբ իրական արժեքը որոշելիս ծառայության հետ կապված պայմանները և ոչ շուկայական պայմանները հաշվի չեն առնվում, սակայն պայմանների բավարարման հավանականությունը հաշվի է առնվում բաժնային գործիքների քանակի որոշման համար, որոնց գծով Խմբի լավագույն գնահատականի համաձայն իրավունքները կառաջանան:

Շուկայական պայմաններն արտացոլվում են շնորհման ամսաթվի իրական արժեքում: Վճարումների հետ կապված ցանկացած այլ պայմաններ, որոնք ներառված չեն ծառայության պահանջներում, համարվում են իրավունք չառաջացնող պայմաններ: Իրավունք չառաջացնող պայմաններն արտացոլվում են վարձատրության իրական արժեքում և հանգեցնում են վարձատրության գծով ծախսի անհապաղ ճանաչմանը, եթե չկան ծառայության կամ կատարողականի հետ կապված այլ պայմաններ:

Ծախս չի ճանաչվում այն վարձատրությունների համար, որոնք, ի վերջո, չեն առաջացնում իրավունք, քանի որ շուկայական պայմանները և/կամ ծառայության պայմանները չեն կատարվել: Այն դեպքում, երբ վարձատրությունը ներառում է շուկայական կամ իրավունք չառաջացնող պայման, գործարքները համարվում են կատարված՝ անկախ նրանից, թե շուկայական կամ իրավունքի առաջացման պայմանը բավարարված է թե ոչ, պայմանով, որ կատարողական և/կամ ծառայության բոլոր մյուս պայմանները բավարարված են:

Երբ բաժնային գործիքներով մարվող գործարքի պայմանները փոփոխվում են, ճանաչված նվազագույն ծախսը չփոփոխված գործարքի իրական արժեքն է տրամադրման ամսաթվի դրության, պայմանով, որ պահպանվում են գործարքի իրավունքի առաջացման սկզբնական պայմանները: Լրացուցիչ ծախսը, որը չափվում է փոփոխման ամսաթվի դրությամբ, ճանաչվում է ցանկացած փոփոխության համար, որը մեծացնում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքի ընդհանուր գումարի իրական արժեքը կամ այլ կերպ ձեռնտու է աշխատողին: Եթե գործարքը չեղարկվում է կազմակերպության կամ գործընկերոջ կողմից, վարձատրության իրական արժեքի ցանկացած մնացած տարր ճանաչվում է ծախս անմիջապես շահույթի կամ վնասի միջոցով:

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել

Ստորև ներկայացված են նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Խումբը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 17 Ապահովագրության պայմանագրեր

2017թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է համապարփակ նոր հաշվապահական ստանդարտ ապահովագրության պայմանագրերի ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման վերաբերյալ: Ուժի մեջ մտնելուց հետո, ՖՀՄՍ 17-ը փոխարինում է 2005 թվականին հրապարակված ՖՀՄՍ 4-ին: ՖՀՄՍ 17-ը վերաբերում է բոլոր տեսակի ապահովագրության պայմանագրերին՝ կյանքի ապահովագրություն, ոչ կյանքի ապահովագրություն, ուղղակի ապահովագրություն և վերաապահովագրություն՝ անկախ դրանք թողարկող կազմակերպությունների տեսակից, ինչպես նաև որոշ տեսակի երաշխիքների և ֆինանսական գործիքներին՝ կամովի մասնակցության տարրերով:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Կիրառման որոշակի բացառություններ են գործելու: ՖՀՄՍ 17-ը նոր պահանջներ է սահմանում բանկային գործիքների համար, որ ունեն ապահովագրության տարրեր, և օգնում է որոշել, թե արդյոք գործիքը կամ տարրերը պետք է հաշվառվի ՖՀՄՍ 9-ի թե ՖՀՄՍ 17-ի համաձայն:

Ապահովագրական ծածկույթ առաջարկող վարկային քարտեր և նմանատիպ պրոդուկտներ. թողարկող կազմակերպությունների մեծ մասը շարունակելու է այդ գործիքները նույն կերպ՝ ՖՀՄՍ 9-ի համաձայն հաշվառել: ՖՀՄՍ 17-ը չի տարածվում ապահովագրության պայմանագրի սահմանմանը համապատասխանող վարկային քարտերի և վարկավորման և վճարման այլ նմանատիպ պայմանագրերի վրա, որոնք համապատասխանում են ապահովագրության պայմանագրի սահմանմանը, միայն և միայն այն դեպքում, երբ ընկերությունը չի արտացոլում անհատ հաճախորդի հետ կապված ապահովագրության ռիսկը այդ հաճախորդի հետ պայմանագրի գինը սահմանելիս:

Երբ ապահովագրական ծածկույթ է տրամադրվում վարկային քարտի պայմանագրային պայմանների հետ մեկտեղ, թողարկողը պետք է.

- Տարանջատի ապահովագրական ծածկույթի տարրը և կիրառի ՖՀՄՍ 17-ը:
- Պայմանագրի այլ տարրերի նկատմամբ կիրառի այլ համապատասխան ստանդարտ (ինչպիսիք են ՖՀՄՍ 9, ՖՀՄՍ 15 կամ ՀՀՄՍ 37):

Վարկային պայմանագրերը, որ համապատասխանում են ապահովագրության սահմանմանը, սակայն սահմանափակում են ապահովագրվող դեպքերի փոխհատուցումը ապահովադրի կողմից վճարվող գումարի չափով. նման վարկեր թողարկողները (օրինակ՝ վարկ, որ ներվում է մահվան դեպքում) կարող են ընտրություն կատարել և կիրառել կամ ՖՀՄՍ 17-ը, կամ *«Ֆինանսական գործիքներ»* ՖՀՄՍ 9-ը: Ընտրությունն արվում է ամբողջ պորտֆելի համար և փոփոխության ենթակա չէ:

ՖՀՄՍ 17-ը ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և, և պահանջում է բացահայտել համադրելի տեղեկատվություն: Հնարավոր է ստանդարտի կիրառումը նշված ամսաթվից շուտ, եթե կազմակերպությունն արդեն կիրառում է նաև ՖՀՄՍ 9 ու ՖՀՄՍ 15-ը ՖՀՄՍ 17-ը կիրառելուց առաջ:

Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 17-ի ազդեցությունը իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 ստանդարտում փոփոխություններ: Պարտավորությունների դասակարգում՝ որպես ընթացիկի և ոչ ընթացիկի

2020 թվականի հունվարին, ՀՀՄՍ Խորհուրդը հաստատել է ՀՀՄՍ 1 ստանդարտի պարագրաֆներ 69-ից 76-ում փոփոխությունները՝ հստակեցնելով պարտավորությունները ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունը հստակեցնում է.

- Ի՞նչ է նշանակում վճարումը հետաձգելու իրավունք,
- Որ տարկետման իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- Որ դասակարգման վրա չի ազդում այն հավանականությունը, որ կազմակերպությունը կկիրառի իր տարկետման իրավունքը,
- Որ միայն այն դեպքում, եթե փոխարկելի պարտավորության մեջ ներկառուցված ածանցյալ գործիքն ինքնին բաժնային գործիք է, պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետադարձ: Խումբը ներկայումս գնահատում է այն ազդեցությունը, որ փոփոխությունները կունենան ընթացիկ պրակտիկայի վրա, և արդյոք առկա վարկային համաձայնագրերը կարող են պահանջել վերանայում:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ – ՖՀՄՍ 3-ի փոփոխություններ

2020թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն թողարկել է փոփոխություններ ՖՀՄՍ 3-ում *«Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»* – Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին հղումներ: Փոփոխությունների նպատակն է 1989թ. թողարկված *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներին»* հղումը փոխարինել 2018թ. մարտին թողարկված *«Ֆինանսական հաշվետվությունների հայեցակարգային հիմունքներին»* հղումով՝ առանց պահանջների նշանակալի փոփոխության:

Խորհուրդը նաև ավելացրել է ՖՀՄՍ 3-ի ճանաչման սկզբունքների բացառություն՝ պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գծով առաջացող հնարավոր «2-րդ օրվա» օգուտներից կամ վնասներից խուսափելու նպատակով, որոնք կգտնվեին ՀՀՄՍ 37-ի կամ ՖՀՄՄԽ 21 *«Պարտադիր վճարներ»-ի* շրջանակներում, եթե ճանաչվեին առանձին:

Միաժամանակ Խորհուրդը որոշել է պարզաբանել ՖՀՄՍ 3-ի պայմանական ակտիվների համար առկա ուղեցույցները, որոնց վրա *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներին»* հղման փոխարինումը ազդեցություն չի ունենա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում առաջընթաց: Չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Խմբի վրա:

Հիմնական միջոցներից մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

2020թ. ՀՀՄՍԽ-ն հրապարակել է Փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում՝ *«Հիմնական միջոցներից մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը»*, որի համաձայն ընկերություններին չի թույլատրվում Հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Ընկերությունը վաճառքից ստացված մուտքերն ու արտադրության ծախսերը պետք է ճանաչի Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Այն պիտի կիրառվի հետադարձ այն հիմնական միջոցների նկատմամբ, որ պատրաստ են եղել հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, այն դեպքում, երբ կազմակերպությունը առաջին անգամ է կիրառում այս փաստաթուղթը:

Չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Խմբի վրա:

Անբարենպաստ պայմանագրեր – Պայմանագրի կատարման ծախսեր – ՀՀՄՍ 37-ի փոփոխություններ

2020 թվականի մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 37-ում՝ հստակեցնելու համար, թե որ ծախսերը պետք է ներառի կազմակերպությունը՝ գնահատելիս՝ արդյոք պայմանագիրը անբարենպաստ է:

Փոփոխությունները կիրառում են «ուղղակիորեն կապված ծախսերի մոտեցում»: Ծախսերը, որոնք ուղղակիորեն վերաբերում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառում են ինչպես հավելյալ ծախսերը, այնպես էլ ծախսերի բաշխումն ուղղակիորեն կապված պայմանագրային գործունեության հետ: Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և բացառվում են, եթե դրանք ուղղակիորեն չեն բխում պայմանագրից:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2022 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը կկիրառի այս փոփոխությունները այն պայմանագրերի նկատմամբ, որոնց համար դեռևս չի կատարել իր բոլոր պարտավորությունները, այն հաշվետու ժամանակաշրջանի սկզբում, երբ առաջին անգամ կիրառում է փոփոխությունները:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

ՖՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրում. դուստր կազմակերպությունը՝ որպես Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրող

Որպես 2018-2020թթ. ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումների գործընթացի մաս, ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՖՀՄՍ 1-ի՝ *Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրում*, փոփոխությունները: Փոփոխությունները թույլ են տալիս դուստր ընկերությանը, որն ընտրում է կիրառել ՖՀՄՍ 1-ի Դ16 (Ա) կետը, ընդհանուր փոխարժեքային տարբերությունը չափել՝ օգտագործելով մայր ընկերության կողմից ներկայացված արժեքները: Փոփոխությունները կիրառելի են նաև այն ասոցիացված ընկերությունների կամ համատեղ ձեռնարկությունների համար, որոնք ընտրում են կիրառել ՖՀՄՍ 1-ի Դ16Ա կետը:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Հնարավոր է ստանդարտի կիրառումը նշված ամսաթվից շուտ:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ – Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար «10 տոկոս» թեսթում ներառվող վճարներ

Որպես 2018-2020թթ. ՖՀՄՍ ստանդարտների տարեկան բարելավումների գործընթացի մաս, ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները: Փոփոխությունները պարզաբանում են այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ էության տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն նրանց, որոնք վճարվում կամ ստացվում են փոխառուի և փոխատուի միջև, ներառյալ երրորդ կողմի անունից փոխառուի կամ փոխատուի կողմից վճարված կամ ստացված վճարները: Կազմակերպությունը կիրառում է փոփոխությունը այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար:

Փոփոխությունն ուժի մեջ է մտնում 2022թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է: Խումբը կկիրառի փոփոխությունները այն համախմբված ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք ձևափոխված կամ փոխանակված են կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման սկսվող կամ դրան հաջորդող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար, և չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում

2021թ. փետրվարին ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՀՀՄՍ 8-ի փոփոխություններ, որտեղ ներկայացնում է հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանումը: Փոփոխությունները հստակեցնում են հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների, հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման միջև տարանջատումը: Դրանք նաև պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպություններն օգտագործում չափման մեթոդները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառելի են այդ ամսաթվին կամ այդ ժամանակաշրջանի սկսվելուց հետո իրականացող հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է:

Չի ակնկալվում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ. փետրվարին ՀՀՄՍԽ-ն թողարկել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և *«Էականության դատողությունների կատարում»* ՖՀՄՍ Գործնական Ցուցումներ 2-ում, որտեղ ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողություններ: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումներ՝ հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականությունների բացահայտման պահանջը փոխարինելով հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականությունների բացահայտման պահանջով, և ավելացնելով ուղեցույց, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության սկզբունքը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիր (շարունակություն)

Ստանդարտներ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել (շարունակություն)

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Քանի որ Գործնական Ցուցումներ 2-ի փոփոխությունները հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույցներ են, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Խումբը շարունակում է գնահատել փոփոխությունների ազդեցությունը Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա:

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ

Դատողություններ

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում ղեկավարությունը կատարել է հետևյալ դատողությունները, բացառությամբ գնահատումների, որոնք առավելագույն ազդեցություն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա:

Գնահատումների անորոշություն

Խմբի կողմից հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված գումարների վերաբերյալ ղեկավարությունը կատարել է հետևյալ առավել կարևոր գնահատումները և դատողությունները.

Հողի, շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում (Ծանոթագրություն 32)

Հիմնական միջոցների իրական արժեքը որոշվում է շուկայական համեմատական մեթոդով: Այսինքն, գնահատողի կողմից իրականացված գնահատումը հիմնված է շուկայական գործարքների գների վրա՝ էականորեն ճշգրտված գույքի բնույթի, գտնվելու վայրի և պայմանների տարբերություններն արտացոլելու համար: Խումբը ներգրավում է անկախ փորձագետների իր գույքերը գնահատելու համար:

Ֆինանսական գործիքների չափումը

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար անհրաժեշտ է կիրառել դատողություններ: Լրացուցիչ տեղեկատվություն ներկայացված է Ծանոթագրություն 32-ում:

Բաժնետոմսով մարվող գործարքների արժեքը որոշվում է Բանկի բաժնետոմսերի իրական արժեքով այն ամսաթվի դրությամբ, երբ դրամաշնորհը տրամադրվում է՝ օգտագործելով համապատասխան գնահատման մոդելը: Այս մոդելների տվյալները վերցված են տեսանելի շուկաներից, որտեղ դա հնարավոր է, բայց եթե դա հնարավոր չէ, իրական արժեքները սահմանելու համար պահանջվում է դատողության որոշակի աստիճան, որի հետագա մանրամասները տրված են Ծանոթագրություն 23-ում:

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստ

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման պահուստի գնահատումը ֆինանսական ակտիվների բոլոր դասերի համար պահանջում է դատողություն, մասնավորապես՝ ապագա դրամական հոսքերի գումարի և ժամանակի և գրավի արժեքի գնահատումը՝ արժեզրկման գծով վնասների որոշման և վարկային ռիսկի զգալի աճի գնահատման ժամանակ: Այս գնահատումները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնց փոփոխությունները կարող են հանգեցնել պահուստների տարբեր մակարդակների: Խմբի՝ ակնկալվող վարկային կորուստների հաշվարկները ելնում են բարդ մոդելներից, որոնց հիմքում ընկած են մի շարք ենթադրություններ՝ փոփոխական մուտքային տվյալների ընտրության և նրանց փոխկապակցվածության վերաբերյալ:

(հազար ՀՀ դրամ)

4. Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումներ (շարունակություն)

Գնահատումների անորոշություն (շարունակություն)

ԱՎԿ մոդելների տարրերը, որոնք համարվում են հաշվապահական դատողություններ և գնահատումներ, ներառում են՝

- Վիճակագրական մոդելներ դեֆոլտի հավանականությունը (PD), դեֆոլտի դեպքում գործիքի արժեքը (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափը (LGD) խմբային հիմունքով գնահատելու համար,
- Ֆինանսական ակտիվների սեգմենտավորումը, երբ դրանց ԱՎԿ-ն հաշվարկված է խմբային հիմունքով,
- ԱՎԿ մոդելների մշակումը, ներառյալ տարբեր բանաձևերը և մուտքային տվյալների ընտրությունը,
- Մակրոտնտեսական սցենարների և տնտեսագիտական մուտքային տվյալների միջև կապվածության որոշումը, ինչպիսիք են գործազրկության մակարդակը և գրավի արժեքները, և ազդեցությունը դեֆոլտի հավանականության (PD), դեֆոլտի դեպքում գործիքի իրական արժեքի (EAD) և դեֆոլտի դեպքում կորստի չափի (LGD) վրա,
- Հեռանկարային մակրոտնտեսական սցենարների ընտրությունը և դրանց հավանականության կշիռը՝ տնտեսական տվյալները ԱՎԿ մոդելների մեջ արտացոլելու համար:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված վարկերի և ֆինանսական վարձակալության արժեզրկման գծով պահուստը կազմել է 8,319,892 հազար դրամ (2020: 13,082,663 հազ. դրամ): Մանրամասները ներկայացված են Ծանոթագրություններում 11 և 12-ում:

Վարձակալություն-լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի գնահատումը

Խումբը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալության ենթադրվող տոկոսադրույքը, հետևաբար, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները չափելու համար այն օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը (IBR): Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը (IBR) այն տոկոսադրույքն է, որը Խումբը պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Հետևաբար, լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն (IBR) արտացոլում է այն, ինչ Խումբը «պետք է վճարեր», որը պահանջում է գնահատել, երբ դիտարկվող տոկոսադրույքներ մատչելի չեն (օրինակ՝ դուստր ընկերությունների համար, որոնք ֆինանսավորման գործարքներ չեն կնքում) կամ երբ դրանք պետք է ճշգրտվեն՝ արտացոլելու ֆինանսական վարձակալության ժամկետներն ու պայմանները (օրինակ, երբ վարձակալությունները դուստր ընկերության գործառնական արժույթով չեն):

Խումբը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն (IBR)՝ օգտագործելով դիտարկելի ելակետային տվյալները (օրինակ՝ շուկայական տոկոսադրույքները), երբ առկա է, և պահանջվում է իրականացնել ընկերությանը բնորոշ որոշակի գնահատումներ (օրինակ՝դուստր ընկերության առանձին վարկանիշը): Լրացուցիչ մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 3-ում:

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն

Կառավարչական նպատակներով և հիմնվելով մատուցվող ապրանքների և ծառայությունների տարատեսակների վրա, Խումբը բաժանվում է հետևյալ հինգ սեգմենտների.

Մանրածախ բանկային գործունեություն	Ֆիզիկական անձանց ավանդներ, սպառողական վարկերի տրամադրում, օվերդրաֆտների, վարկային քարտերի սպասարկում և դրամական փոխանցումներ:
Կորպորատիվ բանկային գործունեություն	Կորպորատիվ և ինստիտուցիոնալ հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Գյուղատնտեսություն	Գյուղատնտեսական ոլորտի հաճախորդներին վարկերի տրամադրում, ավանդների և ընթացիկ հաշիվների բացում և սպասարկում:
Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն	Գանձապետական և ֆինանսական, ներդրումային բանկային ծառայություններ և այլ կենտրոնական գործառնություններ:
Ֆինանսական վարձակալություն	Կորպորատիվ և անհատ հաճախորդներին ֆինանսական վարձակալության գծով ծառայությունների մատուցում:

Ռեսուրսների բաշխման և գործունեության գնահատման նպատակով ղեկավարությունը հետևում է իր բիզնես միավորների գործառնական արդյունքներին առանձին-առանձին: Սեգմենտի գործունեությունը, ինչպես նկարագրված է ստորև բերված աղյուսակում, չափվում է այլ կերպ, քան համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված շահույթը կամ վնասը: Շահութահարկը կառավարվում է Խմբի մակարդակով և բաշխվում է գործառնական սեգմենտների միջև:

(հազար ՀՀ դրամ)

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

Գործառնական սեգմենտների միջև տրանսֆերային գնագոյացումը, ինչպես երրորդ կողմերի հետ գործարքներում, համապատասխանում է շուկայական պայմաններին:

2021 և 2020թթ. ընթացքում արտաքին գործընկերոջից կամ հաճախորդից ստացված և Խմբի ընդհանուր հասույթի 10% և ավելի գերազանցող հասույթով որևէ գործարք չի գրանցվել:

2021 թվականին Խումբը վերանայել է իր ներքին ֆինանսավորում տեղափոխելու մեթոդաբանությունը և նոր սեգմենտ ավելացրել՝ «Գյուղատնտեսություն»-ը՝ տարանջատելով այն «Մանրածախ» և «Կորպորատիվ» բանկային գործունեություններից:

2020 թվականի համեմատական տեղեկատվությունը վերանայվել է՝ նորացված մեթոդաբանության հիման վրա:

Ստորև նշված աղյուսակները ներկայացնում են Խմբի գործառնական սեգմենտների գծով եկամտի և շահութի, ինչպես նաև առանձին ակտիվների և պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն.

2021թ.	*Մանրածախ բանկային գործունեություն, բացի գյուղատնտեսությունից*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Գյուղատնտեսություն*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն*	*Ֆինանսական վարձակալություն*	*Ընդամենը*
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	14,995,446	11,102,191	15,002,468	2,212,028	–	**43,312,133**
Այլ տոկոսային եկամուտ	–	–	–	158,602	3,339,689	**3,498,291**
Տոկոսային ծախս	(5,260,441)	(4,791,440)	(6,326,428)	(3,612,471)	(1,304,111)	**(21,294,891)**
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս)	**9,735,005**	**6,310,751**	**8,676,040**	**(1,241,841)**	**2,035,578**	**25,515,533**
Վարկային կորուստների գծով ծախսի հակադարձում/(ծախս)	(1,009,868)	1,306,525	61,537	(254,905)	128,811	**232,100**
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս) վարկային կորուստների գծով ծախսից հետո	**8,725,137**	**7,617,276**	**8,737,577**	**(1,496,746)**	**2,164,389**	**25,747,633**
Միջնորդավճարների գծով եկամուտ	2,161,137	1,400,965	2,368,967	–	363,490	**6,294,559**
Միջնորդավճարների գծով ծախս	(925,347)	(599,859)	(824,689)	–	(160,659)	**(2,510,554)**
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	–	–	–	560,811	–	**560,811**
Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	845,259	547,942	753,312	–	(94,564)	**2,051,949**
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս	–	–	–	579,024	–	**579,024**
Այլ եկամուտ	1,160,726	752,445	1,034,464	–	76,424	**3,024,059**
Ոչ տոկոսային եկամուտ	**3,241,775**	**2,101,493**	**3,332,054**	**1,139,835**	**184,691**	**9,999,848**
Անձնակազմի գծով ծախսեր	(5,588,327)	(3,622,652)	(4,980,433)	–	(375,638)	**(14,567,050)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(968,621)	(627,912)	(863,256)	–	(34,173)	**(2,493,962)**
Այլ գործառնական ծախսեր	(763,892)	(495,195)	(680,796)	–	(67,283)	**(2,007,166)**
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,533,042)	(993,799)	(1,366,278)	–	(73,724)	**(3,966,843)**
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով ծախսեր	(37,617)	(24,386)	(33,526)	–	–	**(95,529)**
Ոչ տոկոսային ծախս	**(8,891,499)**	**(5,763,944)**	**(7,924,289)**	**–**	**(550,818)**	**(23,130,550)**
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ	**3,075,413**	**3,954,825**	**4,145,342**	**(356,911)**	**1,798,262**	**12,616,931**
Շահութահարկի գծով ծախս	(971,082)	(629,507)	(865,448)	–	(337,412)	**(2,803,449)**
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	**2,104,331**	**3,325,318**	**3,279,894**	**(356,911)**	**1,460,850**	**9,813,482**
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	102,909,919	123,931,130	114,454,029	44,086,234	31,233,067	**416,614,379**
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	73,972,127	108,981,215	80,232,006	151,339,780	31,233,067	**445,758,195**

(հազար ՀՀ դրամ)

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

2020 թ.	*Մանրածախ բանկային գործունեություն, բացի գյուղատնտեսությունից*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Գյուղատնտեսություն*	*Առևտրային և ներդրումային բանկային գործունեություն*	*Ֆինանսական վարձակալություն*	*Ընդամենը*
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	15,768,792	9,188,765	16,167,228	2,289,385	–	**43,414,170**
Այլ տոկոսային եկամուտ	–	–	–	345,576	2,330,420	**2,675,996**
Տոկոսային ծախս	(5,762,001)	(4,129,875)	(6,330,256)	(2,938,754)	(1,024,848)	**(20,185,734)**
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս)	**10,006,791**	**5,058,890**	**9,836,972**	**(303,793)**	**1,305,572**	**25,904,432**
Վարկային կորուստների գծով ծախս	(6,073,845)	(2,436,800)	(916,570)	(437,569)	(909,919)	**(10,774,703)**
Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս) վարկային կորուստների գծով ծախսից հետո	**3,932,946**	**2,622,090**	**8,920,402**	**(741,362)**	**395,653**	**15,129,729**
Միջնորդավճարների գծով եկամուտ	1,683,028	1,239,294	1,654,467	–	339,505	**4,916,294**
Միջնորդավճարների գծով ծախս	(703,501)	(355,652)	(691,563)	–	(117,892)	**(1,868,608)**
Զուտ վնաս իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	–	–	–	(132,117)	–	**(132,117)**
Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	965,974	488,344	949,581	–	(52,591)	**2,351,308**
Ասոցիացված կազմակերպության շահույթի բաժնեմաս	–	–	–	399,958	–	**399,958**
Այլ եկամուտ	615,126	310,974	604,687	–	38,672	**1,569,459**
Ոչ տոկոսային եկամուտ	**2,560,627**	**1,682,960**	**2,517,172**	**267,841**	**207,694**	**7,236,294**
Անձնակազմի գծով ծախսեր	(4,264,623)	(2,155,961)	(4,192,250)	–	(275,783)	**(10,888,617)**
Մաշվածություն և ամորտիզացիա	(929,923)	(470,118)	(914,141)	–	–	**(2,314,182)**
Այլ գործառնական ծախսեր	(777,740)	(393,183)	(764,542)	–	(37,058)	**(1,972,523)**
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(1,345,492)	(680,208)	(1,322,659)	–	(118,400)	**(3,466,759)**
Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով ծախսերի հակադարձում	20,082	10,152	19,741	–	–	**49,975**
Ոչ տոկոսային ծախս	**(7,297,696)**	**(3,689,318)**	**(7,173,851)**	**–**	**(431,241)**	**(18,592,106)**
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկ	**(804,123)**	**615,732**	**4,263,723**	**(473,521)**	**172,106**	**3,773,917**
Շահութահարկի գծով ծախս	(402,227)	(203,344)	(395,401)	–	(48,314)	**(1,049,286)**
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)	**(1,206,350)**	**412,388**	**3,868,322**	**(473,521)**	**123,792**	**2,724,631**
Տոկոսաբեր ֆինանսական ակտիվներ	92,080,611	103,524,417	107,413,529	75,146,211	25,017,394	**403,182,162**
Տոկոսակիր ֆինանսական պարտավորություններ	72,393,692	96,232,694	87,552,836	136,548,253	25,017,394	**417,744,869**

Խումբն իր հիմնական գործունեությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Բացի ֆինանսական գործիքներից, Խումբը չունի ՀՀ-ի տարածքից դուրս այլ ոչ ընթացիկ ակտիվներ:

(հազար ՀՀ դրամ)

5. Սեգմենտների վերաբերյալ տեղեկատվություն (շարունակություն)

ՖՀՄՍ 15-ի շրջանակում հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի բացվածքը ըստ սեգմենտների 2021 և 2020 թվականների դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետևյալն է.

2021 թ.	*Մանրածախ բանկային գործունեություն, բացի գյուղատնտեսությունից*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Գյուղատնտեսություն*	*Ֆինանսական վարձակալություն*	*Ընդամենը*
Միջնորդավճարների գծով եկամուտ					
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,515,067	982,145	1,356,392	–	**3,853,604**
Դրամական փոխանցումներ	263,287	170,677	234,647	–	**668,611**
Բանկային հաշվի սպասարկման վճարներ	174,347	113,023	155,382	–	**442,752**
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	–	–	436,782	–	**436,782**
Կանխիկացման ծառայություններ	103,254	66,936	92,023	–	**262,213**
Այլ	105,182	68,184	93,741	363,490	**630,597**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ	**2,161,137**	**1,400,965**	**2,368,967**	**363,490**	**6,294,559**

2020 թ.	*Մանրածախ բանկային գործունեություն, բացի գյուղատնտեսությունից*	*Կորպորատիվ բանկային գործունեություն*	*Գյուղատնտեսություն*	*Ֆինանսական վարձակալություն*	*Ընդամենը*
Միջնորդավճարների գծով եկամուտ					
Պլաստիկ քարտերի սպասարկման ծառայություններ	1,057,624	534,677	1,039,675	–	**2,631,976**
Դրամական փոխանցումներ	290,225	146,722	285,299	–	**722,246**
Բանկային հաշվի սպասարկման վճարներ	204,673	103,471	201,199	–	**509,343**
Երաշխիքների և ակրեդիտիվների թողարկում	–	388,446	–	–	**388,446**
Կանխիկացման ծառայություններ	78,153	39,510	76,827	–	**194,490**
Այլ	52,353	26,468	51,467	339,505	**469,793**
Ընդամենը հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ	**1,683,028**	**1,239,294**	**1,654,467**	**339,505**	**4,916,294**

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները ներառում են հետևյալ հոդվածները.

	2021թ.	*2020թ.*
Կանխիկ միջոցներ	17,723,893	15,507,824
ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդներ, ներառյալ պարտադիր պահուստները (չսահմանափակված մասը, Ծան. 9)	76,712,728	43,875,865
Այլ բանկերում հաշիվների մնացորդներ	2,144,660	7,084,277
Արժեզրկում	(133,293)	(69,831)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**96,447,988**	**66,398,135**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում թղթակցային հաշիվների մնացորդները ներառում են պարտադիր պահուստներ 23,850,732 հազ. դրամի չափով (2020թ.՝ 16,777,146 հազ. դրամ):

Բանկերը պարտավոր են ունենալ դեպոնացված դրամական միջոցներ (պարտադիր պահուստ) ՀՀ ԿԲ-ում ՀՀ դրամով ներգրավված գումարների 4%-ի չափով (2020: 2%) և արտարժույթով ներգրավված գումարների 18%-ի չափով (2020: 18%):

(հազար ՀՀ դրամ)

6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)

2020թ. հունիսից սկսած բանկերը պարտավոր են արտարժույթով ներգրավված գումարների 10%-ը (2020թ.՝ 10%) պահել ՀՀ դրամով որպես դեպոնացված միջոց ՀՀ ԿԲ-ում և 8% (2020թ.՝ 8%)՝ արտարժույթով:

Ավելին, արտարժույթով պահուստավորված միջոցների ելքագրումը սահմանափակված է, հետևաբար Խումբը արտարժույթով պարտադիր պահուստները դասակարգում է որպես պահանջներ բանկերի նկատմամբ (Ծանոթագրություն 9):

Դրամական միջոցների բոլոր մնացորդները վերագրված են առաջին փուլին: Տարվա ընթացում ԱՎԿ պահուստի փոփոխության վերլուծությունը հետևյալն է.

	2021թ.	*2020թ.*
ԱՎԿ պահուստ հունվարի 1-ի դրությամբ	**69,831**	**6,284**
ԱՎԿ փոփոխություն	75,414	53,199
Արտարժույթի փոխարկման ճշգրտումներ	(11,952)	10,348
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	**133,293**	**69,831**

Դրամական միջոցների և դրանց համարժեքների որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

7. Առևտրային արժեթղթեր

Առևտրային արժեթղթեր բաղկացած են՝

	2021թ.	*2020թ.*
Հայկական բանկերի կորպորատիվ պարտատոմսեր	433,697	319,353
Ընդամենը առևտրային արժեթղթեր	**433,697**	**319,353**

2019թ.-ի մայիսին Խումբը ձեռք է բերել հայկական բանկի կորպորատիվ պարտատոմս 9.75% տոկոսադրույքով և մինչև 2022թ.-ի մայիսը մարման ժամկետով:

8. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Խումբը օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները առևտրային նպատակներով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս որպես ակտիվներ և պարտավորություններ ներկայացված ածանցյալ ֆինանսական գործիքների իրական և անվանական արժեքները.

	2021թ.		*2020թ.*	
	Անվանական արժեք	*Իրական արժեք*	*Անվանական արժեք*	*Իրական արժեք*
Ակտիվներ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Տոկոսադրույքի սվոպ	9,166,309	36,221	–	–
Արժութային սվոպ	3,415,776	2,404	7,318,900	250,207
	12,582,085	**38,625**	**7,318,900**	**250,207**
Պարտավորություններ				
Ածանցյալ ֆինանսական գործիքներ				
Արժութային սվոպ	–	–	15,412,670	79,893
	–	**–**	**15,412,670**	**79,893**

(հազար ՀՀ դրամ)

9. Պահանջներ բանկերի նկատմամբ

Բանկերի նկատմամբ պահանջները ներառում են հետևյալ հոդվածները.

	2021թ.	*2020թ.*
Պահանջներ ՀՀ ԿԲ-ի նկատմամբ		
Վարկային քարտերով գործառնությունների գծով դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	1,572,500	868,000
Արտարժույթով պարտադիր պահուստներ ՀՀ ԿԲ-ում (Ծան. 6)	11,585,135	11,077,718
Ընդամենը	**13,157,635**	**11,945,718**
Պահանջներ այլ բանկերի նկատմամբ		
Հայկական բանկեր	487,894	6,188,910
Օտարերկրյա բանկեր	739,754	591,713
Ընդամենը պահանջներ այլ բանկերի նկատմամբ	**1,227,648**	**6,780,623**
Այլ դեբիտորական պարտքեր		
Չմարված գործարքներ	4,119,022	99,766
Դրամական փոխանցումների համակարգերից ստացվելիք գումարներ	1,047,268	1,043,174
Պլաստիկ քարտերով գործարքներից ստացվելիք գումարներ	123,526	530,948
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		
Հայկական բանկերից ստացվելիք գումարներ	–	36,843,265
Պահանջներ բանկերի նկատմամբ մինչև արժեզրկումը	**19,675,099**	**57,243,494**
Արժեզրկման գծով պահուստ	(56,016)	(71,910)
Ընդամենը պահանջներ բանկերի նկատմամբ	**19,619,083**	**57,171,584**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ում պարտադիր պահուստները ներառում են 11,585,135 հազ. դրամի արտարժույթով պարտադիր պահուստներ (2020թ.՝ 11,077,718 հազ. դրամ) (տես Ծանոթագրություն 6):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 739,754 հազ. դրամ (2020թ.՝ 591,713հազ. դրամ) ավանդների տեսքով տեղաբաշխված է միջազգայնորեն ճանաչված երեք ՏՀԶԿ բանկերում (2020թ.՝ երեք), որոնք հանդիսանում են Խմբի հիմնական գործընկերները միջազգային գործառնությունների իրականացման գծով:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ միջբանկային վարկերը ներառում են 487,894 հազ. դրամի վարկեր՝ տեղաբաշխված մեկ հայկական բանկում (2020թ.՝ 6,188,910 հազ. դրամի վարկեր՝ տեղաբաշխված չորս հայկական բանկերում):

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի հակադարձ հետգնման պայմանագրեր վեց հայկական բանկի հետ: Այս պայմանագրերի գծով գրավադրված են հայկական պետական պարտատոմսեր 38,913,124 հազ. դրամ իրական արժեքով:

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև՝

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**57,243,494**	**57,243,494**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	19,675,099	**19,675,099**
Մարված ակտիվներ	(57,243,494)	**(57,243,494)**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**19,675,099**	**19,675,099**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**71,910**	**71,910**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	56,016	**56,016**
Մարված ակտիվներ	(71,910)	**(71,910)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**56,016**	**56,016**

(հազար ՀՀ դրամ)

9. Պահանջներ բանկերի նկատմամբ (շարունակություն)

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում բանկերին տրված վարկերի և փոխատվությունների գծով համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ պահուստի փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև՝

	Փուլ 1	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**30,552,163**	**30,552,163**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	57,243,494	**57,243,494**
Մարված ակտիվներ	(30,552,163)	**(30,552,163)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**57,243,494**	**57,243,494**

	Փուլ 1	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**28,889**	**28,889**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	71,910	**71,910**
Մարված ակտիվներ	(28,889)	**(28,889)**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**71,910**	**71,910**

Բանկերի նկատմամբ պահանջների որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

10. Ներդրումային արժեթղթեր

Ներդրումային արժեթղթերը 2021 և 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում են հետևյալ հոդվածները.

	2021թ.	*2020թ.*
Պարտքային արժեթղթեր ամորտիզացված արժեքով		
Հայկական ընկերությունների պարտատոմսեր	180,897	–
Հանած. Արժեզրկումից կորուստներ	(62,680)	–
Պարտքային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	**118,217**	**–**

	2021թ.	*2020թ.*
Պարտքային և այլ ֆիքսված եկամտով գործիքներ՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող		
Պետական պարտատոմսեր		
ՀՀ կառավարության արժեթղթեր	16,541,954	9,452,410
Կորպորատիվ պարտատոմսեր		
Հայկական ընկերությունների պարտատոմսեր	4,460,248	4,824,872
Բաժնային գործիքներ		
Գնանշված բաժնային արժեթղթեր – միջազգային ընկերություններ	2,759,029	3,009,909
Չգնանշված բաժնային արժեթղթեր – տեղական ընկերություններ	115,381	117,876
	23,876,612	**17,405,067**

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքային գործիքների 78.76%-ը կազմել են ՀՀ պետական պարտատոմսերը (2020 թ.՝ 66.21%):

2021 և 2020թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամկետանց կամ արժեզրկված արժեթղթերը բացակայում են, ինչպես նաև բացակայում են վերանայված մնացորդներ ներդրումային արժեթղթերի գծով, որոնք հակառակ դեպքում կլինեին ժամկետանց:

Պարտքային գործիքների վարկային որակի մասին տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 31-ում՝ «Ռիսկերի կառավարում»:

(հազար ՀՀ դրամ)

10. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Պարտքային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021 թ-ի հունվարի 1-ի դրությամբ	–	–
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	180,897	**180,897**
2021 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**180,897**	**180,897**

Պարտքային արժեթղթեր ամորտիզացված արժեքով	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՎԿ 2021 թ-ի հունվարի 1-ի դրությամբ	–	–
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	62,680	**62,680**
2021 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**62,680**	**62,680**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև՝

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021 թ-ի հունվարի 1-ի դրությամբ	**14,277,282**	**14,277,282**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	11,639,379	**11,639,379**
Մարված ակտիվներ	(3,824,060)	**(3,824,060)**
Զուտ փոփոխությունը իրական արժեքում	(226,739)	**(226,739)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(863,660)	**(863,660)**
2021 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**21,002,202**	**21,002,202**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**309,022**	**309,022**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	504,687	**504,687**
Մարված ակտիվներ	(149,562)	**(149,562)**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(41,215)	**(41,215)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(9,537)	**(9,537)**
2021 թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	**613,395**	**613,395**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**20,292,178**	**20,292,178**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	8,724,750	**8,724,750**
Մարված ակտիվներ	(15,139,588)	**(15,139,588)**
Իրական արժեքի զուտ փոփոխություն	258,888	**258,888**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	141,054	**141,054**
2020 թ. դեկտեմբերի 31	**14,277,282**	**14,277,282**

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	*Փուլ 1*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**216,674**	**216,674**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	96,593	**96,593**
Մարված ակտիվներ	(31,056)	**(31,056)**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	9,687	**9,687**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	17,124	**17,124**
2020 թ. դեկտեմբերի 31	**309,022**	**309,022**

(հազար ՀՀ դրամ)

10. Ներդրումային արժեթղթեր (շարունակություն)

Խումբը իր սեփական կապիտալում որոշ ներդրումներ նախորոշել է որպես բաժնային ներդրումներ՝ իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող այն հիմքով, որ դրանք առևտրի համար չեն պահվում: Ներդրումները հիմնականում ներառում են պարտադիր բաժնետոմսեր բորսաներում և քլիրինգային կենտրոններում, ներդրումներ, որոնք առաջացել են, երբ Խումբը սեփական կապիտալի բաժնետոմսեր է ստացել պարտքի մարման դիմաց և ռազմավարական ներդրումներ այլ բանկերում:

2021 թվականին Խումբն իր՝ իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնեմասից ստացել է 12,455 հազար ՀՀ դրամ շահաբաժիններ (2020 թ.՝ 10,953 հազար ՀՀ դրամ), որոնք համախմբված հաշվետվությունում ճանաչվել են որպես այլ եկամուտ:

11. Հաճախորդներին տրված վարկեր

	2021թ.	*2020թ.*
Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր		
Վարկեր փոքր և միջին ընկերություններին	72,805,137	79,678,711
Վարկեր խոշոր ընկերություններին	47,850,286	29,977,548
Ընդամենը կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր	**120,655,423**	**109,656,259**
Մանրածախ հաճախորդներին տրված վարկեր		
Գյուղատնտեսական վարկեր	107,654,524	95,348,630
Սպառողական վարկեր	76,471,101	70,316,815
Հիփոթեքային վարկեր	32,885,091	25,028,359
Վարկային քարտեր	11,282,532	13,367,120
Ոսկու գրավադրմամբ վարկեր	11,021	1,494,551
Ընդամենը մանրածախ հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	**228,304,269**	**205,555,475**
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	**348,959,692**	**315,211,734**
Արժեզրկման գծով պահուստ	(7,664,614)	(12,193,177)
Հաճախորդներին տրված զուտ վարկեր ամորտիզացված արժեքով	**341,295,078**	**303,018,557**

Բանկի գործունեությունը հիմնականում ուղղված է երկրում գյուղատնտեսության ֆինանսավորմանը: Բանկը տրամադրում է գյուղատնտեսական վարկեր ֆիզիկական և իրավաբանական անձանց, որոնք իրականացնում կամ նախատեսում են իրականացնել գյուղատնտեսական արտադրության կամ մշակման գործունեություն: Գյուղատնտեսական վարկերը տրամադրվում են գյուղատնտեսական երկարաժամկետ ներդրումների, ինչպես նաև կարճաժամկետ ֆինանսավորման կարիքների համար:

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ

2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում կորպորատիվ վարկավորման գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Կորպորատիվ վարկավորում	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ	**88,353,402**	**14,425,978**	**6,632,360**	**244,519**	**109,656,259**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	69,524,404	–	–	55,849	**69,580,253**
Մարված ակտիվներ	(46,464,533)	(5,201,685)	(2,938,069)	(162,163)	**(54,766,450)**
Տեղափոխում Փուլ 1	1,793,465	(1,610,130)	(183,335)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(2,887,488)	5,034,918	(2,147,430)	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(2,817,503)	(2,277,724)	5,095,227	–	**–**
Վերականգնումներ	–	–	283,728	–	**283,728**
Դուրս գրված գումարներ	–	–	(240,466)	–	**(240,466)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(2,799,616)	(697,433)	(354,160)	(6,692)	**(3,857,901)**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**104,702,131**	**9,673,924**	**6,147,855**	**131,513**	**120,655,423**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

Կորպորատիվ վարկավորում	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**550,412**	**596,723**	**2,170,952**	**31,742**	**3,349,829**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	382,159	–	–	–	**382,159**
Մարված ակտիվներ	(218,795)	(123,722)	(1,525,480)	(28,959)	**(1,896,956)**
Տեղափոխում Փուլ 1	131,500	(61,991)	(69,509)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(64,107)	653,500	(589,393)	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(167,292)	(135,968)	303,260	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(127,383)	(545,370)	531,387	–	**(141,366)**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	58,915	–	**58,915**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(200,633)	(117,860)	639,690	28,441	**349,638**
Վերականգնումներ	–	–	283,728	–	**283,728**
Դուրս գրված գումարներ	–	–	(240,466)	–	**(240,466)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(7,729)	(18,967)	(85,948)	–	**(112,644)**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**278,132**	**246,345**	**1,477,136**	**31,224**	**2,032,837**

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում գյուղատնտեսական վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ-ի փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է.

Գյուղատնտեսական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**87,691,177**	**3,584,703**	**4,072,750**	**95,348,630**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	64,178,309	–	–	**64,178,309**
Մարված ակտիվներ	(43,819,240)	(1,898,776)	(4,509,519)	**(50,227,535)**
Տեղափոխում Փուլ 1	164,051	(160,239)	(3,812)	**–**
Տեղափոխում Փուլ 2	(2,357,065)	2,357,065	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(4,283,892)	(1,338,829)	5,622,721	**–**
Վերականգնումներ	–	–	616,875	**616,875**
Դուրս գրված գումարներ	–	–	(1,882,280)	**(1,882,280)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(316,950)	(16,673)	(45,852)	**(379,475)**
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**101,256,390**	**2,527,251**	**3,870,883**	**107,654,524**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

Գյուղատնտեսական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,414,836**	**327,503**	**1,310,750**	**3,053,089**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	644,253	–	–	**644,253**
Մարված ակտիվներ	(307,654)	(69,324)	(2,513,658)	**(2,890,636)**
Տեղափոխում Փուլ 1	13,976	(12,197)	(1,779)	**–**
Տեղափոխում Փուլ 2	(43,853)	43,853	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(317,405)	(186,179)	503,584	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(13,237)	11,115	502,159	**500,037**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	105,503	**105,503**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(732,697)	(48,982)	2,466,488	**1,684,809**
Վերականգնումներ	–	–	616,875	**616,875**
Դուրս գրված գումարներ	–	–	(1,882,280)	**(1,882,280)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(4,252)	(590)	(16,814)	**(21,656)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**653,967**	**65,199**	**1,090,828**	**1,809,994**

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Սպառողական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**60,710,959**	**5,627,471**	**3,978,385**	**70,316,815**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	46,930,420	–	–	**46,930,420**
Մարված ակտիվներ	(31,922,617)	(2,062,812)	(3,561,081)	**(37,546,510)**
Տեղափոխում Փուլ 1	25,689	(25,689)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(1,297,015)	1,297,015	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(5,507,430)	(1,902,198)	7,409,628	**–**
Վերականգնումներ	–	–	743,454	**743,454**
Դուրս գրված գումարներ	–	–	(3,973,078)	**(3,973,078)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**68,940,006**	**2,933,787**	**4,597,308**	**76,471,101**

Սպառողական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**1,718,187**	**1,005,334**	**2,056,911**	**4,780,432**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,025,756	–	–	**1,025,756**
Մարված ակտիվներ	(519,505)	(164,989)	(1,845,009)	**(2,529,503)**
Տեղափոխում Փուլ 1	10,785	(10,785)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(85,554)	85,554	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(477,827)	(489,066)	966,893	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(10,093)	33,356	829,520	**852,783**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	202,116	**202,116**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(599,126)	(208,828)	2,676,956	**1,869,002**
Վերականգնումներ	–	–	743,454	**743,454**
Դուրս գրված գումարներ	–	–	(3,973,078)	**(3,973,078)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,062,623**	**250,576**	**1,657,763**	**2,970,962**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հիփոթեքային վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Հիփոթեքային վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**23,229,283**	**1,216,552**	**513,581**	**68,943**	**25,028,359**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	12,401,495	–	–	–	**12,401,495**
Մարված ակտիվներ	(3,432,475)	(250,964)	(204,421)	(10,273)	**(3,898,133)**
Տեղափոխում Փուլ 1	19,908	(19,908)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(295,548)	382,034	(86,486)	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(565,130)	(232,526)	797,656	–	**–**
Վերականգնումներ	–	–	12,253	–	**12,253**
Դուրս գրված գումարներ	–	–	(239,158)	–	**(239,158)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(350,825)	(50,789)	(14,571)	(3,540)	**(419,725)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**31,006,708**	**1,044,399**	**778,854**	**55,130**	**32,885,091**

Հիփոթեքային վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ	**61,269**	**43,048**	**128,747**	**38,534**	**271,598**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	85,907	–	–	–	**85,907**
Մարված ակտիվներ	(10,460)	(9,548)	(110,642)	(103)	**(130,753)**
Տեղափոխում Փուլ 1	5,791	(5,791)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(10,429)	35,587	(25,158)	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(25,252)	(13,193)	38,445	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(5,721)	(12,773)	144,210	–	**125,716**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	21,500	–	**21,500**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	22,828	8,139	277,883	(16,445)	**292,405**
Վերականգնումներ	–	–	12,253	–	**12,253**
Դուրս գրված գումարներ	–	–	(239,158)	–	**(239,158)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(1,449)	(1,791)	(6,278)	–	**(9,518)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**122,484**	**43,678**	**241,802**	**21,986**	**429,950**

2021 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում վարկային քարտերով և ոսկով ապահովված վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**13,701,259**	**215,363**	**943,648**	**1,401**	**14,861,671**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	4,330,991	–	–	–	**4,330,991**
Մարված ակտիվներ	(6,486,523)	(109,910)	(1,274,987)	(1,401)	**(7,872,821)**
Տեղափոխում Փուլ 1	10,388	(5,609)	(4,779)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(378,855)	382,897	(4,042)	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(898,026)	(97,587)	995,613	–	**–**
Վերականգնումներ	–	–	903,563	–	**903,563**
Դուրս գրված գումարներ	–	–	(659,689)	–	**(659,689)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(235,071)	(12,430)	(22,661)	–	**(270,162)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**10,044,163**	**372,724**	**876,666**	**–**	**11,293,553**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

Վարկային քարտեր և ոսկու գրավադրմամբ վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**320,191**	**44,436**	**372,809**	**793**	**738,229**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	100,322	–	–	–	**100,322**
Մարված ակտիվներ	(83,828)	(11,715)	(972,807)	–	**(1,068,350)**
Տեղափոխում Փուլ 1	4,271	(1,601)	(2,670)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(13,515)	13,556	(41)	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(75,892)	(27,700)	103,592	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(4,193)	1,738	126,047	–	**123,592**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	33,501	–	**33,501**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	(107,195)	(2,408)	373,387	(793)	**262,991**
Վերականգնումներ	–	–	903,563	–	**903,563**
Դուրս գրված գումարներ	–	–	(659,689)	–	**(659,689)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	(3,487)	(520)	(9,281)	–	**(13,288)**
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**136,674**	**15,786**	**268,411**	**–**	**420,871**

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում կորպորատիվ վարկավորման գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Կորպորատիվ վարկավորում	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**82,478,850**	**498,280**	**4,954,288**	**221,203**	**88,152,621**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	52,647,330	–	–	15,449	**52,662,779**
Մարված ակտիվներ	(28,706,208)	(1,199,636)	(805,789)	(1,689)	**(30,713,322)**
Տեղափոխում Փուլ 1	162,750	(162,750)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(14,534,636)	14,534,636	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(6,086,665)	(68,671)	6,155,336	–	**–**
Վերականգնումներ	–	–	774,521	–	**774,521**
Դուրս գրված գումարներ	–	–	(4,786,123)	–	**(4,786,123)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	2,391,981	824,119	340,127	9,556	**3,565,783**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**88,353,402**	**14,425,978**	**6,632,360**	**244,519**	**109,656,259**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

Կորպորատիվ վարկավորում	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**184,681**	**9,768**	**4,363,961**	**146,476**	**4,704,886**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,030,470	–	–	–	**1,030,470**
Մարված ակտիվներ	(49,636)	(1,342)	(574,249)	–	**(625,227)**
Տեղափոխում Փուլ 1	2,218	(2,218)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(196,315)	196,315	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(560,859)	(3,119)	563,978	–	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(1,034)	360,791	1,420,527	–	**1,780,284**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	57,607	–	**57,607**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	126,550	2,594	236,863	(114,734)	**251,273**
Վերականգնումներ	–	–	774,521	–	**774,521**
Դուրս գրված գումարներ	–	–	(4,786,123)	–	**(4,786,123)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	14,337	33,934	113,867	–	**162,138**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**550,412**	**596,723**	**2,170,952**	**31,742**	**3,349,829**

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում գյուղատնտեսական վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Գյուղատնտեսական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ	**72,894,053**	**1,388,961**	**2,185,342**	**76,468,356**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	50,838,950	–	–	**50,838,950**
Մարված ակտիվներ	(30,611,624)	(770,382)	(1,876,360)	**(33,258,366)**
Տեղափոխում Փուլ 1	249,061	(249,061)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(3,753,787)	3,753,787	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(2,459,634)	(571,449)	3,031,083	**–**
Վերականգնումներ	–	–	2,662,329	**2,662,329**
Դուրս գրված գումարներ	–	–	(1,970,139)	**(1,970,139)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	534,158	32,847	40,495	**607,500**
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**87,691,177**	**3,584,703**	**4,072,750**	**95,348,630**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2020թ . դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Գյուղատնտեսական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**417,819**	**32,288**	**854,730**	**1,304,837**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,042,449	–	–	**1,042,449**
Մարված ակտիվներ	(64,550)	(4,647)	(1,312,825)	**(1,382,022)**
Տեղափոխում Փուլ 1	4,387	(4,387)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(84,335)	84,335	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(225,337)	(18,674)	244,011	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	(557)	230,768	765,140	**995,351**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	99,704	**99,704**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	312,319	4,605	(56,132)	**260,792**
Վերականգնումներ	–	–	2,662,329	**2,662,329**
Դուրս գրված գումարներ	–	–	(1,970,139)	**(1,970,139)**
Արտարժույթի փոխարժեքի ճշգրտումներ	12,641	3,215	23,932	**39,788**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,414,836**	**327,503**	**1,310,750**	**3,053,089**

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ընթացքում սպառողական վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Սպառողական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**78,212,234**	**1,479,242**	**2,166,717**	**81,858,193**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	27,054,380	–	–	**27,054,380**
Մարված ակտիվներ	(34,511,441)	(816,054)	(1,154,051)	**(36,481,546)**
Տեղափոխում Փուլ 1	279,641	(279,641)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(6,178,909)	6,178,909	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(4,144,946)	(934,985)	5,079,931	**–**
Վերականգնումներ	–	–	1,564,922	**1,564,922**
Դուրս գրված գումարներ	–	–	(3,679,134)	**(3,679,134)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**60,710,959**	**5,627,471**	**3,978,385**	**70,316,815**

Սպառողական վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*Ընդամենը*
ԱՎԿ պահուստ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**296,891**	**51,090**	**710,609**	**1,058,590**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	1,329,006	–	–	**1,329,006**
Մարված ակտիվներ	(74,071)	(5,423)	(638,972)	**(718,466)**
Տեղափոխում Փուլ 1	4,086	(4,086)	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(255,830)	255,830	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(429,157)	(40,336)	469,493	**–**
Ժամանակաշրջանի ընթացքում փուլերի միջև տեղափոխված մնացորդների ազդեցությունը ԱՎԿ-ների վրա ժամանակաշրջանի վերջի դրությամբ	2,605	736,757	1,422,258	**2,161,620**
Ձեղչի ամորտիզացիա (ճանաչված տոկոսային եկամտում)	–	–	155,193	**155,193**
ԱՎԿ հաշվարկի մոդելների և ելակետային տվյալների փոփոխություն	844,657	11,502	2,052,542	**2,908,701**
Վերականգնումներ	–	–	1,564,922	**1,564,922**
Դուրս գրված գումարներ	–	–	(3,679,134)	**(3,679,134)**
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**1,718,187**	**1,005,334**	**2,056,911**	**4,780,432**

(հազար ՀՀ դրամ)

11. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Հաճախորդներին տրված վարկերի գծով արժեզրկման պահուստ (շարունակություն)

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում հիփոթեքային վարկերի գծով համախառն հաշվեկշռային արժեքների և դրանց գծով ԱՎԿ փոփոխությունների վերլուծությունը հետևյալն է՝

Հիփոթեքային վարկեր	*Փուլ 1*	*Փուլ 2*	*Փուլ 3*	*POCI*	*Ընդամենը*
Համախառն հաշվեկշռային արժեքը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**16,117,329**	**155,701**	**280,923**	**117,997**	**16,671,950**
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	10,788,456	–	–	19,050	**10,807,506**
Մարված ակտիվներ	(2,632,739)	(65,175)	(249,841)	(72,199)	**(3,019,954)**
Տեղափոխում Փուլ 1	46,363	(46,363)	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 2	(1,211,925)	1,211,925	–	–	**–**
Տեղափոխում Փուլ 3	(227,002)	(84,326)	311,328	–	**–**
Վերականգնումներ	–	–	291,135	–	**291,135**
Ռիսկերի կառավարման գործառույթը ծածկում է նաև այնպիսի բիզնես ռիսկեր, ինչպիսիք են շրջակա միջավայրում, տեխնոլոգիաներում և տնտեսության ճյուղերում փոփոխությունները՝ դրանց հետ առնչություն ունեցող տարբեր ստորաբաժանումների ներգրավման միջոցով:

Ռիսկերի կառավարման համակարգ

Ռիսկերի հայտնաբերման և վերահսկման հիմնական պատասխանատվությունը կրում է Բանկի խորհուրդը, սակայն առկա են առանձին անկախ մարմիններ, որոնք պատասխանատու են ռիսկերի կառավարման և մոնիթորինգի համար:

Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը պատասխանատու է ընդհանուր ռիսկերի կառավարման քաղաքականության, ռիսկերի կառավարման ռազմավարության և սկզբունքների հաստատման համար:

Գլխավոր գործադիր տնօրեն

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատու է Խմբում ռիսկերի գործընթացի կառավարման և վերահսկման համար:

Ռիսկերի կառավարման հանձնաժողով

Ռիսկերի կառավարման հանձնաժողովը ընդհանուր առումով պատասխանատու է ռիսկերի կառավարման ռազմավարության և դրա իրականացման սկզբունքների, շրջանակների, քաղաքականությունների և սահմանաչափերի մշակման համար: Այն պատասխանատու է ռիսկերի հիմնարար խնդիրների համար և կառավարում ու վերահսկում է ռիսկերի հետ կապված համապատասխան որոշումները:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը պատասխանատու է բոլոր տեսակի ռիսկերի սահմանման, գնահատման, վերահսկողության և կառավարման համար: Անկախ վերահսկման գործընթաց ապահովելու համար, յուրաքանչյուր քայլից հետո ներկայացվում է հաշվետվություն:

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժին

Ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինը պատասխանատու է Խմբի ակտիվների և պասիվների և ընդհանուր ֆինանսական կառուցվածքի կառավարման համար: Այն նաև պատասխանատու է Խմբի ֆինանսավորման և իրացվելիության ռիսկերի համար:

Ներքին աուդիտ

Խմբի կողմից իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը, այնպես էլ Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի ստորաբաժանումը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Ներքին Աուդիտի հանձնաժողովին:

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ներածություն (շարունակություն)

Ռիսկերի գնահատման և հաշվետվության համակարգեր

Տարբեր ռիսկերի վերլուծության և գնահատման ժամանակ Խումբն ընդունում է անհատական մոտեցում՝ կիրառելով վիճակագրական մոդելներ, զգայունության վերլուծություններ, ինչպես նաև վերլուծելով տարբեր ռիսկային ցուցանիշների դինամիկան և անհրաժեշտության դեպքում ձեռնարկելով համապատասխան միջոցներ: Մոդելները հետագայում փորձարկվում են վավերականության ստուգման նպատակով: Խումբը նաև կիրառում է վատագույն դեպքի սցենարներ, որոնք կառաջանան այն դեպքում, երբ ծայրահեղ դեպքերը, որոնք քիչ հավանական է, որ տեղի կունենան, փաստացի տեղի են ունենում:

Ռիսկերի դիտարկումը և վերահսկումը հիմնականում իրականացվում է Խմբի կողմից հաստատված սահմանաչափերի հիման վրա: Այս սահմանաչափերը արտացոլում են Խմբի գործարար ռազմավարությունը և շուկայական միջավայրը, ինչպես նաև այն ռիսկի մակարդակը, որը Խումբը պատրաստ է ընդունել՝ լրացուցիչ շեշտադրելով տնտեսության ընտրված ոլորտները: Բացի այդ, Խումբը դիտարկում և գնահատում է ընդհանուր ռիսկին ենթարկվելու առավելագույն մակարդակը բոլոր տեսակի ռիսկերի և գործունեությունների գծով:

Բոլոր բիզնես ուղղություններին վերաբերող վարկային ռիսկի մասին տեղեկատվությունը ուսումնասիրվում և մշակվում է ռիսկերը վերլուծելու, վերահսկելու և վաղ հայտնաբերելու համար: Այս տեղեկատվությունը ներկայացվում և բացատրվում է Գլխավոր գործադիր տնօրենին, Ռիսկերի կառավարման հանձնաժողովին և բոլոր բիզնես ստորաբաժանումների ղեկավարներին: Ռիսկերի կառավարման հանձնաժողովին ներկայացված հաշվետվությունը ներառում է ընդհանուր վարկային ռիսկին ենթարկվածության վերլուծություն, վարկերի համակենտրոնացման սահմանաչափերի դիտարկման արդյունքները, ճեղքվածքների (GAP) վերլուծություն, VaR գնահատում, իրացվելիության գործակիցներ և նպատակային ցուցանիշների վերլուծություն, սթրես թեստ վերլուծություն, ընդհանուր ռիսկի ախորժակի վերահսկում և ռիսկերի պրոֆիլի փոփոխությունները: Եռամսյակային կտրվածքով մանրամասն հաշվետվություն է ներկայացվում հաճախորդների, տնտեսության և բիզնես ուղղությունների ռիսկերի վերաբերյալ: Ռիսկերի կառավարման հանձնաժողովը քննարկում է ռիսկերի հետ կապված էական խնդիրները և հաստատում քայլերը՝ ուղղված դրանց նվազեցմանը և կառավարմանը: Բանկի խորհուրդը եռամսյակը մեկ ստանում է ռիսկերի համապարփակ հաշվետվություն, ինչը ներառում է անհրաժեշտ ամբողջական տեղեկատվություն Խմբի ընդհանուր ռիսկերը գնահատելու և դրանց մասին եզրակացություն կազմելու համար:

Խմբի բոլոր մակարդակների համար հատուկ հարմարեցված ռիսկերի հաշվետվություններ են պատրաստվում և ներկայացվում, որպեսզի բոլոր բիզնես ստորաբաժանումները ապահովված լինեն լիարժեք, անհրաժեշտ և արդի տեղեկատվությամբ:

Ռիսկերի սահմանաչափերի խախտման դեպքում օրական ահազանգներ են ուղարկվում Խմբի համապատասխան ստորաբաժանումներին, ինչպես նաև Գլխավոր գործադիր տնօրենին, և քննարկվում ու կիրառվում են համապատասխան միջոցներ:

Ռիսկերի նվազեցում

Որպես ընդհանուր ռիսկերի կառավարման գործընթացի մաս, Խումբը կիրառում է ածանցյալ և այլ գործիքներ՝ կառավարելու համար տոկոսադրույքների և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից առաջացող ռիսկը, կապիտալի և վարկային ռիսկերը, ինչպես նաև կանխատեսվող գործարքներից առաջացող ռիսկերը:

Խումբը լայնորեն օգտագործում է գրավ՝ վարկային ռիսկը նվազեցնելու նպատակով:

Ռիսկերի գերկենտրոնացում

Ռիսկի համակենտրոնացումը ի հայտ է գալիս այն դեպքերում, երբ մի շարք գործընկերներ իրականացնում են համանման գործունեություն, կամ երբ գործունեությունը վարում են մեկ աշխարհագրական տարածաշրջանում, կամ երբ գտնվում են համանման տնտեսական գործոնների ազդեցության ներքո, որոնց հետևանքով իրենց պարտավորությունների կատարումը նմանապես է արձագանքում տնտեսական, քաղաքական և այլ պայմանների փոփոխությանը: Ռիսկի համակենտրոնացումները արտացոլում են Խմբի գործունեության արդյունքների համեմատական զգայունությունն այն պայմանների նկատմամբ, որոնք ազդում են որոշակի ոլորտի կամ աշխարհագրական տարածաշրջանի վրա:

Ռիսկի գերկենտրոնացումից խուսափելու նպատակով Խմբի քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են յուրահատուկ սկզբունքներ, որոնք ուղղված են առավելագույն կերպով բազմազանեցված պորտֆել ապահովելուն: Իրականացվում է սահմանված համակենտրոնացման կառավարում:

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որի պատճառով Խումբը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների կողմից պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբը իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ սահմանելով ռիսկի այն սահմանաչափը, որը պատրաստ է ընդունել անհատական գործընկերների և աշխարհագրական ու տնտեսական համակենտրոնացումների համար, ինչպես նաև դիտարկելով զգայունությունը նման սահմանաչափերի նկատմամբ:

Խումբը հաստատել է վարկային որակի ստուգման գործընթաց՝ ապահովելու գործընկերների վարկունակության հնարավոր փոփոխությունների վաղ բացահայտումը, ներառյալ գրավների պարբերաբար վերանայումը: Գործընկերների սահմանաչափերը հաստատված են վարկային ռիսկերի դասակարգման համակարգի միջոցով, որը յուրաքանչյուր գործընկերոջ համար սահմանում է ռիսկի վարկանիշ: Ռիսկերի վարկանիշները ենթակա են պարբերաբար վերանայման: Վարկերի որակի ստուգման գործընթացը Խմբին թույլ է տալիս գնահատել հնարավոր վնասը այն ռիսկերի հետևանքով, որոնց նկատմամբ այն զգայուն է, և ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ ֆինանսական գործիքներից ծագող վարկային ռիսկը ցանկացած պահի սահմանափակվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրական իրական արժեքով:

Վարկային բնույթ ունեցող պարտավորությունների հետ կապված ռիսկեր

Խումբը իր հաճախորդներին ընձեռում է երաշխիքների և ակրեդիտիվների ստացման հնարավորություն, որոնց գծով Խմբի մոտ կարող է անհրաժեշտություն ծագել հաճախորդների անունից կատարելու վճարումներ: Հաճախորդները վճարումները կատարում են պայմանագրերում ամրագրված պայմանների համաձայն: Խումբը կրում է ռիսկեր, որոնք համարժեք են վարկային ռիսկերին, և նվազեցվում են նույն ընթացակարգերի և ռիսկի վերահսկման քաղաքականության վարման շնորհիվ:

Ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի վրա, ներառյալ ածանցյալ գործիքները, զտման և գրավի պայմանագրերի միջոցներով ռիսկը մեղմացնելու ազդեցությունից առաջ, ներկայացված է հաշվեկշռային արժեքով:

Իրական արժեքով ներկայացված ֆինանսական գործիքների դեպքում, հաշվեկշռային արժեքը արտահայտում է ընթացիկ վարկային ռիսկը, բայց ոչ ռիսկի առավելագույն չափը, որը կարող է առաջանալ արժեքի փոփոխությունից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր մակարդակի վարկային ռիսկի առավելագույն չափի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է առանձին ծանոթագրություններում: Ապահովման միջոցների և ռիսկի նվազեցման այլ մեթոդների ազդեցությունը ներկայացված է Ծանոթագրություններ 11-ում և 12-ում:

Արժեզրկման գնահատում

Խումբը ԱՎԿ-ն հաշվարկում է հավանականությամբ կշռված մի շարք սցենարներով՝ գնահատելու ակնկալվող դրամական միջոցների պակասորդները, զեղչված արդյունավետ տոկոսադրույքի մոտարկմամբ: Դրամական միջոցների պակասորդը կազմակերպությանը պայմանագրով վճարման ենթակա դրամական միջոցների հոսքերի և կազմակերպության ակնկալվող դրամական միջոցների հոսքերի միջև տարբերությունն է: ԱՎԿ հաշվարկի մեխանիզմները ներկայացված են ստորև, և դրանց հիմնական տարրերը հետևյալն են՝

PD — *Դեֆոլտի հավանականությունը* որոշակի ժամանակային հորիզոնի ընթացքում դեֆոլտի հավանական լինելու գնահատումն է: Դեֆոլտը միայն կարող է տեղի ունենալ գնահատված ժամանակահատվածում որոշակի պահի, եթե գործիքը նախկինում չի ապաճանաչվել և դեռևս պորտֆելում է:

EAD — *Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը* ապագա դեֆոլտի ամսաթվի դրությամբ գործիքի գնահատված արժեքն է՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվից հետո ակնկալվող փոփոխությունների ազդեցությունը, ներառյալ մայր գումարի և տոկոսների վճարումները՝ պայմանագրով նախատեսված կամ այլ կերպ, բաց թողնված վճարումների վրա հաշվեգրված տոկոսները և այլն:

LGD — *Դեֆոլտի դեպքում կորստի չափը* դրամական միջոցների կորստի գնահատումն է, որն առաջանում է, երբ որոշակի պահի տեղի է ունենում դեֆոլտ: Դա պայմանագրով սահմանված դրամական միջոցների հոսքերի և այն դրամական միջոցների հոսքերի տարբերությունն է, որոնք վարկատուն ակնկալում է ստանալ՝ ներառյալ գրավների իրացումից միջոցները: Այն սովորաբար արտահայտվում է որպես դեֆոլտի դեպքում գործիքի արժեքից (EAD) տոկոս:

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

ԱՎԿ պահուստը հիմնվում է վարկային վնասների վրա, որոնք ակնկալվում է, որ կառաջանան ակտիվի կյանքի ընթացքում (ակտիվի կյանքի ընթացքում ակնկալվող վարկային վնաս կամ ԱԿԱՎԿ), եթե առկա չէ վարկային ռիսկի զգալի աճ սկզբնական ճանաչումից հետո, որի դեպքում պահուստը հիմնվում է 12 ամսվա ընթացքում ակնկալվող վարկային վնասի վրա (12ամԱՎԿ): 12ամԱՎԿ-ը ԱԿԱՎԿ-ի այն մասն է, որը ներկայացնում է ֆինանսական գործիքի գծով պարտավորությունների չկատարման դեպքերի արդյունք հանդիսացող ԱՎԿ-ները, որոնք հնարավոր են հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում: Ինչպես ԱԿԱՎԿ-ն, այնպես էլ 12ամԱՎԿ-ն հաշվարկվում են անհատական կամ խմբային հիմունքով՝ ելնելով ֆինանսական գործիքների համապատասխան պորտֆելի բնույթից:

Խումբը քաղաքականություն է սահմանել՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի ավարտին իրականացնել գնահատում՝ արդյոք ֆինանսական գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, հաշվի առնելով ֆինանսական գործիքի գործողության մնացած ժամկետի ընթացքում դեֆոլտ տեղի ունենալու ռիսկի փոփոխությունը: Վերոնշյալ գործընթացի հիման վրա, Խումբը խմբավորում է իր վարկերը՝ ըստ փուլերի, ինչպես նկարագրված է ստորև.

Փուլ 1: Սկզբնական ճանաչման ժամանակ Խումբը պահուստ է ճանաչում 12 ամսվա ԱՎԿ-ի հիման վրա: 1-ին փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում վարկային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 2-րդ փուլից:

Փուլ 2: Երբ գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, Խումբը պահուստը ճանաչում է վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների (ԱԿԱՎԿ) համար: 2-րդ փուլի վարկերը ընդգրկում են նաև գործիքներ, որոնց դեպքում պարտքային ռիսկը բարելավվել է, և վարկը վերադասակարգվել է 3-րդ փուլից:

Փուլ 3: Ակտիվը համարվում է արժեզրկված:

POCI: Ձեռք բերված կամ ստեղծված՝ արժեզրկված (POCI) ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք արժեզրկված են սկզբնական ճանաչման ժամանակ: Տվյալ ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են իրական արժեքով, և տոկոսային եկամուտը հետագայում ճանաչվում է վարկային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա: ԱՎԿ-ն միայն ճանաչվում կամ ապաճանաչվում է այնքանով, որքանով որ հետագայում փոխվում է ակտիվի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում ակնկալվող վարկային կորուստների գնահատականը:

Դեֆոլտի սահմանումը

Խումբը համարում է, որ ֆինանսական գործիքի գծով առկա է դեֆոլտ և, հետևաբար այն դասում է որպես Փուլ 3-ին պատկանող ֆինանսական գործիք (այսինքն՝ վարկային տեսանկյունից արժեզրկված) ԱՎԿ հաշվարկի նպատակով, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուն 91 օրով ուշացնում է պայմանագրային վճարումների կատարումը: Խումբը բանկերին տրված վարկերը համարում է դեֆոլտի ենթարկված և անմիջապես ձեռնարկում է քայլեր, եթե գործընկերը հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ չի վճարել հաշվեգրված տոկոսները (արժեկտրոնները) և/կամ հիմնական գումարը ավելի քան 15 աշխատանքային օր:

Ֆինանսական գործիքը նաև համարվում է արժեզրկված՝ հիմք ընդունելով սահմանված այլ քանակական և որակական գործոններ, ինչպիսիք են փոխկապակցված անձանց տրամադրված վարկերի որակը, վերանայման կարգավիճակը, ինչպես նաև ֆինանսական մոնիտորինգի արդյունքները, որոնք հաստատվում են ղեկավարության կողմից:

Հաճախորդի անվճարունակության որակական գնահատման շրջանակներում Խումբը նաև դիտարկում է տարատեսակ դեպքերը, որոնք կարող են վկայել վճարման անհավանականության մասին: Նման դեպքեր տեղի ունենալու պարագայում, Խումբը մանրամասն դիտարկում է, թե արդյոք տվյալ դեպքի արդյունքում հաճախորդը պետք է ճանաչվի անվճարունակ և դասակարգվի Փուլ 3-ում՝ ԱՎԿ հաշվարկման նպատակով, թե համապատասխանում է Փուլ 2-ի կիրառմանը:

Խմբի քաղաքականության համաձայն, ֆինանսական գործիքի կարգավիճակը համարվում է վերականգնված և հետևաբար այն վերադասակարգվում է Փուլ 3-ից այն դեպքում, երբ պարտավորության չկատարման չափանիշներից ոչ մեկը առկա չի եղել առնվազն վեց հաջորդական ամիսների ընթացքում: Ակտիվի վերականգնումից հետո այն որպես Փուլ 2 կամ Փուլ 1 դասակարգելու մասին որոշումը կախված է վարկառուի կողմից վարկի սպասարկումից և գնահատման պահին վարկային ռիսկի զգալի աճի այլ երկրորդային չափորոշիչների առկայությունից:

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացը

Գանձապետական և միջբանկային հարաբերություններ

Խմբի գանձապետական և միջբանկային հարաբերությունները և գործընկերները իրենցից ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ, բանկեր, բրոքերներ-դիլերներ, արտարժույթի առքուվաճառք իրականացնող ընկերություններ և քլիրինգային ընկերություններ: Այս հարաբերությունների առումով Խմբի ֆինանսական ռիսկերի կառավարման բաժինը գնահատում է հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը, մասնավորապես ֆինանսական տեղեկատվությունը և այլ արտաքին տվյալներ, օր՝ արտաքին վարկանիշները:

Հաճախորդներին տրված վարկեր

Խմբավորում

Հաճախորդներին տրված վարկերի, որոնք պատկանում են Փուլ 1-ին և Փուլ 2-ին, ինչպես նաև անհատապես ոչ էական Փուլ 3-ին պատկանող վարկերի համար, Խումբը հաշվարկում է ԱՎԿ պորտֆելի մակարդակով: Խումբն առանձնացնում է պորտֆելների հետևյալ տեսակները.

- կորպորատիվ վարկեր,
- սպառողական վարկեր,
- գյուղատնտեսական վարկեր,
- հիփոթեքային վարկեր,
- այլ (վարկային քարտեր և ոսկու գրավով ապահովված վարկեր):

Հաճախորդներին տրված վարկերի գծով դեֆոլտի հավանականությունը հիմնվում է անցյալ ժամանակաշրջանների տեղեկությունների վրա և հաշվարկվում է հավանականության փոփոխության մատրիցաներով՝ հիմք ընդունելով վարկային պորտֆելների ժամկետայնության վերաբերյալ առկա տեղեկությունները: Հավանականությունները հաշվարկվում են որպես 12 ամիս ժամանակաշրջանի ընթացքում դեֆոլտ կատեգորիաների միջև փոխանցվող վարկերի մասնաբաժինը ընդհանուր վարկերի նկատմամբ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ: Դեֆոլտի հավանականությունը հաշվարկելիս Խումբը դիտարկում է կանխատեսվող մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք ունեն էական ազդեցություն դեֆոլտի հավանականության վրա՝ հաշվարկված ըստ ժամանակային շարքերի ռեգրեսիայի վերլուծության:

Հիմք ընդունելով մակրոտնտեսական պարամետրերի պատմական կանխատեսումների գնահատման շեղումները փաստացի միտումներից՝ մակրոտնտեսական զարգացման երեք սցենարները ուղղված են երեք դեֆոլտի հավանականության PIT մատրիցների վերջնական արդյունքին, որոնք կշռված են 15%, 70% և 15% հավանականություններով՝ լավագույն, բազային և վատագույն սցենարներին համապատասխան:

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը

Դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը (EAD) իրենից ներկայացնում է արժեզրկման գնահատման ենթակա ֆինանսական գործիքների համախառն հաշվեկշռային արժեքը, որը հաշվի է առնում ինչպես հաճախորդի ունակությունը մեծացնելու իր վարկի գումարը դեֆոլտին մոտենալու դեպքում, այնպես էլ հնարավոր վաղաժամկետ մարումները: Փուլ 1-ում գտնվող ակտիվների համար Խումբը գնահատում է 12 ամսվա ընթացքում հնարավոր դեֆոլտի հավանականությունը 12ամԱՎԿ հաշվարկելու նպատակով: Փուլ 2, Փուլ 3 դասերին պատկանող և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվների համար դեֆոլտի ժամանակ գործիքի արժեքը դիտարկվում է գործիքների ողջ կյանքի տևողության ընթացքում տեղի ունեցող դեպքերի համար:

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Դեֆոլտի ժամանակ կորստի չափը

Խումբը դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու նպատակով օգտագործում է դեֆոլտի ամսաթվից հետո վերականգնումների վերաբերյալ պատմական տվյալները բոլոր դեֆոլտի ենթարկված վարկերի կտրվածքով: Դեֆոլտի ժամանակ կորստի չափը հաշվարկելու համար PD PIT-ի գնահատման համար օգտագործվող նախնական խմբավորումը հետագայում ենթարկվում է ենթախմբավորման՝ ըստ գրավի տեսակի: Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո՝ ըստ LGD խմբերի: Ժամանակային կտրվածքով վերջին ժամկետանց վարկերի համար հնարավոր վերադարձի հավանականությունը գնահատվում է նախկինում ժամկետանց վարկերի պոպուլյացիայի զարգացման գործակցով: Տվյալ շրջանակներում հաշվի են առնվում հավաքագրման քաղաքականության ցանկացած փոփոխություն: Հավաքագրվում է դեֆոլտի ամսաթվից հետո դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը և զեղչվում դեֆոլտի ամսաթվի դրությամբ՝ միջին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի օգտագործմամբ, յուրաքանչյուր LGD խմբի գծով : Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է բոլոր տեսակի դրամական ներհոսքերը ժամկետանց վարկերի գծով (վարկերի մարումից ստացված միջոցներ, երաշխավորից ստացված միջոցներ, գրավի առարկայի վաճառքից ստացված միջոցներ և այլն):

Վարկային ռիսկի զգալի աճ

Խումբը սահմանել է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական գործիքի վարկային ռիսկի զգալի աճի հայտանիշները՝ սկզբնական ճանաչման պահից ի վեր գնահատելու քաղաքականություն: Խումբն որպես հիմնական հայտանիշ է օգտագործում վարկերի ժամկետանց օրերի քանակի վերաբերյալ տեղեկատվությունը: Խումբը համարում է, որ վարկային ռիսկը զգալիորեն աճել է սկզբնական ճանաչման պահից հետո, եթե պայմանագրային վճարումները ուշացվել են ավելի քան 30 օրով:

Վարկային ռիսկի աճը գնահատելիս Խմբի ղեկավարությունը նաև առաջնորդվում է հետևյալ գործոններով՝

- ՀՀ այլ ֆինանսական հաստատություններում տվյալ վարկառուի ժամկետանց օրերի քանակը,
- կանխորոշված փոխկապակցված կողմերի ժամկետանց օրերի քանակը,
- վարկառուի ֆինանսական պայմանների զգալի դժվարությունները,
- վարկառուի ֆինանսական պայմանների վատթարացման արդյունքում վարկի պայմանների վերանայումը,
- վարկառուի գործունեության ֆինանսական մոնիտորինգի արդյունքները:

Կանխատեսվող տեղեկատվություն և բազմակի տնտեսական սցենարներ

ԱՎԿ մոդելներում Խումբը հիմնվում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակի վրա, մասնավորապես այնպիսի տնտեսական ելակետային տվյալների, ինչպիսիք են՝

- ՀՆԱ-ի տարեկան աճը,
- Արդյունաբերական արտադրության տարեկան աճ,
- Սպառողական գնաճ,
- Արտահանման ծավալներ,
- Ներմուծման ծավալներ,
- Ծառայությունների ոլորտի տարեկան աճ,
- ՀՆԱ-ում բանկի ընդհանուր վարկերի տեսակարար կշիռը,
- ԱՄՆ դոլարի/դրամի փոխարժեքը (ժամանակաշրջանի վերջում):

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Կանխատեսվող տեղեկատվությունը Խումբը ստանում է արտաքին աղբյուրներից (Տնտեսական հետաքննությունների բաժնից, Համաշխարհային Բանկի տվյալների բազայից, ինչպես նաև ՀՀ կառավարության կանխատեսումներից): 15%, 70% և 15% հավանականությունները վերագրվում են համապատասխանաբար հետևյալ սցենարներից յուրաքանչյուրին. լավատեսական, բազիսային և վատատեսական սցենարներ: Ստորև ներկայացված աղյուսակում ցույց են տրված կանխատեսվող տնտեսական փոփոխականները/ենթադրությունները, ըստ տարբեր տնտեսական սցենարների, որոնց հիման վրա հաշվարկվում ԱՎԿ-ն 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հիմնական գործոնները	*ԱՎԿ սցենարը*	*Որոշված հավանակա-նությունը, %*	*2022թ.*	*2023թ.*	*2024թ.*
ՀՆԱ-ի տարեկան աճը, %					
	Լավատեսական	15%	9.20%	8.13%	8.70%
	Բազիսային	70%	5.30%	4.00%	4.40%
	Վատատեսական	15%	1.40%	-0.13%	0.10%
Արդյունաբերական արտադրության տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	9.37%	7.50%	7.67%
	Բազիսային	70%	5.50%	3.40%	3.40%
	Վատատեսական	15%	1.63%	-0.70%	-0.87%
Սպառողական գնաճ, %					
	Լավատեսական	15%	2.89%	1.82%	0.90%
	Բազիսային	70%	5.50%	4.70%	4.00%
	Վատատեսական	15%	8.11%	7.58%	7.10%
Արտահանման ծավալներ, հազ. ԱՄՆ դոլար					
	Լավատեսական	15%	3,805,178	4,422,900	4,522,087
	Բազիսային	70%	3,548,750	3,846,845	3,648,115
	Վատատեսական	15%	3,292,322	3,310,965	2,894,623
Ներմուծման ծավալներ, հազ. ԱՄՆ դոլար					
	Լավատեսական	15%	6,496,801	7,630,110	8,253,480
	Բազիսային	70%	5,918,000	6,326,000	6,190,000
	Վատատեսական	15%	5,339,199	5,144,016	4,502,578
Ծառայությունների տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	8.51%	10.57%	11.31%
	Բազիսային	70%	4.90%	5.20%	5.90%
	Վատատեսական	15%	1.29%	-0.17%	0.13%
ՀՆԱ-ում բանկի ընդհանուր վարկերի տեսակարար կշիռը, %					
	Լավատեսական	15%	61.59%	65.70%	71.76%
	Բազիսային	70%	60.05%	62.48%	64.55%
	Վատատեսական	15%	57.52%	56.50%	54.68%
ԱՄՆ դոլարի/դրամի փոխարժեք (ժամանակաշրջանի վերջում)	Լավատեսական	15%	457.72	441.20	424.26
	Բազիսային	70%	476.44	479.84	483.74
	Վատատեսական	15%	495.16	520.10	548.53

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Ստորև ներկայացված աղյուսակում ցույց են տրված կանխատեսվող տնտեսական փոփոխականները/ենթադրությունները, ըստ տարբեր տնտեսական սցենարների, որոնց հիման վրա հաշվարկվել է ԱՎԿ-ն 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հիմնական գործոնները	*ԱՎԿ սցենարը*	*Որոշված հավանակա-նությունը, %*	*2021 թ.*	*2022 թ.*	*2023 թ.*
ՀՆԱ-ի տարեկան աճը, %					
	Լավատեսական	15%	6.09%	8.51%	9.08%
	Բազիսային	70%	3.40%	4.70%	4.40%
	Վատատեսական	15%	0.71%	0.89%	-0.28%
Արդյունաբերական արտադրության տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	5.93%	8.52%	8.33%
	Բազիսային	70%	2.80%	3.20%	3.40%
	Վատատեսական	15%	-3.13%	1.68%	2.51%
Ֆիսկալ/բյուջեի դեֆիցիտ, հազ. դրամ					
	Լավատեսական	15%	(162,402,853)	(37,878,094)	(60,035,085)
	Բազիսային	70%	(341,400,000)	(228,832,136)	(258,820,471)
	Վատատեսական	15%	(520,397,147)	(419,786,179)	(457,605,856)
Սպառողական գնաճ, %					
	Լավատեսական	15%	1.22%	1.10%	1.23%
	Բազիսային	70%	3.30%	3.70%	4.20%
	Վատատեսական	15%	5.38%	6.30%	7.17%
Արտահանման ծավալներ, հազ. դրամ					
	Լավատեսական	15%	1,475,644,347	1,706,701,048	1,958,721,508
	Բազիսային	70%	1,350,542,177	1,447,781,214	1,550,573,680
	Վատատեսական	15%	1,225,440,007	1,210,023,715	1,203,168,612
Ներմուծման ծավալներ, հազ. դրամ					
	Լավատեսական	15%	2,747,902,737	3,281,384,516	3,876,590,198
	Բազիսային	70%	2,444,087,071	2,622,505,427	2,800,835,796
	Վատատեսական	15%	2,140,271,404	2,037,235,668	1,944,768,432
Շինարարության տարեկան աճ, %					
	Լավատեսական	15%	8.70%	12.46%	13.96%
	Բազիսային	70%	1.70%	4.00%	4.50%
	Վատատեսական	15%	-5.30%	-4.46%	-4.96%
ՀՆԱ-ում բանկի ընդհանուր վարկերի տեսակարար կշիռը, %					
	Լավատեսական	15%	64.46%	66.86%	68.93%
	Բազիսային	70%	66.73%	70.57%	74.20%
	Վատատեսական	15%	69.24%	74.69%	80.08%
ԱՄՆ դոլարի/դրամի փոխարժեք (ժամանակաշրջանի վերջում)	Լավատեսական	15%	515.89	501.10	480.36
	Բազիսային	70%	533.00	538.50	539.50
	Վատատեսական	15%	550.11	577.24	603.26

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն

Ստորև աղյուսակում ներկայացված են 2021 և 2020թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալությունների գծով ստացվելիք գումարների դեֆոլտի հավանականության միջին մեծությունները, ըստ դասերի՝

	Ծան.		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ստանդարտից ցածր դաս*	*Արժեզրկված*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	11						
- Կորպորատիվ վարկավորում		Փուլ 1	446,110	103,966,906	–	–	**104,413,016**
		Փուլ 2	–	–	9,427,578	–	**9,427,578**
		Փուլ 3	–	–	–	4,680,896	**4,680,896**
		POCI	–	–	–	101,096	**101,096**
- Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	1,166,512	99,438,028	–	–	**100,604,540**
		Փուլ 2	–	–	2,462,054	–	**2,462,054**
		Փուլ 3	–	–	–	2,777,936	**2,777,936**
- Սպառողական վարկեր		Փուլ 1	104,915	67,768,522	–	–	**67,873,437**
		Փուլ 2	–	–	2,683,211	–	**2,683,211**
		Փուլ 3	–	–	–	2,943,491	**2,943,491**
- Վարկային քարտեր		Փուլ 1	173,944	9,769,101	–	–	**9,943,045**
		Փուլ 2	–	–	356,165	–	**356,165**
		Փուլ 3	–	–	–	562,613	**562,613**
- Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	7,797,703	23,114,459	–	–	**30,912,162**
		Փուլ 2	–	–	1,011,131	–	**1,011,131**
		Փուլ 3	–	–	–	498,705	**498,705**
		POCI	–	–	–	33,143	**33,143**
- Ոսկու գրավադրմամբ վարկեր		Փուլ 1	–	6,330	–	–	**6,330**
		Փուլ 2	–	–	771	–	**771**
		Փուլ 3	–	–	–	3,758	**3,758**
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	Փուլ 1	–	29,753,092	–	–	**29,753,092**
		Փուլ 2	–	–	1,100,284	–	**1,100,284**
		Փուլ 3	–	–	–	379,691	**379,691**
Ընդամենը			**9,689,184**	**333,816,438**	**17,041,194**	**11,981,329**	**372,528,145**

	Ծան.		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ստանդարտից ցածր դաս*	*Արժեզրկված*	*Ընդամենը*
Հաճախորդներին տրված վարկեր ամորտիզացված արժեքով	11						
- Կորպորատիվ վարկավորում		Փուլ 1	549,575	87,253,387	–	–	**87,802,962**
		Փուլ 2	–	–	13,829,254	–	**13,829,254**
		Փուլ 3	–	–	–	4,466,971	**4,466,971**
		POCI	–	–	–	212,777	**212,777**
- Գյուղատնտեսական վարկեր		Փուլ 1	451,186	85,825,885	–	–	**86,277,071**
		Փուլ 2	–	–	3,257,201	–	**3,257,201**
		Փուլ 3	–	–	–	2,762,075	**2,762,075**
- Սպառողական վարկեր		Փուլ 1	952,930	58,039,842	–	–	**58,992,772**
		Փուլ 2	–	–	4,622,137	–	**4,622,137**
		Փուլ 3	–	–	–	1,921,474	**1,921,474**
- Վարկային քարտեր		Փուլ 1	1,260,534	10,719,903	–	–	**11,980,437**
		Փուլ 2	–	–	148,209	–	**148,209**
		Փուլ 3	–	–	–	516,233	**516,233**
		POCI	–	–	–	608	**608**
- Հիփոթեքային վարկեր		Փուլ 1	5,033,842	18,134,172	–	–	**23,168,014**
		Փուլ 2	–	–	1,173,505	–	**1,173,505**
		Փուլ 3	–	–	–	384,834	**384,834**
		POCI	–	–	–	30,409	**30,409**
- Ոսկու գրավադրմամբ վարկեր		Փուլ 1	–	1,401,774	–	–	**1,401,774**
		Փուլ 2	–	–	22,717	–	**22,717**
		Փուլ 3	–	–	–	47,123	**47,123**
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	12	Փուլ 1	–	22,322,854	–	–	**22,322,854**
		Փուլ 2	–	–	2,583,047	–	**2,583,047**
		Փուլ 3	–	–	–	111,493	**111,493**
Ընդամենը			**8,248,067**	**283,697,817**	**25,636,070**	**10,453,997**	**328,035,951**

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Ստորև աղյուսակում ներկայացված են 2021 և 2020թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի և ֆինանսական վարձակալությունների գծով ստացվելիք գումարների դեֆոլտի հավանականության միջին մեծությունները, ըստ դասերի՝

	Դաս	*Միջին PD*
- Կորպորատիվ վարկավորում	Ստանդարտ	0.96%
	Ստանդարտից ցածր	4.68%
	Արժեզրկված	100%
- Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	1.89%
	Ստանդարտից ցածր	6.29%
	Արժեզրկված	100%
- Սպառողական վարկեր	Ստանդարտ	3.88%
	Ստանդարտից ցածր	16.77%
	Արժեզրկված	100%
- Վարկային քարտեր	Ստանդարտ	3.34%
	Ստանդարտից ցածր	10.52%
	Արժեզրկված	100%
- Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	1.42%
	Ստանդարտից ցածր	13.36%
	Արժեզրկված	100%
- Ոսկու գրավադրմամբ վարկեր	Ստանդարտ	0.64%
	Ստանդարտից ցածր	0.64%
	Արժեզրկված	100%
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	0.76%
	Ստանդարտից ցածր	4.74%
	Արժեզրկված	100%

	Դաս	*Միջին PD*
- Կորպորատիվ վարկավորում	Ստանդարտ	2.11%
	Ստանդարտից ցածր	14.54%
	Արժեզրկված	100%
- Գյուղատնտեսական վարկեր	Ստանդարտ	4.33%
	Ստանդարտից ցածր	31.63%
	Արժեզրկված	100%
- Սպառողական վարկեր	Ստանդարտ	6.16%
	Ստանդարտից ցածր	65.90%
	Արժեզրկված	100%
- Վարկային քարտեր	Ստանդարտ	6.33%
	Ստանդարտից ցածր	48.64%
	Արժեզրկված	100.00%
- Հիփոթեքային վարկեր	Ստանդարտ	1.21%
	Ստանդարտից ցածր	36.90%
	Արժեզրկված	100.00%
- Ոսկու գրավադրմամբ վարկեր	Ստանդարտ	1.85%
	Ստանդարտից ցածր	18.91%
	Արժեզրկված	100.00%
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	Ստանդարտ	1.08%
	Ստանդարտից ցածր	7.47%
	Արժեզրկված	100.00%

Բարձր դասի գործիքները ներառում են դրամական միջոցներով ապահովված՝ հաճախորդներին տրամադրված վարկեր: Այս վարկերի գծով արժեզրկման պահուստ չի ձևավորվում՝ ելնելով գրավի բնույթից:

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դասերի վարկային որակական վերլուծություն

Ստորև ներկայացված ֆինանսական ակտիվների որակական վերլուծություն կատարելիս Խումբն առաջնորդվում է արտաքին վարկանիշերով: Չվարկանշված վարկերը դասակարգվում են ստանդարտ դասի, եթե դրանք արժեզրկված չեն.

31 դեկտեմբերի 2021թ.-ի դրությամբ

	Ծան.		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	6	Փուլ 1	1,322,505	77,534,883	**78,857,388**
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	9	Փուլ 1	–	19,675,099	**19,675,099**
Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտքային արժեթղթեր	10	Փուլ 1	–	180,897	**180,897**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	10	Փուլ 1	–	21,002,202	**21,002,202**
Ընդամենը			**1,322,505**	**118,393,081**	**119,715,586**

31 դեկտեմբերի 2020թ.-ի դրությամբ

	Ծան.		*Բարձր դաս*	*Ստանդարտ դաս*	*Ընդամենը*
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (առանց կանխիկ միջոցների)	6	Փուլ 1	5,989,212	44,970,930	**50,960,142**
Բանկերին տրված վարկեր և փոխառություններ	9	Փուլ 1	–	57,243,494	**57,243,494**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային արժեթղթեր	10	Փուլ 1	–	14,277,282	**14,277,282**
Ընդամենը			**5,989,212**	**116,491,706**	**122,480,918**

Ստորև ներկայացված է Խմբի դասակարգման համակարգի և գործընկերների արտաքին վարկանիշների համեմատությունը 2021 և 2020թթ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ.

2021թ.՝

Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ	*Ներքին վարկանիշ*	*Դեֆոլտի հավանականություն*
Aaa to A3	Բարձր դաս	0-0.05%
Baa1 to B3	Ստանդարտ դաս	0.02-3.2%
Caa1 to Ca	Ստանդարտից ցածր դաս	9.7%
C	Արժեզրկված	100%

2020թ.

Արտաքին միջազգային վարկանիշային գործակալության (Moody's) վարկանիշ	*Ներքին վարկանիշ*	*Դեֆոլտի հավանականություն*
Aaa to A3	Բարձր դաս	0-0.06%
Baa1 to B3	Ստանդարտ դաս	0.06-3.3%
Caa1 to Ca	Ստանդարտից ցածր դաս	9.7%
C	Արժեզրկված	100%

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամանակ: Այդ ռիսկի զսպման նպատակով ղեկավարությունն ապահովել է ֆինանսավորման տարբեր աղբյուրներ՝ ի լրումն արդեն իսկ գոյություն ունեցող բանկային ավանդների հիմնական բազայի, իրականացնում է ակտիվների կառավարում՝ հաշվի առնելով իրացվելիությունը, և ապագա դրամական հոսքերի և իրացվելիության օրական վերահսկողություն: Այդ գործընթացը ներառում է ակնկալվող դրամական միջոցների գնահատում և առաջնակարգ ապահովման միջոցի առկայություն, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորման ստացման համար:

Խումբը ունի բարձր իրացվելի և տարատեսակ ակտիվների պորտֆել, ինչը դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում հեշտությամբ կիրացվի: Խումբը ունի նաև վարկային գծեր, ինչից այն կարող է օգտվել իրացվելիության կարիքների դեպքում: Բացի այդ, Խումբը ՀՀ ԿԲ-ում պահում է դրամային ավանդ (պարտադիր պահուստ), որի գումարը կախված է հաճախորդներից ներգրավված միջոցների ծավալից:

Խումբը գնահատում և կառավարում է իրացվելիությունը՝ հիմնվելով ԿԲ-ի կողմից սահմանած նորմատիվների վրա: Դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ նորմատիվները կազմել են՝

	Սահմանային արժեք	*2021թ., %*	*2020թ., %*
Ն2.1-Ընդհանուր իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ)	Նվազագույնը 15%	24.57%	24.74%
Ն2.2-Ընթացիկ իրացվելիություն (բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ)	Նվազագույնը 60%	111.12%	125.48%

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ պայմանագրային չզեղչված պարտավորությունների հիման վրա: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի վճարումը այն ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ, որով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջաններում ավանդները պահանջելու պատմական վիճակագրության հիման վրա:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Առևտրային ածանցյալ գործիքներ*	*Մինչև 3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Բանկերի ավանդներ և մնացորդներ	–	56,868	2,393	1,018,511	–	**1,077,772**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	–	169,674,194	117,612,301	56,267,637	9,368,764	**352,922,896**
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	–	161,462	5,149,874	–	**5,311,336**
Ստորադաս վարկեր	–	69,993	160,986	4,006,225	8,936,516	**13,173,720**
Այլ փոխառու միջոցներ, բացառությամբ վարձակալության պարտավորությունների	–	6,858,823	18,851,464	78,085,351	8,851,432	**112,647,070**
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	5,814,552	–	–	–	**5,814,552**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**–**	**182,474,430**	**136,788,606**	**144,527,598**	**27,156,712**	**490,947,346**
Վարկային բնույթի պարտավորվածություններ	**–**	**43,032,229**	**–**	**–**	**–**	**–**

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ և ֆինանսավորման կառավարում (շարունակություն)

2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Առևտրային ածանցյալ գործիքներ*	*Մինչև 3 ամիս*	*3-12 ամիս*	*1-5 տարի*	*Ավելի քան 5 տարի*	*Ընդամենը*
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,893	–	–	–	–	**79,893**
Բանկերի ավանդներ և մնացորդներ	–	45,717	–	–	–	**45,717**
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	–	136,230,632	124,719,006	42,040,892	10,777,823	**313,768,353**
Թողարկված պարտքային արժեթղթեր	–	14,145,121	3,113,853	131,100	–	**17,390,074**
Ստորադաս վարկեր	–	215,779	490,064	2,825,307	11,941,269	**15,472,419**
Այլ փոխառություններ	–	14,936,834	12,341,880	77,763,727	11,565,611	**116,608,052**
Այլ ֆինանսական պարտավորություններ	–	4,636,321	–	–	–	**4,636,321**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**79,893**	**170,210,404**	**140,664,803**	**122,761,026**	**34,284,703**	**468,000,829**
Վարկային բնույթի պարտավորվածություններ	**–**	**44,613,015**	**–**	**–**	**–**	**–**

Մարման ժամկետների վերլուծությունը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Ոչ ավել քան 1 տարի	*1-ից 2 տարի*	*2-ից 3 տարի*	*3-ից 4 տարի*	*4-ից 5 տարի*	*5-ից ավել տարի*	*Ընդամենը*
Վարձակալության գծով պարտավորություններ	554,767	597,767	422,961	335,081	115,908	64,712	**2,091,196**

Մարման ժամկետների վերլուծությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Ոչ ավել քան 1 տարի	*1-ից 2 տարի*	*2-ից 3 տարի*	*3-ից 4 տարի*	*4-ից 5 տարի*	*5-ից ավել տարի*	*Ընդամենը*
Վարձակալության գծով պարտավորություններ	392,504	338,668	290,547	151,415	103,551	89,119	**1,365,804**

Մարման ժամկետների վերլուծությունը չի արտացոլում այն ընթացիկ հաշիվների միջոցների պատմական կայունությունը, որոնց վերադարձը սովորաբար տեղի է ունենում ավելի երկար ժամանակահատվածի ընթացքում, քան ներկայացված է վերոնշյալ աղյուսակում: Այդ մնացորդները աղյուսակում ներառված են մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող գումարներում:

Պահանջները հաճախորդների նկատմամբ ներառում են ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդները: ՀՀ օրենսդրության համաձայն Բանկը պարտավոր է հետ վճարել նման ավանդները ավանդատուի առաջին իսկ պահանջով: Վերոնշյալ աղյուսակում այդ ավանդները դասակարգված են ըստ մարման ժամկետների:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական պայմանների, ներառյալ արտարժույթի փոխարժեքի, տոկոսադրույքների և բաժնային գործիքների գների փոփոխության արդյունքում:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է տոկոսադրույքների փոփոխման արդյունքում: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս Խմբի ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքի հնարավոր հավանական փոփոխությունների նկատմամբ, բոլոր այլ փոփոխական մեծությունները հաստատուն լինելու դեպքում:

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության զգայունությունը իրենից ներկայացնում է տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունների ազդեցությունը մեկ տարվա զուտ տոկոսային եկամտի վրա, որը հաշվարկվել է դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա լողացող տոկոսադրույքով ոչ առևտրային ֆինանսական ակտիվների և պարտավորությունների նկատմամբ: Կապիտալի զգայունությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսադրույքների թույլատրելի փոփոխությունների հանդեպ հաշվարկվում է՝ վերագնահատելով ֆիքսված տոկոսադրույքով իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական ակտիվները՝ հիմնվելով այն ենթադրության վրա, որ առկա են եկամտաբերության կորի զուգահեռ տեղաշարժեր:

Արժույթ	*Բազիսային կետերի ավելացում 2021թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2021թ.*	*Կապիտալի զգայունություն 2021թ.*
Հայկական դրամ	1.50%	(282,208)	(2,704)
ԱՄՆ Դոլար	1.25%	(217,467)	(5,617)

Արժույթ	*Բազիսային կետերի նվազում 2021թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2021թ.*	*Կապիտալի զգայունություն 2021թ.*
Հայկական դրամ	1.50%	282,208	2,704
ԱՄՆ Դոլար	0.25%	43,493	1,123

Արժույթ	*Բազիսային կետերի ավելացում 2020թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2020թ.*	*Կապիտալի զգայունություն 2020թ.*
Հայկական դրամ	1.10%	(360,794)	(3,339)
ԱՄՆ Դոլար	1.00%	(156,777)	(376,375)

Արժույթ	*Բազիսային կետերի նվազում 2020թ.*	*Զուտ տոկոսային եկամտի զգայունություն 2020թ.*	*Կապիտալի զգայունություն 2020թ.*
Հայկական դրամ	1.10%	360,794	3,339
ԱՄՆ Դոլար	0.25%	39,194	94,094

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Ղեկավարությունը սահմանել է արտարժութային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով ԿԲ կողմից սահմանված նորմատիվների վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են այն արժույթները, որոնցով դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի էական արժութային դիրքեր դրամական ակտիվների և պարտավորությունների գծով: Կատարված վերլուծությունը արտահայտում է դրամի նկատմամբ՝ արտարժույթի փոխարժեքի հնարավոր տատանումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա, երբ այլ փոփոխական արժեքները հաստատուն են (կախված արտարժույթի փոխարժեքի փոփոխության նկատմամբ ոչ առևտրային դրամական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի զգայունությունից): Կապիտալի վրա ազդեցությունը չի տարբերվում ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության վրա ազդեցությունից: Բացասական գումարները արտացոլում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազումը, դրական գումարները՝ պոտենցիալ զուտ աճը: Ղեկավարությունը սահմանել է արտարժույթի և տոկոսադրույքի ռիսկի թույլատրելի ռիսկի սահմանաչափ:

Արժույթ	*Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2021թ.*	*Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2021թ.*	*Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն % 2020թ.*	*Ազդեցություն մինչև հարկումը շահույթի վրա 2020թ.*
ԱՄՆ դոլար	5.00%	310,892	5.00%	46,043
ԱՄՆ դոլար	(5.00%)	(310,892)	(5.00%)	(46,043)
Եվրո	8.50%	(139,456)	8.50%	(77,159)
Եվրո	(8.50%)	139,456	(8.50%)	77,159

Գլոբալ վերահսկող մարմինների կողմից IBOR-ը օգտագործումից հանելու և այն այլընտրանքային էտալոնային դրույքներով փոխարինելու որոշման՝ Խումբը մշակում է անցումային ծրագիր իր այն պայմանագրերի համար, որոնք ազդեցություն կկրեն դրույքի փոփոխությունից:

Նախքան LIBOR-ի գործածումից դուրս գալը Խումբը պայմանագրերում փոփոխություններ կանի՝ LIBOR-ը փոխարինելով այլընտրանքային էտալոնային դրույքով, և դրա համապատասխան պայմանագրեր կստորագրի բոլոր վարկատուների հետ: Նույն դրույքը կկիրառվի նաև Բանկի կողմից հաճախորդներին տրամադրվող, լողացող տոկոսադրույքով ենթավարկերի համար:

IBOR բարեփոխումը ենթադրում է տարբեր ռիսկեր Խմբի համար, որոնք կառավարվում և վերահսկվում են: Այդ ռիսկերը ներառում են, բայց չեն սահմանափակվում հետևյալով

- IBOR բարեփոխումն իրականացնելուն ուղղված առկա պայմանագրերում փոփոխություններ կատարելուց բխող վարքագծային ռիսկ՝ հաճախորդների և գործընկերների գծով,
- IBOR բարեփոխման հետևանքով շուկաների անկայունության ֆինանսական ռիսկ, որին կարող են ենթարկվել Խումբն ու իր հաճախորդների, և որը կբերի ֆինանսական կորուստներ
- Գնագոյացման ռիսկ՝ շուկայի վերաբերյալ տեղեկատվության հնարավոր բացակայության և IBOR իրացվելիության նվազման և էտալոնային դրույքների դիտարկելի չլինելու դեպքում,
- SS համակարգերում և ընթացակարգերում փոփոխություններ կատարելուց ծագող գործառնական ռիսկ, ինչպես նաև վճարումների խափանման ռիսկ՝ IBOR-ի օգտագործումից դուրս գալու հետևանքով:

Ստորև բերված աղյուսակում ցույց է տրվում IBOR-ի նախատեսվող նշանակալից բարեփոխումների ազդեցությունը Խմբի գործիքների արժեքի վրա տարեվերջի դրությամբ: Այս ռիսկը առկա է լինելու մինչև IBOR-ի՝ ապագայում օգտագործումից դուրս գալը և անցումը այլ դրույքի, օրինակ՝ աղյուսակում չի ներառվում այն ռիսկը, որ առկա է մինչև այլ դրույքի պարտադիր անցնելը.

2021թ. դեկտեմբերի 31	*Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ Հաշվեկշռային արժեք*	*Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորու-թյուններ Հաշվեկշռային արժեք*	*Ածանցյալ գործիքներ Անվանական արժեք*
LIBOR USD (3 ամիս)	–	6,000,000	–
LIBOR USD (6 ամիս)	2,656,872	29,091,000	19,091,000
Այլ	6,344,927	–	

(հազար ՀՀ դրամ)

31. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, ներքին գործընթացների անհամապատասխանության կամ ձախողման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Խումբը գործառնական ռիսկերի կառավարման շրջանակներում ընդունել է եռաշերտ պաշտպանության մեխանիզմ: Պաշտպանության առաջին գիծը ապահովում են առաջնագծի աշխատակազմը և գործառնական կառավարման խումբը, պաշտպանության երկրորդ գիծը ապահովվում է ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառույթների կողմից, ներքին աուդիտի գործառույթով ապահովվում է պաշտպանության երրորդ գիծը:

Գործառնական ռիսկերի կառավարման համակարգը ներառում է հետևյալ հիմնական ասպեկտները՝ ռիսկի քարտեզագրում, միջադեպի վերլուծություն և մշտական վերահսկման գործառույթ: Ներքին վերահսկողության համակարգը ընդգրկում է պարտավորությունների արդյունավետ բաժանման, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգեր, աշխատակազմի ուսուցում և գնահատում: Կառավարման խորհուրդը սահմանել է թույլատրելի ռիսկի սահմանաչափ գործառնական ռիսկի վրա:

32. Իրական արժեքի չափում

Իրական արժեքի չափման գործընթաց

Խմբի ղեկավարությունը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, օրինակ՝ չգնանշվող առևտրային, իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի, ածանցյալ ֆինանսական գործիքների, ներդրումային գույքի և շենքերի համար, այնպես էլ իրական արժեքի ոչ պարբերաբար չափման քաղաքականությունը, օրինակ՝ վաճառքի համար պահվող ակտիվների համար:

Արտաքին գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման համար, ինչպիսիք են գույքերը, առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը և ածանցյալ գործիքները: Արտաքին գնահատողների ներգրավումը որոշվում է ղեկավարության կողմից: Ընտրությունը կատարվում է՝ հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են շուկայի մասին տեղեկացվածությունը, վարկանիշը, անկախությունը և մասնագիտական ստանդարտների պահպանումը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին ղեկավարությունը վերլուծում է այն ակտիվների և պասիվների արժեքների փոփոխությունները, որոնք ենթակա են վերագնահատման Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ՝ համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Խմբի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի փոփոխությունը յուրաքանչյուր համապատասխան արտաքին աղբյուրների հետ՝ որոշելու համար տվյալ փոփոխության հիմնավորված լինելը:

Իրական արժեքի հիերարխիա

Գնահատման մոդելների միջոցով Ֆինանսական ակտիվների իրական արժեքները որոշելու և բացահայտելու համար Խումբը օգտագործում է հետևյալ հիերարխիան:

- 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկայում գնանշված գներ (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որոնցում բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտարկելի են շուկայական տվյալներից,
- 3-րդ մակարդակ. գնահատման մոդելներ, որտեղ իրական արժեքի չափման համար էական նշանակություն ունեցող ամենացածր մակարդակի ելակետային տվյալները շուկայում դիտարկելի չեն:

(հազար ՀՀ դրամ)

32. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Խումբը առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների, ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

	Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով			
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ակտիվ շուկայում գնանշվող գներ (1-ին մակարդակ)*	*Էական դիտարկելի ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)*	*Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
- Առևտրային արժեթղթեր	–	433,697	–	**433,697**
- Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	38,625	–	**38,625**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	–	21,002,202	–	**21,002,202**
- Բաժնային գործիքներ	2,759,029	–	–	**2,759,029**
- Չգնանշված բաժնային արժեթղթեր-ընկերություններ ՀՀ-ում	–	–	115,381	**115,381**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
- Գույք և սարքավորումներ – հողեր և շինություններ, ավտոմոբիլներ	–	–	9,680,900	**9,680,900**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	96,447,988	–	–	**96,447,988**
- Պահանջներ բանկերի նկատմամբ	–	–	19,619,083	**19,619,083**
- Ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	–	–	118,217	**118,217**
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	–	–	31,213,390	**31,213,390**
- Այլ ֆինանսական ակտիվներ	–	–	1,331,573	**1,331,573**
- Հաճախորդներին տրված վարկեր	–	–	341,107,411	**341,107,411**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
- Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	–	–	341,001,950	**341,001,950**
- Թողարկված պարտքային արժեթղթեր՝ ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	–	3,494,385	–	**3,494,385**
- Բանկերի ավանդներ և մնացորդներ	–	–	1,070,890	**1,070,890**
- Ստորադաս վարկեր	–	–	9,794,000	**9,794,000**
- Այլ փոխառություններ	–	–	93,347,410	**93,347,410**
- Այլ ֆինանսական պարտավորություններ	–	–	5,814,552	**5,814,552**

(հազար ՀՀ դրամ)

32. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքի հիերարխիա (շարունակություն)

	Իրական արժեքի չափումը՝ օգտագործելով			
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	*Ակտիվ շուկայում գնանշվող գներ (1-ին մակարդակ)*	*Էական դիտարկելի ելակետային տվյալներ (2-րդ մակարդակ)*	*Էական ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (3-րդ մակարդակ)*	*Ընդամենը*
Իրական արժեքով չափվող ակտիվներ և պարտավորություններ				
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ				
- Առևտրային արժեթղթեր	–	319,353	–	**319,353**
- Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	250,207	–	**250,207**
- Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	–	(79,893)	–	**(79,893)**
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				
- Պարտքային գործիքներ	–	14,277,282	–	**14,277,282**
- Բաժնային գործիքներ	3,009,909	–	–	**3,009,909**
- Չգնանշված բաժնային արժեթղթեր-ընկերություններ ՀՀ-ում	–	–	117,876	**117,876**
Ոչ ֆինանսական ակտիվներ				
- Գույք և սարքավորումներ – հողեր և շինություններ, ավտոմոբիլներ	–	–	8,717,676	**8,717,676**
Ակտիվներ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	66,398,135	–	–	**66,398,135**
- Պահանջներ բանկերի նկատմամբ	–	–	57,171,584	**57,171,584**
- Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	–	–	25,017,394	**25,017,394**
- Այլ ֆինանսական ակտիվներ	–	–	982,646	**982,646**
- Հաճախորդներին տրված վարկեր	–	–	302,920,513	**302,920,513**
Պարտավորություններ, որոնց իրական արժեքը բացահայտվում է				
- Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	–	–	298,655,094	**298,655,094**
- Թողարկված պարտքային արժեթղթեր՝ ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	–	2,822,713	–	**2,822,713**
- Բանկերի ավանդներ և մնացորդներ	–	–	45,717	**45,717**
- Ստորադաս վարկեր	–	–	11,130,839	**11,130,839**
- Այլ փոխառություններ	–	–	101,043,374	**101,043,374**
- Այլ ֆինանսական պարտավորություններ	–	–	4,636,321	**4,636,321**

(հազար ՀՀ դրամ)

32. Իրական արժեքի չափում (շարունակություն)

Իրական արժեքով չարտացոլված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը

Ստորև Խմբի՝ Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության մեջ իրական արժեքով չարտացոլված ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի հաշվեկշռային և իրական արժեքների համեմատությունն է դեկտեմբերի 31-ի դրությամբ: Աղյուսակը չի ներառում ոչ ֆինանսական ակտիվների և ոչ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը:

	Հաշվեկշռային արժեք 2021թ.	*Իրական արժեք 2021թ.*	*Չճանաչված եկամուտ/ (ծախս) 2021թ.*	*Հաշվեկշռային արժեք 2020թ.*	*Իրական արժեք 2020թ.*	*Չճանաչված եկամուտ/ (ծախս) 2020թ.*
Ֆինանսական ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	96,447,988	96,447,988	–	66,398,135	66,398,135	–
Պահանջներ բանկերի նկատմամբ	19,619,083	19,619,083	–	57,171,584	57,171,584	–
Ներդրումային արժեթղթեր – ամորտիզացված արժեքով պարտքային արժեթղթեր	118,217	118,217	–	–	–	–
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	31,233,067	31,213,390	(19,677)	25,017,394	25,017,394	–
Այլ ֆինանսական ակտիվներ	1,331,573	1,331,573	–	982,646	982,646	–
Հաճախորդներին տրված վարկեր	341,295,078	341,107,411	(187,667)	303,018,557	302,920,513	(98,044)
Ֆինանսական պարտավորություններ						
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	337,492,635	341,001,950	(3,509,315)	296,944,080	298,655,094	(1,711,014)
Թողարկված պարտքային արժեթղթեր – ՀՀ-ում թողարկված պարտատոմսեր	3,461,498	3,494,385	(32,887)	2,816,897	2,822,713	(5,816)
Ավանդներ և մնացորդներ բանկերից	1,070,890	1,070,890	–	45,717	45,717	–
Ստորադաս վարկեր	9,794,000	9,794,000	–	11,130,839	11,130,839	–
